Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

d-27

Lmy
991

№ 965.
III. 5
n 3
№ 835.

2013

265

ԲԵԼԻՍԱՐ

Լաց
991

Ռ
33366

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԲԵԼԻՍԱՐԱՅ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի ԺԱՆԼԻԷ ԳԱՂՂԻՈՒՀԻՈՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ Վ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՇԻՐԱԿԱՅ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

N 965-1
835

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1859

БИБЛІОТЕКА
СПЕЦІАЛЬНЫХЪ КЛАССОВЪ
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

ԳՐԱԴԱՐԱՆ

991-2013
Ա/986

ԲԱՆԱԼՈԹԵԿԱ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Տիկին ժանլի մատենագիր Վիպասանութեանս ծնաւ 'ի Բորգոնդիա գաւառ Գաղղիոյ, յամին 1746. և ընդաբոյս հանճարովն զարգացեալ 'ի բանասիրականին, եղև դաստիարակ ազատորդւոց ոմանց օրիորդաց: Վասն որոյ բաղում գիրս յօրինեաց յաղագս դաստիարակութեան, յորոց ընտրելագոյնք են մակագրեալքն Գիշերք ամարանոցի, Նժգեհիկք, Առէլ և Թէոդոր, և Ցեսարան դաստիարակութեան: Մեծարեցաւ նա ընդ երեքումբք ևս պետութեամբք՝ ընդ որովք եկեաց, այսինքն է յաւուրս Պուրպոնեանց և Նաբոլէոնի մեծին և դքսին Օրլէանի: Եւ կատարեաց զաւուրս իւր 'ի Փարիզ յամին 1831:

Գրեաց նա և բաղում վիպասանութիւնս, յորոց երևելագոյնքն են Ալիսոնսոս, Գուէթ մայրենի, Մարք նախանձորդք, Դքսուհին Վալերի, և Օրիորդն Քլերմոնի: Ընդ սոսա դասելի է և զԲելիսարայն, զորոյ ընծայեմք ազգիս զթարգմանութիւն ըստ խնդրոյ բարեյիշատակ Պարոն Աբրահամու Ազանուրեան, որ նախ քան զհրաժարել իւր 'ի կենցաղոյս՝ արար զանդիրս զայս ըստ բանասէր իւրոցն ըղձից:

Ի վիպասանութեանս յայսմիկ ոչ սակաւ փայլէ հանճար տիկնոջս մատենագրի: Եւ թէպէտ չիցէ սա զերծ 'ի թերութեանց, սակայն զուարճացուցանէ ըստ բաւականին և խրատէ, որ են կարևոր պայմանք վիպասանութեան: Ժամանակն յորում եկաց Բելիսար, է մի 'ի կարևոր դարուց պատմութեան. զի յաւուրս Յուստինոսի Ա և Յուստինիանոսի փառք և մեծութիւն հռովմէական՝ որ աղօտացեալն էին՝ արծարծեցան անդրէն, և վերջին փայլումն նորա ճառագայթեալ առ Յուստինիանոսիւ՝ շինչաւ 'ի սպառ յետ մահուն Բելիսարայ:

Բելիսար էր սպարապետ զօրացն Յուստինիանոսի. սա է-
հար զպատերազմն ընդդէմ Կապաթեայ արքային Պարսից, և
դաշինս ընդ նմա կռեաց փառօք յամին 532։ Ի միւսում ամի
զօրավարեալ ընդ Ծով, նուաճեաց զԿարքեդոն, խաղաց գնաց
ընդդէմ Գելիմերայ՝ թագաւորին Վանդալաց. հնազանդեաց
զՄաւրիտանացիս, և խորտակեալ զՎանդալս՝ կալաւ զԳելի-
մեր, և գերի վարեաց զնա առաջի յաղթական կառացն։

Յետ այսորիկ առաքեցաւ յինքնակալէն յԻտալիս ընդդէմ
Գոթից. և հասեալ յԵզերս Սիկիլեայ՝ կալաւ զԿատանա, զՍի-
ռակուսա, զՊանորմոն և այլ քաղաքս բազումս, է որ բնի, և
է որ 'ի հաւանութիւն ածեալ։ Խաղաց ապա 'ի Նէապոլիս, և
նուաճեալ զայն դիմեաց անտի 'ի Հռոմ, և զբանալիս քաղա-
քին յղեաց առ ինքնակալն։ Արքայն Գոթից Ատուաճատուր
անկաւ 'ի մարտի անդ, և յաջորդեալ նմա Վիտիգէս՝ եկն պա-
շարել զՀռոմ։ Բելիսար յաղթեաց նմա պատերազմաւ, և
վանեալ զնա 'ի Հռաւենա՝ կալաւ զքաղաքն. և հրաժարեալ
'ի թագէն՝ զոր պարտեալքն մատուցանէին նմա, ած զՎիտի-
գէս 'ի Բիւզանդիոն. ուր Ժողովուրդն առ հասարակ արար
ասն ցնծութեան, փրկիչ տերութեանն կարգալով զԲելիսար։

Յետ սակաւ աւուրց խաղաց ընդդէմ Խոսրովայ արքային
Պարսից. և վանեալ զնա, դարձ արար յԻտալիա ընդդէմ Ատ-
տիլայ՝ որ յաջորդեալն էր Վիտիգեսի արքային Գոթից. և խա-
փանեալ զաւերս Հռոմայ, եմուտ վերստին 'ի քաղաք անդր։
Նոյն ինքն և յալիս ծերութեան վանեաց զՀէնս 'ի Հոնաց աշ-
խարհէն։

Ընդ այսքան բարեբաստութիւն նորա նախանձեալ աւագա-
նուոյն, ամբաստան եղեն զնմանէ առ ինքնակալն իբր թէ. յինքն
հնարէր նա ձգել զինքնակալութիւնն։ Եւ ինքնակալն կասկա-
ծոտ՝ ընկէց զնա 'ի պատուոյ, կապտեաց 'ի Թիկնապահաց, և
յայն կարօտութիւն զնա հասոյց՝ մինչև ընդ գռեհս Բիւզան-
դիոյ մուրանալ նմա հաց։ Յայսպիսում աղէտս վճարեաց նա
զկեանս իւր յամին 565։

Զքաջութեանց և զյաղթանակաց Բելիսարայ միաբանեն
պատմագիրք. այլ անկանել նորա 'ի շնորհաց ինքնակալին և
վախճան նորա ոչ միօրինակ աւանդի։ Կէսք պատմեն և յաչաց

իսկ զնա զրկեալ մախանաք ոսոխացն, այլք անկեալ զնա ասեն
'ի շնորհաց՝ այլ ապա անդրէն 'ի վեր առեալ, և փառօք և խա-
ղաղութեամբ վախճանեալ 'ի Կոստանդնուպօլիս։ Բայց է ցարդ
'ի քաղաքի անդ աշտարակ մի առ ծովեզերբ յանուն Բելիսա-
բայ անուանեալ, և պատմի զի յորժամ կայր նա անդ բան-
տարգել, կախէր 'ի վերուստ անտի պարկ՝ աղերս առ անցա-
ւորս արկանելով. Տո՛ւք ողորմութիւն Բելիսարայ, զոր մա-
խանաք կուրացուցին։ Պահին ցարդ դրամք յաւուրս Յուստի-
նիանոսի հատեալք, 'ի մի գէմս ընդունելով ինքնակալն դար-
ձաւոր 'ի յաղթանակէն Գոթից զԲելիսար, և 'ի միւսումն
պատկեր զօրավարին, և շուրջանակի արձանագրեալ «Փառք
Հռոմոց»։

Պատենագրի վիպասանութեանս զանստուգութիւն իրացն
յօգուտ արկեալ, առ 'ի զերծուցանել 'ի նախատանաց զինք-
նակալն՝ որոյ անգթութիւն ինչ ոչ ուրեք պատմի գործեալ,
զանողորմ պատուհաս կուրութեանն Բելիսարայ՝ որ զամս ե-
րեսուն մեծարեալն էր յինքնակալէն և 'ի սեր նորա վայելեալ,
արկանէ ձախողակի զմերովս Ներսիսիս, պատճառս առեալ
'ի մախանաց աւագանւոյն ընդ Բելիսարայ, զոր աւանդեն հա-
ւաստեաւ պատմիչք, և 'ի գժութենէն՝ որ անկաւ ընդ նա
և ընդ մերս Ներսէս յԱրմենոն քաղաքի Խաղիոյ, 'ի վանել
նորա անտի զգոթացիս [1]։

Բայց թէպէտ մատենագիր վիպասանութեանս որպէս յայտմ
մասին՝ նոյնպէս և յայլ մանրապատում հանգամանս քերթողա-
կան համարձակութեամբ վարի, սակայն պահէ զճշմարտու-
թիւն 'ի գլխաւոր մասունս պատմութեան և 'ի նկարագիրս
անձանց՝ զորս ասա 'ի նեբքս մուծանէ։ Այն զի և նկարագիրն
իսկ տուեալ 'ի նմանէ Ներսիսի՝ ոչ յոյժ օտար թուի 'ի ճշմար-
տէն. զի ոչ հաւատարիմ գտաւ նա առ ինքնակալ տէր իւր, և
զի ոխայր նա ընդ Սոփիայ դշխոյի։ Քանզի յասել երբեմն
Սոփիայ զնմանէ՝ թէ 'ի ճահ ևս էր կիսատն (քանզի նեբքինի
էր Ներսէս) իլոյ պարապել ընդ կանանին՝ քան զինուորել,
պատասխանի ետ Ներսէս սպառնալեօք. Թելս այնպիսի մա-
նեցից, զորոց դժուարաւ կարասցէ նա լուծանել զՀանդոյց։

1 Պատմ. Հայոց. Բ. 267։

Զգլխաւոր թերութիւն վիպասանութեանս ինքնին իսկ ոչ կինն մատենագիր խոստովանի 'ի տեղւոջ իւրում՝ 'ի սորագիր զեկուցմունսն։ Իսկ ընդհանուր թերութիւն նորա է տկարութիւն ոճոյ, և թափուր 'ի քերթողական գեղոյ տիպք կերպարանաց բանից, և խմաստիցն յաճախ նուաստութիւն, մինչև ուրեք ուրեք 'ի մանկական խմաստս զառածանել։ Հանդերձ այսու ամենայնիւ ճաշակս այս մատենագրութեանց նորա յորդորեսցէ զմերազնեայս 'ի բանասիրութիւն, տեսանելով նոցա զտիկնայս իսկ օտար ազգաց աջողակի պարապեալ 'ի նոյն։

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԲԵԼԻՍԱՐԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Սրբոյ խաղաղութեան օթևան, ո՛ անապատարհաւիրք որ զամբոխս մարդկան աղմկեն, անդորք 'ի խուսվել զքեզ՝ քաղցրագոյն ևս զանյեղլի բերկրանս քո գործեն։... Այս այսպէս յահագնասաստ մրրկի ոմն 'ի միայնակեցաց 'ի Թեբայիդ, տոհմիկն երկիւղածն Արկադիոս, ըստ սմին օրինակի իմաստասիրեր։ Դառնայր գայր նա 'ի տաբաժամու 'ի Հերակլիա քաղաքէ. և մինչդեռ ասպարիզաւ իբր կիսով հեռի էր նա յայրէ իւրմէ, մրրիկ ուժգին կարկտախառն հարկեցոյց զնա ապաստանել ուրեք ընդ ծառով։ Այրիկ մի, և ահա դադարեաց հողմն. երկինք և այերք թուէին հրայրեացք բորբոքել. շանթք առանց որոտաձայն շառաչմանց գործէին շուրջանակի ահեղ երև-

մունս, երկայնաձիգ լուսաշաւիղ փայլատակամթք ծիրանափայլ պայծառացուցեալ զամպս՝ որք 'ի նսեմաստուեր գիշերին իբր յորձանք հրեղէնք և գունդք բոցանիւթք երևէին։ Մինչդեռ միայնակեացն յեց 'ի յարմն սօսւոյ՝ խաչանիշ թևս 'ի կուրծս ամփոփեալ, դիտէր անխռով զահագին տեսիլն, և ահա շարժեալ սասանեցաւ երկիր։ Բաբէ, ասէ, տիեղերք արդեօք քայքայեալ լուծանին։ Բարձրեալ տէր, ձեռն քո հզօր՝ որ եդ զհիմունս երկրի՝ մի՛ արդեօք տապալիցէ զայն, մի՛ արդեօք ածիցէ սպառուած յաւիտենիս։ Բ. ւաղ, յորպիսի՛ արհաւիրս աղետից ըմբռնեալ կայցեն աղգ մահացուաց. ամենողորմ տէր, ծագեա զլոյս քո 'ի նոսա, չև ձեռն արկեալ 'ի հարուած։ Իսկ մեր աստանօր զինչ այլ ինչ են կեանք, բայց ակնկալութիւն յաւիտենիցն կենաց. օրն դատաստանի ոչ ածցէ այսր ապշութիւն զարհուրանս և վրդով. հրեշտակն սատակիչ չգտցէ ինչ աստ 'ի հարկանել, յաձիւն դարձուցանել, ոչ արձանս ամբարտաւանութեան և փառամոլութեան մարդկան, ոչ շինուածս մեծակառոյց, և ոչ շիրիմն կձեայս և պղնձաձոյլս։ Բ. ստ հողախշտիք հանգստեան դալարաբոյսք 'ի սփիւռս անապատիս բացցին մտադիւր 'ի ձայն տեառնագալուստ փողոյն. զարթիցեն ցնծութեամբ եղբարք մեր 'ի գիրկս կրօնից ննջեցեալք. ելցեն լուսափայլք 'ի գերեզմանաց դաշտավայրիս, որպէս շուշանք պերճապայծառք 'ի

ծոցոյ կանաչագեղ հովտաց վերբմբերձիկք։ Օ միայնարանս զայս նուիրեալ խաղաղութեան ոչ խառվեցուսցէ, ոչ տիեզերաց բնաջինջ կորուստ, և ոչ համաշխարհական վերկենցաղումն, հազիւ զխոր լռութիւն անապատիս լուծեալ։

Լու 'ի խօսել զայս միայնակեացին՝ ցածեաւ 'ի սպառ մրրիկն, և նա դարձեալ գնայր զձանապարհ իւր։ Բ. յլ 'ի խաղալ վայրիկ մի յառաջ՝ կառեաւ յանկարծ սասանեալ, և առաւել յոյժ յապուշ հարեալ ընդ ձայնն զոր լսէր քան ընդ բնաւ օդային երևոյթս։

Օ՛ի բարբառք անլուրք յականջալուրս նմա անկանէին. լեզու մարդկեղէն անէծս կարդայր, արարածոյ աստուածընդդէմ բողոքելով։ Յակձիռս եկաց, յառաջ մատեաւ. և յաղջամղջին գիշերի անդ 'ի շողիւն փայլական ետես մօտ առիւր տեսիլ անակնկալ աղետալի, ծերունի շղթայակապ կաշկանդեալ 'ի ժայռ, և գոչեաց. Բ. ւաղ, պղծեցաւ յոձիր եղեռան սրբութիւն անապատիս. հապա, քաւեսցուք մերովսանն զայն։ Լու մատուցեալ առ վատշուէրն, ասէ. Դու ո՞վ ես։ Ծերունին ասէ. Օ՞հ ատելութեան և ապերախտութեան։ Մի՛այնակեացն ասէ. Լու ո՞ ըզքեզ յայդ աղետս հասոյց։ Ծերունին ասէ. Բ. րքանեակք բռնաւորին. այլ քեզ զի՞ փոյթ է։ Մի՛այնակեացն ասէ. Յանկալի է ինձ աղատել զքեզ։ Ծերունին ասէ. Լթէ յուզին գութք 'ի քեզ, խօսեաց զվրէժինդրութենէ ընդ իս։

Ընապատականն ասէ։ Այդ բարբառ անծանօթ է յանապատիս։ Ներունին ասէ. Այս ոչ ի ցեմք։ Միայնակեացն ասէ. Ի՞նչ, և չգիտիցե՞ս։ Ներունին ասէ. Արձին զլոյս աչաց իմոց։ Միայնակեացն ասէ. Վաստմեցուցանես զոսկերս իմ. Եկ լեր ընդ իս բնակակից, թոյլ արա ինձ խղել զշղթայս քո։ Ներունին ասէ. Որ ապիկարդ ես 'ի սպառազինել զբազուկ իմ, թող զիս։ Միայնակեացն ասէ. Ոչ թողից զքեզ, ծերունիդ հէք և աւաղելի. 'ի խորս անապատին թեբայիդայ անկեալ կաս։ Ներունին ասէ. Ի բարբարոսաց ձգեալ կամ այսր. վրէժք յերկնից հասցեն նոցա։ Ընապատաւորն ասէ. Մի, ո զորմութիւն ևեթ կարդալ է սատ յերկնից. 'ի սրբանուէր անապատիս սիրտ բեկեալ և հոգի խոնարհ ոչ այլ ինչ մաղթէ, բայց զներել թողութեան։ Ներունին ասէ. Ոչն և չեն ինձ կամք մեռանել անշուք յանապատիս. ընդունիմ զշնորհքոյին։ Յայնժամ միայնակեցին խղեալ զշղթայս նորա, զի դեռ յուժի կայր, ելոյծ զծերունին. և զձեռանէ կալեալ, ած զնա 'ի քարայր իւր։

ԳԼՈՒԽ Բ.

Արկադիոս մտեալ 'ի քարածերպ բնակարան իւր գեղջուկ, նստոյց զծերունին 'ի մամռապատ բազմոցի. և լուցեալ ճրագ, ած ջուր ականակիտ 'ի կոնք խեցեղէն, և 'ի ծունկս խոնարհեալ հիւրոյն՝ լուանայր զոտս նորա։ Ներունին վաստակաբեկ լուռ ևեթ կայր. դէմք նորա մեծավայելուչ և պատկառելի զդառնակսկիծ աղէտս նորա և զծանրացաւումն սրտմտութիւն միանգամայն յայտ առնէին։ Զարմանայր մանաւանդ քան թէ գորովքեր ընդ խնամս անապատականին. յայն թշուառութիւն հասեալ, զի մարդասէր կարեկցութիւն և բարերարութիւն հիացումն ևեթ ազդէին 'ի նա, անկարացեալ 'ի գութ խանդաղատել զնա։ Յաւել միայնակեացն. Ունիմ այլ ինչ քեզ ընծայել 'ի ճաշակ՝ բայց արմտի և միրգս վայրի, և խուրձ եղեգան և տերևակոյտ 'ի խշտի։ Այլ իմ կենցաղավարեալ 'ի մէջ մարդկան, և զյեղակարծ արկածից և զբնաւ իսկ յեղաշրջութեանց դժնդակ բախտին զփորձ առեալ, գտի 'ի փապարս յայս զհանգիստ քնոյ և զխաղաղութիւն։ Յանկարծ լինէր և քեզ գտանել սատ սիրոյ վշտաց քոց։

Ոչ անդգայ 'ի լուր քանիցս այսոցիկ եղեալ հիւրոյն, ասէ. Այլ քանզի կեցեալ է քո յաշխարհի, չիցէ թերևս անուն իմ քեզ անծանօթ. և ասի և եթ զչափ առցես զապերախտութեան և զանգթութեան բռնաւորին՝ որ զիսն հարստահարէ. ես ինքն եմ Ռելիսար։ Յայնժամ գոչեաց Արկադիոս. Ո՛հ, դո՛ւ ինքն Ռելիսար. զյաղթողն Գոթաց և զանդալաց հիւրընկալեմ ուրեմն յայրիս։ Ռելիսար ասէ. Ահա վարձք վաստակոց նահատակութեանցս, ահաւասիկ փոխարէնք յաղթութեանցս իմոց։ Արկադիոս ասէ. Ռելիսա՞ր ուրեմն մերկ կողոպուտ հալածեալ և տարագիր, Ռելիսա՞ր լքեալ յանշէնս. աւա՜ղ մեծութեան մարդկան անցաւորի։

Կրկնեալ անդրէն Ռելիսարայ ասէ. Այո, խաբուսիկ է խնդութիւն մարդկան, յեղյեղուկ է բախտն։ Հաճոյք միոյ ուրուք բռնաւորի կարող են զքաջ և իմաստուն որերոյ տապալել զբախտ, այլ ոչ և անհետ առնել զհամբաւ նոցա. նա աւանիկ հալածանք 'ի պայծառութիւն փառաց առն մեծի յաւելուն և զխանդաղանս կարեկցութեան՝ զոր ազդէ թշուառութիւն։ Արկադիոս ասէ. Այլ աւա՜ղ, զի յետնոց եթէ լիցի այդ դատաստան. իսկ զհիացումն և զզարմանս ժամանակակից մարդկան, բաղում այն է՝ զի նուազէ կարեկցութիւն ազդեալ 'ի թշուառութենէ։ Յայնժամ 'ի վերայ էած Ռելիսար. Ո՞ն ապա, տացի ինձ ոք առաջնորդ, և յաղէտս իսկ՝ յորում

կամն՝ գիտացից պայծառացուցանել զթշուառութիւն իմ։ Արկադիոս ասէ. Այլ զի՞նչ գործիցես։ Ռելիսար ասէ. Խնդրեցից զվրէժ իմ։ Արկադիոս ասէ. Այլ յումմէ՞։ Ռելիսար ասէ. Ի բռնաւորէն։ Արկադիոս ասէ. Այլ թագաւոր քո է։ Ռելիսար ասէ. Ոչ ևս։ Արկադիոս ասէ. Այլ դրժիցես ուխտի հաւատարմութեան քո։ Ռելիսար ասէ. Ընդթութիւն նորա ազատ կացուցանէ զիս յերդմանէս։ Արկադիոս ասէ. Այլ քրիստոնեայ ես դու, և ոչ ներեն քեզ օրէնք աւետարանականք ատել զնա վասն անգթութեանն. և ըստ օրինաց իսկ մարդկութեան՝ անգթութիւն նորա չհրամայէ քեզ դաւաճանել զնա։ Այլ թէր էր պետութեանց կալ յակաստանի, եթէ առ ծանր իրիք հասարակաց ինասակարութեան իշխանին՝ օրէն էր հնազանդելոց վտարանջել։ Այլ եթէ ժողովրդեան առ հասարակ պարտ է կալ 'ի հնազանդութեան՝ թէպէտ և 'ի պատերազմունս աղետաւորս իշխանն մտաբերիցէ վայրապար, ուստի չարիք յոլովք զհետ եկեսցեն, զի՞նչ ապա զիւրաքանչիւր ումեքէ պարտ իցէ ասել՝ որ ապստամբելն կամիցի և վրդովել զաշխարհ։ Այսպէս Յուստինիանոս արար ընդ քեզ անգթութիւն մեծ. այլ միակ եղեան ոչ բաւէ աղարտել զվաստակս ընդ երկար թագաւորելոյն իմաստութեամբ և փառօք։ Ոչ ապա-քէն Յուստինիանոս ընդ ամ երեսուն եկաց տէր քո և բարեկամ և բարերար։ Ռելիսար ասէ.

Ա.յլ և ես ընդ ամն քառասուն կացի նմա հպատակ հաւատարիմ, և անձնանուէր բարեկամ. վստահացաւ նա յիս գործս արքունի մեծամեծս, և ես յաւելի նմա թագաւորութիւնս. հրաժարեցի յայնցանէ, առ 'ի նուաճել զնոսա ընդ իւրև. իսկ նա կողոպտեաց զիս յամենայնէ, յետս էառ զպարգևս իւր զամենայն, այլ դեռևս վայելէ յաշխարհակալութիւնս իմ։ Ա.րկադիոս ասէ. Ոչ այդպէս, Բելիսար. զպատուականագոյն 'ի պարգևաց նորա դեռևս ժառանգես։ Բելիսար ասէ. Լաւ ո՞ր այն իցէ։ Ա.րկադիոս ասէ. Փառք քո. ամենայն հպատակ օրինօք բարձի և աւագութեան հասեալ, թագաւորին իւրում երախտապարտ վասն անուան իւրոյ գտանի։ Յուստինիանոս վստահացաւ 'ի քեզ, և սպարապետ ամենայն զօրացն իւրոց կացոյց զքեզ. եթէ չէր նորա արդարակորով մտօքն հասու լեալ քումդ հանձարոյ և բաւականութեան, 'ի սինքքոր զօրականին կայիր մնայիր դու։ Ի միայնութեանս՝ յորում կեամ հրաժարեալ յամենայնէ, անկարօտ իմիք, և անհրապուրելի յամենայն ցնորից փառասիրութեան և ամբարհաւաճութեան, եթէ ձգմարտութիւն ևեթ անաչառ տայ ինձ բարբառել, ներեա խստութեան բանից. ցանկալի է ինձ օգնել քեզ, այլ չկարեմ մարդահաճել։ Բելիսար ասէ. Լաւ ո՞ք իցես դու, որ զայդպիսի բանս ընդ իս բարբառիս։ Ա.րկադիոս ասէ. Ա.ցացի իսկ, մի 'ի միայնակեցաց եմ, խոյս տուեալ

յանապատ այսր յերեսաց աղետից՝ որ չարագոյն քան զքոյսդ են, մի՛ ինչ երկբայիցիս։ Բելիսար ասէ. Բա՛ւական է, և իցե՞ն աղետք՝ որ հաւասարել իմոցս կարիցեն. դու վեր 'ի վերոյ տեղեկացեալ իմոցս գտանիս։ Փեսայ եմ և հայր. յուշ լինին ինձ վիշտք և վհատութիւն հարսին իմոյ և դրատեր. տնանկս զնոսա տեսանեմ կողոպտեալս և հալածեալս. և զիաՀրդ իցէ ինձ վատութեամբ տեղի տալ բախտին՝ որ ընկճէ զնոսա։ Ոչ, ոչ, ցասումն յիս կացցէ մնասցէ 'ի սպառ անվրէժ, սակայն մինչ 'ի շունչ վերջին կարդացից զվրէժխնդրութիւն։ Ո՛հ, ո՞ տայր ինձ սլանալ հասանել 'ի Բուլղարս, ազգ վայրագ և պատերազմող, որոց յաղթեցի բազում անգամ։ Յնծութեամբ ընկալեալ 'ի նոցանէ՝ առաջնորդէի արիութեան նոցա, և ահա Բելիսար կոյր և տարագիր հասանէր տապալէր զաթոռ բռնաւորին։

Լաւ մինչ դեռ նա զայսոսիկ ահաւոր զօրութեամբ բարբառէր, յոգւոց եհան Ա.րկադիոս՝ առ 'ի մեծարանս օրինաց հիւրընկալութեան ոչ ինչ տուեալ պատասխանի։ Յարեաւ ապա պատրաստել հիւրոյն սպաս գեղջային. և յետ անպաՀոյՀ ճաշոյն հանդեաւ քաջաղնն հեք 'ի գորգ պրտուեղէն, այլ քուն հատեալ էր յաչաց նորա։ Իսկ միայնակեացն մրմրոք կարեկից 'ի սրտի և գոհ ընդ աւուրն նսեհ՝ 'ի քուն լինէր ընկողմանեալ առընթեր հիւրոյն, գոհանալով հիացմամբ զաստուածախնամ տեսչութենէն։

ՀԱՄԱՐ

ԳԼՈՒԽ Գ.

Ի վաղիւ անդր ընդ ծագել նշուլից տունջեան՝ ելեալ Աբկադ և Ռելիսար յայրէն, մեկնեցան վայրիկ մի հեռի 'ի Ճգնարանէն՝ առաւօտին զովացիկ օդովքն վայելել։ Ռելիսար թէպէտ և ոչ որպէս յերէկն պարտասեալ, բայց բուռն ևս 'ի դառնութենէ ցաւոցն և 'ի սաստկութենէ վրէժխնդրութեան յուզեալ տագնապէր։ Իսկ Աբկադիոս լուռ ևեթ 'ի լուր բանից նորա կացեալ առանց ընդմիջելոյ, ուր ուրեմն ապա խօսել կալաւ և ասէ. Աղէ արդ պատմեա ինձ զարկածս քո մանրապատում, և մի անարժան մոերմութեանդ քո համարիր զիս. պատմեցից ապա և ես զիմս քեզ, և լցիս թերևս խելամուտ, զի դառնագունից ևս անիրաւութեանց քան զորոց դուդ հեծես՝ ներեալ է իմ։ Այլ իբրև սակաւիկ մի հանգիցես 'ի վաստակոյդ և զօրասցիս գնալ Ճանապարհ հեռի, խնդրեսցուք հնարս ելից քոց յանսպատեսս և դառնալոյ 'ի տուն առ ընտանիս քո։ Աւյլ բաց դու ինձ հոլանեա այժմիկ զսիրտ քո. հարկ է ինձ գիտել զգաղտնիս քո առ 'ի կարող լինելոյ օգնել քեզ։ Պատասխանի ետ Ռելիսար և ասէ. Գիտեմ և ես. այլ թոյլ արա ինձ վայրիկ մի ամփոփել զմիտս, և 'ի կարգ արկանել զտխուր յիշատակս արկածից՝ որ անցին ընդ իս։ Գիտասցես վաղիւ զամենայն, և դատեսցիս։

Բայց բռնադատէին միտք Ռելիսարայ 'ի մեծարել զդատաստան անծանօթի միայնակեցին ուրում միայնոյ թերևս յանապատի անդ՝ ծանօթ էր լուր անուան իւրոյ։ Զանգի անդր ևեթ հասանէ համբաւ, ուր մեծագործութիւնք և քաջայաղթ արութիւնք հիացմամբ գովասանին. նուազի ձայն նորա 'ի լայնատարդ ամայիս, և յօթևանս լռութեան և խաղաղութեան վէպք նորա չքնաղք օտարացուցիչս իմն բերէն լսելեաց, և յաՃախ ևս զայրոյթ և զարհուրանս։ Բայց թէպէտ և այնքանոյ կարեկցութեանն Աբկադեայ հանդիպեալ Ռելիսար, սակայն ոչ իսկ որչափ թուէրն՝ գտանէր թշուառ։ Ոչք միանգամ 'ի գգուանս բախտին ընդ յամայր ամն յարատևեալ պայծառանան, 'ի կարի իսկ դժնդակ արկածս նորին գտանեն սփոփանս իմն անծանօթս սինլքոր մարդկան։ Սովորեալք 'ի բազմաց հետէ վստահել 'ի նա, սքանչելեաց ակն ունին 'ի նմանէ յամփոփել իսկ նորին զամենայն նշոյլս յուսոյ 'ի նոցանէ։ Ռելիսար սրտի մտաք ցանկայր վրէժխնդրութեան. և թէպէտ մերկ և կողոպուտ յամենայնէ, թէպէտ զուրկ յաչաց և սահեալ նժդեհութեամբ տարագիր յանապատս՝ խոռոչ մի ևեթ ելերին ունելով իւր ապաւէն, և օգնական ոչ զոք՝ բաց 'ի միոջէ Ճգնաւորէն, սակայն մտաքերեր

վեր 'ի վայր տապալել զինքնակալութիւն մեծ։ Բարեբախտութիւն երկարատև և հրաշազան յաջողութիւնք յուսացուցանէին զնա՝ հզօր և անյողդողդ կամքք յաջողել 'ի դէպս նորանշանս 'ի յեղափոխութիւն յաւերժ անմոռաց։ Մատնեալ 'ի բախտէն, սակայն քարք իշխանական չէր ինչ նուազեալ 'ի նմա 'ի բնաւորական յանդգնութենէն, այլ մանաւանդ թուէր յաւելեալ 'ի զօրութիւն ըղձիւք յառնելոյ փառաւորապէս 'ի չարաշուք և 'ի յուսահատ կործանմանէն։ Բելիսար բարեգութ 'ի ծնէ և երախտագէտ, ոչ այլ ինչ կիրս ցայն վայր կրէր 'ի սրբոտի՝ բայց զվեհ և զաղնուական փառասիրութիւն առնելոյ իւր անուն հաւատարիմ տիրասիրութեան և արիական քաջութեան։ Խստակրօն 'ի բարս, մարդասէր, անփոյթ իւրումն օգտի, անխոնարհելի 'ի կեղծաւորութիւն, կարող էր նա քաջի առաքինւոյ անթերի օրինակ արձանանալ, եթէ գոռոզութեան չէր աղաւաղեալ 'ի նմա զայնքան գեղեցիկ բնաւորութիւնս։ Գոռոզութիւն չածէ երբէք յաչս մարդկան ստուերածս փայլման վեհանձն դիւցազին ցորչափ բարեբաստիկ է նա և յաջողեալ. քանզի ամբարհաւաճութիւն և մնապարծութիւն շփոթին անդ ընդ վեհանձնութեան։ Ա՛յլ 'ի ձախողակս՝ կեղծ առաքինութիւնք ոչ զայլս պատրել կարեն, և ոչ բաւել անձին։

Բելիսար անկեալ 'ի փառաց, 'ի վրէժխնդրութիւն և եթ խորհէր. գոռոզութիւն բաւնայր 'ի նմանէ զզօրութիւն հնազանդելոյ ճակատագրին, և համարէր վեհանձնութիւն զեղեռնաւոր խորհուրդս ցասման իւրոյ։ Ա՛յլ յարկածս անհնարինս տիրապէս մեծանձնութիւն այն է՝ անվրդով և անհրապոյր ակնարկել 'ի բախտն, և բերել նմին համբերատար։

ԳԼՈՒԽ Դ.

Եւ սկսաւ վիպել Բելիսար, և ասէ. Որպիսի՞ ինչ դառն յիշատակք 'ի միտս իմ դառնան։ Ոչ այնպէս վիշտ է ինձ խոստովան լինել զյանցանս և զթշուառութիւնս իմ, որպէս պատմել, զանարժան դրժանսն փոխարինեալս ընդ սիրոյ իմոյ, յորոց զարհուրեալ գարշին միտք իմ։ Ա՛հաղ, զիա՞րդ սիրեցի ես զվատ և զանգութ բռնաւորն, որոյ ոչ իշխեալ յայտնապէս մատնել զիս 'ի մահ, ած զինև յամր և սոսկալի պատուհաս, մահ աղօտ և գերեզման անծանօթ ինձ պատրաստեալ։ Պա՞ռտ էր ինչ ընդունել ինձ 'ի նմանէ դատակնիք կորստեան յանշէն անապատի, և վախճանելոյ անշուք և անտես 'ի մարդկանէ ըստ կեանս՝ զոր 'ի բազում պատերազմունս եդի 'ի վերայ նորա։ Ոչ այդպէս, այլ աշխարհագոյժ արարիւ զապերախտութիւն նորա և զանգթութիւն.

եթէ ոչ լեցի ինձ կործանել զաթոռն՝ որում է-
ղէ ես նեցուկ, և զոր նայն պղծեաց, գէթ ակն
յանդիման նորին 'ի մայրաքաղաքի իւրում և
յաքբունիս իւր կորեայց. տեսցէ ժողովուրդ նո-
րա զԲելիսար, լուիցեն զբարբառ իմ, և անար-
գեցիս զաթոռ բռնաւորին։ Երեսուքիր ցայս վայր
դառնակսկիծ սրտի իմում իմաստախոհդ Բա-
կադիէ. այլ արդ լուեցուցանել փորձեցայց զբողոք
իրաւացի ցասման, և պատմել խաղաղութեամբ
զանցս բարօրութեան իմոյ և զաղետալի կործան-
մանն։

Ունայ յաւուրս ինքնակալութեան Յուստի-
նեայ[1]։ Որդի էր սա երկրագործի ուրումն թրա-
կացւոյ աղքատի, և անդստին 'ի սկզբնաբոյս
տիոց գրեալ 'ի զինուորութիւն, վաստակովք և-
եթ քաջութեան ոգէտ 'ի դպրութենէն ամբար-
ձաւ 'ի գահ ինքնակալութեան, գեղեցկանսեհ
բախտին ցուցեալ միշտ արժանի[2]։

Ունախընծայ փորձ զինուց եղև ինձ առնուլ
յերկարատև պատերազմին ընդդէմ Պարսից,
որում մնայր ինձ յաւուր միում առնել զրաւ։
Իշխանն Յուստինիանոս քեռորդի ինքնակալին,
և ընտրեալ 'ի Թագաժառանգ, զօրավարէր մե-
ծոյս բանակի. և յաջողեաց ինձ 'ի Ճակատու-
անդ ձգել զաչս նորա յիս։ Եւ յետ Ճակատա-
մարտին, յորում յերկեայս եկաց յաղթութիւն,

1 Իմա զՅուստինոս երէցն կամ զառաջին։
2 Ըստ պատմագրաց։

կոչեաց զիս առ ինքն. և ընդունելութիւնն, զոր
գտի առ նմա, փառաւոր արար զոր 'ի մարտի անդ
ցուցեալ յինէն քաջութիւն։ Պարտ էր իշխա-
նաց առաւելագոյն ունել հոգ առ 'ի դիտել և 'ի
յայտ ածել զվաստակս, և մի անտես առնել.
մարթ է նոցա բանիւ և եթէ բարբառոյ ածել 'ի
լոյս զՀանՃարս պիտանիս, կարող են նոքա երևե-
լի և աշխարհաքարող առնել զայր մեծահան-
Ճար ցայն վայր անծանօթ. վարկ նոցա պատկա-
ռելի ամենեցուն յօրինէ նմա 'ի վայրկեան ժա-
մանակի անուն փառաւոր։ Ընդնաղ բարեմաս-
նութիւն, զոր սակաւք յիշխանաց յօգուտ 'ի
կիր արկանեն։

Յուստինիանոս ընդ ձեռամբ իմաստնոյն Թէո-
փիլեայ կրթեալ[1], ընկալաւ 'ի իմամոց նորա զա-
մենայն որ ինչ յամենակատար դաստիարակու-
թենէ տնօրինին ձիրք, լիուլի զարգացումն բնա-
ւից իմացական զօրութեանց, և ներհուն հմտու-
թիւն իմաստնոյն կարծեաց արդարակորով տե-
սութեանց և գերազանց իմաստից։ Թագաւոր
իմաստուն ոչ ըստ յօժարութեանց իւրոց վարէ
զաշխարհ, այլ հանՃարով և իմաստութեամբ։
Բարւոք դաստիարակութիւն ոչ կարաց նուա-
Ճել 'ի Յուստինիանոս զանկարգ յօժարութիւնս,
և ոչ զմեղկութիւն բարուց նորա բժշկել. սա-
կայն խելս խառնեալ 'ի նա՝ կարաց զամն երեսուն

1 Ըստ պատմագրաց։

և հինգ տալ նմա ինքնակալել փառաք։ Սորին ա-
ղագաւ ներհակակիր երևոյթս ցուցցեն 'ի նմա
վեպք աներկբայապէս։ Պպաքէն յանցեաւ նա
ընդդէմ օրինաց՝ յամուսնաւորել ընդ իւր զկին
մի հերատուկ՝ և անարգեաց զփառս ինքնակա-
լութեան 'ի կացուցանել զշխոյ զդուսանն կա-
տակերգակ[1]. սակայն պայծառացոյց վերստին
զշուք արքունի, և վերհատուցանէր կերպարանաք և ազ-
նուական գնացիւք յաւել զփայլ արքունեացն,
և արար մատեան օրինաց 'ի զարմացումն համա-
րէն Եւրոպայ։ Սանձահարեաց զապականութիւն
բարուց և զհամարձակ ազատութիւն, ծաղկե-
ցոյց զկրօնս, և տաճարս հոյակապս կառոյց[2]։
Տկար էր առ տնին 'ի կենցաղավարութիւն, այլ
'ի տեսչութիւն աշխարհին անյողդողդ, բնաջինջ
արար զերկպառակութիւն 'ի ժողովրդենէ[3]։
Ուիշտ 'ի ներքս և առատ առ արտաքինս, ան-
պատերազմասէր և բազմահոչակ աշխարհակա-
լութեամբք բարգաւաճեցոյց զինքնակալութիւն
իւր։ Սակայն հանդերձ ներհակութեամբս այ-
սուիկ տեսչութեան իւրոյ ընդ բնաւորութեան՝
չէ նա յեղյեղուկ։ Տեղի տայ կրից անձին. այլ
զի արդարակորով է մտաք և լայնախորհուրդ,
գիտէ ընտրել իւր պաշտօնեայս և զօրավարս,

1 Դշխոյն Թէոդորա էր կատակերգակ, և օրէնք արդելուին արքունեաց ջամուսնանալ ընդ այնպիսում։
2 Ընդ որս և զսրբուհւոյն Սոփիայ։
3 Որպիսի էր Կանաչէին և Կապոյտ յորջորջելոց։

Ճանաչէ որ ինչ իւր իսկապէսն է օգուտ, և հա-
մարի զկրօնս և զհասարակաց բարեբարութիւն
նեցուկս կարևորս 'ի հաստատութիւն գերագոյն
իշխանութեան։ Ոչ առաքինասէր ոք է, և ոչ
զՃշմարտակ առաքինութեան առեալ. և թէպէտ
չարաշուէր բախտիւ զուրկ 'ի քաղցրութենէ նո-
րին, սակայն կարի իսկ խելամուտ օգտիցն որ
առ 'ի նմանէ։ Մինչև ցաւուրս դժնդակ ապե-
բախտութեան իւրոյ առ իս՝ երևէր 'ի նմա կըր-
թութիւնն յառաքինի դաստիարակէն իւրմէ ընդ-
կալեալ յառատաբաշխ փոխարէնս վաստակոց
բարեաց, 'ի հրամանս արքունիս, 'ի մատեան օ-
րինացն զոր արար, և 'ի տեսչութիւն աշխար-
հին։ Ըստ այսմ կրթութեան ինքնակալեաց
Յուստինիանոս. և առանձնականքն ևեթ նորա
գործք յախտիցն ապականեալ, ընդիկ բարք նորա
առ տնին ևեթ ցուցան։ Ընկալաւ զիս 'ի ծառայու-
թիւն իւր, և վաղ իսկ մտերմացաւ ընդ իս. բայց
մտերմութիւն իշխանաց բաղում այն է, զի ար-
դասիք են հեղգութեան և մնապարծութեան։
Ռանգի պարծանս խնդրեն նոքա. և առ 'ի ներ-
ծանել 'ի բազմապատիկ հոգոց և 'ի տաժանաւոր
վաստակոց՝ ծանրաբեռնեն նոքիմբք զմտերիմն իւ-
րեանց, որ խաբին ընդ երկար 'ի մեծարանաց նո-
ցա մինչև ստուգիւ զվասն էրն ծանուցեալ։
Շարժէր սիրտ իմ ընդ վստահութիւն նորա յիս,
և գաղտնիք նորա կարևորք առ ոչ ինչ տային հա-
մարել ինձ զիմս։ Ընդայգ 'ի լուր քանից նորա,

և խրոխտ ընդ խորհրդականութիւն իմ, ոչ ինչ հոգայի յայտնել նմա զիղձս անձին, և ոչ ուշ 'ի կուրծս առնէի ընդ անհոգութիւն նորա առ 'ի գիտել զայս։ Ցիրասիրութիւն բռնացաւ 'ի սիրտ իմ քան զամենայն կիրս. և թուէր ինն ինձ այնպէս զի հասու լեալ նորա այնմ, առ 'ի հաճել զայն՝ զանձնէ և եթ խօսէր ընդ իս։ Բայց թէպէտև ընտրեալ թագաժառանգ 'ի քեռւոյ իւրմէ յինքնակալէն, չէր ինչ աներկեւան յերեսաց հզօր կուսակցութեան համախոհին Պիտալիանոսի ուրումն՝ որ իւր համարէր անկ զգահակալութիւն[1]։ Սա այր քաջ պատերազմող, սկիւթացի էր ազգաւ, հռչակաւորին թոռն Պսպարայ. ոչ առաքինութիւնք էին նորա՝ որք երաշխաւորեն զհաւատարմութիւն հպատակաց, և ոչ հանճար և խոհականութիւն՝ որ միայն պատրաստեն զմեծամեծ յաջողութիւնս։ Ընդհատանայր նա զի 'ի բազմավտանգ ասպարիզի փառասիրութեան է կէտ ինչ՝ որ սահմանէ զբախտ, և զոր դժուարին է ճանաչել և կարևոր զբռամբ ածել, ուր յանդգնութիւն և զօրութիւն պարտին յաջորդել խոհեմութեան։ Այոյս տուեալ նորա 'ի խորս Ֆրակիոյ՝ զոր քաջութեամբն իւրով նուաճեալ էր, յինքն յանկուցանէր զենակիչս աշխարհին զազգ պատերազմող, որ կազմ և պատրաստ էին յամենայն վտանգս առ 'ի սէր նորա խիզախել։ Ի՝հանգամայն և 'ի Կոստանդնուպօլիս յաճախէր իւր համախոհս, և կազմէին անդ բարեկամք իւր գունդ ահաւոր՝ որ օր ըստ օրէ յաւելոյր 'ի բազմութիւն[1]։

Ինքնակալին հասակ ալևոր բառնայր զամենայն յոյս ժողովրդեան վայելելոյ այլ ևս 'ի նա ընդ երկար, զոր յոյժ իսկ արժանապէսն մեծարէր։ Ել զոյր նորա ժառանգ հարազատ, քանզի Յուստինիանոս քեռորդի նորա էր[2]։ Պիտալիանոս զինուորական հանճարոքն հռչակաւանուան իւրոյ, և պատերազմավարձ հմտութեամբն յինքն ձգէր զամենեցուն վարկ։ Հասու եղէ ծածուկ խորհրդոցն, զեկուցի Յուստինիանեայ զամենայն, հանի զնա 'ի վտանգաւոր յապահովութենէն, և խորհրդակից եղէ նմա կոչել զՊիտալիանոս յարքունիս՝ առ 'ի կարող լինելոյ ըզգուշագոյնս դիտել զգնացս նորա։ Ամի յերկուց մնայր Պիտալիանեայ ընտրել. կամ հրաժարել անկեղծաբար 'ի փառամոլ խորհրդոցն և հնազանդել, և կամ պարզել անդէն զդրօշակ ապստամբութեան։ Ի ձեռին նորա էր յարուցանել զՖրակիա 'ի զէն, խաղալ ընդդէմ Բուլղարաց՝ որք սպառնային խուժել 'ի սահմանս ինքնակալութեանն, և յաղթական լեալ 'ի վերայ այլազգեաց՝ մտանել տիրաբար 'ի Կոստանդնուպօլիս։ Ֆուի իմն բախտին վստահացելոց և եթ

1 Ըստ պատմագրաց։

1 Ըստ պատմագրաց։ 2 Ըստ պատմագրաց։

յինքն օժանդակել փառաց։ Ալ Իտալիանոս յանդուգն 'ի խորհուրդս և երկչոտ 'ի գործ, ոչ գիտաց ոչ զիւրն և ոչ զկուսակցացն իւրոց զօրութիւն. երկեաւ նա յայտնել զանձն 'ի դէպ ժամանակին, 'ի դերև արար զյոյս համախոհիցն իւրոց, և սարտոյց զնոսա յիւրմէ։ Յընդունել նորա զբդեշխութիւն և զնորանոր պատիւս՝ զորս շնորհէր նմա ինքնակալն, կեղծաւորութեամբն իւրով եթեր զդժպհի կերպարանս ապերախտութեան և վատութեան[1]. աներկեւան զանձն հաւատարէր յատենական դատապարտութենէ, վրստահ 'ի Ճարտար զգուշութիւնս իւր. ոչ ածեալ զմտաւ զի բաւէն 'ի քրէական ոՀիր և ապացոյցք բարոյականք, և զի յաՀախ ըստ քաղաքավարական օրինաց՝ այր հզօր և կասկածաւոր ընդ դաւաՀանս համարի, և համախոհք նորին ընդ ապստամբս։ Ալ Իտալիանոս գիտէր քաջ զի առ ահի արշաւանացն կոչեցաւ յետս. զօրավարք աշխարհին քաջայաղթք հանդերձ ինքնակալաւն էին ծերացեալք, և լքեալ կայր աշխարհն անպատսպար. իսկ ինքն յաստիս տիոցն համարէր աներկբայելի 'ի ձեռս բերել զզօրավարութիւն բանակին՝ որ զինուորէր ընդդէմ թշնամեաց։ Խորհէր արդեօք յետ յաղթութեան, յոր հաստատեալ էր բախտ աշխարհին, մերկանալ զպատրուակ. այլ խրախուսեցի ես ինքն, թէպէտև մանուկ դեռևս

[1] Այս ամենայն մանրամասնաբար ըստ պատմագրաց։

տիուք, խնդրել զզօրավարութիւնն, և ընկալայ զայն ըստ թախանձանաց արքայազնին Յուստինիանեայ։ Պարտ էր ինձ ըստ արժանի մեծի շնորհին զանձն ընծայեցուցանել. մանաւանդ զի քրիստիջիւն մեծ և տրտունջ ամենայն ուրեք լսելի լինէին զայնմանէ։ Դէպք 'ի բարի պատահեցին Ալ Իտալիանեայ. նախանձ նորա ընդ պատիւն շնորհեալ ինձ 'ի ծաղկի տիոցս՝ գրգռեաց և զօրացոյց յանկարծ 'ի նմա զռամկահաճոյ բարս. և կուսակիցք նորա վառեալք 'ի հասարակաց կարծեաց՝ յաւելին պատրաստել նմա կորուստ։ Օ՛ի ստահակ յանդգնութիւն նոցա ոչ խնայեաց 'ի չարագրգիռ հրապոյրս և 'ի գրուածս ընդդէմ արքայազնին, և հակառակ նորին իսկ ինքնակալի. որ ոչ ինչ առ ժամն զդէմ կալաւ թշնամանացն՝ առ 'ի կարող լինելոյ սաստիկ ևս առ յապայ պատուհասակոծ առնել զայնոսիկ։

Դիմեցի ընդդէմ Բուլղարաց, մղեցի Ճակատամարտ՝ որ զբախտ աշխարհին սահմանէր, և գրեթէ սպառսպուռ զխուժանն բարբարոսաց սատակեցի։ Այս պայծառ յաղթութիւն անդորր երկարատև պատրաստեր ինքնակալութեան, միանգամայն և արդարացուցաներ զընտրութիւն արքունեացն, և զպաշտպանութիւն արքայազնին բարերարի իմոյ և բարեկամի։ Ցուեր ինձ յայնժամ պատահեալ բարեբաստութեան 'ի փառս անդ. և է իսկ արդեօք անդ երանութեան կենցաղոյս ծայր։ Ո՞ր այլ փառք երանաւէտ 'ի զի-

նուորական ասպարիզի և 'ի կեանս մարդկան քան յառաջնումն ձևակատամարտի կանգնել յաղթանակ. մանաւանդ ուր զփրկութիւն աշխարհին յաղթութիւնն այն պատրաստիցէ։ Որպիսի՛ յեղակարծ և հրաշալի փոփոխումն մարտ այսպիսի ոչ ածիցէ կենաց զօրավարին։ Այրիկ մի յառաջ ոստանիկ լոկ պատուեալ, և ահա ընդ վեհ ուրեարն արդ դասակարգեալ. որ յերեկին եթէ կորընչէր, տանէր ընդ իւր անուն աննշան և հանձար անշուք 'ի գերեզման, և արդ վէպս շքեղս յարձանագիրս դրոշմէ, արդէն վայելեալ 'ի հրուչակ համբաւոյ իւրոյ, և նկատեալ զայն լիուլի 'ի ձայն ցնծութեան զօրականին։ Ոչ ինչ առաւել ցանկալի կայցէ քան զիշխանութիւն յաղթող զօրավարի 'ի յաղթական իւրումն բանակի։ Իւրաքանչիւր ոք 'ի զօրաց անտի 'ի նմանէ ունի զփառսըն, զի առաջնորդութեամբ նորա յաջողէ ամենայն, և հրամանք նորա յարուցանեն քաջազունս. ինքնին զվաստակս իւր վարձատրէ, և բաշխէ կամ գէթ խոստանայ զարժանի մրցանակս քաջութեան։ Վանի՛ տկարագոյն է առ իշխանութեամբ նորա արքայականն պետութիւն. ոչ ուրեք ոք այնպէս տիրապետէ 'ի վերայ մտաց մարդկան, որպէս զօրավար յասպարէզ մարտի զհետ պայծառ յաղթութեան։

Զաղանին զերծեալ յերկիւղէ թշնամւոյն, ոչ և իս խնայեաց զգուշութեամբ 'ի փառամոլն Լիտալինոս, որ զեղեռնաւոր առաջարկութեանն

իւրոյ և զգաղտնի դաւակցութեան մահուամբ ետ զվրէժ[1]։ Այս դէպք, որ վայրիկ մի յառաջ բաւէին 'ի դրդել ապստամբութիւն, թեթև ինչ և եթէ յարուցին աղմուկ։ Յուստինոս գիտաց միշտ 'ի դէպ ժամանակի 'ի կիր արկանել զվարձս՝ զներումն, զխստութիւն և զպատուհաս։ Օրայրագոյն ճարտարութիւն մեծի արուեստի թագաւորութեան այն է, հանդերձ արդարութեամբ և զգուշութեամբ գիտել ցոր վայր մարթ իցէ անվտանգ և անպարսաւ յառաջ մատչել։

Օյետին աւուրս կենաց ինքնակալիս աղմկեաց, և փութացոյց իսկ զվախճան նորին արկած ահագին. քանզի սոսկալի սասանութիւնք երկրի աւերեցին զԼսորիս, և քաղաքն անտիոքացւոց հանդերձ բնակչօքն կորեաւ անդնդասոյզ։ Քաղաքս այս հոյակապ և բարգաւաճեալ, սիրելի յոյժ ինքնակալին, 'ի սակաւ ժամս անհետ եղև. և ոչ աւերակք պատուականք վկայեսցեն ապագայ դարուց զնմանէ թէ եկաց։ Յաճին դարձաւ, կործանեցաւ անյարիր, ընկլաւ յանդունդս յանկարծակի բերանաբացեալս 'ի կլանել զնա։ Այ՛հ լայնատարը եկուլ միանգամայն զապարանս մեծատան ընդ հիւղ աղքատին. և յական թօթափել ծածկեաց 'ի խորս անել և անդարձ՝ ժողովուրդ անբաւ, շինուածս մեծածախս, զհրաշակերտս արուեստից, և զփառս բա-

1 Ըստ պատմագրաց։

զումանթիւ իմաստնոց և Ճարտարաց, դատապարտեալ արագարագ 'ի կորուստ, և Ճեպ 'ի Ճեպ 'ի մոռացօնս։ Բաղաքին այնորիկ հիքի և հետք անգամ ոչ մնացին 'ի վերայ երկրի. շուրջանակի զնովաւ այնպէս վեր 'ի վայր ամենայն ինչ տապալեալ, զի յերեկոյ 'ի վաղորդայն ոչ գոյր Ճանաչել զտեղի նորա, և ոչ զՃանապարհն՝ որ ածէր 'ի պարիսպս նորա[1]։

Ոչ կարաց ինքնակալն տոկալ մահահրաւէր տխրութեանն ընդ աղէտս հասարակաց[2]։ Այլ ի մի յառաջ քան զվախճան իւր՝ կոչեաց առ ինքն զաւագանին և զզօրավարս, ընդ որս գտայ և ես, և հեղձամղձուկ դորովանօք լուայ յորդորանաց նորա 'ի հնազանդութիւն և 'ի հաւատարմութիւն յաջորդին իւրոյ։ Խօսեցաւ ընդ մեզ և ասէ. Ոչ դիւրագին ստացայ ես զինքնակալութիւն. ոչ դէպք ինչ ետուն ինձ զայն, այլ մեծարանաց և շնորհապարտ գոհութեան եղեն գերապանծ արդասիք։ Դիտէք իսկ քաջ զի յարուցի զայն 'ի կործանմանէ, յանձանձեալ զնշխարս նորին. ընդարձակեցի զսահմանս նորա, զօրացուցի 'ինման զարդարութիւն, ծաղկեցուցի զարուեստս, զանկերպարան օրէնս ածի 'ի յարդ և 'ի կերպարան, զգօնացուցի նոքօք զազգս խուժադուժս, 'ի նոր մատեան օրինաց ձեռնարկեալ ածի զայն յամբոկ, և ոչ ինչ 'ի կենցաղօգտութեանց թո-

1 Ըստ պատմագրաց։ 2 Ըստ պատմագրաց։

զի անգործ 'ի միում ևեթ ինքնակալութեան։ Օ ինչ այլ մնայ ինձ ցանկալի, բայց զի ժառանգ ինքնակալութեանս իմոյ անեղծ պահեալ զվաստակս իմ, զսկսեալն յինէն կատարեսցէ։ Ի սահմանել իմում զժառանգ իմ, յօգուտ ևեթ հայրենեաց իմոց խորհեցայ. փոյթ փառաց իմոց ելաշխատուրէ ձեզ զբարւոք ընտրութիւն իմ. որպէս զի եթէ ձեզ իսկ անկ էր ընտրել զժառանգ գահուս, պարտ էր ձեզ առ 'ի յաջողութիւն նորին՝ ինձ զայն յընտիր առնել։ Ընտրեալն յինէն առաջնորդեսցէ ձեզ ըստ նոցին կարգաց, որ այդքան պայծառացուցին զազգ ձեր. թուեսցի ձեզ կալ և մնալ ընդ ինև. նա ինքն յօգուտ 'ի կիր արկեալ զգործեցեալն յինէն և որ ինչ թողեալ 'ի նա առաջարկութիւնս, ածցէ 'ի լրումն աներկբայապէս զբարեբաստութիւն հասարակաց և զփառս ազգիդ։

Լու իբրև լուեաց նա 'ի խօսելոյ, երդուաք ամենեքին նահատակել մինչև ցմահ 'ի վերայ իրաւանց ինքնակալին։ Ցանկալի էր ինձ անդ փոխանակել զկեանս 'ի վերայ նոցին, ցանկալի ևս գտանել պատեհ տալոյ նմա առհաւատչեայ զտիրասէր նախանձու իմոյ։ Այն ինչ նորա աւանդեալ զհոգին, մնացորդք համախոհիցն Ալեքսանդրեայ միաբանեցին ընդ կաց մնաց Կապուտակացն գնդի և Կանաչիցն կոչեցելոց, և յարուցին աղմուկ մեծ 'ի ժողովրդեանն 'ի Կոստանդնուպօ-

1 Ըստ պատմագրաց։

լիս։ Կէսք 'ի դաւակցայ ածին ձգեցին 'ի մայ-
բաքաղաք անդր զՀիպակէս, և ոչ խնայեալ 'ի
բողոք և յարտասուս հարսին նորա՝ կարդացին
զնա ինքնակալ, և առ 'ի չգոյէ արքունական թա-
գի՝ մանեակ ոսկեղէն ածին 'ի գլուխ նորա[1]։
Մարթ էր ջոկատիւ միով մարզիկ զօրաց քնաջինք
առնել զապստամբսն, այլ դժպհի իմն էր կոտո-
րածիւ ժողովրդեան սկիզբն առնել ինքնակալու-
թեան։ Յանձն առի ցածուցանել զապստամբու-
թիւնն, և յաջողեաց ինձ առանց և ոչ շինթ մի
արեանհեղութեան։ Հիպակէս միայն և երկու
կամ երեք առաջնորդք ապստամբացն աստենական
դատակնքաւ մատնեցան 'ի մահ, ինչք նոցա գրաւ-
եալ յարքունիս. բայց յետ սակաւ ժամանակի
դարձոյց զայնոսիկ ինքնակալն յորդիս նոցա[2]։

Մի 'ի նախընծայ արդեանց ինքնակալութեան
նորա եղև գործ կրօնասիրութեան. զի էարկ նա
զառաջին վէմն հիման զհոյակապ եկեղեցւոյ սրբ-
բուհւոյն Սոփիայ[3]։ Եւ ապա ձեռն էարկ 'ի կա-
տարումն մատենին օրինաց, որ 'ի նախորդէն իւր-
մէ սկզբնաւորեալ. տասն այր հմտագոյնք յիրա-
ւագիտաց ինքնակալութեանն, որոց գլուխ և ա-
ռաջնորդ էր հանճարեղն Տրիբոնիանոս, կարգե-
ցան 'ի տաժանաւորն վաստակ. և խաղաղութիւն
երկարատև ետ նոցա պատեհ անընդհատ պա-
բակամբք հանելոյ զայն 'ի յանկ[4]։ Բայց ինքնա-

1 Ըստ պատմագրաց։
2 Ըստ պատմագրաց։
3 Ըստ պատմագրաց։
4 Ըստ պատմագրաց։

կալն հանապազորդեր ընդ իս ցանգ 'ի նոյն մտեր-
մութիւն, խորհրդակից իւր ունէր զիս յամե-
նայնի, և զկարի իսկ գաղտնածածուկ խորհուրդս
իւր վստահէր յիս։ Սակայն բազումք 'ի դրանիկ
որերոյ բախտաւորագոյնք և առաւել քան զիս
էին բարերարեալ յարքունիս։ Սիրելի էի ես
յայնժամ և մեծարոյ քան զայլս, սակայն զգու-
շաւորագոյն քան զամենեսին. բայց իշխանք դուն
ուրեք ինքնայորդոր ընորհեն ինչ, այլ 'ի Ճարտար
հնարից և 'ի թախանձանաց յորդորեալ։

Յետ վեցամեայ խաղաղութեան հարկ եղև
ինքնակալին յառնել 'ի պատերազմ ընդդէմ Կա-
բադեայ արքային Պարսից, և զօրավար բանա-
կին կացոյց զիս։ Ի միում ևեթ Ճակատամարտի
կատարեցի զերկայն պատերազմն, որ բազումանա-
գամ վերստին դրդեալ, և ցարդ աղէտս այնքան
հասուցանէ աշխարհին։ Հարկեցուցի զհզօր պե-
տութիւնն կռեալ դաշն խաղաղութեան, և ապի-
կար զնա կացուցի դրժելոյ դաշինն[1]։ Ի Ճակա-
տամարտի անդ գունդ մի Ալանդալաց զինուորեր
ինձ յօգնականութիւն. քանզի Ելդերիկեայ արբ-
քային Ալանդալաց, որ նիզակակից մեր էր,
գունդս բազումն յղեալ էր առ մեզ զօրավարու-
թեամբ քաջի պատանւոյն Պելիմերայ, որ ապա
ամբարձաւ յաթոռ, և զորոյ մնայր ինձ յաւուր
միում խորտակել զզօրութիւն։ Հուժկու պա-
տանին արքայազն, որոյ ոչ ինչ աւելի էին քան

1 Ըստ պատմագրաց։

զամն քսան, 'ի վերջնումն Ճակատու պատսպարան եղև յաղթութեան, և քաջութիւն մեծ և արագամտութիւն ընդ անվեհեր արիութեան ելցոյց 'ի մարտի անդ։

Դարձայ յաղթանակաւ 'ի Կոստանդնուպոլիս, և ինքնակալն ընկալաւ զիս որպէս զփրկիչ հայրենեաց, և 'ի վաղիւ անդր փութացաւ 'ի տաճար սրբուհւոյն Սոփիայ 'ի նաւակատիս, զի դեռ այն ինչ կատարեալ էր շինուածն. գնայի և ես ընդ նմա, առեալ զՀետ զորեարն առաքինացեալ 'ի պատերազմին Պարսից։ Ի մեծագործ և 'ի լայնատարը տաճարի անդ, ուր փայլումն ոսկւոյ և ականց պատուականաց ամենայն ուստեք ցոլանայր, էր յայնժամ տեսանել 'ի մի վայր ածեալ զամենայն որ ինչ հրաշացուցիչ է մտաց և հիացումն հոգւոյ, 'ի շուք կրօնից և 'ի հանդէս զինուորական։ Ինքնակալին անդ զառաջինն տեսանելով զտաճարն զայն վեհափառ հանդերձ ամենայն զարդուքն և շքեղ հանդերձանօք, գոչեաց հիասքանչ. Փառք 'ի բարձունս, յաղթեցի Սողոմոնի[1]։ Հարկ է ինձ աստ վայրիկ մի զկայ առնուլ ընդ գորով և ընդ վրդով սրտի դառնակրսկիծ, հասեալ 'ի բարեբաստագոյն աւուրս կենաց իմոց։ Դեռ այն ինչ ածեալ էր իմ հարսն՝ որում 'ի բազմաց հետէ տարփայի, վայելէի 'ի համբաւ, ընդ որում ոչ ոք 'ի զօրավարաց կարէր կալ

1 Ըստ պատմագրաց։

'ի կշիռ. թուէր ինձ աներկեւան ժառանգել զսիրտ և զվստահութիւն ինքնակալին. հաւատարմութիւն վկայեալ մեծամեծ վաստակօք, տիրասէր նախանձ 'ի քսան ամաց հետէ, և արհամարհութիւն անձին օգտի, բառնային յինէն զամենայն կասկած չարեաց յերեսաց նախանձու և ատելութեան։ Ա՛յնպէս սիրէի զինքնակալն, զի քաղցրագոյն էր ինձ յոյժ համարել երաւունս մեծարանաց և շնորհակալութեան իւրոյ քան պարծանս ինձ զպայծառագոյն վաստակս իմ։ Այրջանիկ յարքունիս սիրելութեամբ համբաւով և աներկեւան ապահովութեամբ. երջանիկ առանին սիրատարփ խանդաղանօք հարսին և սրտեռանդն մտերմութեամբ բարեկամաց. սիրելի ժողովրդեան և մեծարոյ զօրականին, համարէի անդրդուելի զնսեհ բարեբախտութեան իմոյ, ուր առաջի կայր ինձ ընդ հուսկ կորուսանել 'ի մանկ զքաղցր պատրանսն։

Որոյ միանգամ չիցէ կեցեալ յարքունիս, ձախողակի բերեն կարծիս, և զրպարտիչք գտանին յանգէտս, իբր այն թէ ամենայն ոք սիրելի թագաւորին 'ի խրոխտումն զառածանիցի. այլ խաբին։ Օ՛ի որ չիցէ ոք վատ կամ անմիտ, դուն ուրեք խրոխտայ, 'ի հաւասարիչ զինչումն և 'ի նուաստիչ մեծարանս ընդունելով։ Ա՛մբարտաւանութիւն և գոռոզութիւն բաժինք են յաձախ դրանիկ մարդկան յանիրաւի մեծարելոց յարքայէ, որք առ անմտութեան հնարին պանծացուցանել

զմեծարանս իւրեանց։ Իսկ որ իրաւապէտն մեծարին, ոչ ցոյցս ինչ առնեն, և չեն ինչ նոցա պէտք վիզ 'ի վեր ամբառնալոյ, գիտե ամենայն ոք զի սիրելի են նոքա արքայի, և խորհրդակիցք նորին։ Բազում այն է զի բարեկամք նոցին են յանդգնութիւն անհանդուրժելի, որք ատելի առնեն զիշխանս և զաւագանին։ Որչափ հեռանան շնորհք յաղթերէ իւրեանց, այնչափ առաւել գտանին մնապարծք և կարձամիտք, վասն զի մարթ է նոցա կեղակարծս երևել և անշուք. յայն սակս հանդիսանալ խնդրեն և երևելիք գոլ, ևս և թշնամանօք փառասիրութեան այլոց։ Ըստի և ձախողակի նախանձայուզութիւնք և խօլական ձեռներիցութիւնք՝ որք 'ի վտանգ արկանեն զշնորհընկալն, և կորուստ իսկ մարթեն հասուցանել նմա։ Եթէ բարեկամացն իմոց չէր գործեալ անխոհեմն, ոչ յաջողէին նախանձորդք իմ զահավիժել զիս յանդունդս՝ յոր գտանիմ։ Փորձն չարաղէտ եւ ինձ անագան այսմ խելամտել. այլ յայնժամ պարծէի ընդ այնպիսի բարեկամն, և կարծէի զի բազմութիւն նոցա և եռանդն բարեկամական պատսպարանք լինէին ինձ՝ անդրդուելի ունել զիս 'ի կայս։

Մինչ իբր երեք 'ի վերայ անցեալ յետ խաղաղութեանն ընդ Պարսս, խորհուրդ աշխարհակալութեանն Միրիկեայ հաստատեցաւ յատենի[1]. և

1 Ըստ պատմագրաց։

մի 'ի խորհրդականաց յառաջնորդութիւն արշաւանացն առաջարկեաց զայր մի, որոյ 'ի ծովամարտի ուրեք կալեալ էր յաղթութիւն։ Այս ինքն էր Այերսէս, որ հռչակաւորն եղև յետոյ, և հրամայեաց առիթ իմոյ կործանման։ Փարաս ջերմագոյն 'ի բարեկամն իմ ընդդէմ եկաց առաջարկութեանն, արհամարհանօք խօսեցեալ զԱյերսիսէ. և յայնմ օրէ եղէն ինձ ոխերիմ թշնամիք Այերսէս և որ առաջարկեացն զնա։ Օ՜ օրաւարն նաւատորմին կացոյց զիս ինքնակալն, խաղալ յՄիրիկէ. և բարեկամք իմ յաղթանակեալ Ճոխանային 'ի վերայ խորհրդականին, և անգոսնէին զԱյերսէս. ուստի անպատեհ թշնամանաց անկան զինեւ նշմարանք, և զաչս ամենեցուն յինքն ձգեաց Այերսէս. քանզի համարէին 'ի նմա հանձար գերազանց, որ թուէր նոցա երկեղուկս յիս արկանել։ Այր, որ մինչև ցայսժամ անանշանն էր, ժառանգեաց զփառս նախանձորդ երևելոյ ինձ. և անխոհեմութիւն բարեկամաց իմոց արար զնա յանկարծ նշանաւոր։

Հաւարկեցի, հասի ընդ զօրս իմ յՄիրիկէ, առի զԱրքեղոն, և մոի զՀետ քաջին Պելիմերայ արքային Ալանդալաց, որ էր 'ի սերնդոց հրաչակաւորին Պենսերիկեայ[1], և բռնակալեալ էր զաթոռն՝ որոյ օրինաւոր էր ժառանգ։ Բանզի Իգերիկեայ ապիկար արքայի ոչ գոյր որդի, և

1 Ըստ պատմագրաց։

Գելիմերեայ առանց ուրուք հակառակութեան հասանէր ժառանգութիւնն. այլ սորա սրտմբտեալ ընդ մեղկութիւն և ընդ ապիկարութիւն նորա, ընկէց զնա յանթոռոյ. և խնայեալ յարև նորա, տարագրեաց զնա յաքսոր։ Իսկ երիկ քանզի նիզակակից էր Յուստինեայ, խնդրեաց 'ի նմանէ պաշտպանութիւն. բայց Գելիմեր ոչ լուաւ նմա, և ոչ դարձոյց Յուստինիկ զթադաւորութիւնն, և աստի դրդեցաւ պատերազմն[1]։ Գումարեաց նա զզօրս իւր, և հասի ես 'ի վերայ նորա 'ի տրիկամերեան դաշտս հեռի 'ի Կարքեդոնէ եօթն փարսախաւ. անդ մղեցաք պատերազմ երկայն և բազմաղէտ քան զամենայն պատերազմունս իմ։ Որպէս արդարև զօրավար հզօր 'ի մարտի անդ առաքինացեալ Գելիմեր, աբար հրաշս քաջութեան. այլ բախտն մատնեաց զարիութիւն նորա, գունդք նորա խորտակեցան, և 'ի սպառսպուռ մատնեցաւ 'ի պարտութիւն։ Շուրջ պաշարեալ ամենուստ, եբայ իւր Ճանապարհ միջամուխ լեալ անվեհեր ընդ բանակ մեր. և խոյս տուեալ ջոկատիւ միով արանց իւրոց հարիւրոց, անկաւ 'ի լեառն Պասուկ. և ընդ հետս դժուարակոխս, որ քնակչաց ԼԵԹ երկրին ծանօթք էին, եկ 'ի կատար լերինն 'ի ժայռ անմատոյց[2]։ Ընդդէմ առ պատանին հէք արքայազն Էհատրիկին նորա արիասիրտ՝ գոլ նժդեհակից առն

1 Ըստ պատմագրաց։ 2 Ըստ պատմագրաց։

իւրոյ, 'ի պտղոց վայրի կերակրելով, անյարկ անծածկոյթ ապաստանեալք յանձեռագործ այրի ուրեք 'ի սոսկալի քարաժայռս անդ խոռոչացեալ. ուր ընդ փոքու գնդի քաջացն՝ որ զհետ եկեալ էին՝ հաստատեալ էր կալ մնալ 'ի սպառ և չլինել անձնատուր։ Ղձիւք ցանկայի ունել զնա, և գերի ածել 'ի Կոստանդնուպօլիս. զամենայն հնարս հնարեցայ ածել զնա 'ի հնազանդութիւն, այլ 'ի զուր[1]։ Երբեք երբեք երևէր նա 'ի ծագ քարաժայռի միոյ սեպացելոյ, իբր խիզախելով ընդդէմ մեր. և տեսանէաք զնա յաձախ, հիացեալք ընդ վեհ կերպարանս նորա, ընդ գեղ դիմացն, և ընդ խրոխտ շարժուածս։ Մի ոմն 'ի զինուորաց նորա, որ իջեալ էր 'ի դաշտավայրն, ածաւառ իս. և 'ի ձեռն նորա խնդրեցի 'ի Գելիմերայ ընդունել զՓարաս զմի 'ի զօրագլխաց իմոց, զոր 'ի հրեշտակութիւն խաղաղութեան կամէի յղել։ Յանձն էառ զայն Գելիմեր, ուղեցոյց 'ի նմանէ եկեալ՝ էառ զՓարաս, և կապեալ զաչս նորա՝ ած զնա 'ի Պասուկ լեառն։ Գորովեցաւ Փարաս 'ի տեսանել զիշխանն քաջ թշուառացեալ յայնպիսի աղէտս, մանաւանդ 'ի տեսիլ անսասան արիութեան նորա։ Խազմեալ կայր նա 'ի վերայ միոյ 'ի ժայռից՝ շուրջ պատեալ 'ի զինուորաց, և ասէ ցՓարաս. Այս ահա մնայ ինձ գահ, քարածերպս այս ապարանք իմ, և այս բա-

1 Ըստ պատմագրաց։

լոր արքունիք։ Ոչ ևս են ինձ դրանիկք, ոչ ևս ոք փաղաքշէ զիս. այլ սոքա արի զինուորակիցք իմ և վշտակիցք, զոգի 'ի բուին կալեալ՝ եդին ուխտ հաւատարմութեան, մեռանել աղատք ընդ իս յանապատի աստ։ Հանդերձ այսու ամենայնիւ արար Փարաս զհրեշտակութիւն իւր, խոստացեալ նմա ազատութիւն՝ եթէ միայն անձնատուր լեալ գայցէ ընդ իս 'ի Կոստանդնուպոլիս։ Պատասխանի ետ Պելիմեր, և ասէ. Դաւ լիցի ընդունել զնորհ 'ի ձեռաց, որ աւերեցին զաշխարհ իմ։ Այս զինչ խնդիր է ձեր յինէն. խաղաղութիւն խնդրեք. այլ ոչ ևս հնար է ինձ մարտնչել ընդ ձեզ. զժողովուրդ իմ և զբանակ և զինքնակալութիւն, փլուզիք զամենայն առհասարակ։ Այս զինչ խոստանայք ինձ. գանձս, այլ արհամարհք են ինձ. զաղատութիւն, այլ չեմ իսկ գերի, և քաջութիւն իմ ազատ զիս կացուցանէ։ Պատճառանօք օգնականութեան թագաւորի, որոյ չէր իսկ կար զինուորելոյ զաղգ օտար ընդդէմ իւրոյ հայրենեաց, կործանեցիք զինքնակալութիւն Վանդալաց։ Բարեկամք քաջք, զինչ փոխարէնս մատուցանէք նիզակակցիդ ձերում. արքունիս այրեացաւերս, արտորայս ապականեալս և երկիր անմարդի։ Կարացիք 'ի սակաւուրս կործանել զինքնակալութիւն հզօր, այլ զհաստատութիւն մեաց Պելիմերի պարտել ոչ կարիցէք։ Յորչափ բնակիցէք դուք 'ի թշուառ երկրիս, կացից մնացից ես 'ի լերինս յայսմիկ՝ անդրդուելի իբրև զսա, անյեղլի որպէս զձակատագիր. տեսջիք զիս խրոխտ 'ի կարօտութեան, գոռոզ 'ի տառապանս. մեռայց իսկ, եթէ այսպէս հարկ լիցի. աստ փորեսցի ինձ գերեզման, ժայռս այս ծածկեսցէ զաճիւն իմ, և քան զամենայն շիրիմս թագաւորաց լիցի սա վեհ և երեւելի։

Պատասխանի ետ Փարաս և ասէ. Տէր արքայ, ոչ է մարթ Բելիսարայ գոլ 'ի սրտէ թշնամի քաջաց. ողբայ նա զքոյին յամառութիւնդ, այլ մեծարէ զվեհանձնութիւն քոյին. և յուսայ զի բարւոք ևս կշռութեամբ օգտակարագոյն կալցիս խորհուրդ։ Այլարդ գթացեալ 'ի դժնդակ աղէտս քոյին, պատրաստ է յղել քեզ պարէնս և որ ինչ այլ պիտոյ իցէ[1]։ Յայնժամ Պելիմեր ասէ. Զ՞ն ապա, յղեսցէ ինձ քնար՝ եղերերգել զաղէտս իմ[2]. այս ևեթ ընդունելի է ինձ 'ի նըմանէ պարգև։

Կատարեցի զինդիր նորա. էին յերաժշտարանի իմում ազգ ազգ նուագարանաց, և քնարք բազումք, զմի յայնցանէ յղեցի առ Պելիմեր. և նուագէր նովաւ զօր ամենայն 'ի մուտս արևու՝ բազմեալ 'ի ծագ լերինն քնար 'ի ձեռին, կրկնելով հովտին զկեղերքական ողբս նորա։ Այդերերգն այն խրոխտ և վայրենի, և որ զնոյն միշտ յեղյեղեր նուագ, զմայլանս ինն ազգէր անիմա-

1 Ըստ պատմագրաց։
2 Ճշգրիտ նորին իսկ Գելիմերի բանք են։

նալի՝ ձգելով զզօրականն մեր 'ի լուր 'ի ստորոտ
լերինն։

Բայց զօրքն յաղթական անձկային նաւարկել
դառնալ 'ի Կոստանդնուպոլիս. և աշխարհն զոր
նուաճեցաք՝ մնայր 'ի ձեռս մեր. քանզի մեռաւ
Լուդերիկ, վասն որոյ պատերազմեալն էաք. և
վիշտ բազում 'ի վերայ կայր մեզ յաւեր և յա-
պականեալ երկրին։ Այն ունէի զի Գոելիմեր
բռնադատեալ յիւրոցն, զորոց Փարաս ոժգոհս
ասէր գոլ և լքեալս, ստիպեր անձնատուր լինել.
և խորհէի ես կալ մնալ անդէն։ Բայց տրը-
տընջէր զօրականն վաստակաբեկ, և չեղև մարթ
արգելուլ զնա 'ի հրդեհելոյ զապարանս նախնի
թագաւորացն մաւրիտանացւոց։ Ի բարձանց լե-
ռինն ետես արքայն հէք զհրդեհն զայն, որ
տևէր զաւուրս չորս. և յաւել յերգս իւր տուն
մի այնպիսի սրտառուչ, որ և զգործօղս չարեացն
'ի գութ խանդաղատեր։ Ստէպ և ես ինքն մաս-
չէի անդր 'ի լուր, և յայնմհետէ ամբ են իբր
քսան, տակաւին հնչէ յունկն իմ յիշատակ եր-
գոյն։

Գէպք, զորս գուշակէի, ելին 'ի գլուխ. զի-
նուորք Գոելիմերի, թէպէտ և երդուեալք, չկա-
ցային տոկալ դժնեայ աղետիցն. զայրագինս ընդ-
դէմ դարձեալ նմա, սպառնային խողխողել զկին
նորա և զորդի, եթէ ոչ յանձն առնոյր իջանել
ընդ իւրեանս 'ի լեռնէ անտի և անձնատուր լի-
նել ինձ։ Այսպէս 'ի ձեռս իմ անկաւ արքայն

հէք. այլ առաւել ևս յայնժամ զարմանք եղեն
ինձ արիասրտութիւն քաջազնին 'ի մատչել նորա
առ իս անխռով, զի և բան մի տրտունջ ոչ լինէր
լսելի 'ի շրթանց նորա։ Ասաց նա ցիս. Ռելիսա-
րիէ, յանձն առնեմ պատուոյ քում զպատիւ
հարսինս և զարև որդեկիս. իսկ ընդ կեանս իմ
արա որպէս հաճոյ է քեզ։

Ասացեալ արարի զնա և ասեմ. Հարսն քո ըստ
արժանի իւրում քնութեանն և աղնուականու-
թեան և չարաբաստութեան գտցէ առ իս շնորհս
և պատկառանս, և որդեկաւն քով հանդերձ կաց-
ցէ մնասցէ 'ի քէն անմեկին։ Գոելիմեր շնորհա-
պարտ ակնարկեալ յիս, լուռ ևեթ եկաց, և
յայնմհետէ ոչ ևս խօսեցաւ ընդ իս։ Հարսն նո-
րա ողջագուրեալ զորդեակն 'ի գրկի, կայր յե-
տոյ նորա. տիկին մատաղամայր՝ յորում փայլեր
գեղ չքնաղատեսիլ, թէպէտ և գունատեալ 'ի
դժնդակ սովոյն և յեռամեայ տառապանացն՝ ո-
րոց կսկիծ դառնութեան դեռ ևս տպաւորեալ
'ի դէմս նորա երևէին։ Մատեայ առ նա յա-
ղերս, խնդրել յինէն որ ինչ և մարթէրն ինձ
տալ նմա, և ասեմ. Խօսեաց, հրաման տուր,
զինչ խնդրես։ Պատասխանեաց նա հեղձամղ-
ձուկ ձայնիւ. Պատառիկ մի հացի վասն մանն-
կանս։ Յուզեցան գութք հօրն 'ի լուրն յայն,
և յիմոց աչաց իսկ ինքին արտասուք։ Ամառ ա-
ծի անդ զվաղանցիկ պարգևս կենցաղոյս, և զու-
նայնութիւն մեծութեան զբախտի և զփառաց։

Լուէին ինձ Թառամեալ՝ի բանից անտի դափ-
նիք իմ, և կասկածէի իսկ առ վայր մի ընդ յաղ-
Թանակ իմ և ընդ բարեբաստուԹիւն։ Հրա-
մայեցի ածել վաղվաղակի Ճաշ, և դիմեաց անդր
մանկիկն անսուաղ. յայնժամ Գեղիմեր մատու-
ցեալ՝ի ստրուկն՝ որ բարձեալ բերէր կողով մըր-
գալից, և հանեալ՝ի ծոցոյ իւրմէ ակն պատուա-
կան հրաշագեղ, ասէ. ԳոհուԹիւն երկնից, զի
և՝ի նուաստուԹեան՝ յոր ինքոյց զիս բախտն՝
մարԹ է ինձ արքայօրէն ինչ առնել։ Լու ետ զայն
ստրկին, ասելով. Ո՛ւռ, ընկալ,՝ի գաւազանէ
իմմէ խլեցի զդա՝ի մեկնել իմում յարքունեաց
ակն անգին, քեզ տամ զդա. Իցիւ հայԹայ-
Թեսցէ դա քեզ զմիայն Ճշմարիտն մեծուԹիւն,
ասեմ իսկ զաղատուԹիւն։ Ո՛յսպիսի էր մեծ-
անձնուԹիւն Գեղիմերայ, որ մինչ՝ի սպառ
անընկՃելի զերոխտ ազնուականուԹիւնն զայն
էբեր յանձին։

Լու ելեալ՝ի նաւ, մեկնեցաք յՈ՛չիրիկեայ.
և էր ընդ իս՝ի նաւին Գեղիմեր տիկնաւն հան-
դերձ։ Լուռ անմռունչ, այլ խաղաղուԹեամբ
հոգւոյն ցուցանէր անյողդողդ զառաքինուԹիւն
զկարի իսկ վսեմական համբերուԹեան։ Ո՛իայն
զբօսանք նորա էին նուագել քնարաւն՝՝՝

փառաց յաղթանակի խափանեալ էր իմ։ Ի լուր ցնծալից բարբառոյ ժողովրդեանն 'ի Հեռուստ՝ խառվեցաւ անդէն սիրտ իմ, ածեալ զմտաւ՝ զի բազմամբոխ քաղաքաժողովոյն խրախոյս ինդուԹեան էր 'ի Թշնամանս աղետից գերւոյն իմոյ։ Զարձայ հայեցայ սրտառուչ 'ի Զելիմեր, և ահա զարմացումն մեծ կալաւ զիս, զի տեսանէի ժպիտ 'ի դէմն նորա։ Զգայ նա զզարմանս իմ, և ասէ ցիս. Զպտիմ ընդ արկածս բախտին, և ծիծաղելի ինձ յեղափոխուԹիւնք նորա Թուին։ Եւ յոգւոց հանեալ յաւել. Լաւ, 'ի սմին աւուր ժամանակի ամբարձայ ես 'ի գահ Լեդերիկեայ, և քարոզեցայ Թագաւոր ժողովրդեան՝ որ ոչ ևս է 'ի միջի։ Եւ իբրև նա զայս ասէր, 'ի մուտս դրան քաղաքին կայաք, պար առեալ յանԹիւ անհամար բազմուԹենէ ժողովրդեան՝ որ զմայլեալ ցնծուԹեամբ դիմէին ինձ ընդ առաջ։ Տեսի 'ի խառն անդ զՓարաս և զայլ ամենայն բարեկամս և զհարսն իմ, և հրաձուեալ բերկրէի՝ փառաւորեալ առաջի սիրելեաց իմոց։ Եւ ահա յափշտակեալ ածին զիս 'ի կառս յաղԹականս. հրաժարէի 'ի փառացն, այլ վեր 'ի վերոյ՝ ԹԷ գուցէ եղկանայր եռանդն այն, և փոխանակէր տհաճուԹիւն 'ի հակառակել իմում ուժգին։ Զնային յուշիկ անիւք կառացն 'ի գիլ, 'ի ստէպ գոչիւն աղաղակի՝ Կեցցէ Զելիսար։ Ի

1 Ըստ պատմագրաց։

մէջ այսպիսւոյ յաղԹանակի լսելի լինէր ինձ յետկուսէ անաղօտաձայն բարբառ խիստ և արիական. "ԱնայնուԹիւն ունայնուԹեանց, ամենայն ինչ ընդունայն է"։ Եւ էր այն բարբառ Զելիմերի[1]. սիրտ 'ի Թնդոջ՝ դարձայ և տեսանեմ զարքայն և զարքայուհի սքօղեալ դիմօք շղԹայակապ 'ի կառս իմ 'ի շղԹայս ոսկեղէնս[2]։ Ուշ 'ի կուրծս անկեալ, 'ի միտս եղէ 'ի տեսլենէն. ամենչեցի ընդ հեԹանոսական յաղԹանակն, զոր ոչ ինքնակալին՝ որ Թագաւորէրն յայնժամ, և ոչ վեհափառ նախորդի նորին արարեալ էր. հասու եղէ վտանգին՝ որ 'ի փառաւորուԹենէ անտի, և կրէի այնուհետև տագնապ դժոխըմբեր, որպէս որ 'ի քարշ ածի ընդ Հանապարհ մոլորաշաւիղ՝ որ տանի 'ի կորուստ։ Ըստ մերձենալ մեր յարքունիս ինքնակալին՝ յաձախէր յիս տագնապն, յիրաւացի կասկածանս իմ յաւելեալ որչափ ինչ բոհմունս յոյզք ցնորից մնաց կուտակել կարեն։ Հանդէսն այն ամբարտաւան ոչ միայն վտանգաւոր Թուէր յաչս իմ և մեղապարտ, այլ և ծիծաղելի. բարբառք ցնծուԹեան, որք առ վայր մի զիս հրապուրեցին, և որք դարձեալ յարքունիս անդ հանդերձեալ էին լսելի լինել, ապշեցին յիս այնուհետև դառնուԹիւն անհնարին. ընտրելի էր ինձ տոյժս ծանուցս յանձն առնուլ առ 'ի լռեցուցանել և խափանել զայնոսիկ։

1 Ըստ պատմագրաց։ 2 Ըստ պատմագրաց։

Կրէի ամթթ և վիշտ միանգամայն յածել զմտաւ՝ զի յիրաւի էր ինքնակալին դժկամակել ընդ մնա-
փառ յաղթանակն, և զի անխոհեմութեամբ ի-
մով կորուսանէի զյարդ դերապանծ վաստակոցս
ահա մատուցելոց, և զի դարձեալ՝ ի նմին պա-
հու դրանիկք ամբաստանէին զիս աներկբայա-
պէս՝ ի փառամոլութիւն եղեռնաւոր և՝ ի տղայա-
միտ մնապարծութիւն։ Այս ամենայն խոր-
հուրդք այնպէս զմիտս իմ տագնապէին, զի ամե-
նայն չարեաց սպասեալ մնայի, և չպատահէր ինձ
յեղակարծ՝ եթէ՝ ի մուտս անդ արքունեաց՝ ի
վերայ իմ հասեալ պատուիրակք ինքնակալին ու-
նէին զիս։ Հասաք անդր, ինչի՝ ի չարաշշուկ կա-
ռաց անտի, լուծան կապանք գերւոյն, և մնաք
՝ի ներքս յապարանսն։ Յուստինիանոս բաղ-
մեալ՝ ի դահոյս մնայր՝ ի տեղւոջ այգորելի, և
տեսի զդէմս նորա այլայլեալ։ Առաջի արարի նը-
մա զարքայն Ալ անդալաց թագընկէց և զարքայու-
հին, և ասէ ցնա ինքնակալն. Ուշեան քաջազն,
զամենայն հնարս՝ ի գործ արարից առ՝ ի մոռա-
ցուցանել քեզ զմուտս քո՝ ի մայրաքաղաք այսր.
զի մեծարոյ է ինձ արիութիւն չարաբաստիկ և
արիւն արքայազն, և չէր ինձ մարթ հրամայել
զսպասդ զայդ թշնամանալից և անողորմ՝ յաղթա-
նակի։

Որպէս շանթք երկնառաք հարին զիս այս
բանք, յունկն մախացող և չարակամ արքունեաց
լսելի լեալ. և յոյժ առաւել աղդեցին յիս քան

զամենայն աքսոր և քան զանկումն յամենայն
իշխանութենէ։ Պոյր յիս կար համբերելոյ վըշ-
տաց, այլ՝ ի տոկ խոնարհութեան նուաղեր զօ-
րութիւն իմ. և արդարեւ շինչաւ յիս յայնժամ
անարծարծելի նախանձն տիրասէր, զոր՝ ի քան-
ևէինդ ամաց հետէ բերէի ինքնակալին։ Ոչ
ցասումն նորա և ոչ անիրաւութիւն կարէին խլել
զայն՝ ի սրտէ իմմէ. այլ արհամարհութիւնն այն
անխռով, և ծանր կշտամբութիւն յանդիման
ոսոխաց իմոց առ իս, խելամուտ արարին զիս՝ զի
էր նա ընդ իս դատաւոր խիստ, և ս և ապաշնորհ,
և չէր նորա լեալ երբէք ինձ բարեկամ։ Պատաս-
խանեցի մեծարանօք, այլ անվեհեր, զի սրտմտու-
թիւն և վիշտ զրկանացս համարձակէին զիս. և
սուղ բանիւք յայտ արարի նմա զիմ իսկ դժկա-
մակութիւն ընդ եռանդն ամբոխին, որում հարկ
եղև ինձ տեղի տալ։ Զարար նա զիս արժանի
պատասխանւոյ. այլ ընդ արքայուհւոյն խօսե-
ցեալ մարդասիրապէս, արձակեաց զատեանն։
Զի յարքունեաց անտի սրտառուչ, և գրեցի առ
ինքնակալն խոնարհ մեծարանօք, այլ աղդու.
տալով՝ ի նմա համար զգործոց իմոց, և բողոք ա-
ղերսական յաւելեալ զհրապարակագոյժ կշտամ-
բանացն՝ որ կարեվէր հարին զսիրտ իմ քան զիսա-
ռասիրութիւն։ Ի վաղիւ անդր կոչեցեալ՝ ի նմա-
նէ, գտի զնա միայնակ՝ ի ներքին սենեկի, և ջա-
նայր զուարթութիւն՝ ի դէմս բերել։ Այլ՝ ի
կամել իմում՝ ի Ճառս անցից իրացն մտանել,

լռեցոյց զիս՝ թէպէտ քաղցրութեամբ, և 'ի վե-
րայ էած զրոյցս զիրաց տեսչութեան։ Այլ թէ նե-
րէր ինձ հոլանել զսիրտ իմ, վերստին եռանդն
տիրասէր նախանձու 'ի սիրտ իմ արծարծանէր.
այլ նորա մերժեալ զմտերմութիւն իմ, կորոյս
զայն մինչև 'ի սպառ։

Յայնմհետէ 'ի վերին երեսս վարէր ընդ իս
որպէս միշտն. ոչ ինչ յիշխանութեանց իմոց է-
բարձ, և ընդ ամենայն սահմանս ինքնակալու-
թեան իւրոյ մեծարէի որպէս զառաջինն. այլ ան-
կումն 'ի շնորհաց նորա անելրկբայելի էր ինձ և
ոսոխացն իմոց։ Այերսիսի պատրաստեալ էր զայն
մինչ դեռ 'ի բացեայ էի, այնու չարանիւթ և
խորամանկ հնարիւք՝ յոր ոչ ոք այլ 'ի մարդկանէ
գոյր ձեռնհաս։ Այերսէս կորովին և քաջայան-
դուգն 'ի գլուխս զօրաց, վատ քան զամենայն ա-
ւազանին է 'ի դրան. խիզախ 'ի բնէ, այլ զգոյշ
զգօնութեամբ և շահասիրութեամբ. յամենայն
խորհուրդս նորա իշխէ փառասիրութիւն, կշռէ
զամենայն խօսս իւր, և գնացք նորա բերեն զկեր-
պարանս ուղղութեան և անկեղծութեան. յա-
չաղկոտ և քինախնդիր, որ ոչ ումեք ներէ ոչ ա-
նիրաւելոց միայն՝ այլև ոչ նախանձորդաց իւրոց.
անողոքելի ատելութեամբ մեծերեալ տածէ զոխ 'ի
սրտի, և 'ի ներքս անդ վառեալ բորբոքէ. ան-
դութ և վայրագ, որ զվրէժխնդրութիւն հա-
մարի իւր յաղթանակ և բերկրանս։ Ոչ զոք ու-
րեք տեսեալ է իմ որպէս զնա ժպիտ անբռնաղ-

բօս 'ի դէմս բերելով առ թշնամին, որում զան-
շուշտ պատրաստեալ է կորուստ։ Գիտէ նա հա-
սու լինել թէ իւիք ոք տկարն է և թերի. առա-
քինութիւնք այնպիսւոյն թուին յաչս իւր որ-
պէս մնգուրեալ պաճուճանք, և նահատակու-
թիւնք նորա յանդգնութիւնք։ Ոչ ոչ ինչ հա-
մարի զբարեկամութիւն, և չվստահի երբեք
յայն. չիք ոք բարեկամ նորա, այլ ձեռատունկք՝
զորոց շահասիրութիւն ևեթ համարի երաշխա-
ւորութիւն հաստատուն։ Ոչքա արբանեակք իւր
անուշանք նիւթեն չարիս գաղտնածածուկ. ոչ սի-
րեն զնա, այլ բարւոք ծառայեն նմա հրահան-
գեալք 'ի նմանէ, և ոչ երբեք եռանդն տարա-
պայման մղէ զնոսա անդր քան զեղեալն 'ի նմանէ
սահման։ Ոոցա 'ի հրամանէ նորին բանսարկեալ
էր յայնժամ զրպարտութիւնս զինէն, յորոց
դրաւեալ էին միտք ինքնակալին. իբր այն թէ
խորհրդակից լեալ յառաջագոյն ընդ բարեկամն
և պատրաստեալ էր իմ զյաղթական մուտս 'ի
մայրաքաղաք անդր։ Պատքէն Փարասայ, որ նախ
քան զիս մեկնեցաւ յՊիրիկեայ, յորդորեալ էր
յայտնապէս զժողովուրդն գալ ինձ ընդ առաջ
և զվնասակար սպասն մատուցանել. որով հաս-
տատութիւն մեծ առնուին զրպարտութիւնք ո-
սոխացն իմոց։ Յաւելուին իբր թէ ռամիկն յար-
բեցութեան անդ իւրում իշխեալ էր ասել, թէ
զօրավար այսքան փառաք լի՝ արժանի էր յաջոր-
դելոյ ինքնակալին, որ քաջութեամբ իւրով ամ-

բարձաւ 'ի գահ։ Յուստինիանոս չէր այլ պա-
տերազմի. նախորդին նորա Յուստինեայ ոչ եր-
բէք ընդ ումեք 'ի զօրավարաց իւրոց նախան-
ձեալ էր. բայց Յուստինիանոս չև իսկ կասկա-
ծեալ ընդ հաւատարմութիւն իմ, եթէ ոչ խի-
թացաւ՝ սակայն գԺգմնեցաւ աներկբայապէս ընդ
փառս անուան իմոյ, և զամենայն հնարս յայնմ
հետէ հնարէր առ 'ի նսեմացուցանել զայն՝ յա-
րուցանելով ինձ ոսոխ։

Ի ժամանակի անդ խաղաղութեան՝ պարապ
առեալ, մեկնէի ստէպ յամարանոց իմ՝ կեալ 'ի
գիրկս ընտանեաց իմոց, և դաստիարակել զմիա-
մօր դստրիկ իմ Անաստասիա։ Այր ապաքէն և
այլ ինչ խորհուրդ ստէպ 'ի բաց կալոյ իմոյ յար-
քունեաց. գիտէի զցրտանալ սիրոյ ինքնակալին
ընդ իս, այլ դեռ ևս վստահ էի ընդ սովորութիւն
նորա և ընդ պետս խորհրդակից լինելոյ ընդ իս,
և համարէի թէ չկարէր նա առնել զանց զինև,
այլ հարկ էր նմա կոչել զիս. և եթէ ոչ ևս վայե-
լէի 'ի շնորհս ինքնակալին որպէս մտերիմ, գէթ
ժառանգէի զմեծարանս նորա որպէս կարևոր ոք
նմին։ Այլ խաբեցայ. զի առ իշխանս դիւրաւ
ընուն զտեղի բարեկամութեան շողոմք։ Այս դար-
ձեալ զի իշխանք զայնոցիկ ևեթ վաստակս յար-
գեն, որ ընդ պիտանութեան և հաճոյականք ի-
ցեն նոցա. գոգցես ինն զախորժակաց նոցա կա-
խի վարկ նոցին. կորնչին արժանիք վաստակա-
ւորաց կէս 'ի կէս, յանկանել նոցա 'ի շնորհաց

իշխանին. և զմասնագոյն իսկ խորհրդոց նո-
ցա, զորոց երթեալ ետէ զհետ, ոչ այլ ինչ յիշէ
նա, բայց զընտրութիւնն՝ որով խնաստութեան
նոցին համարի հասու լեալ. քանզի յիշատակս
այս անձնասիրութեան ախորժելի՝ ազատ կացու-
ցանէ զնա 'ի շնորհապարտ գոհութենէ։ Փութով
յաջողեաց Կերսիսի յինքն յանկուցանել բովան-
դակ զմտերմութիւն ինքնակալին. քանզի իշխանք
տկարք և կասկածոտք խիթան ունել առ իւրեանս
որոց գերագոյն քան զիւրեանսն ետեն միտք, և
կարիցեն զնել զնորհուրդս իւրեանց կամ գու-
շակել։ Գիտաց Կերսէս ծածկել ճարտարու-
թեամբ զհանճար իւր, այնչափ ինչ ևեթ ցու-
ցեալ՝ որչափ կարևորն էր առ 'ի ճանաչել զյարգ
ինքնակալին հանճարոյ, թագուցանելով զնորա-
գիտութիւն իւր և զնորաշնին միտս։ Պատրաստ
միշտ 'ի փոխանակել ընդ շահ օգտին զանձնասի-
րութիւն, 'ի տալ անդ խորհուրդս հանճարեղս՝
զամենայն պարծանս խորհրդոցն թողոյր 'ի նա,
իբր պարզելով զտեսութիւնս նորա, և միաբա-
նելով ընդ խորհուրդս երկնեալս 'ի նմանէ։ Այ-
սու հնարիւք, զոր ճարտար գիտաց 'ի կիր արկա-
նել, պատրաստեաց իւր մեծարանս և ամրացոյց
զայն մինչև 'ի սպառ։

Յետ ընդ երկար լուութեան պատերազմաց,
սկսան անդրէն Բուլղարք ասպատակել 'ի սահ-
մանս մեր, զօրավարեալք յարքայէն իւրեանց՝ որ
քաջակորովն էր և իրաց պատերազմի տեղեակ։

Ընհամարհեցան 'ի սկզբան անդ արշաւանք նո-
ցա. այլ 'ի տիրելնոցա յեղակարծում միոյ 'ի քա-
ղաքաց, աղմկեցաւ աշխարհն ամենայն։ Ընդալ
արքայ նոցա զօրու ծանուցեալ, արկանէր ար-
հաւիրս ամենայն ուրեք. խնդրեցի ես ելանել
ընդդէմ նորա, բայց ինքնակալն անժպիտ ետ
ինձ պատասխանի՝ թէ կանխեալ Ներսիսի խընդ-
րեալ էր զայն, և ընկալեալ զզօրավարութիւն
բանակին։ Յաւել ևս զի մեծագոյն պատրաստեր
ինձ գործ պատերազմի ընդդէմ խռովութեանցն՝
որ յառնէին յԻտալիա, խորհուրդ 'ի մտի ունե-
լով յղել զիս անդր։ Ոչ ինչ ետու նմա պատաս-
խանի, լուռ ևեթ դարձ արարեալ յամարաս-
տան իմ։ Եւ խաղաց գնայ Ներսէս ընդդէմ
Ընդալայ, եհաս առ նա, ետ ճակատամարտ, և
նուաղագոյն զօրօք կալաւ յաղթութիւն մեծ.
այլ 'ի վերջկոյս մարտին խոցեալ կարեվէր, ածաւ
'ի բաց 'ի ճակատուն տեղւոջէ, և համարեր մե-
ռեալ։ Եւ մինչ թշնամիք այլ ոք այլուր փախըս-
տեայք գնային, զօրք ինքնակալին ամայի 'ի զօ-
րավարէն ոչ կարացին յօգուտ 'ի կիր արկանել
զյաղթութիւն՝ որով մարթեր նոցա սպառսպուռ
խորտակել զթշնամին. այլ զբանակետղ ևեթ
Ռուղարաց կալեալ, և ոչ զուրուք 'ի նոցանէ
զհետ մտեալ, թողին նոցա պարապ գունդ կազ-
մելոյ անդրէն։

Հաճոյ թուեցաւ ինքնակալին աշխարհաքա-
րող հրովարտակօք և մեծահանդէս տօնախմբու-

թեամբք պայծառացուցանել զփառս յաղթանա-
կին. բայց ժողովուրդն ոչ մեծ ինչ եռանդն ե-
ցոյց ընդ այն։ Ներսիսի զբաղումն 'ի ստորադաս
պաշտօնէից ճարտար հնարիւք կուսակիցս իւր
արարեալ էր. իսկ աւագանին ինքնայօրդոր յո-
ժարէր 'ի գովել և 'ի բարձրացուցանել զոսոխ
այնորիկ՝ որ մեծարանք և համբաւ յերեսուն
ամաց հետէ դրդէին զնախանձ նորա. բայց ժո-
ղովրդեան ատելի էր Ներսէս վասն ագահու-
թեան իւրոյ։ Սակայն ինքն ոչ միայն չինդրեր
զշնորհս ռամկին յեղյեղուկ և վտանգաւոր իսկ
առն հպատակի, այլ և բերկրեր 'ի տեսանելն
յաճախեալ զայն առ իս. գիտելով զի երևելնո-
րա 'ի ցրտանալ սիրոյ իշխանին՝ ոչ ինչ ընդհատ
'ի վտարանջութենէ թուի արքունեաց։ Յաւուրս
տօնիցն այնոցիկ հասարակաց պարտ համարեցայ
դառնալ 'ի քաղաք անդր. թէպէտ և դժկամա-
կէի 'ի սրտէ ընդ պայծառութիւն հանդիսիցն,
ածեալ զմտաւ՝ զի ոչ երբեք հանդոյն ինչ վասն
իմոց յաղթութեանցս հրամայեալ էր ինքնա-
կալին, և ոչ 'ի նուաճել իմում զԷրիկ։ Եղև
և 'ի կրկիսին տօն մեծահանդէս. ուր ինքնակա-
լին հանդերձ ամենայն արքունեօքն եկեալ, եղև
ականատես սիրոյ ժողովրդեանն առ իս։ Բաղ-
մութիւնն այն յոգնախումբ, որով լի էր աս-
պարէզն, ընդ տեսանելն զիս՝ հնչեցոյց զօդս ծա-
փիւք դրուատեաց և ցնծալից աղաղակաւ. իսկ
իմ սիդացեալ միանգամայն և խանդաղատեալ

ընդ անկեղակարծ մեծարանսն, համարեի գո-
հութեամբ ամբոխին խնդրել զվրէժ իմ. այլ ա-
ւաղ, զի այնու սպառսպուռ պատրաստէր ինձ կո-
րուստ։

Յայնմ վայրի գուժկանք 'ի բանակէն հասա-
նէին, զի Երսէս յոգիս ապաստան 'ի վիրացն՝
ոչ ևս կարէր զօրավարել, և ոչ խորհուրդ երբէք
տալ. զի բանակն թշնամեաց վերստին խմբեալ,
և հզօրացեալ այլ ևս գնդօք, տիրեալ էր ամուր
ամուր վայրաց. և զի ոչ զրաւ լեալ մարտին,
այլ մանաւանդ սաստիկ ևս պատրաստէր։ Մի 'ի
զօրագլխաց Երսիսի զօրավարէր առ ժամն,
մինչ չև յինքնակալէն ընտրեալ ոք յաջորդ. և
հաստատեաց զնա ինքնակալն 'ի հրամատարու-
թեան, թէպէտ և ամբոխին աղաղակէր խնդրէր
զիս փոխանակ Երսիսի։ Ընտրութեանս այսո-
րիկ արգասիք եղեն պարտութիւն Ճակատամար-
տին, որ 'ի վտանգ մեծ արկ զինքնակալութիւնն.
յաՃախեաց յայնժամ և ևս աղաղակ ամբոխին
սպառնալից, որչափ գայր մերձենայր թշնամին և
առաւելագոյն արկանէր արհաւիրս։ Հարկ եղև
ինքնակալին տեղի տալ նոցա, և հրամայել ինձ
անկանել 'ի չու. խնդրեցի յայնժամ իշխանու-
թիւն լուռի, և ետ ինձ զայն. և շտապ տագնա-
պաւ հասի 'ի բանակ անդր։ Յու զհետ իմ ան-
թիւ անհամար բազմութիւն ինքնակամ զինուո-
րելոց, որ գային և յաւելուին ընդ Ճանապարհն
ամենայն։ Զոտի զբանակն վեր 'ի վայր շփոթեալ

յերեսաց նախանձու զօրապետացն Երսիսի ընդ
հրամատարութիւն ընտրելոյն. դարձեալ և յեր-
կոսին իսկ 'ի բանակս զրգռեալ էր ոխերիմատե-
լութիւն վասն բազումանգութեանց գործելոց
'ի Երսիսէ և ապա 'ի զօրագլխաց նորա, որովք
զժնդակագոյն վրէժխնդրութեանց ձայնատուր
լեալ էր նոցա։ Կարդ և հրահանգս եդի 'ի զօ-
րուն, և սպարապետին Խուլղարաց ազգ արարի
զզօրավարութիւն իմ, և զսոսկումն 'ի լուր անդը-
թութեանցն երկուստեք գործեցելոց ընդ գե-
ղին։ Յաւելի և բանս ինչ խաղաղութեան առա-
ջարկել, զոր մերժեաց Աբդալ, թէպէտ մեծա-
բանօք արարեալ ինձ պատասխանի։ Հապա կաղ-
մեալ 'ի պատերազմ, յարձակեցայ յեղակարծում.
երկարատև և ահագին եղև Ճակատամարտ, և
սպառսպուռ պարտութիւն թշնամեաց։ Սպարա-
պետին միածին որդի ձերբակալ ածաւ առ իս 'ի
խորանն, և էր նա պատանի եօթնեւտասն ամաց.
հայր նորա յղեաց առ իս նոյնօրին հրեշտակս բա-
զումս, տագնապեալ վասն սիրելւոյ որդեկին՝
յոր էր միակ յոյս իւր. և 'ի վաղիւ անդր դար-
ձուցի առ նա զպատանին, առանց փրկանս իսկ
պահանջելոյ։ Այս աղնուական քաղաքավարու-
թիւն խորագոյնս ազդեաց 'ի սիրտ Աբդալայ, և
արար նա աղերս խաղաղութեան. անկեղծու-
թիւն վերակացու եղև իրաւախոհութեանս մե-
ծոյ, և երաշխաւոր պանծալի և անշարժ խաղա-
ղութեան։

Հասին զրոյցք աւետաւորք 'ի Կոստանդնուպոլիս, և տարապայման ցնծութիւն հասարակաց խռովութեան տալով կասկած յարքունիս, ըմբռնեցան ոչ սակաւք։ Պատուէր եհաս առ իս արձակել 'ի բաց զգունդ ինքնակամ զինուորելոց, և բաժանեալ զբանակն՝ զօրահատոյց առնել յայլևայլ կողմանս, որպէս սահմանէրն ինձ։ Կատարեցի վաղ ընդ փոյթ զամենայն հրամանսն, որ տուան ինձ առ ահի յաղթութեանցն իմոց և ունելոյ շնորհս առաջի Ժողովրդեան։ Այլ ապա մինչ դէմ եդեալ դառնայի 'ի Կոստանդնուպոլիս, երկօրեայ ճանապարհաւ հեռի 'ի մայրաքաղաքէն եհաս սուրհանդակ առ իս՝ յայտ առնել զի հրամայէր ինձ մեկնել գնալ անյապաղ յամարանոց իմ յաքսոր, և կալ անդ մինչև հասցէ այլ հրաման։ Ի յանցանս գրէր ինձ զի զարքայորդին Ռուլղարաց դարձուցի առ հայր իւր առանց ինչ փրկանաց և դաշանց, և զի մարթէր ինձ առնել խաղաղութիւն օգտակարագոյն աշխարհին։ Հլու եղէ առանց և ոչ մի ինչ բան յառաջ բերելոյ 'ի պատասխանատրութիւն, քաջ գիտելով զի միոյն ևեթ այնուիկ գտանէի մեղապարտ, քանզի ահարկու էի սիրով Ժողովրդեանն ընդ իս և բարեբաստութեամբ զինուցս իմոց։

Կարծիք են առ բազումս, զի դրանիկ անկեալ 'ի շնորհաց՝ լքեալ կայցէ յամենայն բարեկամաց. այլ հակառակն պատահէ, եթէ մեծահամբաւոք լցէ նա և սիրելի Ժողովրդեան։ Պպաքէն շա-

հասիրութիւն զհետ երթայ բախտի. այլ փառասիրութիւն թերևս առաւելագոյն իսկ եռանդեամբ յարի 'ի համբաւ ակնաւոր. ընդ տիրապետական և բռնաւոր իշխանութեամբ ամենայն աղնուական մտածութիւնք դադարեն կամ ամփոփին. իսկ ընդ իշխանութեամբ արքայի, որ 'ի գահուն իւրում վայելուչն է, զօրանայ վարկ հասարակաց. և ցորչափ տեւէ սա, վեհ է և աղնուական։ Ա՝ տարանդութիւն իմ ոչ 'ի բաց արար յինէն զբարեկամն իմ, այլ յաճախեցին ինձ բարեկամք վասն թշուառութեան իմոյ. զի սիրելի է արհամարհել զարքունիս, ուր չիցէ ինչ 'ի միջի վտանգ։ Դային խռնէին յամարանոց իմ ամենեքեան՝ որոց չէր մտերմութիւն ընդ ինքնակալին, և ոչ ընդ աւագանին նորա. ցանկային անդր 'ի ներքս մտանել, կէսք առ 'ի պարծանս, այլք 'ի հեռուկս ոսոխաց իմոց, կամ առ 'ի ճանաչել զիս, և մանաւանդ յուսով դարձի իմոյ 'ի շնորհս և յիշելոյ զսպասահարկութիւնս նոցա։

Յուստինիանեայ ոչ գոյր որդի, և ամբ տիոց դշխոյին քառնային զամենայն յոյս ծնանելոյ նըմա զաւակ. և արար նա ընդ քեռորդեակ իւր որ ինչ Յուստինեայ նախորդին նորա արարեալ էր ընդ նմա. ընկալաւ զնա յորդեգիրս և կացոյց ժառանգ ինքնակալութեան իւրոյ, շնորհեալ նմա զքեռւոյն իւրոյ անուն պատկառելի[1]։ Ա՝նուն Յուստինոս

1 Ըստ պատմագրաց։ Սա ինքն է Յուստինոս երկրորդ, կամ կրասերն յորջորջեալ։

գերարգոյին Կարբաղայ յանձնեցաւ 'ի դաստիա-
բակութիւն. եւ ինքնակալն 'ի ձեռս նորա և զպա-
տանեակն Տիբեր զազգական իւր, երկամաւ ե-
ւրիցագոյն քան զՅուստինոս. որք 'ի միասին դաս-
տիարակեցան հեռի 'ի մայրաքաղաքէն, սուղ
ինչ 'ի բացեայ յամարանոցէ իմմէ։ Երկոքին
սոքա պատանիք արքայազունք, անմեկինք յիրե-
րաց 'ի մատաղ տիոց, այնպէս ընդ միմեանս ա-
գեխառնեալք՝ զի մարթ է կոչել զնոսա նախա-
տիպս ամենակատար բարեկամութեան։ Սակայն
այնպիսի 'ի բնութենէ ընկալեալ նոցա բարս ներ-
հակակիրս, զի անհնար է կարծել զնոսա 'ի նմին
դաստիարակէ հրահանգեալս, և անհնարին ևս
սիրել նոցա զիրեարս։ Յուստինոս ամենեքումբք
արտաքին վայելչութեամբք ձոխացեալ, այլ բուռն
և լի գոռոզութեամբ և դժնդակ 'ի նախկին յոյզս
կրիցն՝ գուժէ թագաւորութիւն իմն մերկալից և
արիւնահեղ. ուժգին են ամենայն կիրք 'ի նմա
և աննուաճելի, զայրոյթ նորա մոլեգին, և բա-
զում այն է՝ զի զառածանի 'ի կատաղութիւն։
Ամենայն ինչ 'ի նմա է ծայրայեղ՝ անցեալ միշտ
ըստ չափ և ըստ պայմանս. յոգունց բարեմասնու-
թեանց քնաւորեալ 'ի նմա յօժարութիւն և բոզ-
բոզ, սակայն և ոչ մի յառաքինութեանց բովան-
դակեալ 'ի նմա. աղատութիւն նորա է անխոհե-
մութիւն և անկրթութիւն, վեհանձնութիւն
նորա յանձնապաստանութիւն, և արիութիւն
իւր անհեթեթ յանդգնութիւն։ Բայց վկայ-

էն ամենեքեան բերել նմա յանձին մեծութիւն
իմն և աղնուականութիւն, զտիպս ինչ նոցին ա-
ծելով 'ի հաւաստիս, և մանաւանդ որ հաստա-
տագոյնն թուի առհաւատչեայ՝ զանցեղլի բարե-
կամութիւն նորա ընդ Տիբերեայ։

Իսկ Տիբերիոս հանդարտ և զգօն, միանգա-
մայն և լի եռանդեամբ առ լաւն. բերէ նա յան-
ձին հանճար ընդ զգայութեան, արիութիւն հո-
գւոյ ընդ քաղցր քնաւորութեան, և խոհեմու-
թիւն ընդ անկեղծութեան. պատանի լի ամե-
նայն բարեմասնութեամբք, որում մարթէր իսկ
փառաւորել զաթոռ ինքնակալութեանն. այլ զի-
տասցէ նա երկոքումբք առաւելութեամբքն, ա-
առաքինութեան և բարեկամութեան, ամբել
զկիրս այնորիկ՝ որ անդր ամբառնալոյն է։

Արձ 'ի լուսն դաստիարակութեան երկո-
ցունց պատանեացս թագաւանց ելն ես յաքսոր.
Յուստինեայ այն ինչ հասեալ էր 'ի տիս ութ և-
տասն ամաց, իսկ Տիբերեայ 'ի քսան։ Այս քան-
զի անմերձք 'ի մարդկանէ դաստիարակէին, չտե-
սանէի զնոսա երբէք, և չկարէի իսկ տեսանել՝
անկեալ 'ի շնորհաց ինքնակալին։ Ի միում աւուրց
'ի զգնալ իմում միայնակ 'ի պարտիզն՝ պատահեցի
յանկարծ 'ի պտոյտս ծառատունկ ուղղոյն երկուց
պատանեաց, որ գային թև 'ի թև խառնեալ։
Ի մեծավայելուչ գեղ կերպարանացն ընդոստու-
ցեալ աչք իմ և զկայ առի. յայնժամ երիցա-
գոյնն 'ի նոցանէ ասէ ցիս. Երեա եթէ աղմկեմք

զմիայնութիւն քոյին, այլ ըղձալի է մեզ տեսանել զմեծն Բելիսար։ Զայս այսպէս 'ի սոյն ձև բանի ասելով ցիս պատանւոյն Ծանեայ անդէն զի էին նոքա Յուստինոս և Տիբեր, որոց կատարեալ զվարժս իւրեանց առ ոտս զգօն վարժապետին՝ դառնային յաքքունիս։ Պատանին Տիբեր անդատին 'ի տղայ տիոց լուեալ զնահատակութիւնս իմ, մորմոքեր 'ի բաղմաց հետէ ընդ բախտ իմ։ 'Ի լուր ևեթ համբաւոյ իմոյ յարեալ էր նա յիս ամենայն եռանդեամբ տիոցն իւրոց և զօրութեամբ վեհ և աղնուական հոգւոյն։ Զնոյն իղձս և 'ի Յուստինոս աղդեալ էր փոքր 'ի շատէ. և 'ի լսել զաքսորանս իմ, սրտմտեալ յոյժ էին երկաքանչիւր. և պատճառանօք իբր թէ յորս ելեալ նոցա առ բնակութեամբ իմով, խոյս տուեալ յորսակցացն՝ գային յամարանոց իմ։ Յուստինոս խրոխտ և վճիռ բարբառով, որով և ընդ սիրելիսն վարի, խոստանայր դարձուցանել զիս յաքսորանաց, և տալ պատուհասել զթշնամիս իմ։ Բայց Տիբերիոս յաւել. Ոչ այդպէս, այլ ինքնին իսկ Բելիսար խնդրեսցէ ըզվրէժ իւր նորանոր յաղթանակօք, մեք 'ի դարձ ևեթ նորին գուն գործեսցուք. զի առնել իրաւունս Բելիսարայ՝ է սպաս հարկանել աշխարհիս։ Եւ արդարև Յուստինոս, յորդորեալ 'ի Տիբերեայ, ընդ հասանելն իւրում յաքքունիս՝ աղերս ուժգին արկ ինքնակալին վասն իմ։ Եւ քանզի առ գութ սիրոյ նորա ինքնակալն անտես առնէր զամենայն, ընկալաւ յատենի լու 'ի լու հասարակաց զաղաչանս նորա, առ 'ի սիրելի ընծայեցուցանելոյ զնա այսուիկ ժողովրդեան. և զի դարձեալ կարօտեր ինձ վասն պատերազմին Իտալիոյ, ուրախ եղև ընդ պատճառանսն դարձուցանելոյ զիս։

Ալ և աղնուական էր ուշ նպատակի պատերազմին այնորիկ, որպէս և այլոցն ամենեցուն՝ որ առ ինքնակալութեամբն այնուիկ մղեցան պատերազմունք[1]։ Համբաւատենչ դշխոյն Ոստրոգոթաց իտալացւոց Ամալազն ուխտ նիզակակցութեան կռեալ էր ընդ Յուստինիանեայ, և անդրժելի երկուստեք պահէին դաշինքն։ Գուտ աշխարհին և յօժարութիւն սրտի ձգէին հաւասարապէս զինքնակալն 'ի բարեկամութիւն դըշխոյին, որոյ արիութիւն, հանճար և զօրութիւն մտաց զարմանալի էին նմա[2]։ Ամալազն ճոխացեալ ամենայն բարեմասնութեամբ քաջի իշխանի, արժանի էր թագաւորելոյ 'ի վերայ բարդաւաճեալ ժողովրդեան։ Կալաւ նա 'ի խաղաղութեան զաշխարհ իւր, ծաղկեցոյց զարուեստս և զգիտութիւնս, հրաւիրեաց առ իւր զմանուսնոց և զգիտնոց կաճառ, և պահեաց զհռովմայեցիս 'ի վայրենամտութենէ Գոթաց։ Բայց 'ի վաղամեռիկ լինել Ամալարիկեայ որդւոյ իւրոյ, ամուսնա-

1 Ըստ պատմագրաց։

2 Մինչև թէոդորայ տիկնոջ նորա նախանձել ընդ այն բարեկամութիւն ըստ պատմագրաց։

ցաւ նա ընդ Աստուածատրոյ աղգականի իւրում. որոյ միահեծան կամեցեալ ունել զթագաւորութիւնն, խուժադուժ ապերախտութիւն վտարեաց զտիկին իւր և զբարերար 'ի կղզի մի 'ի բոլսենեան ծովակին, և ետ անդ հեղձուցանել զնա 'ի բաղանիս[1]։ Իսկ սոսկալի եղեռանն երդուաւ Յուստինիանոս խնդրել զվրէժ հիւսի դշխոյին[2], և հասատատեցաւ 'ի խորհրդեան պատերազմն Իտալիոյ։

Ընդ ձեռնարկել ինքնակալին 'ի հրովարտակ դարձին իմոյ, Տիբերեայ կամեցեալ իւրովի աւետել ինձ զայն, փութացաւ առ իս յամարանոց իմ, և խնդրեաց տեսանել զիս միայնակ. ընկալայ զնա 'ի ներքին սենեկի. և իբրև ծանոյց ինձ զհաշտութիւն ինքնակալին, ասացի. Այդ անակնկալ շնորհք քեզ ինձ պարգևին։ Իսկ իբրև գոհանալ կամէի զնմանէ, կարձեաց զիսօսս իմ և ասէ. Ոչ ինչ արարի քեզ շնորհ, զօգուտ ևեթ աշխարհիս գործեալ և զողձից իմոց լրումն. կապեցաւ ընդ քեզ սգի իմ անդսանն 'ի մանուկ տիոց, յորմէ հետէ ընթեռնուի զպատմութիւն, և լսեի զնահատակութիւնս քո. և ըստ արծարծանել փառասիրութեան 'ի սրտի իմում, յաւելցոյ սէր իմ առ քեզ։ Պիտեմ զի է քո դուստր հնգետասանամեայ, զոր չկամ իմ երբէք տեսեալ, և ոչ զգեղ նորա ծանուցեալ. այլ շատ է ինձ զի է նա դուստր Ռելիսարեայ. երդուեալ է իմ չհարսնացուցանել ինձ զայլ ոք։

1 Ըստ պատմագրաց։ 2 Ըստ պատմագրաց։

Ի լուր բանից նորա գորով և զարմանք խառն 'ի սիրտ իմ զեղան։ Այլ ինքնակալն, ասեմ, ոչ հաւանեսցի արդեօք ընդ առ 'ի քէն պատիւդ ինձ պատրաստեալ։ Պատասխանի ետ պատանին արքայազն. Ոչինչ երկբայիմ հաւանեցուցանել զնա յետ պատերազմին Իտալիոյ։ Այլ խնդրեալ նորա զհաւանութիւն իմ սովին պայմանաւ, հաւանեցայ. և միաբանեցաք չհանել զերան 'ի վեր մինչև նորա խօսեցեալ զայնմանէ ընդ ինքնակալն։ Այլ անապարձութիւն իմն հայրենի դրդեաց յիս իղձս՝ ցուցանելոյ զդստրիկն իմ արքայազին պատանւոյն, զոր անդստին փեսայացեալ ինձ համարէի։ Այտու կոչեալ զՆասատասիա. և յերևեալ նորա անդ, հրճուէի ընդ զմայլանս՝ զոր շնորհք և գեղ դիմաց նորա աղդեցին 'ի պատանին, և ասէ. Ո՛վ գեղանսիհ իմում բախտի, զի մինչև զօրիորդն տեսեալ՝ խնդրեցի զաջ նորա. վայրիկ մի ևս՝ և սիրոյ ևեթ հասանէր տնօրինել զիմ բախտ. այլ առաքինութեան պարտէր սահմանել զբախտ փեսայի նորա։ Ի տեսութենէ աստի խանդաղատեցաւ 'ի սէր գողտրիկ և անկեղծ սիրտ օրիորդին, խոստմամբս իմով լեալ նմա բոլորանուէր ցկեանս։

Դարձայ յարքունիս, և գտի անդ զԿերսէս. որոյ ապաքինեալ 'ի վիրացն՝ անդր փութացեալ էր։ Հզօրայեալ էր նա յոյժ առաջի ինքնակալին յաւուրս աքսորանաց իմոց. այլ ամենայն չարարուեստ հնարք նորա և խորամանկ ճարտարու-

թիւն 'ի դաւել և 'ի ՀԼասել ինձ՝ յանկարծ 'ի
ձեռն պատանեկի միոյ ցրեցան։ Բանակս կրկին
տուեալ էր պատրաստել վասն պատերազմին Ի-
տալիոյ, որպէս զի հաւասար իշխանութեամբ
երկաքանչիւր միումն յայնցանէ զօրավարեաք։
Արկոքին պատանիքն արքայազունք հանդերձեալ
էին զառաջին փորձ զինուց յայնմ պատերազմի
փորձել. և 'Լերսիսի խոստումն յինքնակալէն ըն-
կալեալ էր, զարքայորդին Յուստինոս ունել
յիւրում բանակին, և կոչել զայն կայսերական
բանակ։ Խորհեր նա 'ի մտի, զի դժկամակեալ
իմ ընդ անիրաւ մեծարանս նորա քան զիս՝ բողո-
քեի զայնմանէ ընդդէմ կամարձակութեամբս,
և յանդուգն տրտնջանօք զայրացուցանէի զինք-
նակալն։ Ա՛յլ ամենայն ինչ վեր 'ի վայր շրջեցաւ
հզօր և անյողդողդ դիմադարձութեամբ արքայ-
որդւոյն, որ համարձակ յայտ արար ինքնակալին՝
զի զաղնուական մարդս պատերազմի ցանկայր առ-
նել ընդ ձեռամբ հմտագունին 'ի զօրավարս նո-
րա, այն որ զբազում յաղթութիւնսն տարեալ
էր։ Յաւել ևս զի չէր իւր սիրելի և մեծարոյ
'Լերսէս, և զի ոչ իւիք յանձն առնոյր զինուո-
րել ընդ նովաւ։ Յայնժամ ասէ ինքնակալն. Լաւ
ո՞ տարապարտ զձախողակի կարծիսդ ազդեաց 'ի
քեզ։ Պատասխանի ետ արքայորդին. Լաւ ոչ զբ-
իրացն ինքնին յայտնի գոլով. և թէպէտ 'Լարբ-
բալ իմաստուն դաստիարակն իմ՝ զգուշաւոր
քան զամենայն ոք և խոհեմ՝ զհակառակն

խրատէր ինձ առնել, այլ զոր խորհիմն՝ չկարեմ
թանգուզել, անհաճոյ իսկ թերևս թուեցեալ
յաչս ինքնակալիդ։ Ինքնակալն ասէ. Լաւ առ
ինչ արհամարհ թուի քեզ 'Լերսէս։ Պատանին
ասէ. Ի վատ նախանձու ատեայ զՌելիսար։
Ինքնակալն ասէ. Լաւ ո՞ր հաւաստիք ատելութեան
նորա։ Պատանին ասէ. Ա՛յն որ անվրիպելիքն
են՝ գործք իւր։ Ինքնակալն ասէ. Լաւ ո՞րպէս։
Արքայորդին ասէ. Ոչ ինչ է երկբայելի, զի
'Լերսէս զինուորական հանճարո

այնմ՝ ուր արքայազունքն երկոքեան պատանիք զինուորելոց էին։ Այն անակնկալ հարուած ընկալաւ Ներսէս որպէս արդարև դրանիկ՝ Ճարտար 'ի ծածկել զկիրս. զգաց զի միասակարագոյն իւր յիրիս յայսմիկ էր տագնապ ինքնակալին վասն չկալոց 'ի խոստմանն և պարտելոյ 'ի քեռորդւոյն, և փութացաւ սփոփել զնա ասելով՝ զի 'ի նախամեծար առնել արքայորդւոյն զայլ օք, անխոհեմութիւն մեծ էր ընդդէմ դառնալ կամաց նորա. և զի 'ի դիմադարձութենէ անտի վտանգ իսկ էր ձախողելոյ մարտին։ Յաւել և այլ բազում պատճառս քաղաքավարականս, խօսեցաւ զինէն մեծարանօք, հանդարտեցոյց զսիրտ ինքնակալին, զարմացոյց զնա կերպարանեալ առաքինութեամբն, և ոչ միայն աննուաղելի պահեալ ըզվստահութիւն նորա յինքն՝ այլ և յաւել զնոյն. մինչև ինձ իսկ 'ի Ճարտարիմաց հնարից նորա խաբել։ Այլ եկն նա առ իս, և որպէս միշտ ընաւին անյոյզ 'ի կրից՝ ցանկալի իւր ասէր միաբան ընդ իս և միախորհուրդ ձեռնարկել 'ի գործս պատերազմին. և այնու զգօնութեամբ խօսեցաւ զայսմանէ, զի հաւատարիմ համարեցայ զամենայն, և ամենայն անկեղծութեամբ պատասխանեալ՝ գովեցի յոյժ լու 'ի լու ամենեցուն զգնացս նորա, որ յաՃախէին նմա փառս, և հաշտ առնէին զիս ընդ նմա 'ի սպառ։

Ընտանիս կէն իմ դարձ արար յարքունիս. և քանզի դշխոյին գութ բաղում ցուցեալ էր ընդ իս

յաղէտս իմ, փութացաւ մատուցանել նմա շնորհակալիս հանդերձ դատերաւն՝ որ չև ևս երևեալ էր յարքունիս։ Այս ոչ բախտի անդ առ դշխոյին գտեալ յայնժամ Յուստինոս, հարաւ 'ի գեղ օրիորդին սաստիկ սիրով. մինչև չկարել իսկ թագուցանել զտարփանսն, այլ յայտնել ամենեցուն 'ի դրան։ Դայց ինքնակալն չգիտելոյն ապար զայն, յուսացեալ զի 'ի գնալ նորա 'ի պատերազմ՝ անկանէր 'ի մտաց նորա տպաւորութիւնն այն նախկին դիւրաջինջ, վասն որոյ Ճեպեցոյց զմեզ 'ի չու։ Այլ 'ի հրաժեշտ 'ի նմանէ առնուլ արքայորդւոյն, ասէ ցնա ինքնակալն առաջի ամենեցուն՝ որ շուրջն կային. Այրթ արքայորդիդ առնել քեզ փառս, և արժանի լինել բախտին որ 'ի սիրոյ իմմէ պատրաստեալ քեզ։ Ընտրեցի քեզ հարսն՝ երկոքումբք քեզ ցանկալի, գեղոյն և մտերմութեամբ քով ընդ Տիբերեայ. 'ի դարձին քում ընկալցիս զաջ քեռնորա զՍոփիայ արքայազին օրիորդին։ Այլ զայս ասացեալ՝ 'ի հրաժեշտի կացոյց զնա, ոչ ևս տեղի տուեալ պատասխանւոյ. սակայն յայտնի եղեն ամենեցուն յոյզք մտաց և տժգոհութիւն արքայորդւոյն։

Զու արարաք նաւարկել 'ի Սիկիլիա. և 'ի նաւի անդ ստէպ խօսէր ընդ իս արքայորդին ըզտարփալոյն. և ես զնոյն միշտ պատասխանէի նմա անզիջանելի, զի ինքնակալին զայլազգ միտս իւր յայտնելով ամենեցուն՝ պարտ էր նմա հրա-

ժարել 'ի խորհրդոց անտի. և զի դարձեալ չէր յիս յանդուգն փառասիրութիւնն այն, և ոչ 'ի սրտի դատերն իմոյ՝ որ անհրապուրելին էր յարքունական փառաց. և ծիրանիք ոչ բաւէին յետս կացուցանել զնա 'ի պարտեացն. և զի խոստացեալ իսկ էր իմ զնա այլում։ Բայց արքայորդին անփոյթ առնէր զբանից իմոց, թելադրութիւնս համարելով զայնոսիկ ինքնակալին. այլ ոչ համարձակէր 'ի վեր հանել զխորհուրդս իւր Տիբերեայ, տագնապեալ 'ի յայտնել նմա զմերժումն օրիորդի քեռ նորա։ Իսկ Տիբեր իրագէտ ամենայնի, պատճառէր առ նմա անգիտանալ. և ինքն սփոփէր զսիրտ իւր և զբռնաբռնութիւնն՝ տաժանելի յոյժ մեծախոհութեան նորա, և ասէր ցիս. Եկամարեմ աստուծոյն մրրիկ ահեղ. և զի՞ գործեսցէ Յուստինոս 'ի գիտելն, զի նախանձորդ նորին եմ 'ի սէր. և գիտասցէ իսկ զայն վաղ կամ անագան։ Օ՜ այրոյթ նորա, թէպէտ ահագին և արիւնախանձ, ոչ ինչ ահ արկանէ յիս. վստահ եմ զի և տարփանք նորա, և որ ինչ անտի յուզեալ մոլեգնութիւնք հանդերձ ամենի բնաւորութեամբ նորա՝ ոչ խզեսցեն երբեք զանլուծանելի բարեկամութեանս մերոյ անդատին 'ի մանկութենէ կցորդութիւն։ Հնար իսկ է նմա 'ի զայրոյթ սրտմտութեան իւրոյ՝ սուր 'ի սիրտ իմ ձգել. այլ նոյն աջ անզգայեալ արագ արագ զվրէժ արեան իմոյ խնդրեսցէ, զիւրն ևս ընդ իմումն խառնեալ. կարասցէ նա

սպանանել զիս, այլ ոչ ևս յետ այնորիկ կեալ։ Բ. յաքան է սէր նորա ընդ իս, և աստի 'ի միտ առցես զգութ իմ ընդ նմա. սիրելի է նա ինձ, զի չիք նորա սերտիւ սիրեալ զոք բաց յինէն, և զի ինձ միայն եղև ցարդ տիրապետեալ սրտի նորա. ոչ երկիւղ, ոչ ակնածութիւն, և ոչ շահ ինչ օգտի կարէն այլայլել երբեք զգնացս նորա. այլ ինձ յաճախ իսկ յաջողէ բանիւ միով ողբել զցաւսն նորա, և փոխել զնա 'ի մտաց։ Սակայն չիք իմ երբեք տեսեալ զնա 'ի տարփանս. և ո՞ կարիցէ գուշակել զարհաւիրս, զոր սէր մոլեգին և նախանձընդդէմ գործեսցէ յայլանդակ և յապերասան միտս նորա, և յեռանդուն և 'ի յանդուգն հոգւոջ։ Ոչ հանդարտեմ տեսանել զնա թշուառ, և ինձ իսկ զնա թշուառացեալ. վիշտ է ինձ մանաւանդ գաղտագողի լինել նմա նախանձորդ. մատնութիւն իմն թուի ինձ այս. և ոչ այսչափ լիցի ինձ վշտակրել, եթէ գիտասցէ նա զամենայն։

Չկարեմ անյիշատակ առնել զայսոսիկ ազնուական իմաստս առաքինւոյն Տիբերեայ վեհագն պատանւոյն, որ միշտ լիցի ինձ սիրելի։ Պատրաստ իսկ էր նա հրաժարել 'ի սիրուհւոյն, եթէ չէր իմ ազդեալ նմա զփոխադարձ սիրելութիւն իւր Անաստասիայ, և զանհամբոյր անսիրելութիւն աղքայորդւոյն առ 'ի նմանէ։

Եւ յաջողակի նաւարկութեամբ հասեալք 'ի Սիկիլիա, է որ զինուք և է որ ուխտիւ դաշանց՝

նուաՀեցի զԱտանա, զԱիրակուսա, զՊանորմն և այլ քաղաքս բաղումն։ Ապ ընդ փոյթ դիմեալ ապա յԻտալիա, կալայ զՆեապոլիս. և անտի դէմ եղեալ 'ի Հռովմ, մտի անդր առանց ուրուք ինձ ընդդէմ դառնալոյ. և զփականս քաղաքին յղեցի առ ինքնակալն[1]։ Յամենայն պատերազմունս յայսոսիկ արքայազունքն երկոքին պատանիք պայծառացան քաջութեամբ. մին անխռով սրտիւն և արագամտութեամբ լեալ նշանաւոր, իսկ միւսն անվեհեր եռանդեամբ։ Յուստինոսի այնպէս զայրագինս նահատակեալ, զի ատելութեան թուէր խրախուսել զնա անդադար և զրգռել 'ի վրէժխնդրութիւն անձին. իսկ Տիբեր հանդարտ 'ի վտանգս, և մարդասէր 'ի նախՀիրս արեանց, թուէր ոչ յայլ ինչ ուշ ունել՝ բայց խնայելոյ 'ի կեանս զօրականին, և խնամ ունելոյ ամենի բարեկամին՝ զոր երկիցս փրկեաց 'ի մահուանէ։ Օ լինուորական հանՀարոյ 'ի ծնէ հանդիպեալ, սիրտ նորա յօժար 'ի բարերարել ոչ այլ ինչ դէպս բարեպատեհս համարէր 'ի մարտի՝ բայց ուր կարէին խափանել զկորուստ բազմութեան մարդկան. անայլայլակ 'ի պատերազմի է վատահութիւն նորա, այլ յետ յաղթութեան տեսեալ է իմ զնա յաՀախ խռովեալ յոգւոյ հանելով ընդ համար անկելոցն։

Զգդ եղև մեզ անդ 'ի Հռովմ, զի ապաշնորհն և վատշուէր Պետուածատուր երկնառաք պատու-

1 Ըստ պատմագրաց։

հասիւ սպանեալ էր յապստամբաց, և զի սպանօղն նորին Ալիտիգէս բռնակալեալ զաթոռն Պոմթաց՝ դիմէր գայր զօրք պաշարել զմեզ 'ի Հռովմ[1]։ Այլ ընդդէմ նորա, հարի զնա, և կալաք զյաղթութիւն. Ալիտիգէս փախստական երթեալ ամրացաւ 'ի Հռաւենա. հասի զհետ, և զբռամբ ածեալ զքաղաքն՝ ձերբակալ արարի զԱլիտիգէս[2]։ Յապուշ եղեն Պոմթք ընդ այնչափ յաղթութիւնս. և անտէրունչք մնացեալ՝ մատուցին ինձ հանդիսիւ զթագ արքայութեան իւրեանց։ Փառք Աստուծոյ սիրելի եղեն ինձ միշտ, և ոչ երբէք զարքայութեան թեկն ածի, ոչ այլ ինչ համարեալ զայն՝ բայց շքեղ ծառայութիւն. սակայն քաղցր թուեցաւ ինձ՝ յետ այնչափ անիրաւութեանց կրելոյ, հանդէս առնել հաւատարմութեանս իմոյ հրաժարմամբ 'ի թագաւորելոյ[3]։ Պատերազմս այս քաջայաղթ տեւեաց զամ մի. և դարձ արարաք մեք 'ի Կոստանդնուպօլիս, ուր խընդամիտ յանդիման ինքնակալին կացուցի միւսանգամ զթագաւոր խոնարհեալ յաթոռոյ առաջի զինուցս իմոց։

Պատուէր տուեալ էր իմ, գիտելով իսկ զայն Յուստինեայ, ոչ ևս երևել դատերն իմոյ յարքունիս՝ չև արքայորդւոյն հարսնածեալ զՍոփիա. և գտի 'ի մայրաքաղաքին զկին իմ զԱնտոնիա, իսկ դուստր իմ Անաստասիա կացեալ

1 Ըստ պատմագրաց։
2 Ըստ պատմագրաց։
3 Ըստ պատմագրաց։

մնացեալ էր յամարաստանի անդ դաստիարակաւն
իւրով։ Ընդ ժամանել մեր անդր, Յուստինոս
այն ինչ այց արարեալ ինքնակալին՝ փութացաւ
դաղտագնաց 'ի խնդիր Ընաստասիայ. և բռնա-
բարեալ զդրունս ամարանոցին, եմուտ մինչև 'ի
ընակարան դստերն իմոյ, արհաւիրս անհնարինս
արկ 'ի նա յայտնելով զկաթոդին տարփանս իւր,
և ոչ պատասխանուց 'ինմանէ մնացեալ, անդրէն 'ի
ձի աշտանակեալ՝ երագամէտ սանձարձակ դարձաւ
'ի մայրաքաղաքն։ Օ համբաւի հարան իրքն. զիր
'ի դստերէ իմմէ ընկալայ մանրապատում, և ածի
զայն առ ինքնակալն՝ յայտ առնելով նմա, զի ոչ
միայն չյանդգնէի 'ի փառասիրութիւն վեհափառ
ինամութեանն՝ այլ և զի անլուծանելի երդմամբ
այլում զդուստր իմ խոստացեալ էր։ Կոչեաց
ինքնակալն զՏիբեր, և հրամայեաց նմա երթալ
առ քոյր իւր՝ որ հեռի յարքունեաց անտի դաս-
տիարակէր առանձինն, և ածել զնա 'ի Կոստան-
դնուպօլիս, քանզի կամէր իսկ և իսկ հարսնացու-
ցանել զնա Յուստինեայ։ Պատասխանի ետ Տի-
բեր, զի օրիորդին Սոփիայ անյեղլի բնաւորու-
թեան չէր հնար տալ աջ հաւանութեան այնմ՝
որ ստիպեալ 'ի հրամանէ հրաւիրէր զնա 'ի հարս-
նութիւն։ Այլ 'ի ծանրացաստումն լինել ինքնա-
կալին ընդ այնպիսի բանն, յաւել Տիբերիոս.
Ոչ անգիտանամ, տէր արքայ, քանի փառք իցեն
քեռն իմում և ինձ հարսանիքդ գերապանծ. Է-
թէ տեսանիցիր զսիրտ իմ, 'ի միտ առնուիր զի բա-

րեբախտութիւն ինձ զայն համարիմ. այլ չկարեմ
զոհել զքոյր իմ, և ոչ խաբել զնա։ Խրոխտ է
օրիորդն, և արհամարհանաց արքայորդւոյն ոչ
կարէ ժուժկալել. անծանօթ են նմա աշխարհ և
արքունիք, և դաստիարակեալ 'ի խոր միայնու-
թեան՝ չգիտէ նա կեղծաւորել. երկնչիմ ածել
զնա այսր, զի անսիրելաբար ընկալցի զնա ար-
քայորդին։ Յայնժամ ինքնակալն ասէ. Դաջ
է, երթ ապա խօսել ընդ նմա, զի չէն ինձ կամք
բռնադատելոյ. այլ զուն գործեսջիր ածել զնա,
և համոզել ողջոյվ 'ի հարսանիսն՝ որ ցանկալի է
մեզ։

Մեկնեցաւ գնաց Տիբեր, և դարձաւ միայ-
նակ, եբեր զրոյց ինքնակալին 'ի Սոփիայ, զի
գիտացեալ նորա զցրտութիւն արքայորդւոյն 'ի
սէր իւր՝ պաղատէր 'ի ձեռն եղբօր իւրոյ առ
ինքնակալն՝ թողուլ զնա 'ի միայնութեանն։
Ընդ այսպիսի հաստատութիւն մտաց օրիորդին
վշտացաւ ինքնակալն. իսկ արքայորդւոյն հրա-
ճուեալ ընդ այն, յայտնեաց յայնժամ Տիբերի
զսէր իւր։ Որում պատասխանի ետ Տիբեր, և
ասէ. Ձկարեմ հաւանել ընդ որ ոչն հաճի հայր
քո և թագաւոր և բարերար. այլ զՍոփիայ լեր
անկասկած. զի թէ և քո փոխեսցին միտք, այլ
ոչ իւիք յորդորեսցի նա տալ քեզ աջ հաւա-
նութեան։ Դժպհի թուեցան Յուստինեայ այս
բանք, և ասէ. Այլ ո՞րպէս, ապա ուրեմն ատեայ
զիս։ Տիբեր ասէ. Դաւ լիցի, զի չճանաչէ իսկ

զքեզ. այլ հոչակ հանքաւոյ քո ահ արկանէ 'ի նա։ Յուստինոս ասէ. Ընշուշտ քո իսկ ազգեալ իցէ 'ի նա զայդ մերժումն։ Տիբեր ասէ. Վասահ լեր զի ոչ ումեք բաց 'ի քէն ազգեմ զոր խորհիմն զքէն չար։ Յուստինոս ասէ. Եթէ չէր սիրտ իմ 'ի տարփանաց աստի զրաւեալ, ցանկալի էր ինձ հարսնածել զքոյր քոյին. լսեմ զի գեղանի իսկ է։ Տիբեր ասէ. Ընդարև չքնաղագեղ է Սոփիա և սեգ առանց գոռոզութեան. գիտէ որ ինչ պարտք են կնոջ ժրագլխի՝ յօժար 'ի ընուլ զայնս, և առ 'ի կարելոյ առանց ձգանց կալ միշտ հարսն հպատակ՝ երդուեալ է լինել առն, որ առաւել իցէ իւր մեծարոյ, և ընտրեալ իսկ է զայն։ Յուստինոս ասէ. Եւ զո՞։ Տիբեր ասէ. Զարմանք թուեսցին քեզ. կամի նա հարսնանալ առն միւսմ ծերունւոյ, մերումս իմաստուն վարժապետի, առաքինւոյն Եարբալայ։ Յուստինոս ասէ. Եարբալա՞յ առն վաթսնամեայի։ Տիբեր ասէ. Դիտես իսկ զի Եարբալ յերկուց ամաց հետէ մեկուսացեալ կայ 'ի միայնութեան մերձ 'ի քնակութիւն քեռն իմոյ. գութ սիրոյ նորա ընդ իս՝ փութով ոգեխառնեաց զնոսա, և ամենայն խնամով հրահանգեաց նա զմիտս Սոփիայ. վարկ և երախտագիտութիւն ոչ ինչ ընդհատ 'ի սիրոյ ունին զոր թիւն։ Յուստինոս ասէ. Գանի՞ ամք են տիոյ Սոփիայ։ Տիբեր ասէ. Եօթնեւտասն։ Յուստինոս ասէ. Եւ նախամեծարն քան զիս առնէ զայր ծերունի՞. ծն և ծն, եթէ ոչ Ընդ

նաստասիա զսիրտ իմ գերէր, չհանդուրժէի ընդ անպատկանաւոր հարսանեան։ Տիբեր ասէ. Լաւ ինձ, չէք հարսանիք անպատկանաւոր՝ բայց ուր մերութիւն ընդ առաքինութեան ձախողակի կցորդեալ։

Ի քանից աստի ուշ 'ի կուրծս անկեալ Տիբերի, զի թերևս դրդեալ արքայորդւոյն 'ի մնափառութենէ՝ յեղափոխեր յանկարծ, և ցանկայր տեսանել զօրիորդն և հաճոյ լիներ նմա, և զի գիտեր քաջ զանողոքելի խորշումն քեռ իւրոյ 'ի հարսանեաց անտի, փոխանակեաց վասն նորա աներկմիտ զյաջողութիւն սիրոյ իւրոյ, և փութացաւ խնդրել հրաման յինքնակալէն տալոյ Եարբալայ զօրիորդն 'ի հարսնութիւն։ Ընդունեցաւ ինքնակալն ընդ խնդիր նորա. և յերկարեալ զամիս քանի մի, ապա ուրեմն զիջաւ՝ բայց միայն զի զերկեամ մի տարագնաց ուղևորեսցի Տիբեր ընդ Յուստինեայ. քանզի յուսայր բժշկել արքայորդւոյն ընդ երկար բացակայութեամբն 'ի տարփանաց անտի։ Յուստինոս պնդագոյնս ընդդէմ եկաց այսմ ուղևորութեան, և խնդրեր խոստումն յինքնակալէն ընդունելոյ 'ի դառնալն իւրում զաջ Ընդաստասիայ։ Խոստացաւ այնուհետև ինքնակալն չհակառակել այնմ 'ի հաւանել իմում. և մեկնեցան իշխանազունքն երկոքին, 'ի մտի եդեալ Տիբերի ծածկել ցայնվայր 'ի Յուստինեայ զսէր իւր և զակնկալութիւն, զի և նա ինքն յուսայր մոռանալոյ արքայորդւոյն զԸնդաստասիա։

Ոչ նորանշան ինչ էր Յուստինեայ տարփալ դստերն իմում, զի և յոգունց յինքնակալաց խնամութիւն ընդ հպատակս իւրեանց արարեալ էր. զոյգք իսկ 'ի ժողովրդեան լինէին, արդար փոխարէնս համարելով զայս գերապանծ վաստակոց՝ զորս վաստակեալ էր իմ յօգուտ աշխարհին։ 'Լերսէս, որ առաւել ևս յայնժամ 'ի շնորհս ինքնակալին էր, ածէր նմա զոյգս՝ զի և ժողովրդեան հաճոյ և ցանկալի էին հարսանիքն այն. այլ գիտէր քաջ զի ինքնակալն դժկամակ և նախանձընդդէմ էր սիրելութեանս իմում առաջի ժողովրդեան, և չկամէր երբէք յաւելուլ տալ ինձ զբարձր պատիւն։ 'Բանզի և անկասկած իսկ էր զելից իրացն, գիտելով զի իմ այլում զօրիորդն խոստացեալ էր. և խորհէր ստիպել զիս 'ի յայտ առնել զայն նմին իսկ արքայորդւոյն, եթէ նա 'ի դարձին իւրում յամառէր 'ի խնդրել զդուստր իմ։

Ոչ ինչ կարևոր յաւուրս ուղևորութեան արքայազնցն պատահեաց, և դարձան նոքա 'ի պայմանեալ ժամանակին, Յուստինեայ զնոյն կաթոգին տարփանն բերելով յանձին 'ի սեր Ն. նաստասիայ։ Յայնժամ լու 'ի լու ինքնակալին ասեմ անվեհեր ցարքայորդին, զի մինչև ծանուցեալ զիրձս նորա՝ երդմամբ խոստացեալ էր իմ այլում զօրիորդն 'ի հարսնութիւն։ Ի բարկութիւն բրդեցաւ նա ընդ բանս իմ, իսկ ես յաւելի. Ո՞ւմ բարկանաս, տեր իմ. ոչ ապաքէն զնոյն և 'ի յայտնել քում ինձ զսէր քոյին՝ ասացի քեզ։ Ա՛յո, ասէ, և այդպէս անկ էր քեզ խօսել ցորչափ ինքնակալն չհաւանէր. այլ արդ զի հաճոյ եղև նմա տալ հրաման, ամենայն խոչ և խութ պարտին տեղի տալ մեծարանաց և երախտագիտութեան։ Կրկնեալ անդրէն ասեմ. Ապաքէն ինքնակալն կարող է ամենայնի, տեր իմ. այլ կարողութիւն նորա հզօր և սուրբ է, զի կամք նորա միաբան են միշտ ընդ արդարութեան. և մանաւանդ խնայէ նա 'ի պատիւ իւրոց հպատակաց, զի պատիւ նոցա յաճախէ զփառս իւր. և ո՞վ ոք պանծասցի իշխել անարգ ոքերոյ։ Կարձեաց զբանս իմ արքայորդին դառն հեգնութեամբ, և ասէ. Ա՛զէ ապա, զո՞ յարուցանես դու ինձ ոսոխ. Թերևս զո՞ք 'ի Թագաւորաց 'ի քէն պարտելոց։ Ոչ, ասեմ. արքայք այնոքիկ բռնաւորք են, անփառունակք յաչս իմ. ոչ տաց երբէք զդուստր իմ Թագաւորի, որոյ օրէնք՝ կամք իւր են և կիրք։ Խորազգաց լեալ Յուստինոս երդիծական իմաստից բանից, և զայրագին ցասմամբ խոժոռ ակնարկեաց յիս։ Յայնժամ և ինքնակալին ոչ զմտաւ ածեալ զի ես 'ի վերայ կամաց իւրոց արիաբար մարտնչեի, սրտմտեալ ընդ յանդգնութիւն իմ՝ արձակէր զիս խստիւ 'ի բաց. բայց արքայորդին խնդրեալ 'ի նմանէ հրաման, յաւել խօսել ընդ իս և ասէ. Ա՛պա ուրեմն զոք 'ի հպատակաց ինքնակալին մեծարես քան զիս։ Ասեմ. Դաւ լիցի, տեր, ոչ

զմեծարանաց ինչ բանք են աստանօր, այլ ըզ-
խոստմանէ՝ ոչ արդարև օտարի ումեք տուեալ։
Ասէ. Ստահ եմ զի 'ի գիտել նորա զնդձս իմ,
ոչ երկմտեսցէ աղատ զքեզ 'ի խոստմանէդ կա-
ցուցանել։ Ասեմ. Սակայն 'ի վատութիւն խո-
նարհեսցի, եթէ արդարև սիրելի էցէ օրիորդին։
Յայնժամ գոչեաց զայրագին. Զոչ սիրեցե-
լումն 'ի նմանէ. և յաւել. Բայլ ես նմին ինքեան
և եթ կարեմ հաւատալ, կամիմ լսել 'ի նմանէ։

Եւ աղաչեաց զինքնակալն, առաքել խնդրել
վաղվաղակի զօրիորդն։ Ասարանէր ինքնակալն.
այլ ես հաւանեցուցի զնա ասելով, զի ոչ այլազգ
ինչ բանս 'ի դատերէ իմմէ ճնայր լսել նմա։

Եկն եկաց Ընաստասիա. և անդ զառաջինն
տեսանելով զնա արքայորդւոյն յետ երկեամ ժա-
մանակի 'ի գեղածաղիկ տիս 'ի լիութիւն գեղեց-
կութեան, կարկեալ եկաց առ վայր մի 'ի զմայլ-
մանէն. և ապա անդէն իսկ յանդիման ինքնա-
կալին՝ անկեալ առ ոտս նորա, կողկոզագին բա-
նիւք աղերսէր, տնօրէն զնա բախտին իւրոյ կո-
չելով, և խնդրելով 'ի նմանէ յայտնել զսիրա
իւր համարձակ։ Իսկ օրիորդն ամօթխած խո-
նարհ և դողդոջուն ձայնիւ, այլ անյողդողդ ա-
ռիւթեամբ, բառնալով 'ի նմանէ զամենայն յոյս՝
ասէ. Որովհետև հրամայես ինձ, տէր, խօսել
անկեղծաբար, խոստովան եղէց քեզ որ ինչ ոչ
ումեք ցարդ յայտնեալ է բաց 'ի հօրէ իմմէ։
Ոչ ևս տնօրինել զսիրա իմ կարեմ. այլում նուի-

րեալ է զայն։ Եւ մինչդեռ տակաւին բանքն 'ի
բերանի կային, 'ի վեր վազեաց պատանին. և
ինքնին իսկ 'ի յանկարծաշարժ կրիցն բռնութե-
նէ երկուցեալ, սրացաւ 'ի բաց և եղև աներե-
ւոյթ։

Ի յուսահատ արտմութեան անդ կարօտեր
արքայորդին մտերմին իւրում. գիմեաց 'ի խնդիր
նորա, և պատմեաց նմա որ ինչ անցք ահա ան-
ցեալ էին ընդ իւր։ Կարի յոյժ խանդաղատեցաւ
Տիբեր 'ի լուր բանիցն. գիտեր նա յինէն զի սի-
րելի էր օրիորդին, այլ ոչ երբեք համարձակեալ
էր Ընաստասիա ասել նմա որ ինչ յայտնեացն
նախանձորդի նորին՝ հրաժեշտ 'ի գահոյից իսկ
տալով այնու արիական համարձակութեամբ։
Դրաւեալ ուշ և ուրուշ Տիբերի յօրիորդն, լուռ
և եթ կայր. իսկ արքայորդին զամենայն դառնու-
թիւն աղետիցն 'ի դուրս զեղեալ, յաւել ապա
զայրագինս սպառնալ անծանօթի ոսոխին՝ որ քի-
նուն իւրոյ նպատակն էր։ Յայնժամ Տիբերի ու-
շաբերեալ անդրէն՝ ասէ. Ազ և չէ իսկ իրաւա-
ցի ցասումն քոյին, զի ոսոխն այն մինչև քո ծա-
նուցեալ զԸնաստասիա՝ սիրելի էր նմին։ Ար-
քայորդին ասէ. Ոչ այդպէս, մի անցցէ ընդու-
նայն հեծութիւն իմ առ ոտս աղջկան միոյ՝ մեր-
ժեալ 'ի նմանէ, և 'ի հօրէ նորա ոտնհարու-
թեամբ արհամարհեալ խնդրեցիս զվրէժ, սա-
տակեցիս զոսոխ իմ, բարձիս 'ի նմանէ զԸնաս-
տասիա։ Տիբեր ասէ. Ի վատութիւն ոսոխն այն

գտցի խոնարհեալ, եթէ դեռ ևս թագուցանէ զանձն յետ այսպիսի սպառնալեաց։ . . Արքայորդիդ դու, բաց զաչս քո, ծանիր ուրեմն . . . Յայնժամ Յուստինոս հեղձամղձուկ ձայնիւ արգել զնա, և ասէ. Կաց մնա, լուռ լեր, թող զիս վայրիկ մի ևս 'ի վարանս։ Այլ զայս ասացեալ, անկաւ 'ի թիկնաթոռն։ Արկնեալ անդրէն Տիբերի, ասէ. Ոչ լռեցից, լռեցի ցարդ, և պարտ էր ինձ լռել, զի ոչ իմ միայնոյ էին գաղտնիք. այլ զի սպառնաս . . . Յայնժամ Յուստինոս դուչեաց մոլեգին. Ընդուեթ անողորմ, եկ 'ի բաց։ Տիբեր ասէ. Ձառնում յանձն զփախուստ ամենապարտ, կացից մնացից։ Յայնժամ արքայորդին անզգայեալ՝ ձգեաց զսուսեր, և ասէ. Պաշտպանեա անձին քում, նենգաւոր դաւաճան։ Իսկ Տիբեր ասէ անխռով. Դու սպանանել ևեթ կարես զիս, այլ ոչ ստիպել 'ի դիմամարտ։ Արքայորդին ասէ. Զի պաշտպանեա քեզ, վատ ապրանց։ Տիբեր ասէ. Հար զիս եթէ իշխես, ապառում և յետսամիտ։ Արքայորդին ասէ. Կարծիցես վեր 'ի վերոյ առաքինութեամբդ ահ արկանել յիս, բարեկամ հաւատադրուժ։ Տիբեր ասէ. Իսկ դու բարեկամ հէք և թշուառ, այլ հաւատարիմ, լուր զոր երկրորդեմն. սիրէի և սիրելի էի մինչև քո լեալ ինձ նախանձորդ, և չէ ումեք օրէն հրաժարել 'ի փոխադարձ սիրոյ, զի ամենայն ոք իւրականին ևեթ բախտի է տնօրէն, այլ զի կամէր ինքնակալն տալ քեզ զքոյր իմ

'ի հարսնութիւն, փութացայ ամուսնաւորել զնա, թէպէտ և անտի իմումն սիրոյ հասանէր վտանգ։ Յայնժամ Յուստինոս յաւել զայրագին, և ասէ. Այլ ճանաչէս զիս, գիտես զի չիք ինձ այլ առաքինութիւն, չիք այլ ինչ սանձ, բաց 'ի բարեկամութենէ. և եթէ սա խզեսցի, ամենայնի գտայց ձեռնհաս. ծն և օն յերիկէ և այսր ընկաճեալ կամ ընդ լծով բռնաւորին։ Տիբեր ասէ. Ոչ ոչ, դու զլուծ նորին ոչ թօթափեսցես. յակամայ իսկ քո իշխեցից ես միշտ սրտի քում, որ ոչ այլ ումեք գիտէ հպատակել։ Գիտեմ զանուանաձեալ բարս քո և զվայրենի բնաւորութիւն՝ որ բաղում անգամ 'ի մանկութենէ հետէ մահ ինձ սպառնայ. ոչ ինչ զանխուլ է յինէն մինչև յոր եղեռն կատաղութիւն քոյին և զգայակիրկ գոռոզութիւն կարէ զառածանել. ես միայն ամենայն չարամանութեանց քոց գտանիմ տեղեակ, բայց տակաւին սիրելի ես ինձ. տեսանեմ զքեզ որպիսի ես դ, տակայն սիրեմ զքեզ, և դու իսկ գիտես զայն, և չկարասցես երբեք թողուլ զիս։ Յուստինոս ասէ. Այլ ի՞նչ իսկ մարթ սիրել զնախանձորդ բարեբաստիկ։ Տիբեր ասէ. Այո ամենևին. զի տարփանք քոյին ցնորք իմն և արբեցութիւն է, իսկ ընիկ սրտի քո զգացումն՝ բարեկամութիւն քոյին ընդ իս։ Յուստինոս ասէ. Այլ դու ոչ կարես փոխադարձել ինձ զայն, զի ես յաչս քո իբրև զմի յանզգամաց եմ և խուժադուժ անկարեկիր։ Տիբեր ասէ. Այլ 'ի խը-

րատուց աստի իմոց զգօնասցիս. հասանէ քեզ թագաւորել, և յուսամ զի չթողից քեզ բռնաւորել։ Սովորեալ իսկ եմ հսկել զնացից քոց և սանձակոծել զամենութիւն նախայարձակ կրից քոց. ոչ ընդհատ ինչ 'ի հայրենի գորովոյ՝ գութ է ինձ ընդ քեզ. եթէ չէին այսքան թերութիւնք 'ի քեզ, նուազագոյն արդեօք սիրէի զքեզ։ Յուստինոս ասէ. Դայց Նեստասիայ մի՛ լեցի այլում ումեք հարմանալ։ Տիբեր ասէ. Խնայեալ 'ի տկարութիւն քոյին՝ յամեցուցից զհարսանիս նորին, այլ ոչ 'ի սպառ հրաժարեալ յայնմանէ։ Յայնժամ Յուստինոս ասէ. Հարկ է ինձ խընդրել ինչ ուստեք վրէժ, չկարեմ թողուլ անպատուհաս զայնքան յանդգնութիւն և արհամարհանս։

Եւ արդարև չկարացեալ արքայորդւոյն ատել զՏիբեր, դարձոյց զամենայն զայրուցս իւր յիս, երդուեալ յայնմհետէ թափել 'ի գլուխ իմ զահագին վրէժխնդրութիւն իւր։ Եւ առ 'ի յաջողել 'ի նոյն՝ սկսաւ կեղծաւորել. և թէպէտ անհմուտ արուեստին՝ գիտաց ծածկել խորամանկ խաբէութեամբ, եթէ ոչ զոխութիւն իւր, սակայն զխորհուրդս չարութեան։

Յետ ընդերկար խաղաղութեան ընդ Պարսս, թագաւորեալ նոցա Խոսրով առաջին՝ յարոյց անդրէն պատերազմ. և քանզի իմ իսկ լռեցուցեալ էր զվերջին պատերազմն, ինձ յանձն եղև զօրավարել յարշաւանին՝ յորում արքայազունքն երկոքին զինուորել կամեցան[1]։ Խոսրով 'ի պարտութիւն մատնեալ, դառնայր 'ի փախուստ. հասի զհետ նորա, և միւսանգամ տուեալ Ճակատամարտ, փլուզի և խորտակեցի 'ի սպառ զբանակ նորա։ Այն ինչ զբաւ լեալ մարտին, և ահա եհաս ինձ պատուէր՝ դիմել յԻտալիա, ուր Ներսէս բազմութեամբ զօրաց հանդերձեալ էր գալ գումարել ընդ իս[2]։

Հռչակաւորն Ցոտիլաս թագաւորեալ Գոթաց յետ մեռանելոյ Եւարիկեայ, տիրեաց ընդ հարաւակողմն Իտալիոյ առ հասարակ, և ընդ կղզիս Կորսիկայ, Սիկիլիոյ և Սարդինիոյ. և աշխարհակալութիւն նորա եղև ՀԷասակար յոյժ, որչափ զի քաղաքավարութիւն նորա սակաւ ուրեք էր խժդժական։ Հմուտ էր նա հաւասարապէս և իրաց պատերազմի, և յինքն յանկուցանելոյ զաղգս. կալաւ զՆէապոլիս, և սիրելի եղև յոյժ անդ բարերարութեամբքն իւրով և վերհանձն մարդասիրութեամբ[3]։ Եւ մինչդեռ նա զպայծառագոյն յաղթութիւնսն տանէր, առաքեցայ ես ընդդէմ մեծի զօրավարին։ Այն ինչ մնեալ էր նորա 'ի Հռովմ, և իբրև լուաւ զի դիմէի անդր մշտայաղթ բանակաւս, երկեաւ կալ մնալ 'ի քաղաքին. և առ զայրոյթ բռնադատութեանն 'ի թողուլ զաշխարհակալութիւնս իւր, զառածաւ յաղգայինն իւր բնիկ խժդժութիւն. և ոչ խնայեալ 'ի հէք

1 Ըստ պատմագրաց։
2 Ըստ պատմագրաց։
3 Ըստ պատմագրաց։

քաղաքացիս, կողոպտեաց զնոսա անօրինաբար յամենայն ստացուածոց։ Եւ մոլեգին կատաղութեամբ խորտակեալ զբաղումս 'ի վաղեմի արձանաց, մինչ դեռ պատրաստեր բնաջինջ առնել ըզբնաւս առ հասարակ, ընկալաւ յինքն գիր՝ յորում երդուեալ 'ի փառս իւր, աղերսէի ակն ածել 'ի պանծալի յիշատակաց անտի՝ յորս պարագայց դարուց խնայեալ էր։ Յաղերսանաց աստի շարժեալ, եթող անեղծ զնշխարս հռովմէական նախնի մեծութեան[1]։ Եւ խուսեաց նա 'ի Հռովմայ. և 'ի նահանջելն իւրում հասի 'ի վերայ, և 'ի սպառ 'ի պարտութիւն մատնեալ՝ դարձաւ նա 'ի փախուստ, և մտի ես 'ի Հռովմ՝ փառաւորեալ 'ի բնակչաց անտի իբր ազատարար[2]։ Սիրտ իմ գեղաներ և գութք իմ յուղեին 'ի տեսիլ ամայութեան քաղաքին, երբեմն գշխոյի տիեզերաց, զոր ահա փրկեի 'ի սպառսպուռ աւերմանէ։ Յայնժամ բերկրանօք 'ի գործ արկի զցանկալին քան զամենայն իշխանութիւնս՝ զոր մատուցանէ յաղթութիւն, 'ի նորոգել զահագին աւերածս և 'ի սփոփել զթշուառս։ Զհոյակապ աւերակսն պահելով՝ փառակից աւագ ապրանցն գտանէի, զորոց բերեն այնոքիկ զյիշատակս. և խնդացի յուսով զի յապագայ դարս Հարատարք և սիրողք գեղարուեստից ոչ առանց յիշելոյ զԲելիսար գայցեն անդր զարմացմամբ 'ի զնին հրաշակերտից նախնեաց։

1 Ըստ պատմագրաց։ 2 Ըստ պատմագրաց։

Ոչ՝ զարքայորդին 'ի պալատն՝ որ պատրաստեալ էր նմա. ուր խորհրդակցութեամբ Տիբերի ազգ արարեալ նստեր յատենի զօրն զայն ցերեկ ընդունել զաւագանին և զամենայն ազատաստիկս՝ որոց էր ինչ աղերս. և ես ինքն առընթեր նմին սահմանեցայ կալ յընդունելութեան անդ։ Յետքն կրկին 'ի վերայ անցին, և ահա հասեալ գայր հիացման արժանի տեսիլ. բազմութիւն արանց զգեցեալ ցնցոտիս, և զհետ նոցա կանայք իբր քառասուն ըստ այլ և այլ տիոց, խարտեն և պատառատուն գրգլեկօք. և էին նոքա աւագանին և տիկնայք նոցա և դստերք և ազգականք։ Զնացք նոցա և ազնուականութիւն շարժուածոց և գիմաց ընդ յետին թշուառութեան նոցա յանդիման առնէին տեսիլ նորանշան և ազիողորմ։ զի անգթութեամբն Տոտիլասայ յայն աղէտս անկեալ էին[1]։ Պարագլուխ տիկնայցն էր երևելւոյն այնորիկ հիբին Բովետեայ այրին[2], առաքինասէրն Հռոստիկիանէ, յորում բռնաւորութեան և անգթութեան չէր գտեալ ինչ առ 'ի կապտել, զի ընդ վախճանել առն իւրոյ՝ քաշխեալ էր նորա զամենայն ինչս իւր աղքատաց[3]։ Յուստինոս խօսեցաւ ընդ նոսա ազ-

1 Ըստ պատմագրաց։

2 Որ մեռաւ 'ի բանտի, թողեալ յոլով երկասիրութիւնս գրաւորականս ընտիրս, ընդ որս և զգիրսն մակագրեալ «Մբխիթարութիւն խմաստասիրութեան», զոր 'ի բանտի անդ գրեաց։

3 Ըստ պատմագրաց։

նուական և մարդասէր բանիւք. և ետու ես յայն-
ժամ դարձուցանել 'ի նոսա որ ինչ 'ի գոյից նոցա
մնային անկորուստ. և նորոգութիւնս բաղումս
շինուածոց արարի 'ի Հռովմ[1], քաւելով նոքօք
զայնչափ աշխարհաւեր արշաւանս՝ որ յաճախե-
ցին ինձ փառս ծանրաբեռնեալ զխիղճ մտաց ի-
մոց, և զայնքան անիրաւութիւնս և զչարիս ան-
հրաժեշտս յերկարատև ընթացս զինուորական
կենաց։

Մինչդեռ բոլորովին 'ի բերկրալի վաստակս
յայսոսիկ զբաղեալ կայի, եկն եհաս Կերսէս 'ի
Հռովմ՝ իբր թէ սահմանել ընդ իս միաբան որ
ինչ մնայր մեզ գործել։ Պարտ էր արգելուլ զելս
Յոտիլասայ Լոտալիոյ. զի մարթ էր նմա գնալ 'ի
կղզիս՝ որ տակաւին ընդ ձեռամբ նորա էին, և
զօրացուցեալ զտկարութիւն բանակին իւրոյ ե-
ռապատիկ բազմութեամբ զօրաց՝ դառնալ հզօ-
րագոյն քան զմեզ։ Մինչև մեկնեալ նորա Լո-
տալիոյ՝ պարտ էր նմա գուն գործել խափանել
զգումարումն զօրացն Կերսիսի ընդ իմոցս, կամ
պատեհ առեալ զդիւրամարտութիւն վայրացն՝
յորս նա առ հարկի անհրաժեշտ արշաւանաց ամ-
րացեալն էր, տալ ճակատամարտ ընդ բանակի
նորին մինչև ընդ իմումն գումարեալ։ Ըստ այ-
սոցիկ և ըստ բազումայլ ևս մտածութեանց, և
ծանօթութեամբ վայրացն՝ որոց հմուտ էի և
տեղեակ, կազմեալ յօրինեալ էր իմ զկարգ պա-

1 Ըստ պատմագրաց։

տերազմին՝ զոր աննախանձ յայտնեցի Կերսիսի.
և նորա հաւանեալ ընդ այն, ձեռն 'ի գործ ա-
րարաք՝ մեկնեալ յիրերաց։ Պոհ և հաւան գը-
տայ ընդ նա, և վկայութիւն բարի գրեցի զնմա-
նէ առ ինքնակալն. և խնդութիւն յոյժ եղև
ինձ 'ի յաղթութեանս իմում, յետ նկուն առ-
նելոյ զմի 'ի գերահամբաւ զօրավարաց ժամա-
նակին, գովութիւնս մեծամեծս մատուցանել
այնմ՝ որ 'ի բազմաց հետէ ոսոխ իմ էր, յայտ
արարեալ զի նախանձու չգտանէր յիս տեղի։
Կուտակեալ ստուարացուցի որ ինչ զնմանէ խոր-
հէի բարիս. մեծարէի զհանձար նորա, այլ յա-
ւելի հրաշալի ինն ցուցանել զայն։ Որ միանգամ
վերջացեալք 'ի վեհանձնութենէ գտանին, ան-
տեղի է առ նոսա առատաձեռնութիւն այսպիսի.
վասն որոյ ինքնակալն փոխանակ առնելոյ ընդ իս
իրաւունս ըստ աննախանձ բարուցս, գեր 'ի վե-
րոյ քան զիս համարեցաւ զԿերսէս աներկբայե-
լի վասն գովութեանցն յինէն խոստովանելոց։
Այլ մինչդեռ ես այսպէս գնայի, Կերսիսի սեփա-
կանեալ իւր զպարծանս յօրինուածոյ մարտին՝
զոր չէր իմ ծածկեալ 'ի նմանէ, ցուցանէր ինք-
նակալին յիւրմէ թելադրեալ զբնաւ իսկ գոգցես
կարգս յօրինուածոյն։ Յապուշ եղէ յոյժամ,
'ի լրումն երկամեայ աւուրց 'ի կէս ասպարիզի
գործոց պատերազմին, եհաս առ իս հրովարտակ
յինքնակալէն՝ դառնալ 'ի Կոստանդնուպօլիս[1],

1 Ըստ պատմագրաց։

թողեալ յարքայորդին զհրամանատարութիւն Հռովմայ և զբանակին։ Ծանեայ անդէն զդաւ Ներսիսի, և զհամախոհութիւն նորա ընդ արքայորդւոյն. խելամուտ եղէ զի կամէին յափշտակել յինէն զփառս լսման մեծի պատերազմին, որում սկիզբն արարեալ էր իմ փառօք։ Սիրելի էի 'ի Հռովմ և ընդ ամենայն Իտալիա, և ամենազօր 'ի բանակին. և 'ի կամս իմ էր կալ ինքնիշխան, և լինել վերամարտիկ անձին, զոր թելադրէր իսկ ինձ զօրագլուխ զօրացն իմոց Փարաս. Էր, ասէ, անձին վրէժխնդիր, երաշխաւորեմ քեզ վասն բանակիդ. 'ի հրաման ևեթ քոյին դիմեսցեն ընդ դրօշակօք քովք զօրք Ներսիսի առ հասարակ և յարիցեն օգնել քեզ ամենայն ազգք Իտալիոյ։ Այսպա, և 'ի վայրկեան ժամանակի արգելցի արքայորդին յիւրում պալատան՝ լինել մեզ պատանդ։ Կորուսցուք զՅոտիլաս, և միսսանգամ հրաւիրեսցեն զքեզ Պոմք թագաւորել 'ի վերայ իւրեանց. նստիցես յաթոռ, և արասցես քեզ պարծանս ածելոյ 'ի քաղաքականութիւն զազգն խուժադուժ. հռչակ ևեթ համբաւոյ քո բաւեսցէ ընդարձակել զսահմանս ինքնակալութեան քո, և սասանեցուսցես զինքնակալն ապաշնորհ, որ բարեբախտութիւն իւր համարեսցի ընդունել 'ի քէն աշ խաղաղութեան՝ թէ հաճեսցիս տալ նմա։ Խորհեաց զի վատասիրտ է նա և երկնչի 'ի քէն, և զի Ներսէս և Յուստինոս միաբանեալ են ընդդէմ քո. խոր-

հեաց զի մնայ քեզ ինքնակալել, և կամ անկանել զոհ թշնամեաց քոց։ Բռ որ ետու պատասխանի. Գեղեցիկ է, ո՛վ Փարաս, ժառանգել զթագաւորութիւն. այլ գեր 'ի վերոյ քան զթագաւորել՝ զոլ հաւատարիմ հպատակ ապաշնորհ և անիրաւ թագաւորի, յորմէ վտարանջելաներ կեան յաջողութեամբ առաջի կայցէ։ Այս այսպէս խորհեցայ յերեսնամենի. և արդ զկրկնապատիկ անցեալ տիովք՝ ոչ 'ի դէպ է ինձ խորհել այլազգ։

Հապա հնազանդեցայ հրամանին անտրտունջ. զի որ տրտնջանօք հնազանդութիւնն է, ծառայական է. այլ ուժգոհութիւն հռովմայեցւոց և զօրաց բանակին յարոյց աղմուկ մեծ, և չեղև ինձ հնար այլազգ հանդարտել զոգիս՝ բայց հաւանեցուցանելով նոցա զի ոչ անդարձ հասանէր ինձ կոչ, այլ առ ժամանակ մի։ Ի յանցանս գրեցան ինձ յետոյ այս հնարք, որով միայն յաջողէր խաղաղութիւն, և այլազգ չթողուին ինձ մեկնել։ Բայց աղմուկս այս յամեցոյց զիս 'ի Հռովմ աւելի քան զամենօրեայ ժամանակ. և յայնժամ հռովմայեցիք հատին դրոշմածս ինձ 'ի պատիս, աստի բերելով զպատկեր իմ, և անտի արձանագրեալ "Բելիսար փառք հռովմայեցւոց,,[1]. որ 'ի ժամանակի անդ թշուառութեան իմոյ գորովեցոյց յոյժ զսիրտ իմ։

[1] Ըստ պատմագրաց. Belisarius gloria Romanorum. Գտանին ցարդ իակ 'ի դրոշմածոց աստի 'ի Թանգարանս ուրեք հընութեանց։

Զու արարի, հասի 'ի Կոստանդնուպոլիս, և մտի անդր գիշերայն, որպէս զի մի աղմուկ ինչ լինիցի 'ի ժողովրդեան։ Ոչ սիրով ընկալաւ զիս ինքնակալն, պատճառանօք յամելոյ իմոյ 'ի դարձ. և իբրև ասացի վասն խռովութեան զօրացն յամեալ, ասէ. Հաւատարմութիւն ՀՇմարիտ այն է՝ զառաջս առնուլ խռովութեան. և այս յաջողէ միշտ, ուր անկեղծ կամք իցեն։ Լատու պատասխանի. Տէր արքայ, թէպէտ և հարկ իցէ ինձ հաւատալ՝ թէ դոյ իսկ ապերախտութիւն, սակայն գիտեմ ևս հաւաստեաւ՝ զի երախտագիտութիւն ժողովրդեանն և զօրականին չեն ցնորք ինչ մտացածին, և ոչ այլազգ գրգռեալ՝ բայց 'ի յաղթութեանցս իմոց։ Յայնժամ ինքնակալն խոժոռ ինձ թիկունս դարձուցեալ էլ 'ի բաց։

Լուր դարձին իմոյ հնչեաց 'ի մայրաքաղաքին. և յելանելն իմում 'ի պալատանէն, և ահա ամբաւ բազմութիւն ժողովրդոյ համախմբեալ ընդ փողոցս՝ խուժեցին ընդ առաջ իմ, շուրջ եղեն զինև, և ածին զիս մինչև յապարանս իմ, 'ի ձայն աղաղակի ցնծութեան զօդս հնչեցուցանելով։ Ու անիրաւ բանս ինքնակալին չէր մարթ առնել պատասխանի զկծեցուցիչ քան զայս. այլ այսոքիկ ժողովրդեանն որ առ իս սիրոյ աներկբայելի առհաւատչեայք՝ ահ այնուհետև արկանէին ինքնակալին, զարհամարհանս նորա փոխեալ յատելութիւն անողոքելի։

Յայնմ ժամանակի հասեալ Ներսէս Լատա-

լիա 'ի վերայ Տոտիլայ, առ ստորոտով Պպենեանց խմբեցաւ պատերազմ. 'ի պարտութիւն մատնեցան Գոթք, և սպանաւ անդ Տոտիլաս[1]։ Ի լուր մեծի աւետեացն հրաման ետ ինքնակալն առնել մեծահանդէս տօն ուրախութեան. թուէր նմա տարեալ յաղթութիւն 'ի վերայ իմ։ Դարձաւ Ներսէս ընդ Յուստինեայ և ընդ Տիբերի, և յայտ արար ինքնակալին զի յաղթութիւնն այն առաւելապէս արգասիք էին քաջութեան արքայորդւոյն։ Յայնժամ ած թափեաց Տիբեր. Իսկ Բելիսարիոս, այն որ յառաջնումն Ճակատու յաղթեաց, և յօրինուածով կարգի պատերազմին պատրաստեաց մեզ զայս յաղթութիւն։ Բայց ինքնակալն ցասուցեալ ընդ յանդգնութիւն Տիբերի, լռեցոյց զնա, և գովեաց մեծապէս զՆերսէս։

Միւս ևս դէպք 'ի վարանս արկին զարքունիս առ հասարակ։ Քանզի Հոնք յեղակարծում 'ի բազում գաւառս ինքնակալութեանն ահեղաղօրք քան յայլ ամենայն նուագս ասպատակեալ, արկին դարձեալ 'ի Կոստանդնուպոլիս պակուցանողական արհաւիրս՝ զորս միշտն գործէին անդ առնակնկալ արշաւանք։ Խորհեր Յուստինիանոս յղել զՆերսէս ընդդէմ բարբարոսացն. այլ նորա երկուցեալ ձախողակի ելիւք մարտին ստուերածս ածել արդի ստացեալ փառացն՝ ծանրանայր յանձն առնուլ զառաջնորդութիւն բանակին,

1 Ըստ պատմագրաց։

քանզի և վստահ իսկ էր, զի միւս ևս յաղթու-
թիւն լուսն առնէր կորստեան անձին իմոյ։ Խս-
սեցաւ ընդ ինքնակալին, և ասէ. Ո՞արտարու-
թեամբ մնաց և անյողդողդ արիութեամբ ևեթ
յաջողեաց ինձ բեկանել զՊոթոս. զի զօրքն առ
հասարակ, սիրով Բելիսարայ վառեալ, դժկա-
մակէին պատերազմել ընդ ինև, և չորիր մասն
'ի նոցանէ չէառ իսկ զէն։ Բարուոք համարեցայ
անտես առնել զխռովարար հեստութիւնն. այլ
արդ եթէ ոչ զօրավարեսցէ Բելիսար, չիք երկ-
բայել՝ զի չառցեն յանձն խաղալ զօրքն 'ի չու։
Յայսմ ամենայնի Ճշմարիտ այն ևեթ էր, դժ-
գոհութիւն զօրականին. բայց առաւելութեամբ
բանից զարհուրեցուցեալ նորա զինքնակալն, զօր-
հասական հարուածն պատրաստեաց ինձ։ Մ-
տալուտ 'ի վերայ հասեալ կայր վտանգ, և հարկ
էր ձեպել 'ի գործ. կացուցին զիս զօրավար ա-
ռանց օգնականի, և յայնմհետէ վճարեալ էր
վասն իմ։ Ոչ արարի, և զէնք իմ մշտայաղթք
ոչ վրիպեցին. յարձակեցայ, վանեցի զխուժա-
դուժսն, և յետ կանգնելոյ զյաղթութիւն՝ ա-
սեմ ցՓարաս. Յաղթեցի ահա թշնամեաց աշ-
խարհիս, զիմս միանգամայն զգետնեալ։ Իսկ
Փարասայ շարժեալ զգլուխ իւր ասէ. Դաջ է.
այլ թէ ես էի, խուսէի արդ 'ի տար աշխարհ.
եթէ դաւնաս դու 'ի Կոստանդնուպոլիս, 'ի խըն-
դիր կորստեան քո գնաս։ Ասեմ. Ես ընդէր։
Ասէ. Զի ոչ ևս ճնաց ուստեք արքունեաց կաս-
կած երկիւղն։

Ասաղ, զի չեղէ ես յայնժամ խելամուտ խո-
րիմաց բանից նորա։ Դարձայ յաղթող բանա-
կաւս, և ընդ ամենայն չու ճանապարհին էր հան-
դէս յաղթանակի. զիւղք և քաղաք համբրէն
գային մեզ ընդ առաջ, սիրէին ծաղկունս զճա-
նապարհայն, և ոստս արմաւենեաց տային 'ի
ձեռս զօրականին, մատուցանէին նոցա ճաշ, ար-
կանէին պսակս սարդենիս առ ոտս իմ, և կամարս
յաղթականս ափ յափոյ կանգնէին 'ի մուտս բա-
նակին։ Օ՞նոյն հանդէսս տօնից և զնոյն ցնծու-
թիւն յամենայն գաւառս, ընդ որ անցանէաքն,
էր տեսանել. և Կերսէս զամենայն ինչ մի ըստ
միոջէ աղդ առնէր ինքնակալին։

Ընդ հասանել իմում 'ի մայրաքաղաքն՝ հրա-
ման եղև արձակելոյ զմեծ մասն զօրաց բանա-
կին, և զմնացորդս ցան և ցրիւ կացուցանել։ Ա-
ինչ զարմացայ ընդ հնարսն, զորոց յառաջագոյն
իսկ զփորձ առեալ էր իմ. զի իշխանք անկարողք
'ի պատերազմ՝ զանդիտեն 'ի համախմբութենէ
զօրաց։ Տիբեր հրեշտակութեամբ առաքեցաւ
վաղ ընդ փոյթ հեռի 'ի մայրաքաղաքէն հինգ
հարիւր փարասխաւ. փոխեցան պահակապանք,
կրկնապատիկ 'ի տեղի առաջնոցն յաջորդեալ,
ամենեքեան ձեռակերտք Կերսիսի։ Ի նմին ժա-
մանակի տարագրեցաւ և Փարաս յաքսոր 'ի խորս
Լիբակիոյ, և ամենայն քարեկամք իմ ընկեցան
յիշխանութենէ։ Ա՛ւ 'ի կատարել այսր ամենայ-
նի, բարձաւ ապա յինէն պատիւ պատրկու-

թեան, և գունդ թիկնապահաց 'ի բաց արձակեցաւ[1]։ Բ.ուրբ երկու 'ի վերայ անցին, և մինչ կայի ես միայնակ ընդ երեկս 'ի սենեկի իմում, յեղակարծումն անակնկալ եմուտ արքայորդին տխուր և վարանամիտ 'ի քնակարան իմ։ Յոան կացի 'ի տեսանելն զնա. իսկ նա նստոյց զիս, և վայրիկ մի լուռ ևեթ կացեալ, ապա ասէ ցիս. Ոչ ինչ զանխուլ է 'ի քէն սրտմտութիւն իմ, Ռելիսար. ոչ ծածկեցի զայն 'ի քէն. այլ ահա գամ խոստանալ քեզ խաղաղութիւն։ Պատասխանի ետու, և ասեմ. Այլ զիտէ արքայորդիդ, զի պատշաճ պայմանօք ևեթ ընդունելի է ինձ այն։ Բ.սէ. Այլ կարի իսկ պատշաճք 'ի քէն պահանջին, լուր ինձ։ Բ.մենայն ինչ պատրաստ է 'ի կորուստ քո. չիք քո աստ բարեկամ որ օգնեսցէ քեզ, և ոչ ոք 'ի պաշտպանել. ինձ միայն մարթ է փրկել զքեզ. և միանգամ տուեալ քեզ խոստումն, զամենայն ինչ այնուհետև յաչս եդիցառ 'ի կացուցանել զխոստումն իմ. այլ հարկ է քեզ տալ ինձ առհաւատչեայ զսիրոյ քո զոգիս սրբութեան, որ երաշխաւորեսցէ բարեկամութեանս իմում. խոստացիր ինձ զաջ Ընդաստսիայ։ Բ.սեմ. Կարծիցես արքայորդիդ, զի երկիւղ զօրեսցէ տալ ինձ գործել անուղղայս։ Բ.սէ. Զաջ խորհեայ. եթէ ոչ լինիս աներ, լիցիս ինձ եղեռնագործ։ Բ.սեմ. Լղէց իսկ զոհ, այլ ոչ երբեք եղեռնաւոր։ Բ.սէ. Մօտալուտ և

1 Ըստ պատմագրաց։

ահագին սպառնայ քեզ վտանգ, դատակնիք անխուսելի։ Բ.սեմ. Այս որ այն ինչ իցէ վասն իմ դատակնքեալ։ Բ.սէ. Բ.ջսոր 'ի բերդն Եօթնաշտարակեայ. գունդ կալանաւորաց հասեալ գան շուրջ պատել զապարանս քո։ Բ.սեմ. Բ.յս գունդ վատասիրտ ձեռակերտացն Կերսիսի, և ոչ քաջաց պատերազմողաց. զի ո՞'ի զինուորաց իշխեսցէ բառնալ 'ի Ռելիսարայ զուսեր, և ո՞ զձեռս նորա 'ի շղթայս արկանել։ Բ.սէ. Մի՛ զվերջին աւուրս կենաց քոց տար յանարգութիւն։ Բ.սեմ. Ընդիրաւութեամբ և եթ անարգին կեանք. ասա՛ զողբալի ծերութեան ինքնակալին. ալիքս այսքիկ, ո՛ արքայորդիդ, փրկեցին զինքնակալութիւն նորա. նահատակութիւնք երիտասարդութեան իմոյ և սքայաղթք՝ չեն ինչ պայծառագոյնք քան զայս։ Փրկութիւն ինքնակալին, և քո իսկ փրկութիւն, ո՛ արքայորդիդ, յաւերժ անկորուստ պատրաստեն փառս աւուրցս իմոյ այսոցիկ վերջնոց։ Չիք զօրութիւն ընդ արեգականն՝ որ նսեմացուցանել այսուհետև զնրշխարեալ կեանս իմ կարիցէ, յետ զամն երեսուն և հինգ անպարտելի արութեամբք պայծառանալոյ մշտայաղթ։ Յայնժամ արքայորդին ասէ. ԸնդունկՀելի յամառութիւն, այլ կացից մնացից անողոքելի։ Այս ընկրկեալ վայրիկ մի, դարձաւ առիս և յաւել. Սակայն խնայեմ 'ի քեզ, զի մի զլխապարտ կորիցես. փութա, հրոյ տուր Հաբակ, եթէ իցէ քո թղթեան ՀնՀասակար։ Այս

զայս ասացեալ, փութանակի եղ'ի բաց. և ահա յետ կիսաժամու հասին մեհին սպառազէնք յապարանս իմ։ Ընտոնիա հանդերձ դստերբն զարհուրեալ կողկողագին դիմեցին 'ի վերայ իմ. և զօրապետք գնդին հասեալ առ իս, խնդրէին ըզբանալիս իմ և զսուսեր։ Ասեմ. Հաւասիկ ձեզ բանալիք իմ, այլ զսուսերս զայս ազատարար աշխարհիս ոչ տաց 'ի ձեռս թշնամւոյ։ Եւ 'ի սալայատակ անդր զծայր սուսերին յեցուցեալ, բեկի զայն ընդ մէջ։ Յագեցաւ քաջութեամբս այսուիկ գոռոզութիւն իմ և սրտմտութիւն. և նոյն այն զշինջումն պատերազմական հոգւոյ քաջութեան ազգին թուէր ինձ գուժել, և յանդուգն խորհէի 'ի միտս՝ զբեկումն սուսերին Ռելիսարայ գող չարագուշակ շինջելափառ զինուց ինքնակալութեանն։ Հաւատա ինձ, իմաստախոհդ Ադկադիէ, զի որ չիցէ ոք կրօնասէր երկիւղածութեամբ գեր 'ի վերոյ քան զընութիւն իւր ամբարձեալ, սպառի ուրեք արիութիւն նորա։ Եւ ինչ անիրաւութիւն տարապայման, որ ամայի 'ի համբերութենէ զանիրաւեալն կացուցանէ, և չթողու 'ի սրտի նորա այլ ինչ՝ բայց սրտմտութիւն սաստիկ և իղձ վրէժինդրութեան։

Ածայ 'ի բերդն Եօթնաշտարակեայ, և թէպէտ դիշերայն՝ սակայն ընդ գողուղի առաջնորդեալ։ Յիշեցի յայնժամ զվերջին խրատ Փարասայ, և սարջացայ զի ստունգանեցի նմա, այլ անագան։ Լուայ անդ զի դատէին զդատաստան իմ, որ տեւեաց զամիսս բազումս. և ապա ծանուցին ինձ զփուրսիշ ամբաստանութեանցն, որ յայսոսիկ բովանդակէին։ Զի առանց փրկանաց արձակեցի զԱբգալայ արքային Բուլղարաց զմանուկ արքայորդին։ Այլ այս ազնուական քաղաքավարութիւն պատրաստեաց աշխարհին խաղաղութիւն, որ տեւէր իսկ ցայն ժամ։ Զի արքայօրէն Հոխացայ Յոտալիա, և ընկալայ յաղթանակս՝ որ արքայորդւոյ ևեթ պահեալ էին։ Եւ զի դարձեալ դաւակիցս ինձ արարի առ 'ի յափշտակել զաթոռ, ինքնակալ 'ի ժողովրդենէ և 'ի զօրաց կարդացեալ։

Այսոցիկ առհասարակ՝ որ զինէն լեալ ամբաստանութիւնք, յաղթանակաւ ետու պատասխանի. այլ չէր ինձ հնար արդարացուցանել զյանդգնութիւնս բարեկամաց իմոց։ Հաւաստիս ինձ 'ի դէմս ածէին զաղմկայոյզ բանս նոցին, և զփարասայ՝ զի ատենաբանեալ և զհետ ձգեալ էր նորա զժողովուրդն 'ի դառնալ իմում Այփրիկեայ, և զի սիրեալ ծաւալեալ էր նորա 'ի ժողովրդեան դրամն հատեալս յանուն իմ Յոտալիա։ Զնմանէ դարձեալ և զամենայն բարեկամաց իմոց ամբաստանէին բազումս այլ ինչ իրաւացի ստգտանս, և զիս այնոցիկ մեղապարտ կացուցանէին՝ յինէն համարելով նիւթեալ զայն ամենայն։ Եթէ օրէն իսկ էր Յուստինիանոսի և Յուստինեայ հաւատալ այսմ ամենայնի, և եթէ էին իսկ նոցա առ այս վեր 'ի վերոյ ինչ հաւաստիք, սակայն վաս-

տակը իմ գերապանծք և այնպիսի և այնքան ար-
գասիք հաւատարմութեան յաղթել յաղթէին
ամենայն հակառակ ցուցակութեանց, յորս չէր
և ոչ մի ինչ յանձնել իմմէ գործեալ անիրաւու-
թիւն։

Յաւուր միում ընդ երեկս մինչդեռ 'ի բանտի
անդ էի, լուայ զաղմուկ ժողովրդեան՝ որ 'ի խըն-
դիր ազատութեան իմոյ 'ի ստորոտս աշտարակացն
խռնեալ կային զայրագին. և ուշ եդեալ ունկնդիր
լեալ, լսէի զբողոք զայրացելոյ ամբոխին։ Խռո-
վեցայ յաղաղակէ անտի, և աղդեցութիւն իմն
չարագոյժ արկ 'ի խորս սրտի իմոյ գաղտնածա-
ծուկ արհաւիրս։ Յաճախ իսկ նկատեալ էր իմ
մերձ առ իս զմահ, այլ աջակից միշտ նմին և
զփառս. ոչ երբէք երևէր նա ինձ ահարկու և
սպառնալից, հասեալ առ իս յաղթական արմա-
ւենեօք պայծառ և մեծաշուք՝ զհետ իւր առեալ
բերելով զհամբաւ։ Ոչ միայն նշմարանք իսկ
յայնժամ ոչ երևէին 'ի նմա ապականութեան,
այլ և զլուսափայլ անմահութեան բերէր յին-
քեան զտիպ վսեմ. զի 'ի գիրկս յաղթութեան 'ի
ճակատամարտի ոչ կարձէ նա զասպարիսախաղաց
ընթացս վեհ բախտին, այլ 'ի նպատակ անդր
հասուցեալ փառօք և պսակէ։ Այլ կորնչել 'ի
սայր չարաշուք սուսերի մխելոյ յարիւն ապիրա-
տից վատաց, անկանել թաւալգլոր 'ի շիրիմ՝
մղեալ յապերախտութենէ և 'ի զրպարտանաց,
թողուլ յիշատակ եթէ ոչնսեմ՝ գէթ արատա-

ւոր, և անուն կեղակարծ, ա՜հ, խոստովանիմ զի
ընկճէին միտք իմ 'ի վշտագին խորհրդոց աստի,
մինչդեռ տակաւին չգուշակէի իսկ բնաւ զարհա-
ւիրս բախտին՝ զոր պատրաստէր ինձ խժդժագոյն
ամպարշտութիւն։

Յանկարծ մտին 'ի բանտն խումբ աւազակաց,
շուրջ եղեն զինև, կալան զիս անխլրտելի, ան-
ցուցին ընդ բիբս իմ շամփուր շանթացեալ, խա-
ւարեցան աչք իմ անշոյլ, և էի անզգայեալ։
Յայնժամ ածին ձգեցին զիս արտաքս 'ի բանտէն
ընդ յետկոյս դրունսն, և իջուցին զիս 'ի նաւ.
և անձին զգացեալ՝ հարցանէի զզահիձս իմ,
խնդրէի 'ի նոցանէ մահ, և ոչ տային ինձ պա-
տասխանի։ Անխուլ իսկ է յինէն ձրչափ նա-
ւարկութիւնս մեր տևեաց. խորասուզեալ 'ի խա-
ւար մշտագիշեր, ոչ ևս կարէի չափել զժամա-
նակ՝ բայց վշտօք իմովք։ Արեցաք մրրիկ սաստիկ.
մերթ ըղձանայի կորնչել անդնդասոյզ ընդ անա-
գորուն դահիձս իմ, և մերթ մաղթէի յերկնից
'ի ծովափն ուրեք անկանել՝ ուր ձայն իմ լսելի լի-
ներ առ 'ի յայտնելոյ զոճիրն։ Այլ աւա՜ղ, ա-
ծէին զիս յանապատ ամայի։ Այն ինչ հասեալ
անդր, և ահա արկին զինև զշղթայս՝ զորս ձեռն
քո բարերար խորտակեաց, և ուժգնապիրկ կաշ-
կանդեցին զիս 'ի ժայռիս։ Այս ինքն բացատրել
կարիցեմ զկիրս, զոր յայնժամ կրէի։ Այսի զայն
'ի միտ առցես. սոսկալի բաժանումն իմ յայն-
ժամ 'ի հանգոյից այնպիսի արհաւրօք լցոյց

զիս, զի հառաջէի ընդ թողուլ լքանել զիս արքանեկայ բռնաւորին, և ընդ մեկնել սրանալ 'ի բաց. հեռանալ յինէն դահճայն իմոյ թուէր ինձ վիշտ ամայութեան։

Բողոք բարձեալ գոչէի յայնժամ. Ո՞ւր իցեմ ես, ով բախտ անհեթեթ և զարհուրագին. և մնասցէ՞ վայրն իսկ անծանօթ՝ որ զընթացս ասպարիզի կենաց իմոց կատարեմ, զոր ես իսկ 'ի կորնչելն իմում անգիտանամ։ Աւա՜ղ, յանապատի ուրեմն անշուշտ արկ զիս տարագիր հեռ քինախնդիր, ուր չիք ինձ բնաւին յոյս վրէժխնդրութեան, ուր բողոք իմ 'ի նանիր և հեծութիւնք իմ գազանաց ևեթ վայրենեաց լսելին լսելի, որոց թերևս պատրաստիմ ճարակ։ Եթէ զերկինս կարդացից ընդդէմ խժդժագունին 'ի բռնաւորս, սակայն մի՛թէ ո՞չ ամենակալ զօրութիւն նորա՝ զոր ցարդ 'ի բոլոր սրտէ խոստովանեցայ, և վերնախնամ տեսչութիւնն այն՝ որ հրամանացն եղէ միշտ երկրպագու, ինքն թողացոյց զսոսկալի հարստահարութիւնս զայս։ Յուստինիանոս ինքնակալէ, և ոՀիր իւր կացցէ մնասցէ անյայտ. առասպելք ինն յօդեալք 'ի նմանէ փրկեսցեն զպատիւ անուանն նորա՝ յանարգութիւն զիմն մատնեալ, և պատրանս յետնոց նիւթեսցեն վէպք։ Ա՜ռն փառաց կեցի ցարդ. և մինչ ես զտագնապ դժնդակագոյն մահու կրեալ կողկողիմ, յաղթանակէ ոսոխին իմ սպառազինեալ 'ի ջարահամբաւեալ և զրպարտեալ զիս. և յաջողի իշխանութեամբն՝ զոր բազուկ իմ և նահատակութիւնք զօրացուցեալ առ 'ի կորուստ անձին իմոյ հաստատեցին։ Ո՛վ իմն Ընտոնիա, ով դստրիկ իմ Ընաստասիա, որոց պարտ էր զյետին հեծութիւն իմ լսել, և որոց յառաջ քան զաւուրս սակաւս պանծալի էր անուն իմ, զի՞ արդեօք եղև ձեզ արդ. աւա՜ղ, ողբացէք զմահ իմ և զիարառս միանգամայն։

Մինչդեռ զայսոսիկ հեծեծելով հառաջէի, ձեռն քո ազատարար խորտակեաց զկապանս իմ, և պահեաց ինձ զկեանս զայս աւաղելի՝ զորոյ երդուեալ է իմ նուիրել վրէժխնդրութեան զարքունի մնացուած, եթէ միայն կարել կարիցեմ։

ԳԼՈՒԽ Ե.

Եւ դադարեաց Բելիսար 'ի խօսելոյ. լռեցին վայրիկ մի երկաքանչիւր, և ապա խօսել կալաւ Արիկաղիոս և ասէ. Զարաբաստիկ արդարև, և կարի իսկ չարաբաստիկ հասեալ քեզ արկածք. 'ի զայրոյթ անհնարին սիրտ քո անշուշտ յուզեցի. այլ ես տակաւին յամառեալ պնդիմ հզօրագոյն քան զքոյոդ ունել պատճառս վրէժխնդրութեան, և արկածից իմոց դնել զքոյոդ՝ դառնագոյնք ելով և նորանշանք յոլովագոյնք և երկարատևք։ Խոստացայ զքեզ ինքնին կացուցանել դատաւոր, և կացից 'ի խոստման իմում. վաղիւ

լուիցես դու զարկածս իմ։ Յայնժամ գոչեաց Բելիսար. Բաբէ, և յետ լսելոյ զիմս՝ համարիցին դեռ և ես թշուառագոյն քան զիս գոլ։ Բրկադիոս ասէ. Բայց ամենևին, և դու թերևս առ վաղիւ հաւանեսցիս ընդ այն։ Բելիսար ասէ. Զէ և չէ իսկ հնարաւոր։

Եւ 'ի վաղիւ անդր ընդ արևածայրս մինչդեռ տակաւին հանգչէր Բելիսար, նուագք դաշնակաւորք ընդոստուցին զնա 'ի խոր քնոյ։ Զարթեաւ և լսեր յապուշ լեալ անձառելի զմայլմամբ. և ծանեաւ հրձուանօք զքաղցրաձայն քնարին դաշնակ։ Իսկ 'ի լսել և զնուագ Գելիմերայ, թուէր առ ոտամբ Պասուկայ լերին, և 'ի բարեբաստագոյն աւուրս կենաց իւրոց փոխեալ։ Այր անշարժ 'ի հիացման. և ձայն ինն տխուր և խրոխտ խառն ընդ քնարին յեղանակեր զերգս զայս անջինջ դրոշմեալ յայնքանեաց ամաց 'ի միտս նորին.

Վարայր անշէն, ժայռք ամայիք,
Վանի սփոփումն է ինձ դիտել
Ըզձեզ յաղէտս իմ յայսոսիկ.
Յաղթականին իմոյ ընդդէմ,
Օրծ աստ յանարդ գերութենէ,
Վաջայանդուգըն խիզախեմ։
Յեց 'ի դրդեակս յայս անառիկ,
Ասա յանջրդի լերանցս 'ի ծաղ՝
Օրս ըստահակ կոծեն մրրրիկք,
Օ՜ի ահաւոր հայիմ պատկեր,
Օ՜արքունիս հարց իմոց 'ի բաց
Բոցաձարակ այրեացաւեր։
Մինչև տեսեալ նոր արշալոյս,
Ընդ պարբսպացս աւերակօք
Ցեսից ծածկեալ զիմ ըզգահոյս.
Ուռ փառացս անցաւորի,
Օ՜ի հոյակապ նոցին նըշխարք
Ընդ երեկոյս մնասցեն յերկրի.
Հող և աճիւն անդ ընկեցիկ,
Ասա արքունի ցուպ ջաղջախեալ
Եւ թագաւոր տարաշխարհիկ։
Վարայր անշէն, ժայռք ամայիք,
Վանի սփոփումն է ինձ դիտել
Ըզձեզ յաղէտս իմ յայսոսիկ.
Յաղթականին իմոյ ընդդէմ,
Օրծ աստ յանարդ գերութենէ,
Վաջայանդուգըն խիզախեմ։
Ներժդեհակիցք իմ դուք արդ, օ՜ն,
Ասն որ երբեմն փառակիցք,
Ոյց իշխեի արդարակրօն,
Ի մոռացօնս արկէք 'ի խոր
Ըզբարեբաստ աւուրց մերոց
Եւ զարութեանց խորհուրդ տրխուր։
Ասա յանմարդի հասեալք 'ի վայր,
Յաղթահարեալ և ապաղէն,
Ամենեքին գոմք հաւասար.

Օ՛ուրկք 'ի բարեաց աստ 'ի բնաւից,
Մ՛ընայ միայն ո՛ բարեկամք
Զատուլթիւն մեզ աջակից.
Օ՛՛ն, 'ի պահել զայն մինչ 'ի սպառ,
Հանուրց ժուժկալ լիցուք չարեաց
Դիմագրաւեալ արիաբար։
Ի դրժընդակ աղէտս մեր
Կա մըրցանակ ճրգանց մերոց,
Կա միայն փառք և քաջալերք։
Վարայր անշէն, ժայռք ամայիք,
Վանի սփոփումն է ինձ դիտել
Զ՛ձեզ յաղէտս իմ յայսոսիկ.
Յաղթականին խմոյ ընդդէմ,
Օ՛երծ աստ յանարգ գերուլթենէ,
Վաքայանդուգրն խիզախեմ։

Յայնժամ գոչեաց յաղթականն հէք. Մ՛ուր ի-ցեմ ես, բա՛բէ, ո՛ւր գտանիցիմ։ Իսկ միայնակեացն ողջագուրեալ զնա, ասէ. Ի գիրկս Դեելիմերի գտանիս։ Բելիսար ասէ. Դէ՛հպք նորա հրաշ, ո՛չ դու ինքն իցես Աբկադիոս։ Մ՛իայնակեացն ասէ. Այս ինքն եմ չարաբաստիկ արքայն Վանդալաց։ Յայնժամ Բելիսար հեղձամղձուկ հեկեկանօք. Աղո՛ւկ ինձ, ասէ. Դեելիմե՛ր իմ աղատարար, ա՛յն՝ զորոյ ես զապարանսն յաճիւն դարձուցի, ա՛յն՝ զորոյ ես զբանակն փլուզի, զաթոռ նորա կործանեցի, զազգ նորա ցրուեցի, և արդ նա ի՞նքն ինձ ասպնջական. Բա՛բէ, ձեռքն

այնոքիկ արքունականք՝ որ շղթայակապ 'ի յաղթական կառս իմ կաշկանդեցան, նո՛ցինք անյիշաչար զշղթայս իմ խորտակեցին։ Բայց ամենևին, կրկնեաց Դեելիմեր. ես ինքն եմ չարաբաստիկն այն թագաւոր, խաղալիկ բախտին աւաղելի, որ կորուսի զաթոռ իմ և զհայրենիս և զհամբաւ և զկին և զորդիս. բարձեր դու յինէն զփառս, զբարեկենդանութիւն, զյոյս և զբնաւ ամենայն ինչ. սակայն պատրաստ եմ յօգնել քեզ և յառաջնորդել. հրամայեա ինձ, և աւասիկ կամ 'ի սպասաւորել քեզ։ Բելիսար ասէ. Ո՛վ վեհանձնութիւն, որ ամօթապարտ կացուցանէ զիս։ Դեելիմեր ասէ. Մ՛ի՛ ինձ համարիր, եթէ խնամս ինչ յինէն ընկալցիս. գոհացիր ըզտեառնէ, որ զայդ ինձ հրամայէ։ Յայնժամ աքանչացեալ Բելիսարայ, և այլ յայլմէ լեալ, գոչեաց բաղկատարած առ Դեելիմեր. Ա՛՛ծ զիս, օ՛՛ն, առ ոտս խաչեցելոյն պատկերի։ Դեելիմեր ասէ. Ա՛՛ռաջի նորին կաս։ Այս վաղվաղակի անկեալ Բելիսարայ յերկիր, ասէ. Ո՛՛վ որ ընորհեսդ ինձ 'ի մխիթար և 'ի միակ օգնական 'ի վերայ երկրի զայն՝ զոր կապուտ կողոպուտ յամենայնէ կացուցի, դու ոչ վայրապար առաջի առնես ինձ զգերաշխարհիկս զայս ապայոյց զօրութեան կրօնից. առ ոտս քո արկանեմ աստ զամենայն իղձս իմ և զխորհուրդս վրէժխնդրութեան։ Այս կարասցէ՞ իսկ Բելիսար ընդ հովանեաւ և ընդ առաջնորդութեամբն Դեելիմերայ

մթերեալ պահել ոխ 'ի սրտի անհաշտ. ընդ տեսչութեամբ աստուածարեալ առաջնորդիս ոչ ևս կարացից գործել ինչ, առանց յիշելոյ զողորմութիւն։ Ա՛վ որ միայնդ ես դատաւոր գործոց մարդկան արդարակորով, քեզ միայնոյ է պատուհասել զնոսա. և արարածոց քոց տկարաց ոչ այլ ինչ ուխտս և պաղատանս պարտ է առ քեզ վերառաքել, բայց առ 'ի մաղթել 'ի քէն զողորմութիւն։ Ելերեմ թշնամեաց իմոց. զարմանք և շնորհակալիք բնաջինջ առնեն 'ի սրտէ իմմէ զոխակալութիւն։ Այո՝ 'ի հիւրընկալ քարայրիս երդնում սէր յաւերժական առ նախնի բարերարն իմ և թագաւոր։ Տէր բարերար, տուր ինձ մինչև վճարեալ 'ի կենաց՝ ցուցանել առ նա զհաւատարմութիւն իմ, շնորհեա ինձ զփառս վերստին ծառայելոյ նմա։

Ի լուր աղիողորմ պաղատանացն խանդաղատեալ Գելիմեր, գիրկս արկ Ռելիսարայ, և ասէ. Ա՛վ մանտեալդ 'ի զոհ մախանաց և անիրաւութեան վեհափառ պատարագ, յաղթանակդ այդ՝ զոր կանգնես 'ի վերայ անձին՝ չքնաղագոյն յոյժ է քան զամենայն յաղթութիւնս, որովք պայծառացան ցարդ կեանք քո։ Մի՛ ևս այսուհետև զթշուառութենէ բանք. որ տիրէ ոք անձին և վեհանձն արիութեամբ ճոխացեալ գտանի, չէ նա թշուառ. աղէտք մեր լոյին մեզ 'ի հանդէս բարեբաստութեան, առանց այնոցիկ չէր մեզ մարթ գիտել զզօրութիւն մեր և զօճան

բարեաց։ Մի՛ շատ համարեսցուք անխռով տանել ձախողակաց, այլ և սիրեսցուք զնոսին. զի նոքա պայծառացուցանեն զվսեմ առաքինութիւն։ Մոռացուք զտրտունջ և զբողոք 'ի գերիս բախտին 'ի վատասիրտս. մի՛ տեղի ևեթ տացուք անհրաժեշտ հարկին, այլ և յարգեսցուք զփրկաւէտ խստութիւն ճակատագրին, և գոհասցուք զաստուածախնամ տեսչութենէն՝ որ բաւական ըզմեզ կացուցանէ 'ի բարձումն ծանու բեռինն։ Ոչ է բաւական զուս 'ի նեղքոյ արկանել. զի հլութիւն ոչ աւելի ինչ է քան զընկճումն ընդ հարուածովք բախտին, այլ պնդակազմ ժուժկալութեամբ յաղթել թշուառութեան անյողդողդ և անվեհեր, այն իսկ է արիութիւն մեզ վայելչական։

ԳԼՈՒԽ Զ.

Գելիմեր թէպէտ և աստուածարեալ կրօնիւք՝ սակայն բերէր դեռ ևս յանձին զխրոխտ բարս, սանձահարեալ 'ի քրիստոնէական խոնարհութենէ՝ այլ ոչ 'ի սպառ նուաճեալ։ Դրկիւղածութիւն՝ որ 'ի վեր ամբառնայ զմիտս, ազդէ 'ի նա միանգամայն անվստահութիւն և արհամարհանս անձին. բայց Գելիմեր իմաստասիրութեամբ ևեթ սովորեալ ընդերկար առաքինա-

նալ, դեռ ևս 'ի խրոխտ բարբառ նորին խօսէր. հանդերձ սրբակրօն վարուքն նշմարէր յանձին նորա և յիշխանական խօսս և յազատական կերպարանս գոռոզ ինն և վայրագ, որ զբրտութիւն աղգին, զշուք արքայազարմ տոհմին, և զխրոխտումն մարդկեղէն իմաստութեան յիշեցուցանէր։ Ինանոյց Ռելիսարայ զխորհուրդն՝ զոր երկնէր վասն նորա, և ասէ. Այրք՝ յորս երբեմն թագաւորէի՝ այնպէս աւար հարեալ, զի աւերակք ևեթ և հիւղք ոմանք գտանին արդ 'ի նոսա։ Ի միում ուրեք 'ի գեղջէից անտի հիւղից բնակէ մի ոմն 'ի հաւատարմագոյն իմոց երբեմն պաշտօնէից, Կալեբ ազատազգի. ոչ յաւագագունից անտի արքունեացս, այլ 'ի ստորայնոց. բայց զոյգ ընդ թշուառութեան իմում յաւելեալ 'ի տիրասէր հաւատարմութիւն։ Ոչ նա ինքն խորհիմ ածել զքեզ. և ապա երթալ 'ի Կոստանդնուպօլիս ուր ընդ մեռեալս զիս համարին։ Ի հնգետասան ամաց հետէ կամ 'ի բացեայ, և կերպարանափոխ ամենևին լեալ, անծանօթ ամենեցուն գտայց։ Տեղեկացայց զողջունէ հարսին քո և զստեր. եթէ անգթացեալ 'ի նոսա, և կողոպտեալ իցեն յընչից, և չիցէ հնար դառնալ քեզ 'ի հայրենիս քո, տարայց զնոսա յԱվիրիկէ, և անդ գտանիցէք զմիմեանս յերկիր ամայի՝ նուաստեալ երբեմն 'ի բազկէ քումմէ։ Մշակեսցուք զկողմն մի խոպանացեալ երկրին, և 'ի դաշտս, ընդ որ զյաղթական բանակս քո ածեր, և որ

տեսարան փառաց քոց կացին, լիցի ապաւէն ալեաց քոց հալածականաց։ Եւ իբրև բնակեցուցից զքեզ յակաստանի, ապա դարձայց այսրէն յանապատ 'ի միայնարան իմ։

Ազնուականի հոգւոյն Ռելիսարայ և գողտր սրտին յաւելան զարմանք. և յափշտակեալ 'ի սէր վեհանձն բարերարին, անդստին իսկ ոչ սակաւ սփոփեալ 'ի թշուառութենէն գտանէր։ Սահմանեցաւ ուղևորել յետ երկուց աւուրց. բայց Ռելիսար աղաչէր զնա, մինչև ուղղոյ լեալ մանրապատում առնել զարկածս իւր՝ զորս անգիտանայր։ Յանձն էառ Գելիմեր հաճել զնա, և սկսաւ այսպէս։

ԳԼՈՒԽ Է.

ՎԷՊՔ ԳԵԼԻՄԵՐԻ

Թէպէտ և որք 'ի մանկութենէ ճեացեալ, սակայն խնամովք դաստիարակեցայ։ Իմաստունն Ռուրատոր գերահռչակ լիգուրացին նախակրթեաց զիս 'ի գիտութիւնս[1]. նա էարկ 'ի միտս իմ զառաջին սերմանս քրիստոնէական անապակ կրօնից։ Եւ քանզի խորշեցուցանէր նա զիս յարիոսական մոլորութենանց[2], 'ի յայտնել իրացն տարագրե-

1 Զայսու ժամանակաւ կեայր Աբատորս այս, որ ընդ բազում աշխարհս յածեալ և բազում գրեաց։

2 Արիոսականք էին յայնժամ Գոթք։

ցաւ։ Երկուց հնգից ամաց էի ես յայնժամ, և անջինջ 'ի միտս իմ կային փրկաւէտ տպաւորութիւնքն. բայց ստիպեալ 'ի հաւատս՝ որում հասու լեալ էի մոլորութեանն, ոչ ևս այնուհետև կրօնք ուղղէին զվարս իմ։ Սակայն վաղ իսկ խելամուտ եղէ զի կարևոր էր մարդոյ սանձ իմն առ 'ի նուաճել զկիրս նորա, և կամ նպատակ՝ յոր ուղղեր զնոսա։ Աւագոյն քան զամենայն առաջնորդս թուեցաւ ինձ փառասիրութիւն, զի նա 'ի հրաշակերտս և յարիական գործս ածէ զմարդ, և զանվանականագոյն նուէրս դիւրաձեռնարկելի նմա պատրաստէ։ Ոչ յայլ ինչ այնուհետև խորհէի, բայց 'ի ստանալ անուն բազմահռչակ. ինդրէի պարապ նահատակելոյ 'ի քաջութիւնս, և ցանկայի հանդիսանալ. ոչ քաղցրանային ինձ զբօսանք մնոտիք մանկականի տիոցս, այլ ուսում նասէր ջանից պարապէի անդուլ. խորշէի 'ի սինլքոր իրաց, և որ ինչ ոչն էր մեծահամբաւ՝ թուէր յաչս իմ սինլքոր։ Հետազօտէի հեռաւոր և անմարդի վայրս 'ի ՀԵՄ, և ընկղմէի անդ յերկրաւոր ցնորս. ընթանայի մտօք ընդ ամն ապագայս, և կազմակերպէի անդ զիմ ՀԱԿԱՏԱԳԻՐ. իբր ոչ եթէ խոստանալով ինձ յաջողութիւն անյողդողդ, այլ յանձնապաստան գոռոզութեամբ նկատէի զարկածս՝ տեսանելով 'ի նոսա զՀնարս կանգնելոյ անուն քաջութեան, և իշխէի ձայնատուր լինել բախտին։ Ա. յսպէս 'ի սրտանդել իմում իմացական զօրութեամբ անդրդուելի ընդդէմ յեղափոխութեանց բախտին, նոր ինն խորհուրդ անկաւ 'ի սիրտ իմ 'ի լուսն ցնորից մտացս։

Ինդերիկ խօթամիտ արքայն անձնատուր 'ի հոմանիս իւր և 'ի սիրելիս, արդելեալ փակեալ կայր յարքունիս իբր 'ի կանանոցի. և ոչ այլազգ լսելի լինէր ժողովրդոց անուն նորա, բայց միայն 'ի ձեռն հրովարտակաց՝ որ երբէք երբէք ելանէին 'ի ծանրաբեռնել զնոսա նորանոր հարկօք։ Թէպէտև երիտասարդ դեռ ևս էր, սակայն խորշէր մերժէր 'ի հարսանեաց, ոչ կամելով յաղատօրէն կենացն հրաժարել։ Ա. քանզի ինձ հասանէր յաջորդել նմա 'ի մեռանել նորա անորդի, ամենեցուն յիս պշուցեալ կային աչք. և խստակրօն կեանք ընդ առոյգ մանկութեան կցորդեալ, մեծարոյ ամենեցուն առնէին զիս՝ յաձախելով զարհամարհանս թագաւորին։

Այնու ժամանակաւ վառէր հուր մարտին Պարսից ընդ ինքնակալին. և ըստ ուխտին նիզակակցութեան պարտ էր Ինդերիկեայ գումարել ընդ քումդ զբանակ իւր, որում զիս ինքն կացոյց զօրավար մինչ դեռ ևս էի եօթնեւտասն ամաց։ Ի պատերազմին յայնմիկ գտայ բարեբախտիկ ձգելով յիս զաչս Ռելիսարայ, քանզի այսպէս յաջողէր ինձ մնանել շքով յաստպարէզ փառաց. այլ մարթէր բախտին լինել ինձ հաւատարիմ, ուր պարտն էր ինձ անցանել ընդ քեզ 'ի կռիւ։ Հարկեցուցեր զԱքադէս խոնարհել 'ի հաշտութիւն, քեզէն զպայմանսն սահմանեալ. և ոչ

անտես արարեր զօգուտ նիզակակցին քո Լղե-
րիկեայ, յոր մանաւանդ օրէնք քաղաքավարու-
թեան տային քեզ խորհել։ Ոչ ինչ անիրաւիմ
'ի կարծել, որ քանզի ես ինքն էի ժառանգ թա-
գաւորութեանն, լաւ համարեցար հաստատել
'ի գլուխ ապիկարին Լղերիկեայ զթագն՝ որ
գայթ 'ի գայթի կայր, քան թողուլ անկանելոյ
իշխանութեանն 'ի ձեռս իմ։ Ընդ դաշինս խա-
ղաղութեան պահանջեցեր 'ի Կաբադեայ խոս-
տումն տալոյ զդուստր իւր 'ի հարսնութիւն ար-
քային Ալանդալաց, որոյ չէր իսկ փոյթ առնելոյ
կին, այլ ոչ իշխեաց մերժել զայն խնամութիւն։
Ինձ յանձն եղև գնալ հրաւիրակ օրիորդին Հը-
ռիփսիմեայ, ածել զնա 'ի Կաբքեդոն։ Հարսա-
նիքս այս, որով քառնայր յինէն յոյս ժառանգե-
լոյ յաւուր միում զաթոռն, հարին կարեվեր ըզ-
փառասիրութիւն իմ, մանաւանդ զի և ժողո-
վուրդն ցուցաներ ցնծութիւն ընդ հարսանիսն՝
որով աներկբայելի թուէր մերժումն յարքունեաց
անտի հոմանեայն ատելեաց նմին։ Այլ 'ի տե-
սիլ արքայազն օրիորդին այլ յայլմէ եղէ, և սեր
ինքնին արծարծեցոյց յիս առաւել քան զառա-
ջեալ զփառասիրութիւն։ Հռիփսիմէ խոստացեալ
էր արքային Ալանդալաց, և երդուայ ես ամբառ-
նալ յաթոռն։ Ոչ 'ի մտի եդեալ ընկենուլ ան-
տի զթագաւորն, այլ աթոռակից բազմել նմին։
զի ոչ ինչ երկբայէի գահակցութեամբն այնուիկ
միահեծան թագաւորել, զանուն և-ի թարմա-

տար թողեալ 'ի նա։ Ընսիրելաբար ընկալաւ
թագաւորն զՀռիփսիմէ, և բնակէցոյց մեկուսի
ուրոյն 'ի պալատան։ կացոյց նմա պահապանս և
ստրուկս, և ետ նմա լիուլի ազատութիւն, թէ-
պէտ չև ևս էին նմա ամբ աւելի քան զՀնգետա-
սան։ այլ ոչ ինչ տայր պատրաստել 'ի հարսա-
նիս, որով գրգռեաց անդրէն զզայրոյթ ժողովրդեան։ Հռիփսիմէ ըստ օրինաց իւրոյ աշխարհին, և ըստ մերումն իսկ, ոչ զոք յարանց ընդունէր յայց։ այլ գիտէի զի հանապազօր ելանէր նա կառօք ընդ առաւօտն 'ի Ճեմ յանբնակ վայրս, յորս ստէպ գնայի և ես։ Ի միում աւուրց ազդ եղև ինձ զի գնայր նա ընդ երեկս 'ի ստորոտ Պասուկայ լերին՝ ուր յաՃախագոյն սովոր էի ելանել 'ի Ճեմ, և զի կամէր նա ընդ զառ 'ի վեր լերինն գնալ ընդ դժուարակոխ ափափայս։ Կանխեցի անդր, և 'ի զբօսանս զօրն զայն անցուցեալ՝ մընայի Հռիփսիմեայ, վստահ 'ի տեսանել զնա և 'ի խօսել ընդ նմա։ Լաւ ահա եկն եհաս էջ 'ի կառաց, և թողեալ 'ի գաշտի անդ զկառն՝ եկ 'ի կատար լերինն առաջնորդութեամբ հովուի ուրուսն, ընդ երկուս ոմանս 'ի ստրկացն։ Բայց օրն տարաժամէր, և երևէր լուսին։ իղձ եղև օրիորդին տեսանել զքարայրն, և ելոյց հովիւն ջահս։ այլ իբրև 'ի մուտս անդ ետես զայն լուսափայլ զարդարեալ, լի ծաղկամբք և մրգօք, ազգի ազգի պատրաստեալ համադամօք, և լուսադրոշմն տառիւք զնշանագիրս անուան իւրոյ

շուրջ գծագրեալ, հիացեալ եկաց։ Յայնժամ յանկարծակի յանդիման լեալ նմա, ածի զնա 'ի խորս քարայրին, և բազմեցուցեալ զնա 'ի դա-լարագեղ բազմոցի, նստայ առ ոտս նորա և ա-սեմ. Սուղ են մեզ վայրկեանքս, խօսեաց օրիորդ արքայազն, կամիցիս զՀարսանիսդ ըստ քաղաքա-վարական հարկի պայմանեալ։ Ի լուր բանիցս զայս 'ի վայր արկեալ օրիորդին, վտակս կրկին ընդ ծնօտսն իջուցաներ։ Կրկնեալ անդրէն ա-սեմ. Հիմ լաս, զի դառնանան քեզ հարսանիքդ։ Պատասխանի ետ անկեղծ և խանդաղատելի. Դիտես դու զայն։ Յայնժամ անկեալ առ ոտս օ-րիորդին, և բուռն հարեալ զաջոյ նորա, ասեմ. Ընկալ զուխտ անդրժելի։ Ասէ. Այլ հայր իմ զինչ...։ Ասեմ. Հայր քո խոստացաւ արքային Ա անդալաց, և արքայն Ա անդալաց լեցի քեզ փե-սայ։ Ասէ. Մի լեցի երբէք։ Ասեմ. Ամենա-պարտ թագաւորութեանն Լղերիկեայ ընդ հուպ եղիցի վախճան։ Ասէ. Արդարադատ երկինք։ Ասեմ. Ահա սակաւ աւուրք, և լեցի ինձ բախտ պակելոյ զոր սիրեաց անձն իմ։ Ասէ. Ռոնա-կա՞լ ուրեմն լեցի Դելիմեր։ Ասեմ. Ռոնակալ տիրապէս նա ինքն է թագաւոր վատ, որ ան-գործ և անփոյթ բազմի յաթոռ։ Ասէ. Ո՛հ ես ոչ փառասիրեմ. սիրտ քո, Դելիմեր, և քա-բայրս միայն շատ են ըղձիցս իմոց։

Ոչ ինչ երկբայիմ զի զայս այսպէս երկնային ինն ազդեցութեամբ խօսէր նա, հանդերձելոյ

տխուր արկածիցն մերոց նախատես լեալ 'ի մաա-նէ։ Հարկ էր հրաժարել յայրէ անտի, յոր յոյս և սէր կախարդէին աղապատանօք զոգիս։ Զև մեկնեալ յինէն օրիորդն եկաց 'ի ծագ լե-ռինն, և զաչս 'ի վեր ամբարձեալ՝ յոգւոց երկան, տեսանելով զլուսին 'ի գոյն արեան շուրջ բակ առեալ 'ի մռայլ ամպոց, և ասէ. Ա՜հա՛ղ, լոյս չա-րադուշակ, ո՞ւր վՀՀիտն այն և ակնապարար Հա-ՀՀանչ. իցի՞ ոչ այսպէս նսեմասցին աւուրք ման-կութեանս մերոյ։ Կարեվէր հարին զիս բանքս այսոքիկ. տխրութիւն օրիորդին կամ մանաւանդ սգալի նախազգեցութիւն թափանցեալ 'ի սիրտ իմ, խռովեցոյց զիս։ Մինչև ցայսվայր յոխորտ արհամարհանօք ակնարկեի յարկածս. այլ յայն-ժամ կիրք ինն հզօրագոյն քան զամենայն կիրս փառասիրութեան խելամուտ արարին զիս, զի դիւրագոյն ոք խրախուսէ 'ի համբերել 'ի սպառ՝ ուր միայնակ ևեթ առաջի կայցէ վշտակրել։

Հրաժարեցաք 'ի միմեանց. և ընդ երեկս հա-սին 'ի Պարսից զրոյցք անակնկալք։ Զի Կաբա-դեայ օրինաւոր կամեցեալ առնել զցանկասէր կեանս իւր, բարձեալ էր հրովարտակաւ զսուրբ օրէնս հարսանեաց[1]. և աւագանւոյն և ռամկին վտարանջեալ, և ընկեցեալ զնա յաթոռոյ, յաշ-տարակի ուրեք արգելեալ փակեալ էր[2]։ Ընդ հա-

1 Ըստ պատմագրաց հրովարտակս այս առնէր հասարակաց զկանայս։

2 Ըստ պատմագրաց։

սանել իրացն յունկն Իլդերիկեայ, եղծ հրապա-
րակաւ զդաշն ամուսնութեան իւրոյ ընդ դստեր
արքային Պարսից. և 'ի վաղիւ անդր յղեաց զիս
'ի խնդիր օրիորդին, դարձուցանել զնա անյա-
պաղ 'ի Պարսս։ Բ.անց և ոչ մի ինչ բանից պա-
տասխանւոյ ելի յարքունեաց անտի, պատճառա-
նօք կաղմելոյ զգունդ թիկնապահաց յուղեկցու-
թիւն արքայադստերն. և գումարեցի 'ի միում
'ի հրապարակաց քաղաքին զլեգէոնն ողջոյն ընդ
ինև զինուորեալ 'ի պատերազմին։ Մի 'ի զօրա-
գլխաց իմոց ընթերցաւ բարձրաձայն զհրաման
արքային, ընդ որ քրթմնջէին ամենեքեան։ Յայն-
ժամանցի ես 'ի մէջ հրապարակին հեծեալ, ու-
ղեկցելով կառացն՝ յորում էր իշխանուհին. գե-
ղեցկութիւն նորա և մանկութիւն և աղէտք ըն-
տանեացն 'ի գորով շարժէին զսիրտս բոլորե-
ցունց։ Լսօսել կալայ առ զօրականն և առ ամբաւ
բազմութիւն ժողովրդոյ՝ որ խռնեալ էին 'ի հրա-
պարակի անդ, և ասեմ. Բ.ըքայազին օրիորդիս
'ի սրբութիւն անլուծանելի դաշանց վստահա-
ցեալ, եթող զհայրենիս իւր 'ի բարգաւաճանս
անդ, դալ հայրենակից մեզ լինել։ Բ.րկածք հօրն
առաւելագոյն ևս կարեկցութեան արժանի զսա
կացուցանեն. այլ որ երդուաւն լինել սորա պաշտ-
պան և փեսայ, արձակէ զսա ուր ընտանիք սո-
րա կան տարագիր, և ուր անդարձ գերութիւն
ինայ սմա, թերևս և մահ աղետաւոր։ Յայն-
ժամ զինուորքն առհասարակ և ամբոխ բազմու-

թեանն աղաղակեցին. Մի երբեք, մի. այլ կեց-
ցէ նա, այլ կացցէ ինասցէ առ մեզ, կեցցէ իշ-
խանուհին Պարսից։ Իսկ օրիորդն 'ի ձայն աղա-
ղակին սրտառուչ ձեռս յերկինս ամբարձեալ,
յարտասուս հարկանէր։ Յուզեցան գութք ա-
մենեցուն, և զօրքն ձգեալ զնիզակս իւրեանց՝
կռեցին ուխտ սիրայորդոր 'ի պաշտպանել զնա։
Պոչեցի և ասեմ. Բարեկամք ազնուագոյնք,
կացցէ ինասցէ օրիորդն, ես ինքն եղէց ախոյեան
'ի պաշտպանութիւն նորա, փութամ առ ոտս սե-
ղանոյ յուխտ կցորդութեան ընդ նմա 'ի զօդ ան-
լուծանելի։ Լրէք զհետ իմ, պահել զդրունս
տաճարին՝ ուր հանդերձիմ տալ զերդումն։ Բար-
բառք ցնծութեան և ծափաձայն դրուատիք ըս-
տեպ հնչէին. և հրաման ետու կառացն յառաջ
խաղալ։ Զ.հետ խուժեցին զօրքն և ամբոխ. և
զկայ առեալ անուոցն առ եկեղեցեաւ յելս հրա-
պարակին, ձակատեցան կացին գունդք շուրջա-
նակի՝ պահ ունել մտիցն։ Բ.ազեալ նուաղեալ կայր
օրիորդն. առեալ զձեռանէ ինքուցի զնա 'ի կա-
ռայ, և 'ի հնչիւն սրնդաց փողոց և թմբկաց,
և 'ի ձայն աղաղակի ամբոխին ածի զնա 'ի տա-
ճարն, և անդէն փակեցան դրունքն։ Մնային
մեզ անդ երիցունք, որոց յառաջագոյն աղդեալ
և 'ի բանի արարեալ էր իմ զնոսա. և ելին մեզ
ընդ առաջ զգեստաւորեալ քահանայական զար-
դուք։ Ա.առէին լուսաձաձանչ լապտերք տաճա-
րին առհասարակ և ձգեալ ածի զօրիորդն 'ի բեմ

աւագ սեղանոյն։ Ընդ սեր զօրացոյց զնա, և ծունր եդեալ մատոյց առ իս զաջ իւր դողդոջուն. և տեսի անդ զմեռելատիպ տժգոյն դէմն նորա փոխեալ 'ի վարդագեղ կարմրութիւն։ Ի վերջկոյս հանդիսին յորժամ պատրաստէր օրհնորդն տալ զերդումնն օրինաւոր, լսելի եղև շունդն ահագին. և ոչ ինչ դժուարին էր գուշակել, զի զօրք հասեալ յարքայէն յարձակէին 'ի մերսն։ Յայնժամ ասէ օրհնորդն. Լութ մեռանել առաջի կայ, գէթ հարսնացեալ քեզ մեռայց։ Եւ զայս ասացեալ, 'ի վերայ էած անյողդողդ ձայնիւ զերդումնն։ Այսպէս ահա պակեալք, յարեայ աճապարէի ընթանալ 'ի դրունս տաճարին, յանձնելով երիցանց զհարսն իմ 'ի պահ։ Այնա աղաղակեր, չառնոյր յանձն կալ, կամէր գալ ընդ իս և բաժանակից լինել վտանգին։ Զուր ջանայի կացուցանել զնա 'ի բաց. բացան դրունքն, և ահա գունդք ընդ գունդս խառնեալ էին 'ի կռիւ։ Ընդ Հռիփսիմէ առ սեամն դրանցն բացելոց 'ի ծունր իջեալ ձեռնամած, և զաչս յերկինս ամբարձեալ կայր. և երիցունքն քահանայական սպասուք շուրջ կային յետ կուսէ կիսաքոլոր։ Ոստեայ 'ի դուրս, և գոչելով ասէր. Զինուորակիցք իմ, դադարեցէք վայրիկ մի, և լուարուք ինձ։ Եւ առժամայն դադարեցին հարուածք, և կարկեցան կացին զօրքն անշարժ։ Խօսեցայ առ նոսա, ցուցի նոցա ակներև զվատութիւն և զանգթութիւն Լգերիկեայ, որ յետ օրինաւոր երդմանն հարսնացուցանելոյ իւր զիշխանուհին՝ արձակէր զնա 'ի հայրենիսն պառակտեալս յառտնին պատերազմաց, մատուցանելով զնա զոհ մոլեգնութեան սպստամբացն։ Եւ ապա յաւելի. Վաղաքակիցք իմ և զօրականք, ընտրեցէք արդ ընդ թագաւոր վատասիրտ և հաւատադրուժ, և ընդ արքայազն թագաժառանգ՝ զորոյ գովէք ըզգնացս և զբարս, և որ միայն առաջնորդեաց ձեզ 'ի փառս ընդ թագաւորութեամբ Լգերիկեայ։ Յուշ լիցի ձեզ, զի ոչ նա է որ թագաւորէն, այլ անարգ հոմանիք իւր և վատ դրանիկք։ Յայտնագոյնս ասացից. ոչ ընկենուլ ինչ յաթոռոյ խնդրեմ զարքայն ապիկար 'ի թագաւորել, այլ գահակից նմին կալ և իշխանակից։

Կարճատեցան բանք իմ 'ի միահամուռ գոչիւն աղաղակի երկաքանչիւր զօրացն, որք թագաւոր Անդալայ զիս քարոզէին. և վաղվաղակի ջոկատ մի զօրականին հասեալ առ իս, բարձին զիս 'ի վահանս իւրեանց. և զարքայուհին ամբարձեալ 'ի կառս իւր, գոչէին. Կեցցէ արքայ, կեցցէ դշխոյն Անդալայ։ Եւ պար առեալ զմեօք անթիւ բազմութիւն ժողովրդեան, և գունդք երկաքանչիւր զօրաց 'ի մի գումարելոց՝ յորս եկեալ յաւելուին յամենայն կողմանց քաղաքին և այլ զօրք, ածին զմեզ յաղթանակաւ յարքունիս։ Պահապանք գրեթէ առ հասարակ ցան և ցիր լեալ, ոչ ինչ ընդդէմ դարձան. մտաք մեք 'ի ներքս համարձակ, և հաղիւ գտաք զապիկար

և զվատ աղքային 'ի Թագստի։ Մեծարանօք յայտ արարի նմա, զի կայր և մնայր նա յիշխանութեան իւրում և 'ի փառս, բայց միայն զի 'ի յանձանձանս իրաց աշխարհին բաժանակից նմա լինէի։ Թուէր առ ժամն հպատակել հարկին. այլ յետ ամենց ինչ օձան առեալ զազատութիւնն՝ զոր խորհրդով ետու նմա, եւ գնաց փախստական, խուսել կարծելով յերեսաց իմոց՝ որ ամենայնիւ ջանացեալն էի օգնել փախստեան նորա։

Այսպէս միաբան հաւանութեամբ ամենայն ազգին կայի ես Թագաւոր. և ընդ բազում ժամանակս փախստեայ և Թափառական ծածկեր Լզերիկ 'ի սահմանս աշխարհին, մինչև ոչ կարացեալ առնել իւր կուսակիցս՝ անց 'ի տար աշխարհ։ Եւ ապա յերկրորդում ամի յետ վտարանջութեանն խնդրեաց 'ի Յուստինիանոսէ օգնականութիւն։ Հասին առ իս հրեշտակք, և յերկարաձգեցան պատգամաւորութիւնք, մինչև յետ զերեամ Թագաւորութեան իմոյ հասեր դու Լէրիկէ։ Սիրելի էի ժողովրդեան իմոյ, Թագաւոր բարեբաստիկ և բարեբաստագոյն քան զամենայն արս և զհարս. սիրով սիրէի զհարսն իմ և զորդեակ երկամեայ՝ որ միամօր էր ինձ։ Բայց երազք արագաթռիչք են կեանք մեր. հազիւ վայրկեան ինչ սուղ զնաբուսիկ քաղցրութեանց նորա առի զՀաշակ. և քանի՛ ահագին և երկարատև տագնապ մահու պատրաստեր վաղանցիկ բարօրութեանս իմում յաջորդել։

Յետ պարտութեան Հակատամարտին 'ի Տրիկամերոն, հարիւրովք ոմամբք ընտրելովք հատեալ անցեալ ընդ բանակ քո՝ ապաւինեցայ 'ի կատար լերինն Պասուկայ։ Կարծիցես թերևս ասա զվէպս իմ սպառեալ. գիտես իսկ որ ինչ արկածք դժնդակք ինձ անդ 'ի վերայ հասին. այլ՞ զմտաւ ածել կարիցե՞ս որ ինչ կրեցի ես անդ յաւազելի բախտին։ Ոչ ինչ երկբայիմ զի մանրապատում իրացն զրոյցք 'ի գորով զսիրտ քո խանդաղատեսցեն։

Իբրև հասաք մեք ընդ քաջ որեարն իմ 'ի լեառն անդր, ուրախ լինէի ընդ ամուր ապաստանին անմատոյց 'ի թշնամեաց. ոչ միայն անկունք յարհաւրաց պարտութեան, այլ և թուէր մեզ յաղթանակեալ 'ի վերայ յաղթող բանակին 'ի խուսափել մեր յերեսաց նորա։ Հիանայի յակնարկել 'ի գունդն փոքրիկ, զերծեալ սքանչելապէս 'ի կորանաց գերութեան. և 'ի նոյն խրոխտ կոկոզանս օրինակաւ իմով զնա խրախուսէի։ Երբեք ոմանք 'ի նոցանէ ելին կանգնեցին 'ի հերձս ժայռին 'ի սպառուած լերինն զդրօշակս իւրեանց, ասելով. Ահա հովանոց գահոյից աղքային մերոյ։ Բազմեցայ 'ի գեղջուկ գահաւորակին, և զինուորացն պար առեալ կիսաբոլոր առաջի իմ, և տէգ ընդ տէգս խառնեալ զգլխով իմով, երդուան ինձ հաւատարմութիւն մինչև ցմահ, մեռանել 'ի քարաժայռի անդ քան լինել անձնատուր։ Ոչ իսկ է հնար յանդիման առնել քանիւք զայնր ժա-

մու աւիւն մոլեգնութեանս մերոյ. այլ միտք այս-
սու օրինակաւ գեր 'ի վերոյ արկածից չարաց ամ-
բարձեալ, զօրութեամբ ևեթ գոռոզութեան և
ցնորից մտաց չկարեն կալ և մնալ 'ի գերաբուն
բարձրութեան անդ։ Որ ինչ ոչն է հաստատեալ
'ի բանն գերակայ, արբեցութիւն իմն է վաղան-
ցիկ. վեհանձնութիւն ոչ 'ի թռիչս ինչ մտաց ա-
րիականս սահմանի. ոչ ապաքէն յաշխարհ և ախ-
տաժետք 'ի ձգտելոյ ջղաց առնուն յանկարծ
կորով զարմանահրաշ։ Արօնք ևեթ տան մտաց
մերոց հաստատութիւն, և անյողդողդ կաղմեն
զհոգի։ Ո՛հ չիք և չիք երկբայութիւն, զի զօրու-
թիւն գերաշխարհիկ, նպատակ վեհ, և յոյս վը-
սեմ, սաքա և եթ պնդակաղմ զտկարութիւն մեր
յարդարեն։

Ընդ վայրկեան արբեցութեանս իմոյ, և 'ի
մնհայցու անձկութեանց գտայ ես ընկճեալ և
կեղեքեալ։ Ոչ գիտէի ինչ զողջունեմ հարսինս
իմոյ և որդեկիս. հարկ էր ինձ ծածկել յայլոց
զդժնդակ տագնապ վարանման սրտիս. հարկ էր
ցուցանել արիութիւն անսասան այնոցիկ, յորոց
պահանջեի նուէր այնպիսի արիական։ Խորհուրդ
իմն անդոհական անկեալ 'ի միտս իմ ընդ երեկս,
յաւել յաշխատել զտառապանս իմ 'ի սպառ։
Զամենայն ինչ յաչս եղեալ էր իմ, բաց 'ի կե-
նաց հարսինս և որդեկիս, առ 'ի ժուժկալել 'ի
լերինն և վաստակաբեկ առնել զտոկ թշնամեաց.
այլ ածի յանկարծ զմտաւ, զի եթէ Հռիփսիմէ

'ի ձեռս թշնամեաց անկեալ կայր, և հարկ էր
անձնատուր լինել առ 'ի փրկանս ազատութեան
նորա և կենաց և կամ թերևս առ 'ի գրաւաթափ
առնել զպատիւ իսկ նորին, չէր ինձ ազատու-
թիւն փոխանակելոյ զանձն իմ 'ի վերայ նորա,
զի ոչ յանձն առնուին զայն զօրք իմ։ Խելամուտ
եղէ յայնժամ ընդունայնութեան շնորհաց, որոց
ոչ օգնէ զօրութիւն. 'ի միտ առի զի իշխան յա-
նապատի ուրեք ընտրեալ, որոյ չիք զօրութիւն
զդեմ ունելոյ և զհրամանս իւր կացուցանելոյ, ոչ
ինչ ընդհատ է քան զստրուկ՝ մեծարանաց ա-
նուամբ պերճացեալ, անուն թարմատար և ինս-
սակար։

Ը՛ռ 'ի ծածկել զանձն յաչաց զինուորակցացն
իմոց, մեկնեցայ 'ի քարայրն 'ի խնդիր լռութեան
և խաւարի. այլ 'ի մուտս անդ գուշք դառնա-
կսկիծք յուզեցան 'ի սիրտ իմ, քանզի անդ Հռ-
ռիփսիմեայ յայտնեալ էր ինձ զսէր իւր նախըն-
ծայ, և ես բաժանեալ կայի յայնժամ 'ի նմա-
նէ՝ անկեալ 'ի փառաց կապուտ կողոպուտ յա-
մենայնէ։ Զգիշեր 'ի զլուխ հանէի 'ի յոյզս տը-
խուր խորհրդոցս, որ վայրկեան 'ի վայրկեան յա-
ճախէին ինձ զարհաւիրսն։ Այս ընդ այգն նախ
քան զծագել արեգական լուսոյ շուինդն աղաղա-
կի. և յարուցեալ ընթացայ յելս այրին, տեսի
փայլումն մեծ. զի վեցեակ մի 'ի զինուորաց ոստս
սոճւոյ բոցավառս քերէին։ Ոստեայ 'ի դուրս, և
դիմէին առ իս. և տարածեալ զբազուկս իմ,

գիրկս արկի հարսին իմում և որդեկի։ Ընձառ
ցնծութիւն, յետին նշխար գերաշխարհիկ բա-
րեբաստութեան, մինչանակ ամենայն վշտակրու-
թեանց իմոց, դու ինձ մուռացօնս արարեր որ ինչ
ցայնվայր կորուսեալն էի. այլ աւաղ, առաջի կայր
ինձ կրել վիշտս, յամենայն մարդկային մխիթա-
րութենէ անսփոփելիս։

Հռիփսիմէ յետ խիզախելոյ յայնչափ վտանգս
առ 'ի հասանել առ իս, ցնծայր յայրի անդ՝ ուր
ամենայն ինչ յուշ ածէր նմա զբերկրանս նախին-
ծայ սիրոյս մերոյ ընդ իրեարս։ Իսկ ես ասեմ
ցնա. Աւաղ իմն Հռիփսիմէ, աստանօր՝ ուր ար-
քայութիւն քեզ խոստացայ, չունիմ այլ ինչ
ընծայել քեզ՝ բայց անապատ և վտանգ և տա-
ռապանս դժոխքմքեր։ Եւ նա ասէ. Ո՛հ, ապա-
շնորհ դտանիցիս եթէ զիս աւաղես. ուր դու ինձ
մերձ կաս որդեկաւս, զի՞նչ այլ կայցէ ինձ ցան-
կալի։ Այս անկեղծութեամբ ասեր աղնուա-
գութն և արիասիրտ Հռիփսիմէ. զի 'ի սկզբան
անդ այլ ինչ ոչ զգայաք երկաքանչիւր, բայց ըզ-
բերկրանս կալոյ 'ի միասին։ Այլ 'ի վաղիւ անդր
'ի տեսանել զվիշտ նորա և զորդեկիս առ կարօ-
տութեան ամենայն պիտոյից, մորմոքէր սիրտ
իմ։ Զբերք բաղումք ականակիտք բղխէին 'ի
ժայռից անտի լերինն. այլ ոչ գոյր մեզ 'ի կերա-
կուր այլ ինչ, բայց միրգ վայրենի, արմատք և
բանջար, թռչունք և երէ վայրի նետահարք։ Ար
ընդ իսն էին արք, զընտիրս յորսոյ իւրեանց փու-

թային զառաջինն ածէլ մեզ 'ի նուէր. այլ ընդ
հուպ դադարեցին 'ի սպասահարկութենէն առ
քաղցի, և մնայր ինձ հայթայթել միայնակ կե-
րակրիկ իմոցս ոգեպահիկ։ Եւ յորժամ բախ-
տաւորագոյն իսկ քան զայլս գտանէի 'ի գիւտ
պարենից և որսոց, յաձախէին 'ի վերայ իմ նա-
խանձ և տրտունջ. և հարկ լինէր ինձ յաձախ
խորել 'ի կերակրոյն իմմէ և տալ անյագ զօրակա-
նին։ Երթայր և նուազէր ակնածութիւն նոցա
յինէն, տակաւ համարձակութիւն իմն անհե-
թեթ 'ի ներքս մտանէր 'ի գնացս նոցա և 'ի խօսս
ընդ իս. զոր սաստիւ մեծաւ սանձահարէի, ան-
այլայլակ պահեալ զցոյց վստահութեան 'ի հա-
ւատարմութիւն նոցա և զիշխանական բարբառ։

Յայնպիսում ահագին վտանգի խելամուտ լի-
նէր ամենայնի Հռիփսիմէ. և թէպէտ ծածկէի
ես 'ի նմանէ զիրաւացի երկիւղ կասկածանաց ի-
մոց, ինքնին գուշակէր նա զպատրաստեալ 'ի վե-
րայ մեր աղէտս։ Ամենայն հոգք նորա էին վասն
մանկանն, և ամենայն վիշտք նորա 'ի նոյն յան-
կէին. սակայն և բան մի տրտունջ ոչ ելանէր 'ի
բերանոյ նորա։ Իսկ մանուկն հանդերձ ամենայն
մայրենի խնամօքն նեղէր, և տմոյնք դիմաց նորա
և նիհարութիւն էին նշանակք տկարութեան նո-
րա և խօթութեան։ Հայէր 'ի նա Հռիփսիմէ,
և այնպիսի կողկողանօք կայր 'ի նա ակնկառոյց,
զի զսիրտ իմ կեղեքէր. և իբրև զգայր զի դի-
տէի ես զկիրս իւր, բուռն առնէր անձին 'ի ժրպ-

տել. և ոչ իսկ է մարթ յանդիման առնել բանիւ զժպիտն զայն բռնաբռնս 'ի դունատեալ շրթունս նորին գեղեցիկս երևեալ ընդ աղիողորմ հայեացս՝ որ զդառնութիւն ցաւոց նորա 'ի դէմս ածէին։ Աւաղ, քանի՞ աղեկէզ, քանի՞ չարագոյժ էր տխուրն այն ժպիտ հիքին այնորիկ, որոյ չէր ինչ երբէք ծածկեալ յինէն բաց 'ի տառապանացն։ Թուէր նա մի յանմարմնոցն առէից նրժդեհ 'ի յերկրի, ժպտելով ընդ թշուառութիւն և ընդ մահ։

Դէպք իմն տրտմական յետ ամսօրեայ ժամանակի կալոյ մեր 'ի լերին անդ պատահեալ, արհաւիրս արկ յամենեսին 'ի մեզ։ Հանգոյն յոլովից 'ի զինուորակցաց իմոց, ընկալեալ էր և իմ վերս 'ի պատերազմի անդ. և թէպէտ պակասէր մեզ դեղ և դարման, դէպք 'ի բարի յաջողեցին մեզ ողջանալ 'ի վիրաց անտի։ Այլ ապա երեք կամ չորք 'ի զինուորաց, որոց չէր առեալ վերս, անկան յախտ մահու, և մի 'ի նոցանէ մեռանէր։ Այս մահ 'ի վերայ այլոց աղետիցս մերոց հասեալ, լքոյց զմեզ և ապշեցոյց որպէս արկածք նորանշան և անակնկալ։ Թուէր իմն ազդ առնել մեզ, զի մարթէր 'ի լերին անդ զրաւել մեզ 'ի կենաց։ Յայնմհետէ սկսաւ քրթմնջիւն 'ի զօրականին. այլ ես չլսելոյն առնէի զայն, գուն գործեալ սթափեցուցանել զզօրս 'ի յոյս փառաց՝ զոր յիշատակի վախճանելոյն մատուցանէի, հանգուցեալ զնա ընդ հովանեաւ սարդենեաց։ Ա-

տու բառնալ բերել զդիակն նորին 'ի դագաղս կաղմեալս յոստոց. և մեք պսակեալք նոձիւք, գլխիվայր զնիզակս մեր բերէաք։ Կատարեցի ես անդ զսպաս քահանայական ընդ պաշտօն զօրավարի. փայտակերտ ափ յափոյ գործեալ անդ անյարդար զնշան խաչին՝ բարձեալ բերէի, երգելով օրհնութիւնս և սաղմոսելով, որում կցորդէին զօրքն պարակցեալ։ Ոչ ինչ հեռի 'ի դրից հանգստեանն անկանէր 'ի ժայռից սեպացելոց վտակ սահանակարկաջ. լցի զսաղաւարտ իմ յալեաց անտի, և 'ի ծունր իջեալ՝ կարդացի առ տէր. Տէր զօրութեանց, օրհնեա զջուրս ականակիտ։ Եւ զայս ասացեալ, ածի զայն զդիակամքն. և եդեալ զնա 'ի գերեզմանի, արկի զդէն և զասպարն նորա զնովաւ։ Եւ ապա 'ի բարձրաւանդակումն կալով 'ի ժայռի՝ առ 'ի լսելի առնել զբարբառ իմ, յօրինեցի նմա ներբող, այսպէս վախճան արարեալ դամբանական անփառունակ հանդիսին՝ որ 'ի գութ և 'ի գորով շարժեաց զսիրտս ամենեցուն։

Եւ յետ գալստեան զօրագլխին քո Փարասայ, և չառնլոյ իմոյ դարձեալ յանձն խոնարհել 'ի պարտութիւն, յաձախեաց տրտունջ զօրականին վտանգաւոր յոյժ. և Կալեբ, որ միշտն եկաց ընդ իս հաւատարիմ, պատմէր ինձ զամենայն սպառնալիս նոցա։ Պատուէր ետու նմա թելադրել նոցա իբրև յիւրմէ, զի 'ի քուն լինել իմում՝ թողեալ զիս խոյս տացեն 'ի բաց։ Պատա-

խանի եռուն, զի յետ այնչափ վշտակրութեան
չառնուին յանձն լինել դասալիք. և զի որովհետև
էր նոցա յինէն վարձուց ակնկալել, 'ի թշնա-
մեաց կամէին ունել մրցանակ՝ մատնելով զիս 'ի
ձեռս նոցա. իսկ եթէ չառնուի յանձն գնալ ընդ
իւրեանս, սպառնային խողխողել զկին և զոր-
դեակն իմ։ Յետ այսքան սոսկալի սպառնալեաց
տակաւին ոչ իշխէին խօսել առ իս, խորհուրդս
ևեթ առեալ ընդ վայր. վստահութիւն իմ, թէ-
պէտ և վեր 'ի վերոյ, լքուցանէր զնոսա. տայի
նոցա հրամանս նովին իշխանութեամբ 'ի հանա-
պազօր սահմանեալ մարզս արդնընկէց և տէգրն-
կէց հրահանգաց, և սաստիւք յաձախ յանդի-
մանէի զնոսա։ Այսու օրինակաւ կալայ զնոսա
ընդ երկար 'ի հնազանդութեան. ուր եթէ խուն
ինչ ցուցեալ էր իմ երկիւղ, իսկ և իսկ համար-
ձակէին ապստամբել։ Այլ յաւուր միում եկն
առ իս Կալէբ ընդ առաւօտն, և պատմեաց զի
խորհուրդ կալեալ էր նոցա, ընդ նիրհել իմում
յառաջիկայ գիշերի՝ կապեալ ձեռօք մատնել զիս
'ի ձեռս թշնամեաց. և արդարև 'ի տեսանելն ի-
մում զնոսա, 'ի տխուր և 'ի դաժան դիմացն ըզ-
խորհուրդ սրտից նոցա գուշակէի։ Կոչեցի զզօ-
րականն. և իբրև գումարեցան, ընտրեցի երիս
ոմանս 'ի նոցանէ՝ գնալ հրեշտակութեամբ առ
թշնամիս։ Լաւ 'ի յանդգնել զօրականին 'ի
քրթմնջիւն, սաստեցի ցասմամբ. և լռեցուցեալ
զնոսա, ասեմ ցերիս պատգամաւորսն. Փութա-

ցարուք երթայք ասացէք յինէն ցԲելիսար, զի
եթէ յանձն առնու խառնել զձեզ ընդ զօրս իւր և
տալ ձեզ աստիճան, յայսմ իսկ երեկոյի եղէց նը-
մա անձնատուր։ Զգոյր ինձ այլ հնար, զի վարձս
վաստակոցն խնդրեր զօրականն. և եթէ չէր իմ
պահանջեալ վասն նոցա զայն պայման, չթողուին
ինձ անձնատուր լինել։ Այսպէս հարկ եղև ինձ փո-
խանակել զշահ անձին 'ի վերայ նենգաւոր ապըս-
տամբաց, որք 'ի բազմաց հետէ մտաբերէին 'ի
կորուստ իմ։ Լի եղէն նոքա խնդութեամբ, մին-
չև բազմաց 'ի նոցանէ անկանել յոտս իմ. այլ
այն նոցա ցոյցք շնորհակալեաց 'ի սրտմտութիւն
և 'ի թշնամանս դրդէին զիս։ Մեկնեցայ 'ի նո-
ցանէ խոժոռ, և մտի անդրէն 'ի քարայրն, մնա-
լով դարձի պատգամաւորացն. և զայրանայի 'ի
սրտի իմում, գիտելով քաջ զի նաւատորմն թըշ-
նամեաց պատրաստեր առագաստել յետ աւուրց,
և փոքր միւս ևս սրտապնդեալ՝ զերծանէաք 'ի
վտանգէն։ Գտի անդ զՀռիփսիմէ 'ի կողմն այ-
րին՝ ուր կայաք 'ի տունջեան, զի ծագեր անդր
լոյս ընդ երդ լայնաբաց։ Անձկայի մերկանալ
զսիրտ իմ, այլ և այս սփոփումն ոչ շնորհեր ինձ.
զի Հռիփսիմէ փոխանակ զայրանալոյ և վշտակից
լինելոյ ընդ իս՝ ուրախանայր ընդ իջանել 'ի լեռ-
նէ անտի, ոչ այլ ինչ հոգացեալ բաց 'ի մանկա-
նէն՝ զոր 'ի վերայ ծնգաց իւրոց բարձեալ կրեր
միշտ։ Մերկրեցաւ 'ի տեսանելն զիս, քանզի
տագնապեր 'ի կաղն իմում 'ի բացեայ 'ի խան

զօրականին, Թէպէտ և անգիտանայր 'ի սպառ զահագին սպառնալիս նոցա ազդեալս ինձ 'ի Կալեբայ. ասացի և եթէ ցնա, Թէ վատութիւն և նենգ զօրականին հարկ առնէր ինձ անձնատուր լինելոյ։ Այն իբրև լուաւ Հռիփսիմէ, ողջագուրեալ զմանուկն փայփայեր 'ի գրկի իւրում. ընդ որ զչարեալ՝ ասեմ։ Մանուկ դու հէք, ստրկի այսուհետև ի ցեսս որդի։ Հառաչեաց Հռիփսիմէ, և ասէ. Սակայն այն ինչ իմասցի նա զիսաս իմ և լուիցէ զվէպս քո, պանծասցի 'ի հայր իւր Դեղիմեր։ Ղրեցի յայնժամ. և մերկացեալ զկապարձն իմ, դրոշմեցի յայրին սլաքիւ նետի զայս արձանագիր. Դեղիմեր յայրի աստ ըզպաշտպանութիւն անձին, զաղատութիւն, զփառս և զբարեբախտութիւն իւր աւանդէ. Դեղիմեր ոչ ևս է։ Եւ կախեցի զմիոջէ 'ի ժայռից զայն տխուր նուէր արգադիր։ Յընթեռնուլ զայն Հռիփսիմեայ, լցան աչք նորա արտասուօք, և ասէ. Թողուս ուրեմն աստ զբարեբախտութիւն քո, հրաժարես ուրեմն 'ի սիրոյ ուր նախ զառաջինն երդուաք զայն առ միմեանս։ Հեղձամղձուկ արարի զգորով իմ, և չետու պատասխանի. և ոչ այլազգ սփոփել կարացեալ զսիրտ իմ, բայց արհամարհանօք բախտին՝ որ մատնէրն զիս, առի զքնար իմ, և խրախուսական ձայնիւ զաղէտս իմ նուագէի։

Դարձան պատգամաւորքն, և Փարաս ընդ նոսա, բերելով զոյց՝ զի ընդունելի լեալ էին Բելիսարայ պայմանքն։ Յայնժամ 'ի մի վայր ժողովեալ զզօրս, հրաման ետուս առնուլ զզէն և զասպարս իւրեանց և գալ զհետ իմ։ և յաւելի. Իսկ ինձ, որ կորուսանեմս 'ի սպառ զազատութիւն առ 'ի ստանալ ձեզ զայն, ոչ ինչ այսուհետև պէտք էն զինուց, Թողում զքանեմ աստ զիմն։ Հատ ի՞ցէ ինձ քնարս, և տեգս և եթ այս՝ զոր 'ի ձեռս Բելիսարայ կամիմ աւանդել։ Ի լուր բանիցս յուզեցան գուրթք զօրականին, մինչև բաղմաց 'ի նոցանէ արտասուել. և յետ առ վայր մի լռութեան, գոչեցին առ հասարակ. Ոչ Թողցուք զարքայն մեր, կացցուք մնասցուք 'ի լերին աստ։ Բայց ոչ ևս կարէի ես վստահել 'ի հաւատարմութիւն նոցա. գուրթն այն վաղանցիկ՝ տկարութեան նոցա էր նշանակ. պատասխանի ետուս և ասեմ։ Մի՛ ևս այլ յետ տալոյ իմոյ զխոստումն, այլ հնազանդեցարուք ինձ զայս վերջին նուագ, և ի՞նչք ընդ իս 'ի լեռնէս։ Եւ յասել իմում զայս՝ յառաջ խաղայի, 'ի միում ձեռին տեգ և 'ի միւսում ըզքնար բարձեալ բերելով, յաջմէ առեալ զՀռիփսիմէ հանդերձ մանկամբն, և յահեկէ զՓարաս։ Եւ յանցանել մերում առ շիրմաւ զօրականին վախճանելոյ զկայ առեալ, ասեմ բարձրաձայն. Յիշատակ քո օրհնութեամբ, զօրականդ քաջ և հաւատարիմ, որ յասպարիզի անդ փառաց անկար 'ի տեղւոջ, ուր երդուեալ էր քո մեռանել քան լինել անձնատուր. շիրիմ քոյին կացցէ աստ յաւերժ, արձան վեհ յապալեր և յամայի վայրս

կանգնեալ։ Եւ յառաջ խաղացեալ, նախ քան զմեկնել յամրոցէ անտի ազատութեանս մերոյ՝ դարձայ արկի վերջին և տխուր հայեցուած 'ի ժայռս անդր 'ի սպառնալիցս, 'ի քարայրն ցանկալի, 'ի վայրն երջանիկ անմատոյց 'ի թշնամեաց, և հարկ եղև ինձ զարթուցանել 'ի սրտի իմում զամենայն խրախոյս, արիութիւն և զխրոխտումն առ 'ի նուաձել զարտասուս։

Իբրև ինքաք մեք 'ի հովիտն, յապուշ հարայ ես անդրէն. զի աշխարհաւեր ձեռն թշնամւոյ յոյժ առաւել արադածախ և սպառիչ քան զժամանակին՝ աւերած այնպիսի յեռամեայ աւուրս գործեալ էր շուրջանակի, զոր դարու միոյ գործել չէր հնարաւոր։ Ոչ ևս կարէի առաջնորդել զնդին իմոյ, անծանօթ էր ինձ ուղին, և անհետ լեալ շաւիղք. յաջմէ խնդրէի գիւղ և անտառ, և դաշտ անբեր գտանէի. և 'ի ձախմէ ոչ ևս գոյր կամուրջ։ Մինչև հասեալ 'ի վրանս քո, լուծի զկամար իմ՝ որ լի էր ոսկւովք, և բաշխեցի զայնս զօրականին. և զականակուռ զարդս, զորս Հրիփսիմեայ ածեալ էր ընդ իւր 'ի խուսէն յարքունեաց, ետու Կալէբայ։ Մնայր առ իս ադամանդն և ևթ անգիւտ, զոր յարքունի գաւազանէն իմմէ կորզեալ՝ պահէի զգուշութեամբ 'ի լերին անդ. այլ և զայն, ոչ կարացեալ ամբարհաւաձութեանս իմում յաղթել, ետու ստրկին՝ որ մատոյց մեզ կերակուր. թուէր ինձ ոչ ըստ արժան բաւականին կարել վարձատրել զայրն, որ

այնպիսի սփոփանս ետ Հրիփսիմեայ՝ զայնքանոյ արքայի կերակրեալ զորդեակն սովալլուկ։

Յետ սակաւ աւուրց հասանելոյ մերոյ 'ի Կոստանդնուպոլիս՝ Յուստիանոս խոստացաւ ինձ ըզմեծարանաց անուն պատրկի և կալուածս բազումս, եթէ միայն յանձն առնուի հրաժարել հրապարակաւ յարիոսական աղանդոյ. այլ մերժեցի համարձակ և առանց ընդ բանս ինչ ածելոյ զառաջարկութիւն նորա։ Այլ թէպէտև յօժարէի 'ի սրտէ նզովել զայն՝ ուսեալ 'ի մանկութենէ զմոլորութիւնս նորին, սակայն դժկամակէի յածել զմտաւ՝ իբր թէ զնիզՀ մտաց իմոց վաՀառէի. զի 'ի բնաւից կենցաղական բարեաց մնայր ինձ պատիւն ևեթ այն, զոր սուրբ և անաբատ ցանկայի պահել։ Բ.քսորեցաք 'ի Գաղատիա, այլ տուան մեզ անդ կալուածք և ամենայն ինչ առ 'ի պատշաՀական կեանս պիտանացուք։ Հրիփսիմէ գոհ և հաւան ընդ բնակութիւն մեր, ասէ ցիս. «Քանի՞ ցանկալի է մեզ անապատս, Գեղիմեր. աստ 'ի մոռացօնս արկեալ զտխուր յիշատակս, կարասցուք դեռևս կեալ բարեբաստիկ։ Եւ մարթէր իսկ այն, այլ պատրաստէր ինձ օրն աղիտագոյն և քան զամենայն աւուրս կենաց իմոց վշտալից։ Որդեակն իմ՝ ոչ հաստատեր յառողջութիւն, և ծանեայ ընդ հուպ զի ոչ ևս գոյր յոյս կենաց նորա։ Այր նորա տառապեալ, որ ոգւով չափ սիրէրն զնա, հնարէր մնոտի յուսով

1 Ըստ պատմագրաց։

զանձն սփոփել. բայց հիւծեալ՝ի ցաւոց՝ ծնգէր ծիւրէր ընդ նմա, և տեսանէի առկայծեալ ըզկեանս նորա ընդ մանկանն։ Մինչև ցայնժամ իմաստասիրութիւն և եթ բաւական լեալ էր ինձ ընդդէմ արկածից անդրդուելի հաստատութեամբ ժուժկալ լինելոյ, և ընկալեալ իսկ էր իմ զմրցանակ արիութեանս. զարմանային ընդ այն Յուստինիանոս և Բելիսար, և Հռիփսիմէ ականատես էր նմին։ Այլ յերեսաց աղետիցն՝ որ՝ի վերայ իմ հասանէր՝ մանչէի հեծեծելով, և ամենայն քաջալերք յանդգնութեան տեղի տային ունայնացեալ։ Յայն վայր չէր իմ երբեք ձգեալ յանձն զանփառունակ կարեկցութիւն. յարկածս ծանունս մարթ է խուսել՝ի գթութենէ այլոց՝ հիացումն գործելով և նուաճելով զարմանս. այլ՝ի վիշտս սրտի եթէ խիզախէ ևս մնաս փառութիւն, ի՞նչ կարիցէ գտանել իւր սփոփանս, ո՞ գովեսցէ զանխռովն անդգայութիւն ընդ կորուստ սիրեցելոյն։ Ապաքէն հնարաւոր է կցորդել զարիութիւն սրտի ընդ գողտր զգայութեան. այլ ո՞ յընտրութիւն նորին կացցէ դատաւոր, բայց որ քննէն զսիրտս, որ և կարողն է զօրացուցանել զարիութիւն՝ի յոյս գերագոյին հաճութեան։ Ի յոյզս մահահրաւէր անձկութեանց՝ այս խորհուրդք յածէին՝ի միտս իմ։ Ողղութիւն սրտի իմոյ, որում գիտակիցն էի, էր ինձ առհաւատչեայ՝ զի սրտագէտն Աստուած, վեհագոյն և անաչառ դատաւոր գործոց իմոց և խոր-

հրդոց, հատուսցէ ինձ հարիւրապատիկ փոխանակ մնոտի դրուատեաց մարդկան։ Յայնմհետէ յաստուածախնամ տեսչութիւն զանձն ապստամբեալ ընդարձակեցաւ սիրտ իմ, և արիութիւն իմ հաստատեցաւ. խոնարհեցայ առաջի գերաբուն աղբերն կատարելութեան և գերազօր զօրութեան, որ այնպէս գեր՝ի վերոյ քան զբնութիւն զիս ամբառնայր. մոռացայ՝ի սպառ զաշխարհ, և ոչ ևս զյիշատակ նորա համարէի ինչ։ Ակսայ այնուհետև պարապել յընթերցումն աստուածեղէն տառից և հրաշալի գրոց մեծի Ոսկեբերան հայրապետին[1]. խելամուտ եղէ ճշմարտութեան, տեսի ապաւէն իմն յանտիսն պատրաստեալ, և յոյժ մխիթարեցայ զի և Հռիփսիմէ համանձայնէր ընդ իս՝ի կարևոր մասինս յայսմիկ ուղղափառ դաւանութեամբ։

Բայց մանուկն մերձեալ յօրհաս ծիւրական ախտին՝ որ զոգիս նորա սպառէր, կայր՝ի շունչ վախճանին. և մայր նորա տառապեալ զհետ նորա պատրաստէր՝ի գերեզման։ Ի միում աւուրց տեսի զնա տժգոյն և տկար քան զօրէն հանապազօր՝ բազմեալ առ մնարս որդեկին, որ ընկղմեալ կայր՝ի մահահանգոյն թմրութիւն. և նուաղեալ աչօքն պշուցեալ՝ի նա ընդ երկար, ապա ասէ. Ո՛վ քուն ահաւոր, իսկապէս պատկեր մահու, ԷԿ ցանկալիդ իմ, արի ԷԿ զրաւ առնել վըշ-

1 Սուրբն Յովհան Ոսկեբերան եկաց յառաջ քան զայն դար, և՝ի գիրս իւր հեղբեաց եղծ զարիոսական մոլորութիւնս։

տայս իմոյ, կամ գէթ վայրիկ մի սփոփել զիս յայնցանէ։ Որդեակ իմ, իցէ՞ թէ զարթիցես դու դարձեալ. իցէ՞ թէ լուայց դարձեալ զքաղցր բարբառ նուաղելոյ ընչոյդ՝ մինչեւ մեռեալ իցեմ։ Իցէ՞ թէ տեսցեն դարձեալ աչք իմ տխրագին ըզ հայեցուածս աչաց քոց։ Պաղեցաւ արիւն յերակունս իմ՝ ի լսել զբանս զայսոսիկ, որպիսիս չէր երբեք խօսեցեալ նորա զկենաց որդեկին, և զի զիւրն եւս գուժէր հաւաստեաւ զմօտալուտ մահ հետ ընդ հետ որդեկին։ Պոչեցի յայնժամ. Ո՛հ Հռիփսիմէ։ Ոչ գայ նա զկեղերքական հառաչանս իմ, և՝ ի վեր առեալ զծանրացեալ անկեալ գլուխ իւր, և առ խորհուրդս իմ պատասխանելով ասէ. Ներեա ինձ, ներեա. զկենաց երկոցունց սիրելեաց իմոց կախեալ կային կեանք իմ, և ոչ առաւել ինչ ընդ կորուստ քոյին կարէի տալ քան ընդ որդեկիս։ Այս մինչդեռ զայս ասէր, լուաւ զնուազ հեծութիւն մանկանն. և խոնարհեալ շրթամբք՝ ի ցրտացեալ դէմս նորա, եբարձ գոյժ ահաւոր ողբումն մայրենի՝ որ հնչեաց մինչեւ՝ ի խորս սրտի իմոյ, Ձիչ աղիողորմ մօր յուսահատի, զի աւանդեր մանկիկն հէք զշունչ իւր վերջին։ Այս իբրեւ անկեալ կայր մայրն անզգայ՝ ի վերայ որդեկին, դիմեցի առ նա, և ընկալեալ զնա՝ ի վերայ բազկաց իմոց ածի յայլ սենեակ. և օժանդակութեամբ առձեռն պատրաստ դեղոց անձին զգացեալ, եբաց զաչս իւր՝ կարդալով զանուն որդեկին։ Կարեալ էր՝ ի դէմս նորա և՝ ի հայեցուածս աչացն մահ, և ասէ. Ո՞ՐՀ մարտիւ ուրեմն մանկիկն ոչ եւս կեայ։ Բրատասուօք եւթ ետու նմա պատասխանի։ Իսկ նա ձեռնամած աղերսանօք ասէ ցիս հեղձամղձուկ ձայնիւ. Ներեա ինձ, ա՜հ, թո՛ղ ինձ։ Այս զայս իբրեւ ասաց, փակեցան անդրէն աչք նորա, և խօսնարհեցոյց զգլուխս իւր ընչասպառ՝ ի ծոց իմ։ Սիրտ իմ մորմոքեալ՝ թուէր փեռեկել առ ընդունելոյ զշունչ իւր յետին. զգաց նա անշուշտ յաւանդել զոգին զսրտի իմոյ զուժգին բաբախիւն։ Այս գիրկս արկեալ յանուանէ զնա կոչէի՝ ի զուր. ոչ եւս էր նա։

Բայսպէս՝ ի միասին զհարսն ընդ մանկան կորուսի. այսպէս՝ ի միում վայրկենի լուծան կապանք, որ ընդ կենցաղոյս զիս կցորդէին։ Ի մի դագաղս ամփոփեցի որ ինչ յերկրի ասա սիրելի էին ինձ. անցեալ ընդ բոլոր վիշտս կենցաղոյս, սակայն թուէր ինձ միակ կրեալ վիշտ։ Եվ ըզՀռիփսիմէ ածեալ՝ ի թաղումն, նկատէի զնա՝ ի դագաղս անդ՝ ուր ըստ սովորութեան աշխարհին կայր բացաւ դիմաք վարդապակ։ Ի միում ձեռին կրէր զտերունական խաչին նշան, և՝ ի միւսումն թուէր կրել զմանկիկն՝ ի գիրկս իւր հանգուցեալ։ Այս ձայն բարձեալ ասեմ. Ո՛վ Հռիփսիմէ, զոհ ողորմագին մայրենի սիրոյ, դու առ՝ ի սիրել եւեթ կեցեր և առ՝ ի վշտակրել, ՝ի դէմս քոյին ծածկեալս ստուերաւ մահու նշմարեմ տակաւին զտիպ անխառով խաղաղութեան. չիք՝ ի

դմա նշանակ ցաւոց, ոչ ևս կեղեքեսցես դու ըզ-
սիրտ իմ 'ի բռնաղբօս ժպիտս քո և 'ի խորաշնին
հայեցուածս տրտմաւորս։ Սիրով սիրէի զքեզ, և
արդ մոռացայց զիս առ 'ի նկատել զքեզ խնդա-
միտ. զի դու ոչ ևս վշտակրես, ամենայն ինչ 'ի
քեզ ցուցանէ զանդորր անմեղութեան։ Օ՜ման-
կիկդ՝ զոր Թուիս բերել 'ի գրկի, զմանկիկդ զայդ՝
զոր ոչ կարէիր ընդդրկել առանց հառաչանաց,
դու արդ տեսանես զդա, գտեր զդա անկորուստ
'ի տիպ երկնահրաշ. ընկալաւ դա զՀրեշտակա-
կերպ հոգի քո, և մատոյց յաթոռ բարձրելոյն։
Ողջոյն ընդ քեզ անուշակ և բարեգութ Հռիփ-
սիմէ. ողջոյն ընդ ձեզ քաղցր պատրանք սիրոյ և
բարեկամութեան. բարեաւ մնա յոյս երջանկու-
թեան վաղանցիկ կենցաղոյս. զփառասիրութիւն
իմ, զյօժարութիւնս իմ, զուխտս սրտի իմոյ և
զբաղձանս առհասարակ ամփոփեալ թողում 'ի
դագաղս յայս։

Կացի այլևս ամիս իբր վեց 'ի Դաղատիա, խոր-
հել զգերեզմանաւն Հռիփսիմեայ զխորհուրդ
փախստեան իմոյ յանապատս Թեբայիդայ։ Կա-
լեբ միշտ պատրաստական 'ի պէտս իմ, ընդ իս էր
յայնժամ, օժանդակել 'ի յաջողութիւն խոր-
հրդոյն՝ զոր ցանկայի փութալ ձեռել ածել 'ի
կատարումն։ Դայց ինքն ձոխացեալ 'ի պարգևաց
իմոց, չկամէր հրաժարել 'ի հայրենեացն. յայ-
րեացաւեր աշխարհին, զոր բռնակալք առ 'ի չգոյե
արծաթոյ և որերոյ և հնարից մշակութեան՝ թո-

ղեալ էին անարօր, անդ Կալեբայ արարեալ էր
իւր բնակութիւն մերձ 'ի Կարքեդոն, և անդ ըն-
տանեօքն կեայր 'ի խաղաղութեան, մշակելով եր-
կիր ընդարձակ. այլ յաւուրս պանդխտութեան
իմոյ 'ի Դաղատիա, ամի ամի գայր անդր. և գը-
տաւ առ իս 'ի մեռանել հարսին իմոյ և որդեկի։
Հաստատեցաք խոյս տալ ընդ նմա, և համբա-
ւել զիս մեռեալ, փոխել ինձ զանուն իմ, և գը-
նալ յանապատ։ Թուէր իմն ինձ այնպէս, զի 'ի
գալ հասանել իմում այսր յանապատ անբաւ՝
մնայը ինձ գէթ 'ի սկզբան անդ կրել դառն ապ-
շութիւն, արհաւիրս իմն բնաւորականս և ազ-
դեցութիւն տխրութեան. այլ փառամոլութիւն,
սէր, և որ այլևս իղձք յայն թշուառութիւն հա-
սուցեալ էին զիս, և այնչափ վիշտս ինձ յաճա-
խեալ, զի անդէն և անդ զգացի բերկրանս ընդ
հրաժեշտիմ յաշխարհէ և 'ի մարդկանէ. Թուէր
ինձ հոգի իմ զերծեալ յամենայն մարդկային
կրից, և լուծեալ յերկրաւոր կապանաց և գեր-
աշխարհիկ լեալ. և օդք անապական, զոր ասա-
ին, հիւթ կենարար յերակս իմ խաղացու-
ցանէին. վերածնեալ 'ի սրտի իմում զգայի զնա-
ղաղութիւն։ Ի զնին հրաշագեղ վայրացս, հոյա-
կապ քարաժայռից, ականակիտ աղբերաց, և
վեթխարի ծառոց՝ որ ընդ աշխարհի Թուէին հա-
սակակիցք, համարեի աստուածախնամ գթու-
թեանն ածեալ զիս յանձնառագործ դրախտն փափ-
կութեան՝ ուստի նախածնողքն մեր անկան 'ի

բաց, և ձայն բարձեալ ասէի. Ալիճակակից ու-
րեմն անմարմնոցն գտանիմ աստ, մի՛ և ես ինչ՝ի
կորստականաց լցցի ինձ սիրելի։ Եւ ոչ ժամա-
նակն աղօտացոյց յիս զայս փրկաւէտ ազդեցու-
թիւն. գտի յայրի իմում զբարին անտես՝ի մարդ-
կանէ. այլ առաւել քան զամենայն ինչ ցանկա-
լի, զիսաղաղութիւն սրտի. և ոչ այլ իմիք ցան-
կամ, զի՝ի յերկարաձիգ մտածութիւնս իմ եղև
ինձ պարապ բոլորից էիցս որչափ ինչ արժէն հա-
սու լինելոյ։

ԳԼՈՒԽ Ը.

Ի լուր վիպացս վեր՝ի վայր վրդովեցան գութք
Ռելիսարայ. և իբրև արքայն Ալանդալաց դա-
դարեաց՝ի խօսելոյ, յայտնեաց նա սաստկապէս
բանիւք զյոյզս կրից իւրոց։ Եւ ապա Գելիմեր
բանս՝ի մէջ էառ զուղևորութենէ իւրեանց՝ի
Կարքեդոն, և սահմանեցաւ ուղեւոր լինել՝ի վա-
ղիւ անդր։ Եւ մինչդեռ վերհաղունքն երկոքին
պատրաստէին՝ի չու, անցք յեղակարծք անցին
՝ի Կոստանդնուպօլիս։ Յուստինիանոս և Յուս-
տինոս չէին այնչափ մեղապարտք, որչափ Ռելի-
սարայ օրէն էր կարծել։ Ի վերջին աւուրս բան-
տարգելութեան քաջի առնս Յուստինիանոս ընկ-
ճեալ՝ի վաստակոց և յամաց՝ անկեալ կայր՝ի
մահիճս, այլ առանց ինչ վտանգի մահու։ Ներսէս

ոխերիմ թշնամի Ռելիսարայ զհիւանդութիւն
ինքնակալին պատեհ առեալ, ջանացաւ կորուսա-
նել՝ի սպառ զայրն մեծ՝ ընդ որ մախայրն, այլ՝ի
դերև ելին ջանք նորա. զի արքայորդին Յուստի-
նոս, որ ցայն վայր օժանդակէրն հնարից՝ Ներսիսի
ընդդէմ Ռելիսարայ, ոչ ևս բերեր զնոյն կիրս.
մանաւանդ զի ստրջացեալ ինն էր՝ի լուր պատաս-
խանատուութեանցն Ռելիսարայ մերձ՝ի վախճան
հարցափորձին։ Դարձեալ և Տիբեր յետ երկար
տարակայութեան դարձ առնէր գայր՝ի մայրա-
քաղաքն. և Յուստինոս թէպէտև սաստիկ բը-
նաւորութեամբ, թէ և զայրացեալ՝ի թշուառ
սիրոյն իւրոյ ընդ Ընաստասիա և մանաւանդ՝ի
կարեվէր ամբարտաւանութենէն, սակայն չկա-
րէր ատել զոսոխ իւր, և ոչ աներկիւղ լինել՝ի
ցասմանէ և՝ի կշտամբանաց նորա։ Մեծարանք
Տիբերի կարևորագոյնք էին նմա քան զվրէժ-
խնդրութիւն, և լաւագոյն համարէր զբարեկա-
մութիւն նորա քան զյաջողութիւն սիրոյ իւրոյ։
Ներսէս ոչ քովանդակ՝ի վերայ կայր կրից Յուս-
տինեայ. տեսանէր զնա ծանրացաւումն ընդ Ռե-
լիսարայ, այլ չկարէր հասու լինել մեծանձնու-
թեան նորա և աղնուականութեան սրտի, որ
յաչս իւր թուէին կեղծիք. զի ապիրատութիւն
սրտի և նուաստախոհութիւն ամփոփեն զկորո-
վամտից իսկ և զնրբախոհից՝ի մարդկանէ զխե-
լամտութիւն։ Եւ իսկ ուրեք, զի դիւրահաւան
գտանի առաքինութիւն. այլ յաճախագոյն ըն-

ծայէ լոյս մնաց, զոր առանց այնր չէ մարթ ու-
նել։ Կարծէր Կերսէս զի Յուստինոս առ ահի
ատելութեան սիրուհւոյն իւրոյ և ժողովրդեան
չիշխէր 'ի մահ մատնել զԲելիսար, վասն որոյ և
համարէր հնարիւք կորստեանն Բելիսարայ հա-
ճոյ լինել նմա, և ունել շնորհս 'ի սպառ առաջի
Յուստինիանոսի։ Սա ինքն 'ի հիւանդութեան
կայր, սակայն անվտանգ՝ որպէս ասացաքս։ Յուս-
տինոս հանդերձէր արշաւել յորս, հեռի 'ի մայ-
րաքաղաքէն կալով զաւուրս բաղումս։ Այն
ժամ՝ պատեհ կալաւ Կերսէս առ 'ի կատարել ան-
յապաղ զապիրատ խորհուրդս իւր։ Կաշառա-
կուրծ արար 'ի սինկլեր խուժանէն արս իբր հա-
րիւր՝ խռնել զբանտիսն Բելիսարայ, աղաղակել
և խռովայոյզ բանս բարբառել։ Յաւելան 'ի նո-
սա և այլք ինքնայորդոր, և վաղվաղակի աճեաց
ամբոխն և բազմացաւ յոյժ յոյժ. և փութա-
ցեալ յայնժամ Կերսեսի առ ինքնակալն, նկա-
րագրեաց նմա զաղմուկն զայն իբր ահագին և բազ-
մավտանգ։ Բ.ադանին որ մերձ կայր ինքնակա-
լին, նախանձորդ Բելիսարայ, պատսպարան եղև
խորհրդոցն Կերսեսի. և սա կարևոր եցոյց փու-
թալ վաղագոյն զառաջս առնուլ չարեացն, որ ոչ
միայն նախճիրս արեան՝ այլ և արհաւիրս ապըս-
տամբութեան սպառնայր ինքնակալութեանն։
Բ.ւ յաւելեալ աշխատաւորել վասն ամենայնի, եթէ
միայն տացի նմա իշխանութիւն հանել զԲելի-
սար 'ի բանտէ, և աքսորել ընդ ծով 'ի տար աշ-

խարհ։ Այ եթէ ժողովուրդն գիտասցէ, ասէ,
թէ ոչ ևս է Բելիսար 'ի մայրաքաղաքիս, 'ի բաց
դիցէ զամենայն յանդգնութիւն, և ապա յիս
յանձն՝ ածել զնոսա 'ի զգաստութիւն։ Բայց
լռեաց Կերսէս զխուժադուժ անգթութիւնն, զոր
պատրաստէր հիքին Բելիսարայ։ Ինքնակալն զար-
հուրեալ, ոչ գիտելով զանգթութիւն և զհեռ
Կերսիսի, և տեսանելով զնա միշտ անյոյզ 'ի
կրից, զիջաւ դիւրայորդոր յաղաչանս նորա, և
հրովարտակաւ ետ նմա զամենայն իշխանութիւն
'ի գործել և 'ի հրամայել 'ի մայրաքաղաքին, 'ի
կամս նորա ապաստան արարեալ զբախտ Բելի-
սարայ՝ համարելով զաքսորանաց և եթ նորին տալ
վճիռ. քանզի յաւել իսկ բացատրել՝ թէ տա-
բագիր 'ի բաց վարեսցի ըստ պահանջել առաջի-
կայ վտանգին, խնայելով 'ի կեանս նորա որ ինչ
դէպ և տացէ։

Բ.նողորմն Կերսէս առեալ զայս հրաման, ետ
հանել 'ի բանտէ զԲելիսար, խաւարեցուցեալ
զաչս նորա մի ևս տեսանել զտիւ։ Բ.ւ ապա բա-
ցեալ զդրունս բանտին, ետ հրատարակել ժողո-
վրդեան զպատուհաս և զչու Բելիսարայ։ Բ.հաս
անդր և ինքն նոյն հետայն հանդերձ սպառազէն
հզօր գնդաւ. յորմէ զահի հարեալ սասանեցաւ
ամբոխն։ Բ.այս գործ անգթութեան, որ 'ի վե-
րին երեսս թուէր ճարտար քաղաքավարութիւն,
ազդեաց յոյժ 'ի նա. քանզի 'ի պակուցանել ո-
րով և է իւիք զամիին, դիւրին է նուաճել զնա.

երկիւղ և զարմանք անդէն և անդ շինուցանէն 'ի նմա և զկարի իսկ արդարացի ցասումն, և պատրաստ է նա 'ի մեծարել յորմէ երկնչին, և զարմանալ ընդ որ պակուցանէն զնա։

Յաւեաց յոյժ ինքնակալին ընդ գործն անգութութեան. և այնպէս վշտացեալ 'ի սրտէ, մինչև զայրանալ ախտին հիւանդութեան։ Իսկ զՅուստինեայ ոչ է մարթ պատմել զցասումն, յորժամ իրազեկ եղև նա ամենայնի 'ի դառնալ իւրում։ Արդմնեցոյց նա զինքնակալն 'ի փառս իւր, սաստկապէս սպառուհասել զՆերսէս. քայց ինքնակալն ոչ կամելով կորուսանել զզօրավարն՝ որ միայն մնայր նմա, շատ համարեցաւ աքսորել զՆերսէս. զի 'ի պատուհասել անդ խորհէր և հեռացուցանել զնա յերեսաց նախկին յարձակմանց ցասմանն Յուստինեայ։ Դիմեաց գնաց՝ Ներսէս փութանակի յամարանոց իւր 'ի տեղի աքսորանացն, քաջայոյս 'ի վաղ ընդ փոյթ հրաւիրանս դարձին, և կեղծիս ինն համարելով զզայրոյթ Յուստինեայ առ 'ի ցուցանել ժողովրդեան՝ զի չէր ձեռն նորա ընդ թշնամիս քաջի առնն սիրելոյ ազգին։ Բայց արքայորդին տեղեկացեալ զողջունէ կնոջն և դստեր Բելիսարայ, խորհեցաւ գնալ խոստանալ նոցա խնդրելոյ վրէժ 'ի Ներսիսէ. այլ դիտաց զի նոքա ընդ առնուլ զգոյժ աղետիցն՝ մեկնեալ էին 'ի մայրաքաղաքէն։ Փութացաւ յամարաստան անդր նոցին, այլ եհաս նմա վիշտ անհնարին. զի էին անդ սպասաւորք ևեթ նոցին

սգաւորք, որք չէին իսկ տեղեակ ուր տիկնայք իւրեանց տառապեալք երթեալ էին ծածկել զսուգ դառնութեան իւրեանց։ Յուստինոս անմխիթար մնացեալ՝ այնչափ խոյզ և խնդիր արար, մինչև գիտել զի երկոքին նոքա մայր և դուստր չարաբաստիկ ապաւինեալ էին առ տիկին Սոփիա քոյր Տիբերի, հարսն իմաստնոյն՝ Արքալայ դաստիարակի իւրոյ և Տիբերի։ Այլ նոյնժամայն առեալ ընդ իւր զսպարակիրն, շտապ տագնապաւ փութայր առ բամբիշն՝ յորմէ հրաժարեալն էր առնուլ իւր կնութեան, և որոյ խրոխտագոյնս կանխեալ էր զհարսանիսն՝ զի մի գուցէ առ հարկի քաղաքավարութեան ստիպեսցի տալ նմա զաջ իւր։

Հասեալ 'ի խաղնամեայ դուռն ամարանոցի բամբշանն, յառաջ մատեաւ վահանակիր արքայորդւոյն և ազդ արար զգալուստ նորա։ Բացաւ դուռնն, և դղրդիւն մեծ լսելի լինէր 'ի տանն անդ. անց արքայորդին յարկաց 'ի յարկս, և նըկատեր 'ի դէմս ամենեցուն արհաւիրս և ծանրաթախիծ տրտմութիւն, և զարմանայր տեսանելով զամենեսեան 'ի թուխս համակեալ։ Խառնվեալ ապշեալ չիշխէր բարբառել. քայց ետես անդ և ծանեաւ զմի 'ի վահանակրաց Տիբերի, որ միայն չունէր հանդերձ սգոյ. և կոչեցեալ զնա առ ինքն, եհարց. Ո՞ւր է տէր քո։ Իսկ նա պատասխանի ետ. Արդ իսկ եհաս այսր։ Այլ ոչ ինչ այլ յաւելեալ՝ խոյս ետ 'ի քաց։ Յայնժամ

'ի կասկած անկեալ արքայորդւոյն՝ թէ գուցէ 'ի
նեղքս անդ ընդ Անաստասիայ էր Տիբեր, խռո-
վութիւն նորա 'ի սրտմտութիւն փոխեցաւ. և
ձեպեալ 'ի գնացս, իշխանական սաստիւ հրա-
մայեաց առաջնորդին՝ ածել զինքն փութանակի
'ի բնակութիւն Անաստասիայ։ Պատասխանի ետ
առաջնորդն. Հրաման է ինձ ազատել զարքունա-
կան փառս քո՝ մնալ վայրիկ մի 'ի դահլճի աստ։
Արքայորդին ասէ. Որ է Նարբալ։ Նա առաջ-
նորդն պատասխանի. Լեցի ընդ երեկս աստ։ Նա
զայս ասացեալ, մեկնեցաւ 'ի բաց։ Յայնժամ
արքայորդին զչարեալ և զզրգռեալ, փոխանակ
զկայ առնլոյ անդ 'ի դահլճին՝ մղեաց եբաց զմի
'ի դրանց անտի, և անց արշաւակի ընդ կրկին
սրահս. և 'ի յառաջադէմն փութալ՝ ահա տիկին
մի անծանօթ, 'ի հանդերձս սգոյ զատորոտան
քարշելով, էլ նմա ընդ առաջ։ Ի տեսիլ հրաշա-
լի և մեծավայելուչ գեղոյ նորա արձանացեալ է-
կաց Յուստինոս, և տիկինն ասէ. Կաց մնա արք-
քայորդիդ, մի լեցի քեզ յառաջ ևս մատչել, խը-
նայեա 'ի թշուառութիւն և ակն ած օրինաց ա-
պընջականութեան. չարաբաստութիւն աստ ընդ
հովանեաւ իմով եգիտ իւր ապաւէն, և պահե-
ցից զվերջին ապաստան նորին։ Արքայորդին ա-
սէ. Դու ինքն իցես տիրուհի ամարանոցիս։
Տիկինն ասէ. Այո, տէր, ես ինքն եմ առաքի-
նւոյն Նարբալայ հարսն։ Արքայորդին ասէ. Դու
ինքն իցես ապա տիկինն Սոփիա. այսպէս ուրեմն

հեռ քոյին ընդ իս պաշտպանեմ սիրոյ՝ որ 'ի թըշ-
նամանս է ինձ. կամիմ տեսանել զԱնաստասիա,
կամիմ խօսել ընդ նմա։ Տիկինն ասէ. Ոչ, տէր,
մի լեցի քեզ տեսանել զնա։ Արքայորդին ասէ.
Խորհեաց, տիկին, ընդ ուր խօսիսդ։ Տիկինն ա-
սէ. Ոչ այլ ինչ պարտ է ինձ խորհել՝ բայց զօ-
րիորդն հէք, յիս ևեթ ապաստան։ Արքայոր-
դին ասէ. Ո՞չ ամենևին, յաճախեալ վիշտ
նորա 'ի տեսիլ քոյին։ Արքայորդին ասէ. Հա-
զորդ ուրեմն համարի նա զիս անգթութեան գործ-
ծոյն. պարտ է ինձ և կամիմ զվրիպակ կարծիսն
հերքել։ Նա զայս ասացեալ՝ յառաջ մատչէր.
բայց տիկինն արձանացեալ առ դրանն բազկա-
տարած, ասէ. Արքաքէն ընդ գոնդ սպառազէն
հատեալ անցանիցես. այլ վստահ եմ, տէր, զի
բազուկք տկար կանացիք բաւեսցեն կալ քեզ
ընդդէմ։ Յայնժամ ընկրկեալ արքայորդին, և
պշուցեալ 'ի նա սրտառուչ հառաչանօք ասէ. Նա
որպէս, իցէ թէ ազնուական այդմ առաքինու-
թեան մնայցես յինէն, որ այնպիսեօք քեզ դրժ-
նեայ երանգօք նկարեալ։ Տիկինն ասէ. Նա կա-
ցի իսկ քաջ, զի ըստ բանից և ըստ ակնկալու-
թեան եղբօր իմոյ բերեմ զքէն կարծիս, և ոչ
ըստ գործոց քոց։ Արքայորդին ասէ. Դարձեալ
վերստին յաւելում, ոչ ելից աստի մինչև տե-
սեալ զԱնաստասիա։ Յայնմ վայրի մտեալ Տի-
բերի 'ի սրահ անդր ասէ. Ո՞ն էկ ապա, մուտ

'ի ներքս արքայորդիդ տեսանել զքաջութիւնքս, Եկ զհետ իմ։ Եւ զայս ասացեալ՝ անց յառաջ հանդերձ քերբն իւրով, և արքայորդին զհետ նոցա գնայր սրտաթունդ սրտատրոփ։ Ընդ ինքն ա-ղաչելեաց ընդ սրահն, և յելս սրահին 'ի բանալ դրանցն՝ գտաւ արքայորդին 'ի սենեակ մի նստ-մաստուեր համակեալ 'ի թուխս. և յոգւոց ե-հան՝ տեսանելով անդ զԱնաստասիա հերարձակ արտասուաթոր 'ի ծունկս անկեալ առ դադաղս շուրջ բոլորեալ 'ի ջահից։ Յայնժամ ասէ ցնա Տիբեր. Ընդուն անողորմ, ահա դիակն հիքն տիկնոջ մեծին Բելիսարայ։ Հատաւ գոյն երե-սաց արքայորդւոյն, և զդողանի հարեալ՝ եկաց վայրիկ մի 'ի լռութեան. և ապա դառնակսկիծ ակնարկեալ 'ի Տիբեր, ասէ. Եւ համարիցես զիս եղեռանն Գերսիսի գործակից։ Տիբերիոս ասէ. Թաւ լիցի. այլ պարտ էր քեզ պաշտպանել ըստ-վերհաղնն հարստահարեալ, և պատսպարան լի-նել նմա։ Յայնժամ արքայորդւոյն երդուեալ 'ի խնդրել զվրէժ նորա, ոստեաւ էլ 'ի բաց 'ի բազ-մատխուր տեղւոջէ անտի, 'ի մտի եդեալ հալա-ծական վարել զԳերսէս մինչև 'ի ծագս երկրի։ Բայլ իբրև դարձաւ 'ի Կոստանդնուպոլիս, աղդ եղև նմա զի Բուլղարք՝ որք յետ դաշանցն կռե-լոյ ընդ Բելիսարայ 'ի խաղաղութեան կային՝ զէն առեալ յայնժամ, դիմեալ 'ի գաւառս ինքնակա-լութեանն, և զվրէժ մեծի առնն խնդրեալ էին առաջնորդութեամբ Բգդալայ արքային իւրեանց

և արքայորդւոյ։ Եւ զոյգք ահա հասեալ պա-կուցին զամենեսեան. զի Բուլղարք ընդ հասա-նել 'ի գաւառս անդր՝ յարձակեալ յամարանոց Գերսիսի, և տիրեալ անդ՝ սպանեալ իսկ էին զնա յեղակարծումն անպատասպար զնա գտեալ։ Բգդալայր անողորմ և քինախնդիր, 'ի հատա-նել իւրովի զգլուխ զօրավարին, ասացեալ էր նը-մա զայս բան սոսկալի. Յուշ լիցին քեզ անդը-թութիւնքն՝ զոր արարեր ընդ զօրս իմ գերեալս. յիշեա և զպատուհասն՝ զոր ետուր կրել մեծին Բելիսարայ, և ընկալ արդ զհատուցումն ապի-բատութեանց քոց։ Բ. յսպես զրկեցաւ ինքնակա-լութիւնն 'ի զօրավարէն մեծէ՝ որ կարողն էր յայնմ վտանգաւոր ժամանակի լինել նմա զօրա-վիգն. բայց սակայն ոչ ումեք ցաւեաց ընդ մահ նորա։ Այն են ախտք և կիրք, որ նսեմացուցա-նեն առ հասարակ զփառս քաջայաղթ արու-թեանց և զգերապանծ հանճարոյ։

Յուստինոս և Տիբեր կացին զօրավարք. և բաժանեցին Բուլղարք զգօրս իւրեանց 'ի բա-զումս առաջս. և 'ի վանել զնոսա երկոցունց ար-քայազանցն աստի, նոքա անտի յառաջ խա-ղային։ Ի միում ուրեք Ճակատու յարձակեցաւ Յուստինոս ընդ երեկս 'ի վերայ որդւոյն Բգդա-լայ, այնմ զոր երբեմն գերի կալեալ Բելիսարայ և մեծախոհութեամբ առ հայր իւր զնա դարձուցեալ էր։ Յուստինոս արկ զնա տիգահարեալ 'ի մէջ դիականց 'ի Ճակատուն տեղւոջ, ուստի

խոյս ետուն թշնամիք, և ոչ գտաւ յայնժամ դիակն նորա։ Եւ յետ այսր յաղթութեան դարձան արքայազունքն 'ի Կոստանդնուպոլիս. բայց Ռուլղարք ընդ մեկնելնոցա 'ի բաց՝ գումարեցան դարձեալ 'ի պատերազմ, և մերթ աստի մերթ անտի եղեն յաղթութիւնք։ Յաւելան միւս ևս աղէտք. զի Փարաս հինաւուրց զօրագլուխ Ռելիսարայ դարձ արարեալ յաքսորանացն, վտարանջեցոյց զմի 'ի գաւառաց իբր 'ի վրէժխնդրութիւն Ռելիսարայ։ Երկոքին արքայազունքն, բարեկամք և նախանձորդք իրերաց 'ի փառս և 'ի սէր, արիութեամբ քան յաջողութեամբ վերամարտիկլինէին պառակտեալ ինքնակալութեանն՝ որ մերձ էր 'ի կործանումն։ Այլ թողեալ զնոսա աստ, դարձցուք 'ի վեհաշնն՝ որ միայն կարող եղև հանձարովն իւրով և համբաւով և հմտութեամբ պատերազմի և խորհրդականութեամբ խափանել զահագին չարիսն, և կամ գէթ զդիմադրնդակ հետևանաց նոցին առնուլ զառաջս։

ԳԼՈՒԽ Թ.

Բելիսար առաջնորդեալ յարքայէն Վանդալաց, յաջողակի ուղևորութեամբ եհաս յերկիրն Կարքեդոնի։ Ընդ յանկարծ զդողանի հարեալ Գելիմեր, զկայ էառ և ասէ. Ահա 'ի դաշտն Տրիկամերոնի կամք, իմն Ռելիսար. կարիցէս

դու անխիղճ ընդ երկիրդ ընթանալ, ուր այնչափ բազմութիւն մարդկան ընդ հարուածովք քովք և ընդ իմովքս տապաստ անկան։ Նախ քան զգ-ճակատամարտն հրաւիրեցեր դու զիս 'ի խաղաղութիւն, այլ ես մերժեցի զհրաւէրն։ Եւ խոնարհեալ յերկիր, յաւել. Տէր և արարիչդ բոլորից, դու ինքն համարս յինէն պահանջեսցես զարեանցն՝ որոց գնացին ճապաղիք ընդ դաշտս աւերեալս։ Ամենայն ինչ աստ յառնէն ընդդէմ ինձ ոսոխք. երկիրս ապականեալ պահանջէ յինէն զառատութիւն հնձոյն. կամուրջքս կործանեալք, քարինք և փլատակք բողոք բարձեալ զաւերանացն՝ դատախազեն զիս զամբարտաւանութենէ իմմէ։ Ամենայն թագաւորեցի. աստ զօրավարեալ սպառազէն բանակի մեծի, միայնակ արդ տեսանեմ զարև յետ այնքան բազմութենէ զօրաց զինուորելոց ընդ ինև, զորոց կոխեն արդ ըզգերեզմանս ոտք իմ։ Դատաւոր երկնաւոր՝ զո՞ր պատասխանի ունիցիմ տալ 'ի յանդիմանել քո ինձ զայսչափ ոճիրս իմ։ Յայնժամ Ռելիսար 'ի լուր հառաչանաց նորա մորմոքեալ, ձգեաց զձեռն իւր 'ի նա և ասէ. Օ՜այս դու, ով Գելիմեր, առ բազումողորմն Աստուած տացես պատասխանի, զի անյիշաչար գտար առ Ռելիսար, և եղեր նմա առաջնորդ և զօրավիգն։

Յառաջ անցեալ հասին երկոքին քաջազունքն 'ի ստորոտ լերինն Պասուկայ. անդ Գելիմեր ցօղեաց արտասուս 'ի յիշատակ սիրելւոյ հարսին

իւրոյ հիքին Հռիփսիմեայ։ Եւ յառաջ ևս անցեալ՝ զտեղն էառ առ պարիսպս Կարքեդոնի կոծանեալս, ուր երբեմն Մարիոս տարագիր լեալ՝ բազմէր յաւերակս համբաւատենչն քաղաքի, որ ասպիսերն ընդ Հռովմայ 'ի փառն իւրում։ Բայց արքայն Մանդալայ ընկեցեալ յաթոռոյ, առաջ նորդելով յաղթականին իւրում՝ զաչացուի և փախստականի, ընծայեր անդ բազմահիւսիլ ևս տեսիլ կենցաղականացս յեղափոխութեան։

Մինչ ևս անգամ զկայ էառ Գելիմեր 'ի տեղւոջ՝ ուր երբեմն արքայիցն Մուղրեաց ապարանք վաղեմիք կառուցեալ էին, և ուր յայնժամ ոչ այլ ինչ էր տեսանել՝ բայց մացառախիտս և քարևկիր այրեացաւեր նշխարս հոյակապ շինուածոցն։ Գելիմեր 'ի մացառուտս անդ հատեալ ուղղի, կառեաւ առընթեր միոյ 'ի սեանց տապալելոց, և նստաւ ընդ Գելիսարայ 'ի վերայ նորա։ Եւ հայեցեալ շուրջ զիւրև, ասէ. Ոչ անծանօթ են ինձ սիւնքս և կոթողք. աստ էր ինձ տեղն այգուրելի, և անդ գահոյք արքունականք։ Այլ ո՞ւր իցեն արդ թիւնապահք և ոստանիկք՝ որ շուրջ կային զնովաւ, ո՞ւր ստրուկքն պատրաստք 'ի լուր հրամանաց իմոց, ո՞ւր փառքն և պատիւ՝ որոց ելէ հետամուտ։ Հնչէին որմքս առ իս 'ի ձայն դրուատեաց. որ նախանձընդդէմք իրերաց պանծացուցանէին զքաջութիւնս իմ և զփառս, կորեան առհասարակ անիծանելով զփառասիրութիւն իմ։ Բաղ, լռէ արդ ամայի և անբնակ

վայրս այս՝ ուր հրապոյրք նուագաց և յուշկապարկաց դայլայլիկք երբեմն զիս մոլորեցուցանէին. ոչ ևս այլ ինչ լինի աստ լսելի, բայց գիշերայնոյ ողբերգակ հաւուն Ճիչ բազմատխուր։ Այրքս այսոքիկ ոչ ինչ այլ ընծայեն արդ աչաց իմոց, բայց զահարկու պատկեր պատիր ընթացից, փշալից շաւղաց, և չարաթոյն սողնոց դարանելոց ընդ ծաղկամբք։ Ո՞ն ապա ելցուք աստի, մի յառաջ ևս ընթացուք ընդ աւերակս՝ ուր սրսկապանքն էին ինձ հարսանեկանք. մի ևս ընդ վայրն ծածկեալ ընդ արօտիւս, ուր 'առագաստ հարսին իմոյ էր և որրանք որդեկիս։ Նո՞ Ճիս ևեթ երկուս աստանօր տնկեցից, դրոշմեալ 'ի կեղևս նոցա։ "Մարդկեղենիս փառաց բարեբաստութիւն խաբուսիկ „։

ԳԼՈՒԽ Ժ.

Հասին երկոքին քաջազունքն 'ի վայր բնակութեան Կալեբայ։ Ընդ էր տեսանել ամենայն ուրեք զցանկալի առատութիւն ընդ համեստութեան կցորդեալ, արգասիք վաստակոց և անեղծութեան կենաց։ Գեղեցկութիւն դաշտացն և մշակութիւն 'ի մէջ անարօր և խոպան երկրին՝ վկայէր զանխոնջ խնամն տանուտեառնն, տարածութիւն ոչ յոյժ ընդարձակ ցանկապատի նորա՝ նշանակ էր չափոյիցն, և որ 'ի ներքս ապա-

ռանիցն պատշաճ վայելչութիւն՝ ցուցանէր զբա-
ռեկարգութիւն ընտանեացն և զժրութիւն։ Դե-
լիմեր եդիտ անդ ընդունելութիւն ոչ որպէս փա-
խստական ոք կողոպտեալ յամենայնէ, այլ իբր
թագաւոր հզօր բաշխող մեծութեանց, և իբր
տէր սիրելի։ Մի յորդւոց Կալեբայ այն ինչ դար-
ձեալ էր 'ի Կոստանդնուպօլսոյ, և մանրապա-
տումարար Բելիսարայ որ ինչ 'ի վեր անդր ա-
սացաքն, և սփոփեցաւ Բելիսար 'ի լսելն՝ զի ոչ
'ի հրամանէ Յուստինիանոսի և Յուստինեայ կը-
րեալ էր զպատուհան, և զի Ընտասիա կայր
ընդ խնամօք տիկնոջն Սոփիայ և առաքինասիրին
Տիբերի. այլ ընդ մահ կնոջ իւրոյ Ընտոնիայ 'ի
խորխորատեցաւ, մանաւանդ զի 'ի վշտաց անտի
լեալ էր վաղամեռիկ։ Սակայն քաջալերեցաւ ո-
գի նորա վհատեալ 'ի լսել զվտանգն՝ յորում
կայր ինքնակալութիւնն յետ մահուն Կերսիսի,
և զի Փարաս տիրէր 'ի գաւառի ուրեք վտարան-
ջելոյ, և զի միաբանեալ ընդ նմա թուէին Ռուշ-
ղարք և ուխտ իսկ եդեալ ընդ նմա լռելեայն։
Բայց վասն անհաւատարմութեանն Փարասայ
յոգւոյ հանեալ, ասէ. Աչ, և համարի նա
այսպէս զվրէժ իմ խնդրել. օ՛ն անդր, չկամիմ
լինել պատրուակ փառասիրութեան տիրադրուժ
նենգաւորի։ Ղու արասցուք, ելցուք 'ի նաւ, եր-
թիցուք առ ապստամբսն, ածցուք զնոսա 'ի զղջ-
նութիւն։ Հաճոյ թուեցաւ Դելիմերայ խոր-
հուրդն այն, և հաստատեցան ուղղոյ լինել՝ դա-
դարեալ անդ զաւուրս քանի մի։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Եւ յելանելն 'ի նաւ անդր Բելիսար ընդ
Դելիմերի՝ սկսաւ գոհանալ զնմանէ միւսանգամ,
բայց Դելիմեր կարձեաց զխօսս նորա ասելով.
Որ ինչ ինձ կրօնք հրամայէին, արարի ընդ քեզ
'ի սկզբան. այլ որ ինչ արդ յետ բարեկամու-
թեանս մերոյ գործեալ՝ չիցեն իսկ թերևս արա-
ժանի վարձուց առաջի տեառն։ Այլ ես ոչ դար-
ձայց յանապատ մինչև լեալ քեզ պիտանի. ե-
կիցս այսուհետև զհետ քո ուր և երթիցես, պահ
կալայց քեզ, և եթէ պէտք իցեն՝ պատերազմե-
ցայց իսկ վասն քո. ո՛տայր ինձ զէն առնուլ վերբս-
տին, և արկանել զայն փառօք 'ի կիր 'ի պաշտ-
պանութիւն հարստահարելոյ առաքինութեան։
Կրկնեալ անդրէն Բելիսարայ, ասէ. ԱչՀԱՂ բախ-
տիս՝ զոր այնչափն մեծարեի. բարեկամն նա ինձ
սուտս յաձախեաց, որոց անխոհեմութիւն փա-
ռասիրութիւն և մնապարծութիւն մատնեցին զիս
'ի կորուստ. իսկ չարաբախտութիւն եբեր մա-
տոյց ինձ բարեկամ վեհ, որոյ սէր գերաշխարհիկ
աղնուացուցանէ զկեանս իմ, և խրախուսէ զբա-
ջութիւն։ Այլ արդարև կաթողին սիրով յարե-
ցաւ Բելիսար 'ի վեհաղնին մեծախոհ 'ի քնէ, և
որ 'ի թեւս կրօնից ամբառնայր 'ի վեր քան ըզ-
քնութիւն։

Լու նաւարկեալ անալէկոծ 'ի մրրկաց, հասին յաջողութեամբ 'ի նաւահանգիստն։ Յիշէցին յայնժամ երկոքին քաջազունքն, զի յառաջ քան զամն քսան քանի այլազգ յափանց անտի մեկնեալ էին. Բելիսար յաղթող, և Պալիմեր գերի, ձգելով նորա յաղթանակաւ զկետ իւր զայն՝ որ արդ առաջնորդէրն նմա, և որ 'ի վերնախնամ տեսչութենէ ազատարար իւր կացեալ էր։ Բելիսար վաղընդ փոյթ դիմեաց 'ի գաւառն վտարանջեալ, ուր իշխէրն Փարաս. և անց անխափան հանդերձ առաջնորդաւն ընդ ամենայն ուրեք ծերունին կոյր, որպէս մուրացիկ ոք։ Զև հասեալ առ ապստամբս՝ երեկոթեցին 'ի գեղջ ուրեք առ կալուածով մեծաւ. ուր հիւրընկալեալ մարդասիրութեամբ, մտին 'ի սրահ ուրեք անփառունակ, ուր կայր զօրական ոմն ամաց իբր երեսուն և հնգից, տանուտէր տանն, մայր նորա և կին, եղբայր մի նորա կրտսեր, և մանկունք երկու կամ երեք։ Շուրջ եղեն գերդաստանիկքն առհասարակ զերկոքումբք ուղևորքն, որ թուէին վաստակաբեկք յուղեւոյ. իսկ զինուորն բազմեալ առ սեղանով, ձեռն 'ի ծնօտի 'ի յարմուկն յեց, կայր անշարժ խորասուզեալ մտայոյզ 'ի վարանս։ Ոչ ոյք անկան, և եհարց Պելիմեր զԲուլղարաց՝ թէ իշխէ՞ն տակաւին սահմանաց, որոց տիրեալն էին։ Պատասխանի ետ պառաւն. Ո՛չ, իշխեն տակաւին, և ո՞ գիտե թէ յաջողեսցի արդ վանել զնոսա. չէք մեր Բելիսար՝, որ զդէմ կարաս-

ցէ ունել նոցա. զինուորեն զամենայն մանկունս մեր, ահա և կրտսերագոյն որդեակն իմ մեկնեսցի յաւուրս յայսոսիկ յինէն։ Պատասխանի ետ Բելիսար, և ասէ. Ա՛յլ աղէ, զինչ կարևորագոյն կայցէ ձեզ քան զդէմ ունել ամենայն զօրութեամբ արշաւանաց խուժադուժ ազգին։ Յայնժամ գոչեաց զայրագին զօրականն. Լու ո՞ առաջնորդեսցէ մեզ. դադարէ հայրենասիրութիւն, ուր չէք հնար պաշտպանելոյ հայրենեաց։ Բելիսար ասէ. Ո՞ւրինչ խօսիս, աղէտք չկարեն երբէք խզել զզօդ սրբազան. այլ մանաւանդ... ԿարՀեաց զինուորն զբանս նորա, և ասէ. Հատաւ յոյս մեր, մեռաւ Բելիսար. գաղանք մարդադէմք խաւարեցուցեալ զաչս նորա, և սպանին զնա։ Բելիսար ասէ. Թուի ինձ թէ զինուորեալ իցէ քո ընդ Բելիսարաւ։ Ո՞ զինուորն ասէ. Ա՛յո, եղէ ես 'ի պատերազմին՝ որ յՄփրիկէ, զինուորեալ կամակար 'ի հնգետասանամենի. ընդ ձեռամբ նորա անշուշտ էր յաղթութիւն, և ամենայն ոք վստահ չտեսանել կենդանեաւ իւրով այլ ինչ բաց 'ի յաղթանակէ, և այս բաւական էր 'ի քաջալերել զկարի իսկ վատասիրտս, և անվնեհեր զզօրականն առ հասարակ կացուցանել։ Եղէ ես ապա և յերկոսին պատերազմունսն ընդդէմ Պարսից. այլ իբրև գիտացի զի փրկիչ ինքնակալութեանն ձգեալ էր 'ի բանտ, թողի զզինուորութիւն։ Բայց քաջն Փարաս զօրագլուխ նորա տակաւին կենդանի է։ Բելիսար ասէ. Փա-

բաս տիրադրուժն։ Օ՚ինուորն ասէ. Ոչ տիրա-
դրուժ, այլ վերժինդիր Բելիսարայ. այլ ես
հաստատեալ եմ՝ ի մտի որ ինչ պարտ է ինձ առ-
նել. լեր իսկ զինէն ամբաստան, եթէ այսպէս
հաճոյ իցէ քեզ. գնամ զինուորել ընդ դրօշակաւ
զօրագլխի սպարապետին իմոյ։ Եւ զայս ասա-
ցեալ՝ յարեաւ խոժոռ, և փութայր ելանել՝ ի
բաց. բայց Բելիսարայ զդայեալ զոտնաձայն նո-
րա, ասէ. Կաց մնա։ Օ՚ինուորն ասէ. Ո՚ի խրն-
դրես յինէն։ Բելիսար ասէ. Դառնալ զինուո-
րել ընդ զօրս արքայորդւոյն։ Օ՚ինուորն ասէ.
Դառ լեցի, զի նա թշնամի էր Բելիսարայ։ Բե-
լիսար ասէ. Ելերսէս ամենայն չարեացն գտաւ
պարտական, և ոչ այլ ոք։ Օ՚ինուորն ասէ. Ող-
ջամբ մնա։ Կրկնեալ անդրէն Բելիսարայ, և ի-
խանօրէն սաստիւ ասէ. Կաց մնա, խոստացիր
ինձ գնալ գումարել ընդ զօրս ինքնակալին, պա-
տուիրեմ քեզ զայդ։ Ի սաստէ անտի յապուշ
հարեալ, զկայ էառ զինուորն. զենէր նկատէր
բազմայոյզ մտօք զծերունին՝ յոր ցայն վայր հա-
զիւ ակնարկեալ էր. և որչափ տիպք կերպարա-
նաց նորին՝ ի միտս իւր զարթնուին, այնչափ յա-
ճախէին զարմանք և ամբոխումն սրտի նորա. ըզ-
գողանի հարեալ, այլ յայլմէ լեալ, սակայն տա-
կաւին երկմտեր։ Ղեցին վայրիկ մի երկաքան-
չիւր, և ապա կրկնեալ անդրէն Բելիսարայ ասէ.
Օ՚օրականդ քաջ, եկ լուր դարձեալ զօրավարին
քում, զորոյ ողբաս դու զմահ. եկ տուր նմա եր-

գումն հաւատարմութեան առ թագաւորն քո,
նա ինքն Բելիսար է որ ընդունի զերդումն քոյին։
Յայնժամ զինուորն յիմարեալ առ խնդին գո-
չեաց. Դէպք սքանչելի, կենդանի ուրեմն է դեռ
ես Բելիսար. երանի՛ մեզ, փրկութիւն է ինքնա-
կալութեանս։ Ի լուր բանիցս յարեան հրճուա-
նօք յոտն կացին մայր նորա և կին և կրտսեր
եղբայր, մեծարանս իմն բնաւորապէս բերելով
վերհազինն՝ որ չտեսանէր ինչ, և ակնկառոյցք՝ ի
նա կարկեալ կային անշարժ։ Եւ յաւել զօրա-
կանն. Դո՛ւ ինքն ապա, զօրավարդ իմ, զրկեալ
՝ի լուսոյ նժդեհ անապաւէն՝ ի ձև մուրացիկ շըր-
ջելով, դո՛ւ ինքն հրամայես ինձ զինուորել թա-
գաւորի՝ որ մատնեացն զքեզ՝ ի զայրոյթ թշնա-
մեաց քոց։ Պատասխանի ետ Բելիսար, և ասէ.
Ա՚յո, այսպէս վայել է սիրել զհայրենիս. եր-
կիւղ և ցանկութիւն ստրկաց են յորդորիչք. չէ
և չէ իսկ զինուոր, այլ անարգ վարձկան, որ վա-
ճառէն զարիւն իւր և լքանէ զդրօշակ պարտեալ
և վատաբախտիկ։ Ա՚յր ազատ և արի կայ ան-
դրդուելի՝ ի դասու իւրում, գիտելով քաջ զի
ոչ իւիք հաղորդ գտանի յաղթանակի մարտին՝
բայց անդրժելի երդմամբն՝ ի ժուժկալել պնդա-
կազմ ընդդէմ արկածից, և՝ ի գուն գործել ելն
աղագս գտանելոյ։ Ա՚րիութիւն նորա յաճախէ
՝ի ձախողակս, և առաքինութիւն նորա ամբառ-
նայ և զօրանայ՝ ի կրել զանիրաւութիւնս։ Ա՚զէ,
արժանն իցէ ինչ դրժել պարտուց անձին և հրա-

ժարել՝ի փառաց՝ այնու զի նիւթեն չարք զկորուսան մեր, և զի թագաւոր զեղծեալ իշխանութեամբ իւրով՝ բռնանայ ընդ մեզ։ Պարտ իցէ ինչ զանարգանս, զոր ցանկան և հնարին նախանձորդք հասուցանել մեզ և չկարեն, մեզէն զայն ածել զմեօք։ Զուր ինձ սիրեցեալդ իմ, տժգոհ իցես դու և զայրացեալ, ահա քեզ սփոփանք Ճշմարիտ. լեր մեծանձն, յաղթեա անձին, ընթա արիաբար ընդ գեղեցկանսեհն արահետ պարտուց և առաքինութեան. մի թուլանար՝ի վերհինաՃեմ ասպարիզիդ, վայրկեան մի դուլ և դադար լքուսցէ զքեզ. և ոչ այլազգ ոք անդ խրախուսէ, բայց որ արշաւասոյրն և անդուլ ընթանայ։ Յայնժամ ձայն եբարձ զօրականն. Ուսասիկ կամ, զօրավարդ իմ. ահա երդնում դնալ յարել՝ի զօրս ինքնակալին, ածել անդր և զեղբայրն իմ կրտսեր։ Եւ Ռեվիսար յաւել. Լսնամեսցեն երկինք զընտանիս քո մինչև դարձցիս. պաշտպանեսէ տէր՝ քաջ և հաւատարիմ հպատակաց։ Իսկ նա՝ի ծունր իջեալ առաջի Ռեվիսարայ, և եդեալ զաջ իւր՝ի ձեռին նորա, երդուաւ անդրէն երդումն հաւատարմութեան անլուծանելի։ Եւ Ռեվիսար գիրկս արկեալ նմա, ասէ. Եւ ոչ՝ի բարեբաստիկ աւուրս յաղթութեանց իմոց և փառաց զօրավարական իշխանութիւն մատոյց ինձ երբեք այսպիսի հրաճուանս և գոհութիւն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Եւ երեկոթեայ անդ Ռեվիսար՝ի գերդաստանին. և՝ի մեկնել նորա անտի՝ մատոյց առ նա զօրականն զորդեակ իւր եռամեայ, օրհնել զնա։ Եւ ապա յուղարկ երթեալ ընդ զօրավարին իւրում մինչև յելս սահմանաց գեղջն, բաժանեցաւ՝ի նմանէ առ՝ի գնալ յարել անյապաղ՝ի զօրս ինքնակալին։ Իսկ Ռեվիսար անց անխափան յերկիր ապստամբացն. և հասեալ՝ի մայրաքաղաք երկրին՝ ուր հրամայէրն Փարաս, արգելաւ՝ի բարապանաց։ Յայնժամ ասէ. Ես ինքն եմ Ռեվիսար, ածէք զիս՝ի հրապարակ քաղաքիդ, և ազդ արարէք Փարասայ։ Ընպատում եղև ցընծութիւն, բացան դրունք, կարգեցան կացին զօրքն երկուստեք՝ տեղն տալով նախնոյ զօրավարին իւրեանց անցանել ընդ մէջ. ՝ի լուր աղաղակի ցնծութեան նոցա դիմեաց անդր ժողովուրդն յամենայն կողմանց, և յական թօթափել հնչեաց ընդ քաղաքն ամենայն անուն Ռեվիսարայ փառօք։ Տեսիլ նորանշան բազմամբոխ ժողովրդեանն եկաց այրն մեծ, և յաղէտս անդ՝ յոր հալածիչք նորա հասուցեալ էին զնա՝ թուէր վերկենցաղեալ սքանչելապէս, և եկեալ՝ի հայցել վրէժխնդրութիւն, զոր խոստանային նմա բարձրաբարբառ։ Յասու�անհնարին կցորդեալ

'ի սիրտս ամենեցուն ընդ աղիողորմ զթութեան և ընդ արդի յիշատակ նահատակութեանց քաջազնին, այնպիսի ինն արքեցութիւն խառն ընդ սիրոյ և ընդ կատաղութեան արկ 'ի նոսա, մինչև Բելիսարայ չկարել 'ի սկզբան անդ սանձահարել զայն։ Օ յինուորք երկոտասան առեալ զնա 'ի ձեռաց Պելիմերայ՝ բազմեցուցին 'ի վերայ նիզակաց իւրեանց ընդ իրեարս աղխաղխելոց, և տարան զնա յաղթանակաւ 'ի հրապարակ քաղաքին։ Եւ էր 'ի հրապարակի անդ պատուանդան մեծ, ուստի զպատկեր ինքնակալին կործանեալ և խորտակեալ էր ապստամբացն։ 'ի նմա եդին զԲելիսար։ Ընդդ 'ի վերայ եհաս Փարաս, շուրջ պատեալ 'ի բազմութենէ թիկնապահաց։ անխաղաղասէրս այս և փառատենչիկ այր, որոյ բազում անգամ հրապուրեալ էր յապստամբութիւն ըզԲելիսար, դժկամակեր ընդ գալուստ նորա, այլ հարկ էր նմա ցուցանել զամենայն ուրախութիւն և հրճուանս։ զի ոչ այլազգ յաջողեալ էր նմա ապստամբեցուցանել զժողովուրդն և զզօրս, բայց ցուցանելով գութ և կարեկցութիւն ընդ սիրելին նոցա, և նախանձ խնդրելոյ զվրէժ առնն մեծի։ Եւ դարձեալ զի թէպէտ խիթայր յուղղութենէ և 'ի լաւութենէ նորա, այլ կարծէր 'ի հարբուտահարութեանցն կրելոց շրջեալ արդեօք զմիտս նորա, և ակն ունէր խոնարհեցուցանել զնա 'ի յոյս վրէժխնդրութեան և մեռանելոյ 'ի գահոյս։ Սմին իրի Փարաս, կրտսերագոյն յոյժ քան զԲելիսար, յանձն էառ թողուլ 'ի վերհաղն ծերունին զկէս իշխանութեան իւրոյ՝ յաներկեւան յաջողութիւն ամենայն խորհրդոց իւրոց։ Կացեալ առ պատուանդանաւն, խօսեցաւ առ ժողովուրդն և ասէ։ Ահա վերհաղնն Բելիսար, սիրելիք իմ, ահա որ բազում անգամ փրկեացն զայս ինքնակալութիւն։ Յիրաւի սրտմտեալ էք դուք ամենեքին ընդ փոխարէնն, զոր սա ընդ այնքան բարերարութեանց և ընդ մեծաց վաստակոյն ընկալաւ։ և ոչ վայրապար կացուցիք դուք զսա 'ի պատուանդանիս փոխանակ պատկերին խորտակելոյ։ Արդ կամիք զի իմաստութիւն և առաքինութիւն թագաւորեալ, քաւեսցէ զչարիս անիրաւութեան վատութեան և ապերախտութեան։ կամիք զի Բելիսար յաջորդեսցէ բռնաւորին։ Աղաղակեցին ամենեքեան։ Այո այո, կամիմք զայդ։ սատակեսցի բռնաւորն, կեցցէ Բելիսար, կեցցէ Փարաս։ Յայն ամբոխ շփոթի Բելիսար անշարժ արձանացեալ, չետ և ոչ մի ինչ ցոյց գոհութեան կամ դժկամակութեան։ վասն որոյ կարծէր Փարաս հաւանել նմա 'ի սրտէ ընդ եղեալսն ամենայն։

Եւ իբրև սակաւիկ մի ամբոխ աղաղակին զինջաւ, շարժեաց Բելիսար զձեռն առ 'ի խօսել։ և լեալ անդէն լռութիւն մեծ, ասէ։ Օ յինուորք կիցք իմ և ամենեքին դուք բնակիչք քաղաքիս, զորս զերծուցի 'ի վերջին պատերազմունս իմ յամենայն արհաւրաց մարտի, ընդունիմ գոհու-

թեամբ զնուէրս շնորհակալեաց ձերոց, և մտադիւր յանձն առնում հրամայել ձեզ. այլ խընդրեմ 'ի ձէնջ անշուշտ առհաւատչեայ զհնազանդութեանդ ձերոյ, երդումն անլուծանելի։ Զգաղակեցին ամենեքեան և խնդրէին 'ի նմանէ զորէնս երդմանն։ Յայնժամ կոչեաց Բելիսար զԳելիմեր ուղեկից իւր, որ ընդ իւր միշտ ածէր զաւետարանն սուրբ, և ասէ. Բ՛ռ ինձ այսր սուրբ զմատեանդ, ոչ յանարժան ինչ պէտս արկից զայդ 'ի կիր։ Եւ ընկալեալ զայն ամբարձ 'ի վեր, և ասէ. Երկիւղածք տեառն, ահա սուրբ աւետարանս. 'ի վերայ սորա տացէ Փարաս երդումն յանուն ժողովրդեանդ և զօրականին և յանուն իւր, 'ի վերայ մատենիս կենաց և ճշմարտութեան խոստասցի հնազանդել ինձ յամենայնի և անյապաղ։ Եւ ձայն բարձեալ ամենեցուն, հրաւիրէին զՓարաս տալ զխոստումն սուրբ. սահմանեցին և ևս վեց այր 'ի ժողովրդենէ և վեց 'ի զօրաց, երդնուլ 'ի միասին ընդ Փարասայ։ Եւ նոյնժամայն Փարաս ընդ երկոտասան արսն յառաջ մատեաւ առ Բելիսար. և ծունր եդեալ առաջի նորա, ձեռն արկին 'ի սուրբ աւետարանն՝ զոր առաջի արար նոցա Բելիսար. և ետ նոցա 'ի ձայն բարձր առնել երդումն հզօր և ահաւոր, և ապա ամենայն բազմութիւնն գոչեաց և ասէ. Օ՛նոյն և մեք առհասարակ խոստանամք և ուխտեմք։ Յայնժամ Բելիսար ասէ. Լ՛ուարուք ինձ արդ. ամենայն իշխանութեամբս՝ զոր ինձ

շնորհեցէք, քաղաքացիք և զօրականք, հրամայեմ ձեզ դառնալ՝ 'ի հնազանդութիւն, դիմել 'ի գթութիւն ինքնակալին մերոյ. և ես խոստանամ ձեզ հաշտութիւն առ 'ի նմանէ։ Լսեր բանիցս հատաւ գոյն երեսացն Փարասայ, և մռնչէր 'ի սրտմտութենէ. իսկ ամբոխն յապուշ հարեալ կարկեալ ընդարմացեալ կայր. և յաւել Բելիսար, զի սուրհանդակք կրկին երթիցեն փութանակի 'ի բանակ երկոցունց աղբայազանցն, աղաչել զնոսա 'ի դիմաց իւրոց՝ լինել միջնորդս հաշտութեան ընդ ապստամբսն հէքս և ընդ ինքնակալն. և ապա եհարց՝ եթէ կայցէ՞ն յերդմանն, հնազանդել բանիցն։ Լուաղունք ոմանք աղօտաձայն ետուն պատասխանի. և իբրև սկսանէր Փարաս խօսել, կարձեաց զբանս նորա Բելիսար, և դարձեալ առ ժողովուրդն գոչեաց ուժգին. Բայեք զաչս ձեր, զի 'ի խաբս ըմբռնեալ կայք. զվրէժ իմ կարծէիք խնդրել, այլ ոչ ոք եհարց և տեղեկացաւ զողջունէ իմմէ, և ոչ հէք ընտանեացն իմոց ձեռն տալ հոգացաւ ոք. զինէն էր խնդիր, և ես լքեալ կայի. որ զվրէժ իմ խընդրէր, անարգէր զանուն իմ՝ գործի եղեռանց առնելով զայն. որ սիրէն զձեզ թուէր, տիրադրուժս զձեզ կացուցանէր. և որ ընդդէմ համազգեաց զինուորէրն զձեզ, վաճառէր զձեզ

1 Այս երդումն ոչ ըստ պատմագրաց է, այլ ստեղծական յիմոցս մտաց, և արդի ողբերգութեանն Բելիսարայ քերթող յեռու զայս 'ի քերթուածին։

թենամեաց։ Բ. յապես հնարին ձգել զՀետ զաղգ, զոր խաբանօք և եթ մարթ է հրապուրել։ Ո՛հ, որ յորդորեն զձեզ յապստամբութիւն և յընտանի պատերազմն, մի՛ ինչ երկբայիք՝ զի զոհեն զձեզ ժանտաժուտ փառամոլութեան իւրեանց։ Յուշ լիցին ձեզ բարերարութիւնք ինքնակալին. որ գեր 'ի վերոյ քան զթերութիւնս նորա են, և թերութիւնք նորա ոչ ինչ աւելի քան զվրիպանս։ Մի՛ իանդգամայն ասացեալ, Գերսես միայն եկաց ինձ դատաւոր և դահիճ. ինքնակալն 'ի վըտանգ մահու, և արքայորդին 'ի բացեայ չկարէին գոլ հաղորդք անգթութեանց նորա։ Բելիսար լիցի նոցա հաւատարիմ մինչ 'ի շունչ վերջին։ Օ՜ օրականք քաջք, որոց երբեմն հրամայէի պարծանօք, պայծառացուցէք զալիս և զաղէտս նախնոյ զօրավարին ձերոյ. թէպէտև ստուերք նորին իցէ արդ, թէպէտ անկեալ յիշխանութենէ և 'ի զօրութենէ և աղքատաձև առաջի ձեր կայ, լերուք աղնուահոգք և անարգամեծարք՝ հնազանդել բանից նորա։ Օ՜ երծուցին զիս երկինք սքանչելապէս 'ի շիրմէ առ 'ի լսելի առնել ձեզ զբարբառ իմ, մի՛ լինիք անլսողք սմին. խառնեցէք զուխտս ձեր ընդ իմն՝ մաղթել վասն կենաց ինքնակալին մերոյ, և փրկութեան աշխարհիս՝ յորում նա ինքնակալէ։ Բ. աղաղակեցին միաբարբառ զօրականն և ժողովուրդ. Կեցցէ ինքնակալն, կեցցէ Յուստինիանոս։ Եւ իբրև գոչիւն աղաղակին ոչ դադարէր զքառորդ ժամու, Գելիմեր ասէ

ցԲելիսար. Ո՛ անաչէի զքեզ, արդ ծանեայ և ըզժողովուրդդ։ Բ. աղ. եթէ չէր իմ զեղծեալ իշխանութեամբս իմով ձգել զնա յապստամբութիւն, կէին ցարդ կին և որդի իմ, և խաղաղութեամբ հանգչէի այսօր 'ի գահոյս, զի ոչ ևս կեայ Լըզերիկ։ Պատասխանի ետ Բելիսար և ասէ. խորհեաց զայն ևս, բարեկամ քաջ, զի գերաշխարհիկ առաքինութիւն քոյին ներգործէ 'ի յիս. եթէ չէիր դու, քինախնդիր լինէր Բելիսար. և չէ մարթ խնդրել վրէժ 'ի թագաւորէ, առանց մատն լինելոյ հայրենեաց։ Հաւատարմութիւն իմ, փառք ալեացս, և վերհագոյն յաղթանակ կենաց իմոց 'ի քէն են։

Բայց Փարաս մինչէր առ զայրոյթ սրտին. սակայն գիտաց զի եթէ ոչ թագուցանէր կեղծեօք զկիրս սրտին, անշուշտ հասանէր նմա կորուստ։ Յանհնարին վարանսն պատրաստեալ իւր անդրէն վաղ ընդ փոյթ համախոհս, առանց ընդ բանս ինչ ածելոյ դիմեաց գիրկս էարկ Բելիսարայ սիրալիր բանիւք, դրուատիս գովութեան յամենեցունց ընկալեալ։ Բելիսար այր մեծախոհ ոչ ինչ կասկածեալ զդաւոյն, ընկալաւ խանդաղատանօք զՓարաս. յիշեաց զառաջին սէր իւր ընդ նմա, և բերկրեր ընդ ածել իւր զնա յառաքինութիւն։ Իսկ նա լուեցոյց զամբոխն առ 'ի տալ անդրէն բարձրաձայն զերդումն հաւատարմութեան, զոր յառաջ տուեալն էր յանպատրաստից. և հնչէին անդրէն ծափահար զը-

ղուատիք։ Ապա աղաչեաց Փարաս զԲելիսար գը-
նալ հանդչել առ իւր. և նա յանձն էառ, յայտ
ևեթ արարեալ զի յետ ժամու կամէր մեկնել։
Ուղեկից եղեն նմա զօրքն և քաղաքացիք մինչև
'ի տուն անդր Փարասայ, որ առաջնորդէր. իսկ
Գելիմեր չեմուտ անդր, այլ եկաց արտաքոյ խառն
ընդ բազմահոյլ ամբոխին։ Բելիսար խօսեցաւ
յերկար ընդ Փարասայ, և 'ի սերտ սրտէ գովեալ
զաղնուականութիւն մտաց՝ զոր ցուցանէր նենգ-
գաւորն, զիրկս էարկ նմա տալով ողջոյն հրաժա-
րական։ Այլ մատոյց նմա Փարաս կառս և թիկ-
նապահս, ածել զնա մինչև յամարանոց տիկնոջն
Սոփիայ մտերմին և խնամակալուի Անաստասիայ.
և աղաչէր ընդունել զնուէրն։ Ընկալաւ զայն
Բելիսար. և կոչեցեալ զուղեկից իւր, զոր 'ի լուր
այլոց անուանէր միշտ Արկադէոս, եկ ընդ նմա
անկասկած 'ի կառս անդր։ Հարկ եղև նմա շրջան
առնուլ ընդ քաղաքն ողջոյն նախ քան զելն 'ի
քաց, 'ի բարբառ ցնծութեան ընակչացն ամե-
նեցուն. գորգս ընդ արահետս փութայլն սփռել,
և բազմութիւն 'ի պատուհանս խռնեալ՝ տեղային
ծաղկունս և պսակս զկառքն. և զօրք 'ի ռազմ
դասակարգեալ, խաղային գնային հնչմամբ փո-
ղոց առաջի կառացն։ Բելիսար յայսքան փառս
իւր ժպտելով ասէ ցԳելիմեր. "Ունայնութիւն
ունայնութեանց,,, զոր Գելիմերի երբեմն սրբա-
մտութեամբ ասացեալն էր նմա յորժամ կա-
պեալ զհետ յաղթական կառաց նորա գնայր։

Այլ ասաց Գելիմեր պատասխանի ետ Բելիսա-
րայ և ասէ. Ոչ այդպէս, զի որ յառաքինութե-
նէ ստացեալ փառք տնօրէնք բարեաց՝ իսկապէս
են փառք, և օրէն իսկ է մարդոյ անձկալ այնպի-
սում բարերար փառաց՝ զոր օրհնեն զուարթունք
երկնից, որպիսի են փառք՝ յոր դու արդ վայելես։
Ա՛ռ զրունս քաղաքին Բելիսար արձակեաց ըզ-
թիկնապահ զօրսն 'ի բաց՝ որք ինքնամատոյց լի-
նէին ուղեկցել ընդ նմա. և առեալ ընդ իւր
հեծեալս ևեթ երկուս յառաջնորդութիւն, զորս
Փարասայ տուեալ էր նմա, մեկնեցաւ 'ի քաղա-
քէն։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ժամն տասն նսեմաւ ուղևորքն երկոքին յա-
ռաջ խաղացեալ, հարցին ցառաջնորդս՝ թէ որ-
չափ տակաւին առաջի կայր նոցա Ճանապարհ։
Ասքա ետուն պատասխանի՝ ընդ հուպ հասանել։
Բաբախէր սիրտն հայրենի 'ի գորովոյ և 'ի հրը-
ճուանաց յածել զմտաւ, զի ահա զիրկս արկա-
նելոց էր սիրելեաց դստերն՝ զոր ոչ ևս կարէր տե-
սանել, այլ զանուշակ ձայն նորա ևեթ լսել. իսկ
յիշատակ հարսին իւրոյ դժնեայ դառնութիւն
ընդ քաղցրութիւն բերկրանացն խառնէր։ Այլ
'ի Ճեպել նորա զընթացս կառացն՝ որ յամրա-
յոյժ նմա թուէին, ետես Գելիմեր զի մի յառաջնոր-

դայն մեկնէր 'ի նոցանէ. Եհարց զվասն երն, և պատ 'ի պատ ընկալեալ պատասխանի՝ անկաւ 'ի պէսպէս կասկածանս։ Յայնմ վայրի ետես 'ի բացեայ Հրագունս բազումս, և ազգ արար Բելիսարայ. իսկ նա գոչէր 'ի ինդութենէն. Հասաք արդեօք տիկնոջն Սոփիայ. ով դստրիկ իմ սիրեցեալ Պնաստասիա, քանի հիացումն և գոր՝ 'ի սիրտ քո անկցին։ Եւ մինչ դեռ բանքն 'ի բերան նորա կային, լսելի եղև գրնդիւն երիվարաց ահեղ. կասեցին կառքն, և միւս առաջնորդն փող եհար։ Հարցանէր Բելիսար՝ թէ զինչ իցէ այն, այլ ոչ ոք տայր նմա պատասխանի. և ահա յանկարծ շուրջ եղեն զկառքն հեծեալք սպառազէնք։ Օրագլուխ հեծելազնդին մերձեալ 'ի Բելիսար, ասէ. Բրգոյ ծերունիդ մատնեցար 'ի ձեռս մեր, այլ մի՛ ինչ երկնչիր, ապահովագոյն առ մեզ կացցէ քան առ իւրն մեծն Բելիսար։ Յայնժամ գոչեաց Բելիսար. Ա՜ատ և դրուժան Փարաս։ Բպա յաւել. Եւ ո՞ւր տանիք զիս։ Ասեն. Յամարանոց Կերսիսի ոսոխին քո։ Ասէ. Ի ձեռս Բուլղարաց կամ ապա։ Ասեն. Այո, ամրացեալ կամք 'ի տեղւոջս յայսմիկ, ասա՛ ընակէ արքայն մեր Բրգալ, և ընկալցի զքեզ փառաւք՝ որ երբեմն դարձուցերդ 'ի նա ազատարէն զորդի իւր։ Եւ վարեցին զկառն յառաջ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Եւ յետ սակաւ միոյ հասին կացին կառքն 'ի դաւիթ ամարանոցին. և ածաւ Բելիսար ընդ իւրումն առաջնորդի 'ի սրահ մի, ուր մնայր նմա արքայն Բուլղարաց։ Որ 'ի տեսանելն զնա՝ 'ի գութ շարժեցաւ, և ասէ. Բզգ քո խուժադուժս զմեզ կոչէ, և այսպէս ահա վարձատրէ ինքն զառաքինութիւն և զբարերարս իւր. եկ արդ առ մեզ, զի արդարակորովք և շնորհակալութ եմք մեք։ Բզնուականութեանդ քում երախտապարտ գտանիցի վասն ազատութեան որդեկիս. և արդ կորուսի զնա միակ որդի իմ, տապաստ անկեալ ընդ հարուածովք վայրենւոյն Յուստինեայ։ Բայց աղէտք չետուն ինձ 'ի մոռացօնս արկանել զբարերարութիւն քո. ոչ շատացայ մեծարել զալիս քո և զթշուառութիւն, այլ կամիմ խնդրել զվրէժ քոյին. վաղ իսկ կարձեցի 'ի կենաց զանիծապարտն Կերսէս. պահեմ քեզ վրէժխնդրութիւն ինձն պայծառագոյն և արժանի փառաց քոց։ Եւ յարուցեալ թագաւորն յառաջ մատեաւ 'ի դուռն մի, եբաց զայն, և եմոյծ ընդ իւր 'ի ներքս զԲելիսար և զԲելիմեր 'ի կամարակապ սենեակ մի մթին՝ ուր լապտեր երկաթի կայր 'ի վառ, և 'ի խորս անդ պատանի շղթայակապ յորմն, և յանդիման նորա խարոյկ մեծ բոցածաւալ 'ի

կրակարան պղնձի։ Մատեաւ Աբդալ զայրագին առ պատանին հէք, և ասէ. Սարսիր հրեշդ մարդադէմ, տես զԲելիսար, որ երբեմն զոհ լեալ քեզ, և արդ տեր քոյին։ Այլ եհարց Բելիսար թէ ո՞ այն էր՝ ընդ որում խօսէրն, և Աբդալ ետ պատասխանի. Ընդ Յուստինեայ թշնամւոյ քո և սպանողի որդւոյս, զոր բախտ զինուց մատնեաց երէկ՝ ի ձեռս իմ։ Այլ ոչ ևս տեղի տուեալ պատասխանւոյ, ձգեաց՝ ի կրակարանէ անտի երկաթ շանթացեալ, և ասէ զԲելիսար. Ո՛ը ըշշամիտս զայս հրաշէկ, և հատո դմին զպատուհասն՝ զոր ետ քեզ կրել. ես ինքն օգնեցից բաղկի քում։ Սոսկացաւ Բելիսար, և յետս ընկրկեալ ասէ. Ներսէս ետ ինձ զպատուհասն։ Աբդալ ասէ. Սակայն և դա թշնամի քո էր։ Այլ Յուստինոս անվեհեր և արհամարհոտ դիմօք ասէ. Այո, և ոչ ահ արկանեն յիս սխալանքն դորա և կատաղութիւն քոյին։ Յայնժամ Բելիսար կարձեաց զխօսս նորա, և ասէ ցարքայն. Ո՛հ տեր, զինչ կամիս առնել. զենուլ զանկեալն՝ ի գերութիւն, դրժելոյ օրինաց պատերազմի, ըստուերսնծս ամենայն պայծառ քաջութեանց քոց ածել։ Յուստինոս ասէ. Ա՛ռեա Բելիսար, դադարեա՝ ի տարապարտ պարծանաց անյիշաչարութեան. գիտես իսկ զի անօգուտ է բարբառդ այդ առ խուժադուժս։ Դարձեաց Աբդալ զայրագին. Այո ամենևին, խուժադուժ եղեց քեզ, ես ինքնին պատուհասեցից զքեզ։ Այլ զայս ասացեալ՝

դիմեաց՝ ի Յուստինոս։ Ո՞՛չ ցաւագին եբարձ Բելիսար, և Դելիմերի աճապարեալ յանդուգն զանձն՝ ի մէջ էարկ ընդ արքայն և ընդ Յուստինոս, և ասէ. Ոչ ներեմ քեզ յայդ անարգութիւն զարքունական փառս քո ի՛ջուցանել։ Յապուշ հարաւ Աբդալ ընդ համարձակութիւն առնն անծանօթի. բայց վաղ սթափեալ յապշութենէն, և յաւելեալ և ևս յանդգնութեամբն նորա՝ ի զայրոյթ, ասէ. Դպիրհ դու, ՝ի բաց թող զանմտութիւն։ Դելիմեր ասէ. Պարտ է արանց մեծախոհաց, ո՛ Աբդալ, արագ իմանալ զիրեարս. հայեաց յիս ուշիւ, և ծանիցես զիս հաւասարակից քեզ, եթէ ոչ բախտիւ, սակայն ազգաւ և աստիճանաւ և արիութեամբ։ Աբդալ ասէ. Դո՛ւ հաւասարակից իմ։ Դելիմեր ասէ. Աբքայն Ալանդալաց հէք, նա է որ խօսի ընդ քեզ։ Յայնժամ Աբդալ և Յուստինոս գոչեցին միաբարբառ. Դելիմե՛ր ես դու։ Իսկ նա ասէ. Այո, ես ինքն եմ Դելիմեր. մուռացօնս խնդրեցի յանապատի անցելոց մեծութեանցս իմոց. անդ ընկալայ զԲելիսար լքեալ թողեալ յամենեցունց, և եղէ նմա բարեկամ և առաջնորդ։ Այլ Բելիսար՝ ի վերայ ածեալ, ասէ. Դելիմեր՝ զոր ընկեցի յաթոռոյ, նա ինքն է արդ միակ ապաւէն իմ. նա կեցոյց զիս, նա խնամարկեաց զկեանս՝ զոր յաւել ինձ. և ո՞ առաջի նորա կարասցէ կալ անողոքելի։ Կրկնեալ անդրէն Աբդալայ, ասէ. Հիացումն աքանչելի, արքայն Ալանդալաց առաջ

նորդ և պատսպարան Բելիսարայ. պանծացիր, Գելիմեր, զի դու առաջին 'ի մահկանացուաց հիացուցեր զիս մեծախոհութեամբ քով. չկարեմ հասու լինել առաքինութեան քո, այլ զարմանամ ընդ այն։ Գելիմեր ասէ. Լուկ, լաւ ես ինչ քան զզարմանս արա, նմանող լեր ինձ։ Աբդալ ասէ. Չկարեմ զայդ։ Բելիսար ասէ. Ո՛հ տեր, վեհանձնութիւն քո ոչ կարասցէ ընդդէմ դառնալ վեհ օրինակիդ. զմտաւ ած զի ես հասուցի նմա զամենայն չարիսն, և նա նուիրեաց ինձ զանձն իւր. յիս տեր, միակ առհաւատչեայ ընորհապարտ գոհութեան առ երախտիս ազատութեան որդւոյդ 'ի քէն պահանջեմ, որ փառաւորեսցէ զանուն քո յազգայ յազգս մինչ 'ի սպառ։ Աղատեցո զարքայորդին, պահանջեալ փրկանս որ ինչ և կամիս։ Աբդալ ասէ. Ոչ այդպէս, դանձս ինձ մեծամեծս խոստացաւ Իշխանն Տիբեր, և դալ ինքնին արկանել զանձն 'ի շղթայս փոխանակ սիրելւոյն, այլ չառի նմա զայն յանձն. չկամիմ այլ ինչ փրկանս, բայց զվարկ Բելիսարայ և արքային Վանդալաց։ Նա ասէ ցՅուստինոս. Աղատեալ ես արքայորդիդ, երթ վաղվաղակի. արձակեմ զքեզ 'ի բանակ քո առանց և ոչ մի ինչ պայմանի։ Չկարէին Բելիսար և Գելիմեր յայտնել բանիւ զցնծութիւն և ըզգոհութիւն իւրեանց. լուծան կապանք Յուստինեայ. իսկ նա խրոխտ և անխռով, և ոչ ընդհակառակս առ թագաւորն Բուլղարաց և առ ա-

զատարարս իւր մատուցեալ, մեկնեցաւ 'ի բաց թիկնապահօքն հանդերձ՝ որ տուան նմա։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Գիշեր դեռևս խորին էր. և յետ ժամու միոյ կասկած 'ի միտս անկաւ Յուստինեայ, թէ գուցէ գունդ թիկնապահացն փոխանակ ածելոյ զինքն 'ի բանակ իւր դարան գործէին նմա, եդ 'ի մտի խուսել 'ի ձեռաց նոցա։ Գնայր նա հեծեալ յաւաջոյ. և յանկարծ մտրակ 'ի կուշտ արարեալ երիվարին ընդ անտառախիտն կոյս՝ սանձարձակ երագամէտ ծածկեցաւ յաչաց։ Նա թիկնապահացն խառվեալ անյոյսք 'ի նսեմաստուեր գիշերին 'ի թաւամուր անտառին հետազօտել զնա, դարձան յետս յամարաստան անդր։ Բայց Յուստինոս հարուստ մի ժամ թափառեալ գտանել ըզհետս ելից և հասանել 'ի բանակ իւր, առաւել ևս մոլորեր։ Երբև արևն զծայրս հարկանէր, գըտաւ նա յեզերս անտառին մերձ յարահեան. փութացաւ անդր, և ձիավարեալ ընդ այն ասպարէզս երկու կամ երիս, չետես զոք ուրեք. և խելամուտ եղև զի անմարդի լեալ էր երկիրն 'ի պատերազմէն, և հիւղք թողեալանքնակք՝ թէպետև անաւերք. տխուր լռութիւն տիրէր ընդ վայրն, ուր երբեմն երգք դստերաց գեղջկից և սրինգք հովուաց հնչէին։ Դաշտորայք չև ևս

խոպանայեալք, այլ հունձք 'ի նոսա անտես լեալ, ընծայէին աչաց ողորմ տեսարան. դժնիկ ընդ ուրայս ամբառնայր, և ցորեան ատոք ցամաքեալ անհունձ և սիռեալ ընդ երկիր՝ ոչ առ այլ ինչ էր պիտանացու, բայց 'ի Ճարակ հաւուց։ Ամենայն ուրեք կոխան ոտից լեալ արգասիք երկայն և տաժանաւոր վաստակոց, յայտ առնէին զի մարդոյ 'ի բաց վարեալ 'ի պետութենէ իւրմէ առ 'ի գնալ 'ի խնդիր մահու՝ հրաժարեալ էր յամենայնէ որ զկեանս տնօրինեն։ Ո՞ւր էր մանկտին, ո՞ւր կանայք և ծերունիք։ Ասէր յայնժամ ընդ միտս իւր Յուստինոս. Աղո՛ւկ, և ընդէ՞ր աղէտք անմարդի կացուցին զվայրս զայս աւաղելի, ուր բընութիւն սիռէ զգանձս իւր 'ի պէտս ո՞ւմ։ Տկարութիւն և անմեղութիւն, որոց պարտ էր պաշտպանել զկորով, ընդէ՞ր և նոքա մատչին զոհք պատերազմի։ Յայսպիսի խորհուրդս յուզէր Յուստինեայ սիրտն աղնուագոյն, թէպէտև խրոխտ. կարեկցութիւն նորա չէր գորովական, այլ արիական և խորազգաց։

Խաղայր գնայր նա ընդ ուղին անծանօթ հանդարտաքայլ, քանզի երիվար նորա պարտասեալ հաղիւ կարէր կալ յոտին։ Ու մտեալ յանտառ ուրեք՝ յորոյ դալարագեղ կանաչութիւն թուէր ինայեալ աչնայնոյ, զկայ էառ յանկարծակի հիացմամբ մեծաւ 'ի լուր քաղցրաձայն մանկտւոյ։ Դիմեաց 'ի ձայն երգոցն, և ետես 'ի ծայր անտառին շինուած մեծ նորակերտեալ։

Լաջ 'ի ձիոցն, կապեաց զնա 'ի մի 'ի ծառոց, և մատեաւ 'ի շինուած անդր միայնաւոր. բացան դրունք նորա, և եմուտ 'ի բուրաստան մի մեծ ծաղկալից՝ որ ձգէր տարածանէր առաջի ընդարձակ Ճակատու դաստակերտին։ Այս քան զևս յաՃախեցին զարմանք նորա ընդ տեսարանն՝ որ անդ նմա յանդիման լինէր։ Ծերք և պառաւունք գրեթէ առհասարակ ուրթնամեայք նստեալ կային անդ 'ի բազմոցս առ դաստակերտիւն, ունելով 'ի ձեռին փունջս ստուարս ծաղկանց կապեալս գունագոյն նարօտիւք։ Շուրջ զբուրաստանաւն էր ծառաստան մատաղատունկ, և 'ի վերայ միոյ միոյ 'ի ծառոց անտի մանուկ իբր եօթնամեայ բոլորիւք ծաղկանց պՃնեալ և յեցեալ 'ի կողով ծաղկալից տերևազարդ։ Ու բնովք ծառոցն կային մատաղ օրիորդք պայծառազգեացք ծաղկապսակք՝ ուղեշս ծաղկաւէտս 'ի ձեռին բերելով։ Օ՞ւարթ ցնծութիւն 'ի դէմս բոլորից փայլէր։ Յայնժամ ասէ ընդ միտս իւր Յուստինոս. Բաբէ, ո՞ր աւետաւոր զուարթուն ած այսր 'ի մի վայր յանծանօթ տեղւոջս զալիս և զարբունս, զծերունի անզաւակեալ, և զմանկտի որբացեալ. քանի՞ գանձ անտես վերնախնամ տեսչութեանն ծածկեալ յանապատի աստ, քանի՞ աղէտք բուժեալ, քանի՞ սիրոփանք թշուառութեան հայթայթեալ։

Ազգ եղև նոցա զի հիւր հասեալ էր, և մի 'ի պառաւանց՝ որ հանդիսադիր տօնիցն թուէր՝ մա-

տեաւ առ աղքայորդին , հրաւիրել զնա 'ի տուն անդր՝ հանգչել և առնուլ կերակուր : Իսկ նորա ոչ ինչ տուեալ ծանօթս , եհարց և ասէ . Ո՞յր է բնակարան դաստակերտդ այդ : Պառաւն ասէ . Աստան որբոց և աղքատ կանանց , ծերոց և տկարաց անզաւակելոց 'ի մարտի : Այնկոյս անտառիս է գիւղ ամայի , որոյ բնակիչք պատանիք և արք կարողք 'ի վաստակ՝ երթեալ առ հասարակ 'ի զինուորութիւն , հաւք նոցա և տառապեալ հանք այսր գան ապաստանել : Իսկ այրեաց մատաղամարց և սանդեայ մանկանց նոցա այլուր է ապաւէն : Շինուածքս այսոքիկ յաւուրց միւսոյ պատերազմին սկսեալ , և նախ քան զվերջինս զայս կատարեցան : Աղքայորդին ասէ . Այս ո՞ր ձեռն բարերար կառոյց զդոսա : Պառաւն ասէ . Տիկինն Սոփիա : Աղքայորդին ասէ . Սոփիա քո՞յր Տիբերի : Պառաւն ասէ . Այո ամենևին : Աղքայորդին ասէ . Այս ուրեմն 'ի սահմանս բամբշանն Սոփիայ կամք , և մերձ է այսր ամարանոց նորա : Պառաւն ասէ . Այսր և անդր քառեակ ասպարէզք են , և տօն է նորա այսօր , արդ իսկ գայցէ նա այսր : Այս մինչ դեռ բանքն 'ի բերան նորա կային , հնչեաց շառաչիւն կառաց , և մանկտին և ծերակոյտ առհասարակ գոչեցին ցնծութեամբ . Ահա հասեալ գայ , ահա հասեալ գայ : Այնժամ պառաւն վերատեսուչ նոցին ձայնեաց առ նոսա պինդ կալ յիւրաքանչիւր կայս , ընծայել տիկնոջն տեսիլ հաճոյական . և մանկուցն

հրաման ետ սփռել 'ի բարձանց ծառոց ծաղկուն առ ոտս նորա , և օրիորդաց նուիրել նմա զփունջս ծաղկանց , նուագելով ամենեցուն 'ի միասին ըզպարերգութիւնն զոր ուսուցեալ էր նոցա : Այց մանկտին ոչ ինչ միտ դնէր բանիցն , ունկնդիր լեալ 'ի շառաչիւն մոտից կառացն 'ի գաւիթ անդրը . իղձ տեսութեան տիկնոջն մոռացուն առնէր լսելութեան . մեկնեցան օրիորդք 'ի կայից իւրեանց , և մանկունք իջին ընդոստ 'ի ծառոց . և 'ի բաց արկեալ զբոլորս ծաղկանց և զսակառիս , դիմեցին ընդ առաջ տիկնոջն՝ ստունգանեալ սաստից և վշտացին սպառնալեաց վարժապետուհւոյն և ծերունեացն առ հասարակ : Այլ տրբատեցան յոյժ ամենեքին 'ի տեսանել փոխանակ տիկնոջն զանպաճոյճ օրիորդն Աղելա զմի 'ի սիրելի նաժշտաց նորին : Խռովեցաւ այլայլեցաւ Յուստինոս , և մատեաւ առ օրիորդն ընդ խառանն՝ որ շուրջ պատեալ զնովաւ հարցանէին զողջունէ տիկնոջն . և մանաւանդ պառաւն վերատեսուչ հարցուածս բազումս մատուցանէր : Պատասխանի ետ նաժիշտն և ասէ . Տիկինն չկարէ գալ առ վշտին : Պառաւն ասէ . Աչաղ , և առիմք՝ վշտացեալ : Նաժիշտն ասէ . Դարձաւ սուրհանդակն յղեալ 'ի նմանէ 'ի բանակն , և գոյժ եբեր նմա : Պառաւն ասէ . Մի՞ գուցէ իշխանն Տիբեր վիրաւորեալ : Նաժիշտն ասէ . Ոչ , այլ աղքայորդին գերի անկեալ : Պառաւն ասէ . Օրհնեալ է աստուած՝ որ ոչ թողացոյց դժնդակագոյն ինչ պա

տահար. Ժանտաժուտ ոմն ասի արքայորդին այն գող, ոչ ոք կարեկից լինի նմա։ Ղաժիշն ասէ. Բայց իշխանն Տիբեր սիրէ զնա իբրև զեղբայր։ Պառաւն ասէ. Զի՞նդ մարթի այդմ լինել, զի Տիբեր բարեաւ ոմն է։ Ղաժիշն ասէ. Տիկինն իսկ սիրէ զնա, և չկամի լսել ինչ չար զնմանէ։ Պառաւն ասէ. Ո՞ւ խոհեմութեան առնիցէ զայդ, զի գուցէ ըստ արկածից բախտին հասցէ նմա յաւուր միում ինքնակալել 'ի վերայ մեր։ Ղաժիշն ասէ. Սակայն կարի յոյժ վշտացեալ է տիկինն, և 'ի մեկնելն իմում տեսի զի արտասուէր։ Պատուիրէ նա մանկտուոյն միաբան աղաչել վասն ազատութեան արքայորդւոյն, զի վրտանգ մահու 'ի վերայ կայ նմա յանողորմ բռնաւորէն։ Յայնժամ պառաւն ասէ. Զ'ն եկայք ապա պաղատեսցուք առ տէր վասն ազատութեան նորա և զգաստութեան։

Զայս ամենայն բանս ուշ եդեալ լուաւ Յուստինոս, և ել զայրագին 'ի պարտիզէ անտի՝ եմուտ յանտառն, 'ի ձի աշտանակեաց, և ընդ շառաչիւն չուոյ կառացն անկեալ և ինքն յուղի, գնայր 'ի բացուստ զՀետնորին. և վայրիկ մի յետոյ եհաս յամարաստան անդր։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Իբրև ազդ եղև գալուստ արքայորդւոյն, բացան դրունք առ հասարակ. Էանց փութանակի մինչև լուր լեալ առ Սոփիա, եհաս մինչև 'ի բնակարան անդր նորին, և բացեալ զդուռնն վերջին՝ եմուտ 'ի սենեակ անդր յանդիման նորա։ Այլ էր անդ Սոփիա միայնակ, նուաղեալ անկեալ 'ի բազմոցի, ունելով տուփ անփակ 'ի ձեռին՝ յորում էր կենդանագիր պատկեր. Ձորձք նորա անզարդք, վարսքն անյարդար, և կերպարան նորա առ հասարակ յայտ առնէր զծանրաթախիծ վիշտ սրտին։ Զ'կայ էառ արքայորդին 'ի զնին արտասուացն, որ ի՛ջանէին յաչաց նորա. աղիողորմ և գեղեցիկ էր նմա տեսին։ Զ'գաց Սոփիա զբացումն դրանն. այլ կարծելով զոք 'ի նաժշտացն մտեալ, ոչ դարձոյց զգլուխ իւր և ոչ զաչս 'ի հայել. այլ կայր նա ակնկառոյց 'ի կենդանագիր անդր, ասելով աղօտաձայն հեկեկանօք. Աղո՛ւկ իմ Յուստինէ. և զթաշկինակն զդիմաց ածէր։ Յուզեցան գութք արքայորդւոյն, և գիտացեալ զի կենդանագիր իւր էր այն, մերձ 'ի տիկինն մատեաւ. և Սոփիայ դարձեալ յայս կոյս և տեսեալ զարքայորդին, այլ յայլմէ եղև. և կամեցեալ յառնել՝ անկաւ անդրէն նուաղեալ, և կողկողելով ասէ. Տէր բարերար, և ի՞նչ իսկ հնարաւոր, նա

ինքն է, կենդանի և աղատ։ Յայնժամ արքայորդին անկեալ առ ոտս նորա, ասէ. Ա՛յժմ խելամուտ լինիմ քանի պատուական են ինձ կեանքս. այլ աւա՜ղ, առ հարսն Ի՛սրաելայ ժպրհիմ ասել զայս։ Իսկ Սոփիա ուղխօրէն հեղեալ արտասուս ասէ. Ո՞ւանեար տէր զդառնաղէտ գաղտնիս իմ, հիացումն և խնդութիւն մատնեցին զիս։ Ա՛ր-քայորդին ասէ. Ա՜ւ զի՞նչ, զի սիրե՞ս դու զիս։ Սոփիա ասէ. Ի զուր է ծածկել այսուհետև, գիտես զամենայն զվիշտս իմ. սիրեմ զքեզ անդրստին 'ի մանկութենէ, յորում աւուր ծածկեալ յետկոյս վանդակապատ բեմի յեկեղեցւոջ սրբուհւոյն Սոփիայ, տեսի զքեզ յորդեգրութիւն յինքնակալէն ընկալեալ առաջի ժողովրդեան, յորժամ 'ի հոգևոր հանդիսին բաղմեցոյց նա զքեզ 'ի վերայ պատուանդանի գահոյիցն։ Ի՜նչ սեր ճարակեալ արծարծանէր յիս լռելեայն, և եղբօրն իմոյ գութ ընդ քեզ ևս քան զևս բորբոքեցոյց զայն։ Սակայն չիշխեցի յայնժամ յայտնել նմա զգաղտնիս իմ. այլ յետոյ ապա իբրև խորհեի բանալ նմա զսիրտ իմ, ծանեայ զի յայլմէ ումեքէ գրաւեալ էր քոյդ, և ինքնակալն ամենայն սաստիւ իշխանութեան իւրոյ բռնադատէր զքեզ ընդ իս 'ի հարսանիս։ Ոչ ևս յուսացեալ յարդարել զբարեկենդանութիւն քո, խորհեցայ գէթ չլինել խափան նմին. և պատճառեցայ զայրոյթ գոռոզութեան առ 'ի փոխանակել զանձն 'ի վերայ քո. յայտ արարի Ի՛սրաելայ

լինել կնութեան՝ առ 'ի զերծուցանել զքեզ 'ի դժնդակ հալածանացն։ Յայնժամ գոչեաց արքայորդին. Ո՞ինչ է զոր լսեմն, աւա՜ղ զի անագան տեսի զքեզ. և թէր յետ այսր դառն ծանօթութեան կարացից տեսանել զարևս. ո՞չ գիտեիր զի շատ էր երևեալ քո ինձ առ 'ի գրաւել զսիրտ իմ և զիղձս. ոչ, ոչ, այլ կամէիր դու զոհել զիս. կասկածեալ 'ի բնաւորութենէ իմմէ ծածկեիր, առ 'ի գողանալոյ զքեզ 'ի տեսութենէ և 'ի սիրոյ իմմէ. ոչ, ոչ, չէք քո սիրեալ բնաւ զիս։ Ա՜ւ զայգ ընդ բանիցս հոսէր արքայորդին ուղխս արտասուաց, հեղձամղձուկ լինէր առ գոռոզութեան, և յարուցեալ մեկնէր 'ի տիկնոջէն՝ խոժոռ 'ի նմանէ զերեսս 'ի բաց դարձուցեալ, և զաղմուկ սրտին գնայր թաղուցանել առ միով 'ի պատուհանաց։ Ա՛պա դարձեալ անդրէն հրացայտ աչօք և յուսահատ, ասէ. Ա՛ստակեալեմ յանսպառ կրից սրտիս բաղձանաց. զտարփանաց՝ որով սիրեմն զքեզ չէր իմ երբէք զփորձ առեալ. կարացի հրաժարել 'ի դստերէն Ի՛սրաելայ, այլ չէք ինչ որ կարասցէ բաժանել զիս 'ի քէն։ Սոփիա ասէ. Ա՜ւ զի՞նչ յուսաս։ Ա՛ր-քայորդին ասէ. Ա՛նել ապահարզան դժպատեհ հարսանեաց։ Սոփիա ասէ. Հրապուրես ուրեմն զիս թողուլ զայր իմ։ Ա՛յլ այնու սաստիւ և խրոխտմամբ ասաց զայս, մինչև արքայորդւոյն կարկեալ կալ և չիշխել տալոյ պատասխանի։ Ա՜ւ ապշեալ և տրխրեալ ընդ այնքան երկիւղ իւր 'ի բանից ևեթ

կնոջ, սրտասղեաց զանձն, և կրկնեալ անդրէն ասէ. Այլ կարի իսկ քաջ, ինայ քեզ ակն ունել ամենայնի ցորչափ վրիպեալ կամ յամենայն յուսոյ և չեմ տէր անձին։ Բարք սաստիկ 'ի բնէ և և սաստկացան յիս 'ի թշուառութենէ. բարեբախտութեան և եթ մարթ իցէ ամոքել զայն։ Ոչ և ես կարեմ և ոչ իսկ կամիմ մոռանալ զքեզ. վստահ 'ի սէր քո, անխափան յամենայնէ՝ խիզախեցից յամենայն ինչ, եղէց դիմադրաւ ամենայնի, և ես և ցասման քո, առ 'ի տեսանել զքեզ, առ 'ի փոխանակել զանձն իմ 'ի վերայ քո։ Պատասխանի ետ Սոփիա և ասէ. Սուգել կամեցայ որ ինչ ասի զքէն և որ ինչ 'ի քեզ տեսանի, զի նախաշաւիղ բերմունք քո պարսաւելի են միշտ, զի են միշտ բուռն և անխորհուրդ. սակայն սիրտ քո է աղնուական, և աղդէ 'ի քեզ առաքինութիւնս քեզ արժանիս՝ եթէ միայն լուիցես խորհուրդ 'ի նմանէ։ Այս է որ սիրելի առնէ ինձ զքեզ. եթէ զայս կարծիս 'ի դերև առնիցես, յոռութիւնս և եթ տեսից 'ի քեզ պարսաւելիս՝ առանց կարելոյ անբասիր առնել։ Արքայորդին ասէ. Տիցես ուրեմն զիս յայնժամ։ Սոփիա ասէ. Մի՛ բնաւ. այլ փոխանակ ամենայն կարեկցութեան իմոյ ընդ քեզ յաջորդեսցեն յիս արհամարհանք անկարեկիր։ Արքայորդին ասէ. Արհամարհանք։ Սոփիա ասէ. Այո ամենևին, զամենայն ճիգն մնաց արկից 'ի գործ առ 'ի յաղթել չարաբաստ կրից, և յաղթեցից. այլ կարօտ եղէց սփոփանաց, և չկարացից կեալ այնուհետև առանց զարմանալոյ ընդ քեզ հիացմամբ։ Արդարացո զիս առաքինութեամբ քով, որպէս զի գոնեա կարացից բերել յայտնապէս օրինաւոր մեծարանս առ քեզ։ Խոստաւորեսցես դու ընդ հուպ, և օրէն է սիրել զթագաւոր՝ որ յարդարէ զբարեկենդանութիւն ժողովրդեան իւրոյ. փառք քո յայնժամ լիցին ինձ 'ի սփոփանս։ Արքայորդին ասէ. Այլ որպէս վստահ եղէց ընդ մեծարանս քո, զոր ըստ հասարակաց կարծեաց բերիցես. դժպհի եմ ես ժողովրդեան, գիտեմ զայն։ Սոփիա ասէ. Երկնչի նա 'ի սաստկութենէ կրից քոց, այլ ոչ արասցէ նա զքէն դատաստան մինչև ամբարձեալ քո յաթոռ։ Յիս տեր, լեր կարեկցութեան իմում արժանի, և մի՛ տրտմեցուցաներ զիս՝ բռնի 'ի բաց բառնալով 'ի սրտէ իմմէ զբարեգութս գորով։ Խնդեմ իսկ երաշխաւորել, զի սիրտ քոյին յառաքինութիւն է հաստեալ. հաստատեսջիր արիաբար մի՛ ևս կեալ այսուհետև, բայց յառաքինութիւն. պանծասցի սէր քոյին՝ պատկառ կացուցեալ զքեզ առաքինութեան, և յառանձնութեան՝ ուր կատարեցից զկեանս իմ՝ լիցի ինձ ասել. խրատք իմ և գութ զվեհ բնաւորութիւն նորա ածին յերևան. համբաւ նորա ցուցանէ ինձ զսիրտ նորա. և զի հաւատարիմ է նա 'ի ընուլ զպարտս իւր, ոչ մոռասցի զիս. օգնեցի նմա 'ի փառս, և 'ի բարեբախտութիւն մեծի ինքնակալութեանն։ Ար-

քայորդին ասէ. Այս զինչ պատուիրես ինձ։ Սոփիա ասէ. Հրաժարել յինէն մինչ 'ի սպառ, և խոստանալ ինձ լսել խրատուց իմոց։ Աղքայորդին ասէ. Հրաժարէ՛ի քէն մինչ 'ի սպառ, եղ՛ուկ զինև. և ի՞նչ սփոփեցայց։ Սոփիա ասէ. Խաղաղութեամբ խղճի մտաց, սիրով ժողովրդեան, մտերիմ բարեկամութեամբ Տիբերի, և զարմացմամբն Սոփիայ։ Աղքայորդին ասէ. Ոչ ինչ խոստանամ, զի զառաքինութեանց այդպիսեաց արդեամբք պարտ է տալ զփորձ, և ոչ բանիւք մնոտեօք։ Ողջամբ մնա տիկին։ Այս զայս ասացեալ, առանց յոգւոց հանելոյ հառաչանս մի, և առանց ակնարկելոյ 'ի Սոփիա, ՀԵպ 'ի ՀԵպոյ մեկնեալ անտի եկ 'ի բաց. և խնդրեաց ձիան և առաջնորդս, գնալ անյապաղ 'ի բանակն։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Բայց Ռելիսար կրկր ընդ ձեռամբ արքային Ռուէ զարաց այլազգի լեռն հալածանս։ Կամէր Աբդալ գտանել 'ի նմա զփրկանս արքայորդւոյն, զի յուսով ստանալոց զՌելիսար հրաժարեալ էր յոխակալ վրէժխնդրութենէն քան 'ի սէր առաքինութեանցն Գելիմերայ։ Խոստանայր առնն մեծի

1 Կարի խիստ է սկիզբն տեսարանիս. և բերէ դարձեալ միւս ևս մեծագոյն թերութիւն, զոր 'ի տեղւոջ իւրում ծանուցցուք։

իշխանակից իւր զնա կացուցանել, եթէ միայն օժանդակէր խորհրդոց իւրոց, և ցուցանէր զօրինակ մարտին։ Մերժեաց զայն Ռելիսար, սոսկացեալ 'ի հրապուրանացն. ընդ որ սրտմտեալ Աբդալայ՝ դարձաւ 'ի վայրենութիւն ազգին և բնաւորութեան իւրոյ, և ձեռն էարկ 'ի սպառնալիս։ Իսկ Ռելիսար ասէ. Կարծիցես, տէր արքայ, զի երկնչիցիմ զմահ յանձն առնուլ վասն հաւատարմութեան 'ի վերայ հայրենեացս. այդ եթէ փառաւոր արասցէ զմահ իմ։ Աբդալ ասէ. Աղձատեալ ալեւոր, յուսայցես թէ արձակեցից զքեզ սա ընտանիս քո՝ ածել առ թշնամիս իմ զՀանձար և զխորհուրդս քո և զՀամբաւ. խորհեաց քաջ, ահա աւուրք հինգ շնորհեալ քեզ 'ի զգաստութիւն. եթէ նախ քան զայդ յարձակեսցին յիս թշնամիք և յաղթեսցեն, մահուամբ քով խնդրեսցի վրէժ պարտութեանս։ Մի խաբիր, ոչ փրկանս և ոչ զայլ ոք փոխանակ քո ընկալայց. և գիտեա քաջ, զի խափանեալ կացցէ ցաւուրս հինգ ամենայն կցորդութիւն ընդ թշնամիս. ոչ ոք 'ի նոցանէ կարասցէ մտանել 'ի բանակ այսր, և ոչ առաջարկութիւն խաղաղութեան լիցի ինձ լսելի մինչև քո յայտ արարեալ զխորհուրդս մտաց քոց։ Իսկ արքայն Ալանդալաց արասցէ որպէս հաճոյ է նմա, կալ աստ կամ մեկնել 'ի բաց։

Գելիմերի պատեհ առեալ զայս հրաման, կասկածելով թէ գուցէ այլ հրաման 'ի վերայ

այնը տացէ, փութացաւ մեկնեցաւ 'ի Բելիսարայ՝ առ 'ի հնարել օգնել նմա։ Այլ եհաս ձեռով 'ի բանակ ինքնակալին՝ խորհել անդ ընդ Յուստինեայ և ընդ Տիբերի թէ որպէս փրկեսցեն զԲելիսար։ Յուստինոս ոչ ինչ ընդհատ քան զբարեկամ իւր տրտմեցաւ ընդ վտանգ առնն մեծի։ Փորձեցան 'ի սկզբան անդ առնել առաջարկութիւնս արքային Բուլղարաց, այլ որպէս սպառնացեալ իսկ էր, եղեն անընդունելի. զի առ զգուշութեան կարգեալ էր առաջապահս յայլազգի զինուորաց, որ ոչ ճանաչէին զբարբառ Բուլղարաց և ոչ զՀելլէն. և ընդ տեսանել նոցա զպատգամաւորս, ազգ արարին նոցա նշանացի 'ի բաց կալ, ապա թէ ոչ՝ հարկանէին զնոսա։

Ձէր մարթ ուժգին 'ի վերայ յարձակել, առանց զհետ ձգելոյ զկորուստ Բելիսարայ։ Ձեղև հնար 'ի խորհրդեան անդ ելի աղագս գտանել 'ի փրկութիւն նորին. Յուստինոս, Տիբեր և Գելիմեր կային 'ի խոր տրտմութեան, զի և ոչ Գելիմեր այնուհետև յամարանոց անդը՝ Ներսիսի կարէր դառնալ՝ արգելեալ 'ի մոլից։ Լնուին աւուրք հինգ շնորհեալք Բելիսարայ 'ի զգաստութիւն. արհաւիրք տիրէին ընդ բանակն ողջոյն, զի ամենայն ոք գիտէր զվտանգն մօտալուտ Բելիսարայ, և զաղնուական առաքինութիւնն՝ որ կացուցանէրն զնա 'ի վտանգն ահագին։

Ի վաղիւ անդր առաւօտուն մի 'ի գերեաց անտի Բուլղարաց խնդրեաց խօսել վայրիկ մի ընդ

իշխանս, և լսելի եղև. և մտեալ 'ի ժողով անդր որ 'ի չորից աւուրց հետէ գումարեալ կայր, և գահերեց 'ի նմա բաղմէր Գելիմեր 'ի մէջ երկուց արքայորդւոցն, յառաջ մատեաւ այնու վեհ և խրոխտ կերպարանաւ՝ որ զամենեցուն աչս յինքն ձգեաց, և ասէ. Կամիմ փրկել զԲելիսար, և կարացից իսկ, եթէ լիցի հնար առաջարկել զիս փրկանակ նմին։ Յուստինոս ասէ. Այլ ո՞ ես դու։ Գերին ասէ. Արքայորդին Բուլղարաց եմ ես։ Յապուշ եղև ատեանն. իսկ արքայորդին պատմեաց համառօտ՝ թէ որպէս տիգահար 'ի Յուստինեայ անկեալ դնէր անծանօթ 'ի ձակատուն տեղւոջ, և խառն մարտին այլուր մղեալ զՅուստինոս՝ ինքն անզգայ կողոպտեալ գտաւ ընդ երեկս 'ի զօրաց թշնամեաց՝ որ ոչ ծանեան զնա, և յետ սակաւ միոյ բարձաւ յայլոց՝ որ գիտացին զի չև էր մեռեալ։ Այլ զի գերի ածեալ՝ թագոյց զանուն իւր, առեալ այլ անուն որպէս զմի 'ի հասարակ սպայից՝ առ 'ի խնայել զհայր իւր 'ի ծանր փրկանաց։ Այլ զի այսմ զգուշութեան պարտ էր յայնժամ տեղի տալ ըղձից փրկելոյ զվեհագնն, որոյ այնպիսի ազնուականութիւն երբեմն ընդ նմա արարեալն էր։

Այս դէպք բաւական էին 'ի ցնծութիւն մեծ ամենայն բանակին, եթէ չէր 'ի միջի նոյն դժուարութիւն՝ լուր առ թագաւորն Բուլղարաց հասուցանելոյ։ Յաւելոյր մորմոք սրտի 'ի խորհելն զի գոյր հնար անվրէպ փրկելոյ զԲելիսար,

և արգել զգուշութեան թշնամւոյն 'ի դերև առ-
նէր զայն։ Փորձ փորձեցին ձգել պիտակս 'ի բա-
նակետղ թշնամեաց հաստատեալ 'ի ծայրս նե-
տից. այլ թշնամիք նոյնպէս նետաձգութեամբ
յետս դարձուցանէին զայն անբաց։ Մինչև Գե-
լիմեր և երկոքին արքայորդիքն խորհեցան դնալ
միայնակ յանդիման լինել առ առաջապահս, որ-
պէս զի մի աղմկեալ ստիպեսցին թշնամիք 'ի
մարտ, այլ սուսեր 'ի ձեռին հատանել ուղի, հա-
սանել յերկրորդ պահս՝ անցեալ զառաջապահ
զօրքն, և անդ զհամբաւի հարկանել զկենդա-
նութիւն արքայորդւոյն։ Մերկացաւ Գելիմեր
զխոնարհ ձևն միակեցական, և հրձուեր 'ի սրբ-
տէ զի առ այնպիսի ազնուական գործ արկանէր
զանձամբ զբահս և առնոյր դարձեալ զկնս։ Յի-
շէր զանցանել գնալ իւր երբեմն սպառազէն ընդ
բանակ մի ողջոյն. և զտէր զօրութեանց կարդա-
լով յօգնութիւն՝ վստահացեալ 'ի նա, ցնծայր
անդստին ընդ յաջողութիւն իրացն։ Նրբեքին
սպառազէնքն վառեալք եռանդեամբ, լի յուսով,
յընտրելագոյն երիվարս բանակին աշտանակեալ՝
մեկնեցան, թողեալ 'ի բանակի անդ զարքայոր-
դին Ռուլղարաց 'ի պատանդ։ Հասին յառաջին
պահն հանդարտաբայլ. տուաւ նոցա նշան 'ի բաց
կալ. նոքա 'ի ձև աղերսաւորի մեղմագոյնս յա-
ռաջ գնային։ Սպառնային պահապանքն. իսկ
նոքա ոչ զկայ առեալ, սուր շողացուցեալ, յար-
ձակեալ սրացան փայլակնաձև ընդ մէջ զինուո-

րաց։ Որոց ապշեալ ընդ քաջայանդուգն արիու-
թիւն նոցա, չիշխէին զդէմ ունել։ Նոքա տա-
պալեալ զամենայն խոչ ընդդիմարգել, հասանէն
'ի պահն երկրորդ՝ ձայն բարձեալ թէ արքայոր-
դին Ռուլղարաց կենդանի էր, և ողջացեալ 'ի վի-
րացն կայր 'ի բանակին Յունաց. և թէ աւետա-
ւորք գային հարեալ անցեալ ընդ պահս։ Ոչ ևս
գոյր տեղի հրամանաց արքային, 'ի լուր աւե-
տեացն հաստատեցաւ խորհուրդ՝ ածել յամա-
բանոց անդր զերեսին իշխանն, և հաւանեցան
նոքա։ Ընպատում ցնծութեամբ լի եղև թագա-
ւորն իբրև գիտաց զի որդին իւր տակաւին կեն-
դանի էր։ Խորհուրդ կալան յղել արս 'ի բա-
նակն Յունաց, ստուգել զկրսն, և ապա փոխա-
նակել ընդ արքայորդւոյն զերեսին իշխանն և
զԳելիսար։ Եւ մինչև ցերեթևեկ հրեշտակացն
հանաւ Գելիսար 'ի բանտէն, յոր արկեալ էր
զնա Բ.ղդալեայ։ Եւ գիրկս արկեալ նախ Տիբե-
րի, և ապա յողջագուրեն զԳելիմեր՝ զգաց զի
վիրաւորեալ էր նա տիգախոց 'ի բազուկն, և հան-
դերձք նորա արիւնաթաթաւ, թէպետև վերք
նորա չէին ինչ վտանգաւոր, և գոչեաց. Ո՛ տէր,
արիւնն՝ զոր հեղուլ կամեցայ, արիւնն այն ա-
րիական հեղու արդ վասն իմ։ Իսկ Գելիմեր ա-
սէ. Լդղուկ այնմիկ՝ որ վասն փառասիրութեան
ևեթ և վրէժխնդրութեան վատնէ զարիւն իւր.
չճանաչէ նա զաղնուականագոյն և զանաղօտ փառս
փոխանակելոյ զանձն 'ի վերայ բարեկամութեան։

Մինչդեռ ամենեքեան փութային պատել ըզ-
վերս նորա, Յուստինոս լուռ ևեթ կայր մեկու-
սի. և թէպէտ դիմագրաւեալ էր նորա 'ի վտանգ
կենաց վասն Բելիսարայ, այլ չև ևս իշխեր մատ-
չել առ վեհաղնն՝ որ վեհագոյն ևս յետ աղետիցն
էր երևեալ։ Յայնժամ Գելիմերի ակնարկեալ
'ի Յուստինոս ազդեաց Բելիսարայ, զի ևնա ինքն
արքայորդին մի յազատարարաց նորա էր. և յու-
զեցան գութք երկաքանչիւրոցն յանյիշաչար հաշ-
տութիւն ընդ իրեարս։

Դարձան հրեշտակքն ականատեսք արքայոր-
դւոյն Բուլղարաց, և Աբդալ առ յոյժ խնդու-
թեանն կամէր փութանակի առնել զփոխանա-
կութիւնն. բայց Բելիսար հակառակ կացեալ՝
ասէ. Բարեբաստիկ յաջողութեանս արժան 'է
պսակել խաղաղութեամբ 'ի փառս երկաքանչիւր
պետութեանց։ Դիւրին իսկ է սահմանել զպայ-
մանս նորին. և արքայորդին Յուստինոս լիով
իշխանութեամբ եկեալ 'ի դիմաց ինքնակալին զօ-
րէ 'ի ձեռնարկ նախաշաւիղ հաստատութեան
ուխտին։ Յայնժամ գոչեաց արքայն Բուլղա-
րաց. Հաճեալ եմ, եթէ միայն Բելիսար լիցի
երաշխաւոր. գիտէ իսկ նա, զի զուխտն խաղա-
ղութեան՝ զոր եդ ընդ իս՝ պահեցի հաւատար-
մութեամբ, և ոչ լուծի զայն՝ բայց առ 'ի խընդ-
րել զվրէժ իւր։ Եւ Գելիմեր յաւել ցՌելի-
սար. Յանկայիր մինչև մեռեալ պիտանի լինել
հայրենեաց, զոհացիր արդ զի լուան երկինք աղ-
նուական ըղձից քոց։

Հաստատեցաւ նախաշաւիղ ուխտին խաղաղու-
թեան, սահմանեալ 'ի նախկին պայման դարձու-
ցանել առ Աբդալ զգաւառն՝ զոր նենգաւորին
Փարասայ յափշտակեալ և մատնեալ էր թշնա-
մեաց։ Բայց Բելիսար բարեխօս եկաց վասն
նորա և հաւանեցոյց զթագաւորն՝ ընդհել նմա
զկեանսն, վարեալ զնա յաքսոր անդարձ։ Եւ ա-
պա Բելիսար և իշխանքն երեքին հրաժարեցին
'ի թագաւորէն, կատարել փութանակի զփոխա-
նակութիւնն։ Դարձաւ արքայորդին Բուլղարաց
առ հայր իւր. իսկ իշխանացն կամեցեալ ածել
զԲելիսար 'ի բանակն, խորհեցաւ նա զի վիշտ
մեծ էր երևել իւր անդ քաջի զօրականին՝ ո-
րում երբեմն զօրավարեալ էր, և խնդրեաց զբ-
նալ անդէն առ տիկինն Սոփիա՝ հիւրընկալ դըս-
տերն իւրոյ։ Յոգւոց եհան Յուստինոս 'ի յի-
շատակ Սոփիայ, և դարձեալ 'ի Տիբեր ասէ.
Աբդ վախճան է պատերազմիս, ոչ ևս հարկ է
կալ քեզ աստանօր. կացիր ես աստ մինչև 'ի
հաստատութիւն խաղաղութեան՝ որ ընդ հուսկ
վճարեսցի։ Յանձն առ, իմ Տիբեր, զնալ ընդ
Բելիսարայ և ածել զնա 'ի գիրկս դստերն իւ-
րոյ։ Բերկրեցաւ Տիբեր ընդ բանս նորա, որ
յայտ առնէին հրաժարեալ զնա 'ի սպառ 'ի տար-
փանացն Ընտաստասիայ. և գորովագին սիրով կա-
լաւ զաջդ ձեռանէ նորա։ Իսկ Յուստինեայ ձը-
գեալ զնա մեկուսի, ասէ 'ի ծածուկ. Աբաքի-
նագոյն քան զոր եմն համարիս դու զիս, սակայն

ոչ ևս նախանձողդ եմ քոյին. ոչ երբէք առաւել քան զարդիս եղև բախտն իմ ինձ կեղակարծ, և ոչ սիրտ իմ առաւել յուզեալ. եկեսցէ ժամանակ, զի խելամուտ լիցիս դու ամենայնի։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Գելմերի ոչ ևս խիթալով ընդ բախտ Բելիսարայ, կամէր դառնալ 'ի միայնարան իւր. բայց Բելիսար և Տիբեր հաւանեցուցին զնա հանդչել զաւուրս քանի մի յամարանոցի տիկնոջն Սոփիայ։ Հասին անդր յառաջնումն պահու գիշերոյն. և սուրհանդակ աւետաբեր յառաջ քան զժամն ինչ աւետեալ էր Ընդաստասիայ զվերհաղին հօր նորա զգալուստ բարեգործով սրտի նորա 'ի ցնծութիւն անպատում։ Դիմեաց ընդ առաջ. և թէպէտ ոչ անգիտանայր զաղէտս նորա, սակայն ձայն եբարձ աղիողմ 'ի տեսանելն զնա. և այլագունեալ և զդողանի հարեալ արտասուալից անկաւ 'ի գիրկս նորա հեկեկելով. Աղո՛ւկ ինձ, բարեբախտիկ գտաւ մայր իմ, ոչ ևս արժան է ինձ լալ զմահ նորա։ Իսկ Բելիսար ասէ. Մոռացօնք եղէն ինձ, դուստր իմ, ամենայն վշտաց իմոց առքև։ Եւ Գելմեր յաւել. Լեր դու, տիկին, այդպիսւոյ հօր դուստր արժանի. ահա գայ նա առ քեզ փառաւորեալ քան յամենայն կեանս

իւր, հանդերձ յաղթական բանակաւ։ Ընդաստասիա ասէ. Ո՛հ թողէք ինձ ողբալ. թող հոգի նորա մեծախոհ գեր 'ի վերոյ վրէժխնդրութեան և աղետից կացցէ, պարծեցայց ընդ անյիշաչարութիւն նորա. այլ ինձ լիցին անմոռաց անհրաւութիւնքն՝ որոց ներեաց նա, և չարիքն՝ զորս կրեաց։ Ո՛ հայր իմ, փառք և համբաւ ոչ կարացին փրկել զքեզ 'ի սոսկալի չարեացդ, և թէպ կարասցին նոքա զիոխարէնսն հատուցանել։ Ինձ ևեթ դստեր քում անկ է զքեզ մխիթարել. յիմում ևեթ սրտի գտցես գութ և շնորհակալութիւն անյեղլի։ Մի ևս ումեք զսրբազան խընամն բարեկենդանութեան քո վստահանար բայց յինէն։ Այսոսիկ գորովական բանս լսելով Բելիսարայ խանդաղատեցաւ սիրտ նորա. և ոչ ինչ տուեալ պատասխանի, ողջագուրեաց զնա 'ի գիրկս իւր. և ապա առեալ զձեռանէ նորա և զՏիբերի՝ ած յիրեարս և ասէ. Ո՛ տայր ինձ կցորդել զդոսա յաւուր միում առ սուրբ սեղանով։

Ի վաղիւ անդր եհաս սուրհանդակ առ Տիբեր յարքայորդւոյն Յուստինեայ, ազդ առնել՝ զի ինքնակալն մերձ էր 'ի մեռանել, և ցանկայր մինչև մեռեալ տեսանել զԲելիսար և զԳելմեր։ Նոյն ինքն և առ տիկինն Սոփիա ածէր գիր 'ի Յուստինեայ, և այս պատճէն էր գրոյն.

"Ընդաչեմ զքեզ փութալ գալ այսր 'ի Կոստանդնուպօլիս, զի կարևոր ես ինձ 'ի քաջալերութիւն և 'ի խորհրդակցութիւն։ Յանկամ տե-

սանել զքեզ միւսանգամ, և գիտեա զի հրաժեշտ քոյին արկցէ զիս 'ի յուսահատութիւն ,, ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Սոփիայ էր երբեք մեկնեալ յամարանոցէ անտի, զոր եղբօրն իւրոյ տուեալ էր նմա։ Լ՝ը և Կարբաղայ մերձ 'ի տեղի անդր ամարաստան՝ յորում՝ բնակէր, և զայր ստէպ յայց տիկնոջն. այլ էր անդ յայնժամ։ Բ՝ռաքեաց կոչեաց զնա Սոփիա, և եհարց 'ի նմանէ որ ինչ պարտն էր առնել. և խորհուրդ կալան մեկնել գնալ 'ի միասին 'ի Կոստանդնուպօլիս։ Ընդ նոսա մեկնեցան և Տիբեր և Բելիսար և Գելիմեր։

Եւ 'ի հասանել նոցա 'ի Կոստանդնուպօլիս, Բելիսար առաջնորդեալ 'ի Գելիմերայ չոքաւ յարքունիս ինքնակալին։ Գալարեցան աղիք նորա 'ի մտանելն 'ի սենեակ անդր ինքնակալին՝ որ մերձ էր 'ի մահ. յուշ եղեն նմա անդ բարեմասնութիւնքն և եթ մեծամեծք տեառն իւրոյ, առաջին մտերմութիւն իւր ընդ նմա, բարերարութիւնք նորա առ ինքն և տիրասիրութիւն իւր։ Յուստինիանոս կայր 'ի մահիճս իւր, և ոչ ոք էր առ նմա բաց յարքեպիսկոպոսէ մայրաքաղաքին և 'ի Յուստինոսէ արքայորդւոյն։ Հայեցեալ ինքնակալին 'ի Բելիսար՝ հառաչեաց. և վայրիկ

մի լուռ և եթ կացեալ, խօսել կալաւ ապա նուաղ ձայնիւ, և ասէ. Մատիր առ իս Բելիսար։ Ա՛ծաւ առ նա Բելիսար մերձ 'ի մահիճս, և ծունր եդ. և ինքնակալին կալեալ զաջոյ վերհազինն երկոքումբք ձեռամբք, և ողջագուրեալ զայն՝ ասէ. Ո՛հ, հաւատա ինձ զի տեսիլ և եթ քոյին բաւական է 'ի քաւել զանիրաւութիւն իմ։ Պատասխանի ետ Բելիսար. Ներսէս անիրաւեցաւ, Ներսէս անգթացաւ։ Կրկնեալ անդրէն ինքնակալին ասէ. Ոչ ոչ, այլ իշխանք պարտաւորք են ամենայն չարեաց՝ զորս ոչ խափանեն. զուր ջանաս անբասիր առնել զիս անյիշաչարութեամբ։ Բ՝ռաջի կայ ինձ յանդիման լինել ատենին Բ՝ստուծոյ ընդ հուպ, առ 'ի տալ համար զամենայն վշտացդ՝ զորս կրեցեր։ Բարբառ ամենադատաւորին յունկն իմ հնչէ. Ո՞ինչ արարեր ընդ ծառայդ հաւատարիմ՝ զոր ետու քեզ. զինչ հատուցեր փոխարէն ազատարարին քում, քաջաղինն՝ որ հալածեաց յերկրէ քումմէ զխուժադուժս, որ զապստամբս նուաճեաց, որ յաւել քեզ թագաւորութիւնս, և որ ապրեցոյց զաղքայորդին ժառանգ թագաւորութեան քո։ Ո՞այսոսիկ ահագին և տագնապեցուցիչ համարս պահանջեցայց ընդ հուպ, 'ի շանթից աստի կշտամբանաց հարայց մօտալուտ։

Բ՝ստանօր ինքնակալն հեռ ընկճեալ յարհաւրաց՝ լռեաց վայրիկ մի. և ապա դարձեալ յարքայորդին՝ ասէ. Որդեակ իմ, ահա վախճան իմ

հասեալ կայ, և չկը ինձ ժամանակ զփոխարէնս
ՀԼասուց հատուցանելոյ. քեզ թողում ընդ թա-
գաւորութեանս իմում զսրբազան պարտս զայս։
Կարացիս ասել յահեղ ատենին, զի զեղջ իմ
չեղև անարգասաւոր, բարեգործէ նա յերկրի.
հայրասէր բարեպաշտութիւն հպատակեալ վեր-
ջին կամաց իմոց, փոխարինէ չարեաց՝ որ սխալա-
նօքս իմովք ներգործեալ։ Ա՛յո, որդեակ իմ,
մեծարեա սփոփեա զալիս Բելիսարայ. հարց և
լուր խրատուց նորա. տուր արքային Ա՛նդալաց
արժանի նմին բարեկենդանութիւն. լեր մեծ-
անձն առատապարգև և շնորհակալու։ Որդեակ
իմ, հաւատա բարեկամի քում. եթէ բարեկա-
մութիւն անուն իսկ էր անէակ, պարտ էր փա-
րել զնովաւ առ 'ի սփոփել զվիշտս դարանակալս
գահու և մեծութեան։ Կասկածելն լեցի քեզ
չարախօսութիւն զարանց հանձարեղայ, որչափ
և չափաւորութեամբ մատուցեալ։ Բաղում այն
է զի բառ մի և եթէ իբր անմեղութեամբ և վայ-
րապար ասացեալ, մարթի գոլ ՀԼասակար. որ ե-
թէ թողցէ 'ի քեզ ազդեցութիւն դժպհի, պարտ
է քեզ կասկածել 'ի խորամանկ ատելութենէ.
իսկ 'ի կրկնելն, լեցի քեզ այն աներկբայելի։
Օ՜գոյշ լեր մի անարգել զայնոսիկ՝ որոց միան-
գամ բարձ և աւագութիւն շնորհեալ է քո. զի որ
ոչն պատուէ զընտրեալն յիւրմէ, անարգէ զպա-
տիւ իւր։ Այս ապա յաւել տկար ձայնիւ առ Բե-
լիսար. Ա՛նա խաղաղութեամբ, տուր ինձ զա-

ռաջին իրաւունս իմ 'ի վերայ սրտի քո. բարե-
կամութիւն հաւատարիմ և աղնուական և ես
արծարծանի և սրբի առ ափն շիրմի, և եղերա-
կան մահուն քոզոյ պարտ է ծածկել զամենայն
սխալանս կենաց։ Յայնժամ գոչեաց Բելիսար.
Տէր արքայ, չկարեմ յիշատակել ինչ բաց 'ի բա-
րերարութեանց քոց և 'ի գործոց՝ որ անմահացու-
ցին զթագաւորութիւն քո։ Ա՛ռ այս կամէր ինքնա-
կալն պատասխանել, այլ կասեցին բանք յերիթա-
ցեալ շրթունս նորա։ Այս եկն անկաւ 'ի ծունր
Յուստինոս առ մնարս մահճաց նորա. և ինքնա-
կալն ձգեալ զդողդոջ աջ իւր 'ի վերայ գլխոյ նո-
րա, հազիւ զօրացաւ օրհնել զնա։ Այս ապա ակն-
արկեալ ի՛ջուցանել զանձն 'ի վերայ մոխրոյ, ուր
ըստ այնր ժամանակի սովորութեան կամէր մեռա-
նել, էջ 'ի գահոյիցն արքունի՝ յոր ոչ ևս բազմե-
լոց էր, և 'ի բաց արար 'ի խղճէ մնաց զամենայն
աղմուկ՝ հրաժարեալ կամակար յամենայն մե-
ծութենէ, որ խուսէին 'ի նմանէ անդարձ։ Ասէր
վաղանցիկ, այլ յաչս մարդկան այնպիսի՝ որ զմեր-
ձակայից առհասարակ զսիրտս շարժեաց։ Բացան
դրունք, մտին 'ի ներքս ամենայն աւագանին և
դրանիկք. տեսին զոր պաշտէին, որում այնչափ
մարդահաճութիւն և շողոմն մեղանչականս յա-
ճախեալ էին, և որ արդ մերկացեալ յամենայ-
նէ յետ այնքան աշխարհածուփ զբօսանաց և
փառասիրութեան՝ չունէր այլ ինչ բայց քուրձ
և պատառ։ Տեսին զնա, այլ անդէն դարձուցին

զաչս իւրեանց 'ի ժառանգ նորին։ Աբքեպիսկոպոսն մատոյց ինքնակալին զփրկական խաչին նշան. և նորա առեալ զայն 'ի ձեռս, և 'ի գիրկս իւր ողջագուրեալ, աւանդեաց զոգին։

ԳԼՈՒԽ Ի.

Յուստինոս վշտացեալ 'ի սրտէ ընդ մահ ինքնակալին, պարապէր զբազումս աւուրս 'ի հոգ վերջին սպասուց հայրագրին իւրոյ. և ապա սահմանեաց զօր թագաւորութեան իւրոյ յեկեղեցւոջ սրբուհւոյն Սոփիայ։ Եւ 'ի ծագել աւուրն ժողովեաց զամենայն աւագանին ինքնակալութեան իւրոյ 'ի դահլիճն այգորելի, ուր և զաղքայն Ա՝նդալաց և զՏիբեր և զՌելիսար և զՆարբաղ հրաւիրեաց։ Երկուստեք դահլիճին 'ի սրահս խռնեալ էր ժողովուրդն, և 'ի խորս անդ 'ի վանդակապատ բեմի հրաման տուեալ էր կալ տիկնոջն Սոփիայ և Ընդստասիայ։ Եկն թագաժառանգն 'ի հանդերձս սգոյ պճնաւորս, և եկ զայն առաջին նուագ բազմեցաւ 'ի գահ։ Ընտեանն առհասարակ զարմացեալ կային ընդ մեծավայելուչ գեղ դիմաց նորա. այլ բովանդակ անձն նորա և կերպարան յայտ առնէր զծանրաթախիծ տրտմութիւն սրտին։ Մերձ 'ի գահոյս իւր բազմեցոյց զերկոսին ազատարարս իւր զաղքայն Ա՝նդալաց և զՌելիսար. իսկ Տիբեր առ նմա կայր յոտին։

Յետ երկար լռութեան՝ խօսել կալաւ և ասէ. Ո՛ւ 'ի կատարել զպատուէր հօրն իմոյ և զկոչս իմ, աստէն 'ի սկզբան թագաւորութեան իմոյ կամիմ ընուլ զպարտ շնորհակալեաց։ Դարձուցանեմ 'ի Ռելիսար զամենայն առաջին պատիւս աւագութեան իւրոյ, և խնդրեմ 'ի նմանէ մատուցանել Տիբերի զաջ Ընդստասիայ։ Աբքայն Ա՝նդալաց հրաժարեաց 'ի հրաւիրանաց իմոց, այլ դարձեալ վերստին հրաւիրեմ զնա 'ի նոյն։ Մատուցանեմ դաստիարակին իմում Նարբաղայ զառաջին բարձ ինքնակալութեանս. կոչեսցի նա պատրիկ, և ժառանգեսցէ երկիր նոր, փոխանակ զի եղև նա վարժապետ առաքինութեան մանկականի տիրոջս, և զի հարսին արքայազին է փեսայ։ Այլ յասէն զայս՝ այնպէս խռովեալ յոգի իւր, մինչև հարկ լինել նմա ընել վայրիկ մի, և բնաւորապէս դարձուցանել զաչս 'ի բեմն վանդակապատ, թէպէտ և չէր հնար տեսանել զոք անդ. այլ գուշակէր զնոյն աղմուկ սրտի և անդ ներգործեալ։

Եւ ապա ոգի առեալ անդրէն և յառաջ մատուցեալ զբանսն, ասէ. Ահիւ և դողութեամբ բազմիմ 'ի գահս յայս, զոր երկոքին յիշատակաց արժանի նախորդք իմ փառաւորեցին. բայց Յուստինոս Ա., և Յուստինիանոս՝ որ ընկալաւ զնս յորդեգիրս, այնպիսի օգտակարս գործեցին, և մատեան օրինացն անմահ՝ յանուն մեծին Յուստինիանոսի յորջորջեալ՝ է գանձ այնպիսի պա-

տուական, զի քաջալերիմ իշխել արժանապէս՝ զՀետ երթեալ շաւղաց զոր թողին ինքնակալքն երկոքին վեհք։ Նոցա վսեմախոհ մտաց և հանճարոյ պէտք էին առ 'ի բարեկարգել. իսկ ինձ բաւական են հասարակաց միտք առ 'ի հաստատուն ունել զիմաստուն կարգս նոցա։ Սակայն կարօտիմ վստահութեան ազգին. և ո՞ 'ի թագաւորաց առանց այնորիկ իշխել կարասցէ։ Խոստովանիմ զի զառանցանք և եռանդն մանկութեան տացեն տեղի կասկածանաց. այլ փարատեսցին այնոքիկ 'ի սպառ 'ի տալ իմում անշուշտ առհաւատչեայ զուղիղ դիտաւորութեանս իմոյ։ Լ՝ ինձ բարեկամ երաշխաւոր՝ որ ոչ ներեսցէ մարդահաճութեան մոլորեցուցանել զիս, զի և ոչ այլազգ տիրապետեաց նա սրտի իմում և մտաց՝ բայց ազդելով ինձ զխիստ ճշմարտութիւն։ Բարեկամ անաչառ միշտ և անձնանուէր, որ ընդդէմ ցասման իմոյ խիզախէ առ 'ի զգաստացուցանել զիս, որ զգերութիւն և զմահ յաչս դնէ առ 'ի փրկել զիս։ Բարեկամ միշտ պատրաստ 'ի պաշտպանել զգնացս իմ առաջի այլոց, 'ի պատրուակել զսխալանս իմ, և 'ի յանդիմանել զայնս ինձ առանձին. որ յայսմ իսկ առաւօտու խրատէրն զիս. "Մի համարել զանձն քան զայլս խոհեմագոյն, կարողագոյն քան զնոսա գոլով,,[1]։ Ոչ անծանօթ է ձեզ այրն այն, այլ մեծարոյ ամենեցուն ձեզ, զարմանայք դուք ընդ աղնուական

1 Նորին իսկ Տիբերի են բանքս։

բնաւորութիւն նորա, ընդ իմաստութիւն գեր 'ի վերոյ հասակին, և ճանաչէք իսկ 'ի նկարագրէս՝ զի Տիբեր է այն։ Բ՝ 'ի վստահութիւն ձեր ընդ գործս իմ և ընդ ինքնակալութիւն, գահակից գերագոյն իշխանութեանս իմոյ առնեմ զնա, առ 'ի վարել զայն անվրէպ 'ի բարեկենդանութիւն ևեթ հասարակաց[1]։

Այս բանք ինքնակալին 'ի հիացումն ածին զամենեսին. և Տիբեր պատանի հանճարեղ և զգայուն սրտիւ, ոչ ինչ կեղծաւորեալ համեստօրէն հրաժեշտ՝ ընկալաւ զառաջարկութիւնն աղնուական և անկեղծ. զի օգուտ հասարակաց և օգուտ մտերմին իւրոյ ոչ ներէին նմա ընդ բանս ինչ ածել. համարձակեալ եցոյց նա հիացումն, խնդութիւն և շնորհակալիս միանգամայն։ Նա 'ի տարածանել Յուստինեայ զգիրկս իւր, դիմեաց անդր Տիբեր գրկախառնել. և համբուրեցան գահակիցք երկոքին, և 'ի հրճուանս հասարակաց բազմեցան երկաքանչիւր 'ի մի գահ։

1 Արդարև Յուստինոս գահակից իւր արար զՏիբեր։

ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ.

Զոգան ինքնակալքն երկոքին յեկեղեցի սրբ-
բուհւոյն Սոփիայ, ուր կատարեցաւ կարգ թա-
գադրութեան 'ի վերայ նոցա, և ապա դարձան
յարքունիս՝ ուր մնային Յուստինեայ տիկինն Սո-
փիա և Նարբաղ, Բելիսար և Ընդաստասիա և
Դելիմեր։ Յուստինեայ իսկապէս կապեալ էր
ոգին ընդ Սոփիայ, և գալարէին աղիք նորա 'ի
գնալն տեսանել զնա զայն վերջին նուագ։ Սփո-
փէր միայն 'ի խորհելն՝ զի գէթ արժանի դտաւ
մեծարանաց նորա և հնորհապարտ իւր զնա կա-
ցոյց բարերարութեամբն իւրով առ եղբայր նորա
և առ այր։ այլ յայնմ հետէ ոչ ակն ունէր սփո-
փանաց ինչ, բայց 'ի մտերմութենէն Տիբերի՝ որ
սիրելի էս լեալ էր իւր յետ ոգեխառնութեանն
ընդ քեռ նորա Սոփիայ։

Իբրև եմուտ 'ի սենեակն՝ ուր ժողովեալ էին
հրաւիրեալքն առհասարակ, դարձոյց զաչս իւր 'ի
Սոփիա, և խռովեալ այլագունեցաւ։ Յայնժամ
մատեաւ առ նա Նարբաղ և ասէ։ Տէր արքայ,
բարերարութիւնք քո և իմաստք վեհաղնականք
հատուցին զամենայն խնամն իմ։ շքեղ է ինձ
մրցանակս, և չներէ ինձ այլում իմիք 'ի խնդիր
լինել մրցանակի։ Նուիրելումն այսուհետև յա-
ռանձնութիւն՝ չիցեն պիտանի բարձ և պատիւ

զոր հնորհես։ գեղեցկագոյն մեծարանաց անուն
զշիրմաւ իմով դրոշմեալ 'ի զարդ՝ լիցի դաստիա-
բակութեանս իմոյ քեզ։ Ընդունել ընկալայ զը-
փոխարէնս։ այլ ո՞ երբէք հաւատալ կարիցէ,
տէր արքայ, զի և ինձ յաջողէ զկշիռ փոխարինին
հատուցանել։ Ընդ այս բան խռովեալ Յուստի-
նեայ, այլ յայլմէ լեալ, և ընդմիջեալ սաստկա-
պէս զբանս նորա, ասէ։ Եւ զի՞նչ ակնարկիցեն
բանքդ։ Իսկ Նարբաղ յաւել։ Եւ կարի իսկ
քաջ։ մատիր այսր օրիորդ արքայազն, և ներեա
ինձ յայտնել զգաղտնիս՝ զոր խոհեմութիւն և
զգուշութիւն ետուն քեզ ծածկել ցարդ յեղբօ-
րէ իսկ քումմէ սիրելւոյ։ Տէր արքայ, պահա-
պան եղեր և բարեկամ եղէ ես ցարդ արքայա-
զնս օրիորդի, չէ նա հարսն իմ։ Յայնժամ
գոչեաց Յուստինոս։ Դէպք սքանչելի։ Սոփիա՞
անհարսնացեալ։ Եւ Սոփիա ասէ։ Տէր արքայ,
մարթէ՞ ինձ յայտնել քեզ զսէր իմ, եթէ էի
ես հարսնացեալ։ պատճառեցայ զհարսանիս առ
'ի զերծուցանել զքեզ 'ի բռնադատութենէ
ինքնակալին։ ես ինքն հնարեցայ զայս կեղծիս,
որում Նարբաղ առ բարեկամութեան իւրում
ընդ իս հաւանեցաւ և եթէ չհանել զայն 'ի
վեր[1]։ Զայտնեցի զայն եղբօր իմում, զի մի

1 «Զ Սոփիա և զՆարբաղ 'ի ներքս ածեմ զերկաքանչիւր կա-
տարեալս առաքինութեամբ, և երկոքին ևս ասեն։ քանզի Սո-
փիա անձահս անբասիր առնէ զՆարբաղ՝ յասելն, թէ նա առ
բարեկամութեան իւրում ընդ իս հաւանեցաւ և եթէ չհանել
զկեղծիսն զայն 'ի վեր։ Գործակից լինել լուութեամբ այնպի-

կրեսցէ վիշտ և տագնապ՝ի պատրել լուութեամբն
իսկ իւրով զտէր իւր և զբարեկամ։ Եւ ապա իբ-
րև ծանեայ զիրգնս քո, տէր արքայ, ոչ փորձել
զայն կամեցայ, քաւ լիցի, այլ հանդէս առնել
մեծանձնութեան քո։ Երկնեալ անդրէն Յուստի-
նեայ խանդակաթ հիացմամբ ասէ. Աստ ու-
րեմն ես. ահ, եղբայր իմ Տիբեր, նոր ինձ այս
առհաւատչեայ բարօրութեան աշխարհիս։ Ի
մէջ երկոցունցդ բազմեալ՝ի գահոյս, մնարթ իցէ
ինձ չլինել առաքինի և իմաստուն որպէս իցեմն
բարեբաստիկ։

սում ծանր ստութեան՝ հաւասար է ընդ ստելոյ. այն զի ան-
հնար իսկ է առանց ստելոյ՝ի բիւր դէպս ձեռնալ փեսայ օ-
րիորդի՝ որ չէ իւր հարան։ Պարտ էր Նարբաղայ, քանզի մե-
ծարոյ էր յաչս օրիորդին, խրատել զնա յայտմ՝ի զգաստու-
թիւն, ցուցանել նմա զի չէր օրինաւոր կեղծիքն այն, և զի
պարտաւորեալ էր մատնել զնոյն զՀմարտութիւն՝ խաբելով
զտէր իւր և զեղբայր և զամենեսին, և զի դարձեալ՝ի կեղ-
ծեն փեսայ իւր զՆարբաղ՝ հարկ էր յապարանս անդ տալ նմա
առ արտաքս զամենայն իրաւունս առն, որ անմարթ իսկ էր
առանց գործելոյ ընդդէմ պարկեշտութեան, թէպէտ և Նար-
բաղ անցեալ էր հասակաւ։ Եւ թող զայս, պարտ էր Նարբա-
ղայ զմտաւ ածել՝ զի՝ի յայտնել խաբէութեանն պատուհաս-
սէր՝ զնոսա ինքնակալն յաքսոր կամ յայլ ինչ պատուհաս։
Եւ նոյն ինքն, զոր այնչափ վրէժխնդիր իշխանութեանն իւրոյ
համարիմ՝ի վեպս յայս, ոչ գժկամակի ընաւ ընդ ինքնա-
հրաման հարսանիսն, որ չէ Ճշմարտատիպ և ոչ հնարաւոր։
Յաւելում և զայս, զի թէ չկարէր իսկ Նարբաղ զգուշացուցա-
նել զօրիորդն՝ի խօլական խորհրդոյն, չէր պարտ նմա զայն-
պիսի անտեղի և պարսաւելի կեղծիսն յանձն առնուլ։ Բացի
՝ի վերջկոյս ԺԶ գլխոյ վիպասանութեանս զսկիզբն տեսարա-
նին գոլ խիստ. բայց յաւելում զի Սոփիա անդ յանցանէ և
ընդդէմ զգաստութեան, սրատացուցանելով ընդ իւր զՅուստի-
նոս՝ առանց յայտնելոյ նմա զի չէ հարմատեալ Նարբաղայ,,։

Յնծութեան ինքնակալին հրճուակից եղեն՝ի
սրտէ ամենեքեան՝ որ անդն կային. և այս դէպք
լուան եռուն ըղձից Տիբերի, և աներկեան ա-
րարին զՌելիսար զերջանկութենէ դստերն և
զփեսային՝ զոր սիրէրն իբրև զորդի։ Խայտայր
՝Նարբաղ ընդ բարեբաստութիւն և ընդ փառս
սանիցն իւրոց. և ոչ Պելիմեր կարէր կալ անկա-
րեկիր ընդ տեսարանն խանդաղատելի վերհալին
իւրումն մտերմի։ Յետ սակաւ առուրց եղեն հար-
սանիք երկոցունց ինքնակալացն մեծաշուք և մե-
ծահանդէս. և ժողովուրդն ցնծութեամբ լի օրհ-
նէր զերկաքանչիւրոցն պսակ սիրով և գոհու-
թեամբ։ Յայնժամ Պելիմեր անյեղլի՝ի խոր-
հրդոցն իւրոց՝ հրաժեշտ խնդրեաց՝ի Ռելիսարայ
դառնալ յանապատ իւր՝ի Թեբայիդ, անտես
արարեալ զամենայն պարգևս ինքնակալին, և ա-
ռեալ ընդ իւր զաւետարանն և զքնար։
Իսկ Ռելիսար յընդունել զողջոյնն հրաժարա-
կան՝ գրկախառնեալ ընդ նմա սիրալիր խանդա-
ղատանօք՝ ասէ. Երթ խաղաղութեամբ վերհալն
առաքինի յաղէտս և՝ի սուրբ բարեկամութեան.
ածցեն զիս ալիք ընդ հուպ՝ի շիրիմ, այլ բերկ-
րեսցի միշտ հոգի իմ անմահ՝ի ընորհակալիս.
սաւառնեսցի նա յանապատի անդ զհիւրամեծար
այրիւդ քոյով, ուր գտի անդրէն զկեանս իմ և
զյոյս, և կցորդեսցէ աղօթիցդ քոց։ Ո՛վ բարե-
կամդ իմ, մի մոռանար զիս, յիշեսցես ինձ զվեր-
մագոյն մասն կենաց քոց։ Զև մեկնեալ յինէն

տեսեր զարգասիս երախտեացդ քոց. տալով ինձ ատել զվրէժխնդրութիւն, փրկեցեր և զիս և զհայրենիս իմ 'ի կորստենէ. օրհնեալ լիցիս դու, պարտապան եմ յոյժ վեհ օրինակիդ և խրատուցդ քոց։ Մչուրք իմ յետինք անցցեն երջանիկք 'ի խաղաղութեան, զի դուստր իմ դշխոյ բազմի 'ի գահոյս։ Ցայսն մեզ երկինք զի վեպք քո և իմ առ թոռունս մեր աւանդեալ 'ի մէնջ ուսուսցէ նոցա զընդհանուր օգուտ առաքինութեան, և տացէ նոցա լինել խելամուտ զի միշտ իսկ և ցանկ վարձատրեն երկինք արդարակորով զվսեմական բարերարութիւն և զանյիշաչար նըւէրս սրտի՝ որ տնօրինեն զհասարակաց մեր բարօրութիւն։

ՎԵՐՋ

2 1 MAY 2013

1
3

17971

ՀՀ Ազգային գրադարան
NL0465068